

ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ ԵՎ ՀԱՅ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

2012 թ. ՊԵՏԱԿԱՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ԵՎ ՍԻԱԽԱԿԱՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐԻ

ԾԵՄԱՐԱՆ

III
ՄԱՍ

ԵՐԵՎԱՆ
Գնահատման և թեստավորման կենտրոն
2012

Հեղ. խումբ՝

Աննա Արաջյան
Սիրցա Հալաջյան
Լեռնիդ Թելյան
Գայանե Խալաթյան
Ռուբեն Սաքապետյան
Սամվել Մոլոսյան
Արշալույս Գալստյան
Վաշագան Ավագյան
Գայանե Սկրտչյան
Աշխեն Ջրբաշյան
Փառանձեն Մեյրիխսանյան
Ալբերտ Մակարյան
Ռիտա Սաղաթելյան
Մարիամ Կուլախսոյյան
Պետրոս Կարեյյան

Պատասխանատու՝ Աննա Արաջյան

Հ 282

Հայոց լեզու և հայ գրականություն: 2012թ. պետական ավարտական և միասնական քննությունների առաջադրանքների շտեմարան/ Հեղ. խումբ՝ Ա. Արաջյան, Մ.Հալաջյան, Լ. Թելյան, Գ. Խալաթյան, Ռ. Սաքապետյան, Ս. Մոլոսյան, Ա. Գալստյան, Վ. Ավագյան, Գ. Սկրտչյան, Ա. Ջրբաշյան, Փ. Մեյրիխսանյան, Ա. Մակարյան, Ռ. Սաղաթելյան, Մ. Կուլախսոյյան, Պ. Կարեյյան - Եր.: Գնահատման և բեստավորման կենտրոն, 2012.

Մաս 3.-236 էջ:

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԳԼՈՒԽ 1	Հնչյունաբանություն	5
ԲԱԺԻՆ 1	Ուղղագրություն	5
	Բառերի միասին, անջատ, գծիկով գրություն	14
	Բառերի և բառակապակցությունների մեծատառով գրություն	16
ԲԱԺԻՆ 2	Այբուբեն, տառ, հնչյուն, տառերի թվային արժեքը	18
ԲԱԺԻՆ 3	Վանկ, շեշտ, հնչյունափոխություն	22
ԳԼՈՒԽ 2	Բառագիտություն	33
ԲԱԺԻՆ 1	Իմաստաբանություն	33
ԲԱԺԻՆ 2	Բառակազմություն	48
ԳԼՈՒԽ 3	Զևաբանություն	60
ԲԱԺԻՆ 1	Գոյական	60
ԲԱԺԻՆ 2	Ածական, թվական, դերանուն	67
ԲԱԺԻՆ 3	Բայ	73
ԲԱԺԻՆ 4	Մակրայ, կապ, շաղկապ, վերաբերական	90
ԳԼՈՒԽ 4	Շարահյուսություն	97
ԲԱԺԻՆ 1	Նախադասության տեսակները	97
ԲԱԺԻՆ 2	Նախադասության անդամներ	103
ԲԱԺԻՆ 3	Ստորադաս (երկրորդական) նախադասություններ	123
ԲԱԺԻՆ 4	Խնդրառություն, համաձայնություն, շարադասություն	130
ԲԱԺԻՆ 5	Փոխակերպումներ	136
ԳԼՈՒԽ 5	Կետադրություն	160
ԳԼՈՒԽ 6	Ոճագիտություն	167
ԳԼՈՒԽ 7	Ընդհանուր գիտելիքներ հայոց լեզվի մասին	176
ԳԼՈՒԽ 8	Գրականություն	179
ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ		229

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Գնահատման և թեստավորման կենտրոնը (ԳԹԿ), իրականացնելով ՀՀ Կառավարության և ԿԳՆ-ի կրթական քաղաքականությունը, ներկայացնում է հայոց լեզվի և հայ գրականության պետական ավարտական և միասնական քննությունների թեստային առաջադրանքների շտեմարանը:

ԳԹԿ-ն տեղեկացնում է, որ պետական ավարտական և միասնական քննությունների թեստերը կազմվելու են շտեմարանի առաջադրանքներից:

Շտեմարանում ընդգրկված են հանրակրթական դպրոցի հայոց լեզվի և հայ գրականության ծրագրային նյութերին համապատասխանող առաջադրանքներ և վերաբերում են դասընթացի գրեթե բոլոր բաժիններին։ Շտեմարանը կազմված է պետական ավարտական և միասնական քննությունների «Ուղեցույցի» համապատասխան։ Շտեմարանը կազմելիս առաջին հերթին հաշվի են առնվել գործող դասագրքերը, ինչպես նաև «Ուղեցույցով» նախատեսված պարտադիր ընթերցանության և անգիր ստորեկանությունները հայ գրականությունից։ Բառագիտության բաժնի առաջադրանքները կազմելիս հիմք են ընդունվել «Ուղեցույցում» նշված բառարանները։ Զեռնարկը հասցեագրված է հանրակրթական դպրոցի շրջանավարտներին և ուսուցիչներին։

ԳԹԿ-ն հասուն շնորհակալություն է հայտնում շտեմարանը կազմող խմբի անդամներին։

Աննա Աբաջյան

թ. գ. դ., ԵՊՀ դոցենտ

Միրցա Հալաջյան

թ. գ. թ., ԳԹԿ հ.լ. և գրակ. գլխավոր մասնագետ

Լեռնիդ Թելյան

թ. գ. թ., ԵՊՀ դոցենտ

Գայանե Խալաբյան

թ. գ. թ., ԵՊՀ դոցենտ

Ռուբեն Սաքավետյան

թ. գ. դ., ԵՊՀ պրոֆեսոր

Սամվել Մուրադյան

թ. գ. դ., ԵՊՀ պրոֆեսոր

Արշալույս Գալստյան

թ. գ. թ., ԵՊՀ հայ գրակ. ամբիոնի ասիստենտ

Վաշագան Ավագյան

թ. գ. թ., ԵՊՀ դոցենտ

Գայանե Սկրտչյան

ԿԳՆ կրթության ազգային ինստիտուտի հ.լ. և գրակ. մասնագետ

Աշխեն Ջրբաշյան

թ. գ. թ., ԵՊՀ դոցենտ

Փառանձեմ Մեյքիխանյան

թ. գ. թ., ԵՊՀ դոցենտ

Ալբերտ Մակարյան

թ. գ. դ., ԵՊՀ պրոֆեսոր

Ոխտա Սաղաթելյան

թ. գ. թ., ԵՊՀ հ.լ. ամբիոնի ասիստենտ

Մարիամ Կուլախսոյյան

թ. գ. թ., հ. 48 դպրոցի ուսուցուիչ

Պետրոս Կարենյան

«Քվանտ» վարժարանի ուսուցիչ

ԳԼՈՒԽ 1**ՀՆՉՅՈՒՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ****ԲԱԺԻՆ 1****ՈւՂՂԱԳՐՈՒԹՅՈՒՆ**

1. Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է գրվում է:

- 1) զր-ջը, նախօր-, դող-րոցը, չ-ինը
- 2) հ-կ, էլեկտրա-ներգիա, առ-ջ, երբե-
- 3) ան-անալ, միջօր-ական, լուսն-ջը, որև-
- 4) մանր-, -րեբունի, թ-ական, չ-տել

2. Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է գրվում է:

- 1) դող-րոցը, լայն-կրան, չ-իք, վայր-ջը
- 2) առ-ջ, վեր-լը, ովկ-ը, բազմ-րանգ
- 3) ամենա-ական, ա-կ, ս-կ, հ-զնել
- 4) ելե-ջել, պո-տ, հն-արան, առօր-ական

3. Ո՞ր շարքի ոչ մի բառում չի գրվում է:

- 1) հր-շ, այժմ-ական, ան-անալ, տ-նդ
- 2) առօր-ական, որևից-, վայր-ջը, ոստր-
- 3) հյուլ-, ան-զր, զոն-շ, շ-կ
- 4) սիր-րգ, հետզհետ-, միջօր-, երբեկից-

4. Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է գրվում օ:

- 1) ան-թևան, մի-րինակ, օրեց-ր, հանապազ-րյա
- 2) նախ-րյակ, մեղմ-րոր, աման-րյա, ապ-րինի
- 3) ամեն-րյա, ան-թ, հանր-զուտ, արծաթազ-ծ
- 4) սառն-րակ, չ-ժանդակել, բն-րրան, կ-զնի

5. Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է գրվում ը:

- 1) համ-նկնել, կոր-նքարդ, դաս-նկեր, մերթ-նդմերք
- 2) ունկ-նդիր, հոտ-նկայս, հյուր-նկալ, դյուր-նթեռնելի
- 3) չ-նդիատել, կ-նկնի, թր-խվկ, դաս-նթաց
- 4) լուս-նկա, ակ-նկալել, նոր-նտիր, ինքն-ստինքյան

6. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում ը:

- 1) մթ-նկա, զահ-նկեց, այլ-նտրանք, խոչ-նդուտ
- 2) ան-նկեր, մարտ-նչել, դանդաղ-նթաց, ան-նդունակ
- 3) հնդկ-նկույզ, երկ-նտրանք, ան-ստօյուտ, ճեպ-նթաց
- 4) որոտ-նդրստ, ան-նդմեջ, ան-նդիատ, ակ-նդետ

7. Ո՞ր շարքի ոչ մի բառում կամ բառաձևում չի գրվում ը:

- 1) գործ-նկեր, առ-նթեր, ակ-նքախ, ին-սուն
- 2) ան-ստույզ, առ-նչություն, ակ-նթարք, կոր-նթարդ
- 3) հոտ-նկայս, ակ-նքախ, մարտ-նչել, օր-ստօրեն
- 4) ան-նկճելի, երկ-նչել, կր-նկակոխ, շր-խվկոց

8. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում և:

- 1) ոսկ-որել, ոսկ-արս, պարբ-, զոտ-որ
- 2) հոգ-որ, իջ-անել, սերկ-իլ, կար-որ
- 3) հոգ-իճակ, քեակետ-, օթ-ան, բ-եռել
- 4) հար-ան, ազ-ազ, տ-ական, տեր-աթափ

9. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում եղ:

- 1) ք-աթափ, համա-րուպական, վազ-ազ, ուղ-արձ
- 2) կար-եր, հոգ-արք, գեր-արել, դափն-արդ
- 3) ուղ-որվել, ոսկ-ազ, սեր-եթել, օթ-ան
- 4) ոսկ-որել, ուղ-ճար, տար-երջ, զին-աճառ

10. Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է գրվում յ:

- 1) խնա-ել, կակառ-ից, քրիստոն-ա, մի-այն
- 2) Նա-իրի, միմ-անց, կր-ա, Միքա-ել
- 3) հա-ելի, զա-խոն, հսրա-ել, ոսպն-ակ
- 4) քահանա-ի, մանրէ-ի, հոգ-ակ, լրել-այն

11. Ո՞ր շարքի ոչ մի բառում կամ բառաձևում չի գրվում յ:

- 1) ուխտադրու-ժ, ծի-ածան, բար-ացակամ, պայուս-ակ
- 2) աղյուս-ակ, քնքու-շ, Ռաֆա-ել, զգու-շավոր
- 3) է-ակ, պո-եմ, գու-նազեղ, հաստարու-ն
- 4) ժողովածու-ում, սյուն-ակ, փաս-ան, վա-րկյան

12. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում այ:

- 1) թ-րտալ, կա-կա-ել, -ա-ակ, անթացու-
- 2) ոսկեծո-, հա-ճե-, ս-րդել, հա-շտակել
- 3) հա-շտա-, երկնահու-, խո-ան, զի-ս
- 4) կա-կ-ել, ոսկեծո-, ա-շահար, կի-

13. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում կ:

- 1) փա-ցնել, վարա-ել, փեղ-, վար-անիշ
- 2) մա-աղել, բա-ել, ծեծկոտու-, տաղտու-
- 3) տա-դեղ, կամացու-, պապա-ել, ա-րատ
- 4) քողտի-, զողտրի-, նախ-ին, նախ-ան

14. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում ք:

- 1) ա-ցան, չո-ել, տարեր-, սայթա-ել
- 2) մա-առել, ճա-ել, տրտմաշու-, սու-
- 3) քսու-, ռոռ-ել, արտասու-, վար-ութարք
- 4) ճս-ավոր, փափսու-, փեղ-, կառ-

15. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում ք:

- 1) քա-ցնել, վար-ազրություն, այու-, տարեր-
- 2) փա-ցնել, փեղ-, արցուն-, ս-եմավոր
- 3) հավա-ել, ճեղ-, նախ-ան, պատարա-
- 4) մանրու-, մա-սային, դիր-որոշում, նախ-ին

16. Ո՞ր շաբքի բոլոր բառերում է գրվում դ:

- 1) անդա-րում, բուր-, խոր-ուրորդ, զար-ուցիչ
- 2) անգայ-, ըն-արմանալ, լեր-անալ, վր-ովել
- 3) լյար-, Նվար-, դր-ել, հար-աշաղախս
- 4) հաղոր-ել, վար-ապետ, խոր-անալ, հար-արել

17. Ո՞ր շաբքի բոլոր բառերում է գրվում դ:

- 1) Ալվար-, գր-նակ, ան-ա-րում, միջնաբեր-
- 2) կորնթար-, Բաղդա-ս, հար-աշաղախս, լաջվար-
- 3) ար-ուկ, Վր-անես, անհողող-, եր-վյալ
- 4) խոր-ուրոր-, նշ-արենի, ար-արև, զար-ուղի

18. Ո՞ր շաբքի ոչ բոլոր բառերում է գրվում դ:

- 1) նյար-, որ-նել, զար-, կորնթար-
- 2) գեղար-, գեր-, եր-իկ, եր-ում
- 3) Վար-գես, ըն-արմանալ, զար-ոնք, խոր-ուրորդ
- 4) լեր-անալ, դա-արել, ար-յունք, հոր-ահնս

19. Ո՞ր շաբքի ոչ բոլոր բառերում է գրվում ճ:

- 1) վար-ակ, որ-կալ, հերար-ակ, ձոր-
- 2) խոտհուն-, որ-աքար, երկնաբեր-, վար-կան
- 3) կաղկան-, դեղ-անիկ, քուր-, դադ-
- 4) դիմադար-, բար-իբողի, խուր-, փող-կալ

20. Ո՞ր շաբքի բոլոր բառերում է գրվում ց:

- 1) կուր-ք, ցն-ուղ, լվա-ք, հիմավուր-
- 2) ապաքար-, քյուրիմա-ություն, տաղասա-, հուն-ել
- 3) հանդիպակա-ս, ընչա-ք, ցան-կեն, փող-կալ
- 4) կոր-նել, կ-կտոր, ցն-ել, կ-կվել

21. Ո՞ր շաբքի բոլոր բառերում է գրվում ց:

- 1) ցն-ոսի, ճրագալույ-, խ-կել, կաթնահուն-
- 2) ար-ունք, մտա-ածին, խուր-, հիա-ք
- 3) ուր-, դադ-, նստակյա-ս, կե-վածք
- 4) պախուր-, տր-ակ, հայա-ք, երկյուղա-ություն

22. Ո՞ր շաբքի բոլոր բառերում է գրվում զ:

- 1) գեղ-ուկ, խոխո-յուն, զդ-ալ, գեղ-ել
- 2) խառնիճաղան-, լա-վարդ, ա-ազեղ, փայտո-իլ
- 3) զա-աճ, մի-ս, ա-ակողմ, ար-առս
- 4) անզի-ում, քուր-, առ-ս, վայրէ-ք

23. Ո՞ր շաբքի բոլոր բառերում է գրվում զ:

- 1) չդ-իկ, ստեր-, թր-ոց, շեղ-
- 2) ա-պարար, զա-, զի-ել, մարմա-
- 3) զադ-, ան-րդի, բաղար-, փար-
- 4) մար-ան, ար-առ, զո-ի, հաղար-

24. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում չ:

- 1) այճենակա-, բառան-, ա-քաթող, փ-ակ
- 2) պ-րանք, զեղ-ել, զորան-, ա-ազեղ
- 3) մոն-յուն, անտերուն-, մի-և, փու-
- 4) Սո-ի, կտրի-աբար, ճանա-ել, ճաճան-

25. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում դ:

- 1) ու-տապան, սանդու-ք, մժե-, մ-կտալ
- 2) ա-ճատել, գա-թել, տա-տակ, չընա-ատես
- 3) հ-կել, փա-չել, գա-տնի, մե-ք
- 4) ո-կույզ, ու-տաղբուժ, կո-պեք, խե-դել

26. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում դ:

- 1) ե-կելի, տա-տկալի, պ-տոր, ա-ք
- 2) դժբա-տ, բո-կ, ա-տեղություն, բա-կանալ
- 3) ս-տոր, ճե-ք, փո-ք, դե-ձենի
- 4) կթ-ա, զ-ջալ, խա-տել, փայծա-

27. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերում է գրվում դ:

- 1) ատա-ձագործ, փե-կ, փ-ձկոց, գա-քական
- 2) կե-տ, ա-ճատել, փո-կապ, տա-տուկ
- 3) սպանա-, ո-բանվագ, կա-կանձ, ձա-կել
- 4) բա-ձալի, զ-ջալ, կնգու-, հա-թանակ

28. Քանի՞ շարքում կա դով գրվող բառ:

1. բա-տակ, թ-կի, նա-ճիր, սանդու-ք
2. Սանդու-տ, ու-տագնաց, Վա-թանզ, հա-ճապակի
3. կ-տար, Զավա-ք, դժո-ք, կնգու-
4. սպանա-, տառե-, դժ-եմ, տա-տկալի

 - 1) ոչ մի
 - 2) երկու
 - 3) երեք
 - 4) մեկ

29. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերում է գրվում իւ:

- 1) խրո-տ, կմա-ք, պանդու-տ, տա-տակ
- 2) Վա-թանզ, վա-ճան, փա-չել, վ-տալ
- 3) ու-տագնաց, խա-տել, զարդանա-շ, կ-տար
- 4) ապու-տ, թ-կի, կթ-ա, հա-ճապակի

30. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում գ:

- 1) զա-րախոս, վ-կապ, ան-քող, ուղեկորույ-
- 2) վա-քույի, բա-պան, Հա-կերտ, Մար-պետունի
- 3) ան-զույշ, ան-զա, հու-արեկ, թիկնա-որ
- 4) ասուլի-, ան-ուզական, Տո-պ, անո-ք

31. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում Ա:

- 1) հիպնո-, իշխա-, Սուրբիա-, Վարդգե-
- 2) բա-կարող, Որմի-դուխտ, տրոլեյբու-, Մանա-
- 3) որպի-ի, վա-քուղի, Թեոդո-իս, Ա-պրամ
- 4) Թիֆլի-, պար-կա, ան-կըրունք, ան-քող

32. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում Ճ:

- 1) խա-ամուժ, խա-ակն, խո-ռովել, խա-նարած
- 2) դ-խուիի, դր-ել, եռա-անի, թե-անալ
- 3) զու-կան, աշխույ-, օ-արակ, դ-նդակ
- 4) հու-կու, դ-կամ, դ-խեմ, ժու-կալ

33. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում Հ:

- 1) ու-ազնաց, դ-խո, պատ-զամք, խո-որ
- 2) դ-պատեհ, ա-տե, ա-տանակ, ապա-ավանք
- 3) ան-եջ, ան-տապ, ապարո-, օ-տել
- 4) խա-ամ, ժու-կալ, երա-տահակ, թթվա-

34. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում Մ:

- 1) ա-բարիշտ, ա-փոփոխ, բա-բասանք, հա-քույր
- 2) ա-բաստանել, ճա-փա, սի-ֆոնիա, ա-քիոն
- 3) ա-բասիր, ա-պամած, բա-բակ, փա-փուշտ
- 4) բա-բիշ, հա-պատրաստից, Սա-վել, ճա-պրոկ

35. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերում է գրվում Ա:

- 1) ա-պագոռզող, ա-բաստանել, ը-պանակ, ջրա-բար
- 2) ա-բարտավան, ինքնա-փոփ, ա-բարտակ, ա-բարձիշ
- 3) շա-փուր, Մա-վել, բա-բասել, ս-բուկ
- 4) ը-բռնել, բա-բ, ը-բռստ, կշտա-բել

36. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում Ճ:

- 1) ա-քիոն, ա-պետք, ա-քիծ, ա-պատճառ
- 2) բա-քիո, ա-փույթ, ա-պատկառ, ա-փառունակ
- 3) ա-պայման, ա-քրոս, ա-պարփակ, ա-քորճ
- 4) ա-կարգել, ա-բասիր, բա-քեր, ա-պաճույճ

37. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերում է գրվում Ր:

- 1) կ-ծել, գանգու-, զմ-սել, խ-ճիթ
- 2) մա-մա-, ա-ծիվ, հ-ճվել, զ-գիտ
- 3) ա-ժանի, ախո-ժակ, ա-համարհել, բա-բարոս
- 4) կա-կաչել, ա-ջ, զա-շելի, փրփու-

38. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում Ռ:

- 1) ապա-ոշ, ջրիմու-, ճա-ախոս, ա-տնին
- 2) խու-ներամ, կ-քնել, զմ-սել, ականջալու-
- 3) վա-վուն, երկպա-ակություն, սահմ-կել, կա-ք
- 4) արյուն-ուշտ, ճանկ-ել, պայտա-, բուրվա-

39. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *հ*:

- 1) քամա-րել, նշխար-, սուր-անդակ, ընդ-ուա
- 2) նախազա-, ար-ավիրք, հով-ոպ, շնոր-ք
- 3) աշխար-իկ, խոր-ուրդ, հեղ-եղուկ, խոր-ել
- 4) արհամար-ել, հայթ-այթել, խոնար-, ընդ-անուր

40. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *հ*:

- 1) շնոր-ալի, խոր-ին, ընդ-ատակ, չնաշխար-իկ
- 2) ընդ-արվել, հեղ-եղատ, ան-ողբողդ, օր-նանք
- 3) ապաշխար-ել, շնոր-աշատ, խոտ-արք, քար-ատ
- 4) հայ-ոյել, Հով-աննես, ջրօր-նեք, ժպիր-

41. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *յա*:

- 1) լոել-յն, դաստ-րակ, Եպրաքս-, ման-կ
- 2) Մար-մ, խարտ-շ, կող-կ, առօր-
- 3) Վոլող-, Վիլ-մ, Արաքս-, քար-ցակամ
- 4) զրծուն-, եղ-մ, քամ-, հնգամ-կ

42. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *յաւ*:

- 1) միմ-յն, հր-կան, կր-, Բեն-մին
- 2) Անդր-ս, Երեմ-, քիմ-, ակադեմ-
- 3) օվկ-նոս, փաս-ն, Կիլիկ-, Զաքար-
- 4) խավ-ր, Երմոն-, Եղ-զար, Բուն-ք

43. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *յաւ*:

- 1) իշ-ս, էքսկուրս-, հերք-ք, քրիստոն-
- 2) ակաց-, ալելու-, բամ-, Անան-
- 3) միլ-րդ, մում-, Ամալ-, Եղ-
- 4) Արփ-ր, Սիր-, խավ-ր, քր-կան

44. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *եռ*:

- 1) օր-րդ, չեմպ-ն, հ-րոզիլֆ, Լ-նարդոն
- 2) ակորդ-ն, քամել-ն, լեզ-ն, պանք-ն
- 3) շամպին-ն, մարմար-ն, Թ-դոսիա, ամ-քա
- 4) ընտան-ք, արդ-ք, ֆել-տոն, թ-րեմ

45. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *յու*:

- 1) ամբ-ն, թ-րեմ, միլ-ն, Տոկ-
- 2) լեզ-ն, Բյուզանդ-ն, գիլ-տին, մարմար-ն
- 3) բրաբ-ն, հետ-տն, մեղալ-ն, շամպին-ն
- 4) Նապոլ-ն, ուադ-, ակորդ-ն, արդ-ք

46. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում *յու:*

- 1) համբ-ր, երկինչ-ն, թ-բավոր, հ-բասեր
- 2) գ-ժ, արդ-նք, ձ-ք, ալ-ր
- 3) թ-րիմացություն, ս-նակ, աղ-սակ, առ-ծ
- 4) հ-ր, ձ-նամբրիկ, ընկ-զ, աղբ-ք

47. Ո՞ր շարքի ոչ մի բառում կամ բառաձևում երկինչյուն չի գրվում:

- 1) ատամնաբ-ժ, զ-նագեղ, թ-նավոր, հ-սահատ
- 2) ծ-լարան, ողջ-նել, համբ-րել, ուխտադր-ժ
- 3) արշալու-ս, փ-քեռանդ, երև-քական, ընկ-զենի
- 4) հ-զախոռվ, կարկաչ-նով, կապ-տակ, բ-րաստան

48. Ո՞ր բառի մեջ կրկնակ բաղաձայն կա:

- 1) ըն-արմանալ
- 2) ու-եզիր
- 3) տա-ազիր
- 4) ըն-իմանալ

49. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում կրկնակ բաղաձայն:

- 1) բա-աղ, հե-են, մանրազ-ին, ու-ափառ
- 2) ֆի-ական, Լիա-ա, ք-ախույզ, այ-ենարան
- 3) ա-ահայր, ըն-իմակաց, Արի-ես, ու-ընթաց
- 4) իննսունի-երորդ, Վիե-ա, երեսունե-որդ, վշտա-ուկ

50. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում կրկնակ բաղաձայն:

- 1) ու-եվճար, հո-երգություն, տա-ալուծել, մ-կածեն
- 2) քե-ի, չո-որդ, օ-ան, տանջա-ուկ
- 3) տա-ասեռ, ըն-եմ, ե-որդ, կե-ե
- 4) կեղ-ամ, եր-ենցաղ, փ-ուն, հե-ենիստական

51. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում կրկնակ բաղաձայն:

- 1) տոն-ա, հետաք-ին, զ-ել, ա-կուն
- 2) ֆի-ական, տա-ական, ու-աբերձ, հո-ուիի
- 3) ցորնամ-իկ, պ-ահողմ, հո-ական, ու-անկյուն
- 4) այ-ուբեն, բա-աղ, բնօ-ան, եր-ենցաղ

52. Ո՞ր շարքի ոչ մի բառում կրկնակ բաղաձայն չի գրվում:

- 1) տասներեքն-որդ, ու-եզրություն, տա-լնիթերցում, գործու-ել
- 2) այ-ենական, հո-անդական, աշխար-այացք, ու-արկել
- 3) հո-երգություն, տա-երք, նորե-ուկ, հո-անի
- 4) ըն-իմադիր, խորազ-ին, քանիե-որդ, ցորնամ-իկ

53. Ո՞ր տառը կամ երկինչյունը տեղադրելու դեպքում բառի դիմաց գրված բացատրությունը ճիշտ կլինի. լուծման տարրերակներից ո՞րն է ճիշտ:

- ա. **վար-**(1. **p**, 2. **կ**) -հետինակություն, պատիվ
 բ. **զիր-**(1. **p**, 2. **գ**) -շեշտակի
 գ. **հար-** (1. **դ**, 2. **թ**) -դարման
 դ. **վաղորդ-մ** (1. **յա**, 2. **այ**) -այգաբաց

- 1) ա-1, թ-2, զ-1, դ-1
- 2) ա-2, թ-1, զ-1, դ-2
- 3) ա-2, թ-2, զ-1, դ-1
- 4) ա-1, թ-2, զ-2, դ-1

54. Ո՞ր տառը տեղադրելու դեպքում բառի դիմաց գրված բացատրությունը ճիշտ կլինի. լուծման տարրերակներից ո՞րն է ճիշտ:

- ա. **կորի-** (1. **Ճ**, 2. **Ճ**) -քաջ
- բ. **որ-** (1. **Ռ**, 2. **Ռ**) -խաղողի վազ
- գ. **ա-ս** (1. **Ա**, 2. **Խ**) -հիվանդություն
- դ. **ու-ս** (1. **Խ**, 2. **Ա**) -դաշինք

- 1) ա-1, բ-2, զ-2, դ-1
- 2) ա-2, բ-1, զ-1, դ-2
- 3) ա-1, բ-2, զ-2, դ-2
- 4) ա-2, բ-2, զ-1, դ-1

55. Ո՞ր տառը կամ տառակապակցությունը տեղադրելու դեպքում բառի դիմաց գրված բացատրությունը ճիշտ կլինի. լուծման տարրերակներից ո՞րն է ճիշտ:

- ա. **այ-անք** (1. **Յ**, 2. **Ճ**) -սերևեթանք
- բ. **թ-թ** (1. **Դ**, 2. **Մ**) -գույն
- գ. **դե-ան** (1. **Ռ**, 2. **Ջ**) -խարտյաշ
- դ. **ըն-ացք** (1. **Բ**, 2. **Ճ**) -շարժում

- 1) ա-1, բ-1, զ-2, դ-1
- 2) ա-2, բ-1, զ-2, դ-2
- 3) ա-1, բ-2, զ-2, դ-1
- 4) ա-2, բ-2, զ-1, դ-1

56. Ո՞ր տառը կամ տառակապակցությունը տեղադրելու դեպքում բառի դիմաց գրված բացատրությունը ճիշտ կլինի. լուծման տարրերակներից ո՞րն է ճիշտ:

- ա. **մեղ-** (1. **Բ**, 2. **Կ**) -քուլամորթ
- բ. **կայր-իճ** (1. **Գ**, 2. **Կ**) -գծագրական զործիք
- գ. **ուկեծ-** (1. **Մ**, 2. **ԱԿ**) -ոսկեճանանչ
- դ. **շառաչ-ն** (1. **Մ**, 2. **Յ**) -աղմկալից ձայն

- 1) ա -1, բ-1, զ-2, դ-2
- 2) ա-2, բ-2, զ-1, դ-2
- 3) ա-1, բ-2, զ-2, դ-1
- 4) ա-2, բ-1, զ-1, դ-2

57. Ո՞ր տառը տեղադրելու դեպքում բառի դիմաց գրված բացատրությունը ճիշտ կլինի. լուծման տարրերակներից ո՞րն է ճիշտ:

- ա. **շաղա-** (1. **Վ**, 2. **Խ**) -գայլիկոն
- բ. **նշ-ար** (1. **Խ**, 2. **Ա**) -վիրաբուժական դանակ
- գ. **մախ-իր** (1. **Ղ**, 2. **Ճ**) -կոտորած
- դ. **մոյ-** (1. **Բ**, 2. **Կ**) -հենասյոն

- 1) ա-1, բ-2, զ-2, դ-1
- 2) ա-1, բ-1, զ-1, դ-2
- 3) ա-2, բ-1, զ-2, դ-2
- 4) ա-1, բ-2, զ-1, դ-2

58. Ո՞ր շարքի բոլոր բառերում է գրվում միևնույն բաղաձայնը:

- 1) նզո-ք, Ա-րողիտե, ա-տոնատ, հարա-
- 2) աս-ալտ, Ա-դանստան, թա-շյա, Օ-սաննա
- 3) աղ-աններ, նա-թափառ, Եթո-պիա, զա-քել
- 4) ս-ինքս, փլա-քամիչ, բո-չսնք, Խոսրո-

59. Բառերից քանիսո՞ւմ է գրվում *ը*.

մակ-նթացուրյուն, կոր-նթարդ, իմքն-ստինքյան, հոտ-նկայս, զիրկ-նդիսառն, երկ-նտրամք, լուս-նկա, խոշ-նդոտ, առ-նչվել, առ-նթեր:

- 1) իննում
- 2) ութում
- 3) յոթում
- 4) վեցում

60. Բառերից քանիսո՞ւմ է գրվում *ց*.

լացակումա-, լվա-ը, խե-գետին, հանդիպակա-, լացուկո-, կաթնահում-, ճրագալոյ-, ցն-ուղ, սրբողա-, հինապուր-:

- 1) իննում
- 2) հինգում
- 3) վեցում
- 4) յոթում

61. Բառերից քանիսո՞ւմ է գրվում *ծ*.

ալո-եմի, ակնակապի-, աղ-ատել, ա-պարար, զո-ի, այծենակա-, ճո-ք, ոտ-անալ, կապար-, բվե-:

- 1) յոթում
- 2) ութում
- 3) հինգում
- 4) բուռում

62. Բառերից քանիսո՞ւմ է գրվում *ճ*.

ա-քաստանել, ա-քարտավան, ա-քիոն, քա-քիշ, հա-քավ, քա-քասել, ա-քարիշտ, քա-քեր, սուսա-քար, շա-քոտ:

- 1) երեքում
- 2) մեկում
- 3) ոչ մեկում
- 4) երկուսում

63. Տրված բառերից քանիսո՞ն ուղղագրական սխալ կա.

ընդհանուր, ընդհատել, ընդհամենք, ուղղորդել, ուղղական, ուղղեղիր, ամենօրյա, ամանօրյա, հանապազօրյա, նախօրե:

- 1) երեքում
- 2) երկուսում
- 3) մեկում
- 4) չորսում

64. Համարակալված բառերում բաց բողած տառերը կամ տառակապակցությունները պատասխանների ո՞ր շարքում են ճիշտ նշված:

Ստորև նշված են բառերի առաջնային համարակալությունները:
 Աստիճանաբար մոռանալով խառնիճաղան- (1) առօր-ական (2) հոգսերը և կտրվելով սրտմաշու-
 (3) ու տա-տկայի (4) մտքերից՝ Երեմ-ն (5) խաղաղ քուն մտավ: Ժող-կալ (6) մայրը բարեհոգի ժպիտով
 նայեց խա-շիկի (7) նմանվող իր որդուն, զգույշ վերցրեց մա-մարյա (8) ե-ածանուն (9) դրված լաջվար-
 (10) զարդաստուփը և դուրս եկավ սենյակից:

- 1) 1-զ, 2-է, 3-կ, 4-իս, 5-իա, 6-ժ, 7-փ, 8-ը, 9-ո, 10-դ
- 2) 1-զ, 2-է, 3-կ, 4-դ, 5-իա, 6-ժ, 7-փ, 8-ը, 9-ո, 10-դ
- 3) 1 -ճ, 2-է, 3-ք, 4-դ, 5-իա, 6-շ, 7-ք, 8-ո, 9-ը, 10-դ
- 4) 1-ճ, 2-է, 3-կ, 4-դ, 5-յա, 6-շ, 7-ք, 8-ը, 9-ո, 10-դ

ԲԱՌԵՐԻ ՄԻԱՍԻՆ, ԱՆՁԱՏ, ԳԾԻԿՈՎ ԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Ո՞ր շաբքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում անջատ:

- 1) փութ(եռանդ), թան(ապուր), հետ(մնալ), հարյուր(հազար)
- 2) ի(հեճուկս), առ(այն), ափ(հանել), դեմ(դիմաց)
- 3) իրար(անցում), միտք(անել), հենց(որ), ամենա(երկար)
- 4) առ(և)տուր, վեր(կենալ), խուլ(համր), պատ(շար)

2. Ո՞ր շաբքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում անջատ:

- 1) հօդս(ցնդել), ծայրից(ծայր), ինչ(որ)է, քանի(դեռ)
- 2) ի(սկզբանե), աչքից(ընկնել), զիրկ(ընկ)խառն, մի(երկու)
- 3) դաս(դասել), ժամ(առ)ժամ, լաց(լինել), Արփա(Սևան)
- 4) մոտ(գալ), շուրջ(պար), գիշեր(ցերեկ), ասես(թե)

3. Ո՞ր շաբքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում անջատ:

- 1) մեջք (մեջքի), գեներալ(մայոր), եզիպտա(սիրիական), Սասիսն(ի)վեր
- 2) զառ(ի)վայր, երգ(ու)պար, դափ(դաստարկ), ըստ(ամենայնի)
- 3) հարյուր(մեկ), առ(հավետ), մեծ(մասամբ), ուր(որ)է
- 4) հետ(դառնալ), ի(լրումն), հավոր(պատշաճի), ձեռք(բերել)

4. Ո՞ր շաբքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում անջատ:

- 1) մի (երկու), թեթև (քաշային), դիցուք (թե), երկու (երրորդ)
- 2) կողը (կողքի), անուն (ազգանուն), լույս (լնձայել), ի (դերեւ) ելնել
- 3) ի (հեճուկս), առ (այն), սրբություն (սրբոց), դեմ (հանդիման)
- 4) ըստ (իս), ձեռք (բերում), թև (առնել), ոչ (ոքի)

5. Ո՞ր շաբքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում միասին:

- 1) հրամ(կազմ), չար(որակ), հյուսիս(արևելք), հինգ(մետրանոց)
- 2) մեծ(բրիտանական), շիլա(շփոթ), շաքար(եղեգն), ոռուս(ամերիկյան)
- 3) օրն(ի)րուն, ճաճանչ(ոսկը), ձեռք(սեղմում), հյուսիս(կորեական)
- 4) հետ(ճգնաժամային), հինգ(հարյուրամյա), կափ(կանաչ), օտար(երկրացի)

6. Ո՞ր շաբքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում միասին:

- 1) ազդու(ոսկը), առ(հասարակ), բուժ(օգնություն), հև(ի)հև
- 2) խոտ(հարք), թերի(բարձրագույն), երկաք(զիծ), հետ(գրություն)
- 3) բույլ(տվություն), զրուց(ընկեր), ծառս(լինել), աներ(որդի)
- 4) մակ(երիկամ), հետ(կանչել), խաչ(քար), մարտ(արվեստ)

7. Ո՞ր շաբքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում միասին:

- 1) բուժ(քույր), հենց(որ), բնակ(վարձ), մինչ(դեռ)
- 2) պետ(կրկես), ազգ(ու)տակ, զառ(ի)վեր, բառ(մասնիկ)
- 3) պատե(պատ), զին(զրբույկ), փայտ(փորիկ), ճեպ(ընթաց)
- 4) օք(ուղի), ճեփ(ճերմակ), եռ(ու)զեռ, գործ(ընկեր)

8. Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում միասին:

- 1) խոսքի(մասային), գյուղե(գյուղ), հետ(ծննդյան), խեթ(խեթ)
- 2) փոխ(արքա), ըստ(ամենայնի), վեր(լուծել), ոչ(ինչ)
- 3) այս(պես), ի(զուր), մերձ(քաղաքային), հատ(լուսիր)
- 4) մաս(մարուր), գլուխ(կոտրուկ), անդր(բևեռային), գազ(այրիչ)

9. Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում գծիկով:

- 1) մորե(մերկ), ընկեր(բարեկամ), տուն(բանգարան), հույս(ապավեն)
- 2) բարակ(մարակ), հինգ(վեց), բուք(բորբան), հասարակական(քաղաքական)
- 3) թելիկ(մելիկ), քիթ(քթի), անուն(ազգանուն), աղաջանք(պաղատանք)
- 4) գնալ(գալ), լույս(ընծայել), ուսուցիչ(ուսուցչուիի), ասած(չասած)

10. Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում գծիկով:

- 1) ասել(լսել), գիշեր(ցերեկ), ծայրե(ի)ծայր, ոռու(պարսկական)
- 2) վեր(կենալ), (չորս)հինգ, հայ(պարթևական), հյուսիս(ամերիկյան)
- 3) լինել(չլինել), ինժեներ(մեխանիկ), լիտր(վայրկյան), ֆրանս(գերմանական)
- 4) հետ(գրություն), աման(շաման), անտես(անհայտ), հույն(պարսկական)

11. Ո՞ր շարքի բոլոր բառերի (կապակցությունների) բաղադրիչներն են գրվում գծիկով:

- 1) գնալ(գալ), ձյուն(ձմեռ), տեր(տիրական), թե(թիկունք)
- 2) ոլոր(մոլոր), հետ(մնալ), դույզն(ինչ), վագոն(ռեստորան)
- 3) կամաց(կամաց), իրեր(կովկասյան), (տեր)Սահակ, թե(առնել)
- 4) ընկեր(բարեկամ), ժամ(պատարագ), դեմ(դիմաց), սև(սպիտակ)

12. Ո՞ր շարքում գծիկով գրվող բառ չկա:

- 1) քաղաք(պետություն), վեր(ելք), երկաթ(ուղի), դեմ (հանդիման)
- 2) շիփ(շիտակ), քաջ(առողջ), բառ (գիրք), մեծից (փոքր)
- 3) մերձ(քաղաքային), մուգ(կարմիր), դույզն(ինչ), դուռ (դռան)
- 4) քաղաքից(քաղաք), հարավ(արևելյան), ի(հեճուկս), բան (ապուր)

ԲԱՌԵՐԻ ԵՎ ԲԱՌԱԿԱՊԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԾԱՏԱՌՈՎ ԳՐՈՒԹՅՈՒՆ

1. Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) Աֆղանստանի հալասական ՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՍԵԾ ՍԱՍԻՍ, ԴՈՆԻ ՌՈՍՏՈՎ, ՖՐԱՆՑ ՎԵՐՖԵԼ
- 2) ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴ, ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍՎՈՐԻՉ, ԶՈՐԻ ՄԻՐՈ, ԿԱՊՈՒՏԱՆ ԼԻԾ
- 3) ԱՇՈՏ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ, ԼԱ ՍՄՆԸ, ՁԵՆՈՎ ՕՀԱՆ, ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶ
- 4) ՎՈԼՖԳԱՆԳ ԳՅՈՒԹԵ, ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ, ԵՌՅԱԿ ԴԱՇԻՆՔ, ՀԱՅԿԱԿԱՆ ՏԱՎՐՈՒՄ

2. Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) ԱՐԾԱԿ ԵՐԿՐՈՐԴ, ՄԻԱՎՈՐՎԱԾ ԱԶԳԵՐԻ ԿԱԶՍԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ, ԱՇՈՏ ՌԴԱՐՄԱՅ, ՓԱՎԱՏՈՍ ԲՈՒԶԱՆԴ
- 2) ՆՈՐ ԱՐԵԾ, ՀԱՅԿԱԿԱՆ ԼԵՌՆԱՇԽԱՐՀ, ՍԵԾ ԲՐԻՏԱՆԻԱ, ՆՈՐ ԶԵԼԱՆԴԻԱ
- 3) ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՕՆՈՐԵ ԴՐ ԲԱԼԶԱԿ, ՄԻՔԱՅԵԼ ՏԵՐ-ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ, ԱՐԱԲԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԼԻԳՈՒ
- 4) ՍԱՅԱԹ-ՆՈՎԱ, ԼԱՏԻՆԱԿԱՆ ԱՄԵՐԻԿԱ, ՎԱՀԱԳՆ ՎԻՃԱՊԱՔԱՆ, ԳԱՅԼ ՎԱՀԱՆ

3. Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) ԵՎՀԱ ՍԱՐԳԱՐԵ, ՊԱՐՍԻՑ ԾՈՅՑ, ԻՍԱՀԱԿ ՆՅՈՒՏՈՆ, ՆՈՐ ԵՐԿԻՐ
- 2) ԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍՏԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆԻ ՍՈՒՐԲ ՄԻՆԱՍ, ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔ, ՌՈՒՍԱՍՏԱՆԻ ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ
- 3) ՎԻԼՀԵԼՄ ՖՈՆ ՀՈՒՖՈԼԴՏ, ԿՈՆԴԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ, ՍԵԾ ՍՀԵՐ, ԱՐԱՅԻ ԼԵՌ-ԺԱՆՆԱ ԴԱՐԿ, ՀԻՆ ՀՈՒՆԱՍՏԱՆ, ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԱՖՐԻԿԱ, ԱՇՈՏ ԵՐԿԱԹ

4. Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) ՆԵՐՔԻՆ ԹԱԼԻՆ, ՎԱՆ -ՏՈՍՊ, ՎՐԿԱՆԱ ԾՈՎ, ԶՈՐՋ ԲՈՒԾ ԿՐՏՍԵՐ
- 2) ԱՌՅՈՒՋԵՎ ՍՀԵՐ, ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ, ՆԵՐՄԵՍ ՍԵԾ, ԿԻԼԻԿԻԱՅԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԹԱՎԱՎՈՒԹՅՈՒՆ
- 3) ՅԱՍՆԱՅԱ ՊՈԼՅԱՆԱ, ՍԱՅՐ ԹԵՐԵԶԱ, ԳԵՐՄԱՆԻԱՅԻ ԴԵՍՈԿՐԱՏԱԿԱՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ՍԱՅՆԻ ՖՐԱՆԿՈՒՐՏ
- 4) ԽՈՍԵ ՌԱՈՒ ԿԱՊԱՔԼԱՆԿԱ, ՆՈՐ ՏԱՐԻ, ՍԱՀԱԿ ՊԱՐԹԵՎ, ՆԻԺՆԻ ՆՈՎԳՈՐՈԴ

5. Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) «ԱՆՀԱՊԹ ԱՔԼՈՐ», ՍԵԾ ԲՐԻՏԱՆԻԱՅԻ ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏ, ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ, ՓՈՔՐ ՄԱՍԻՍ
- 2) ԱՐՓԱ-ՍԵՎԱՆ, ԱՆԳԻԱ ՍՈՒՐԲ ՆՇԱՆ, ԲԱՐՁՐ ՀԱՅՔ, ՎՐԱՍՏԱՆԻ ՀԱՄՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
- 3) ՎՈԼԳԱ ԴՈՆ, ՆՅՈՒ ՅՈՐՔ, ՎԱՆ ԳՈԳ, ԱԶԳԵՐԻ ԲՐԻՏԱՆԱԿԱՆ ՀԱՍՏԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ
- 4) ՄԱՍՏՐԱՅԻ ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆՆԵՍ, ՄԱՍՅԱՅՈՏՆ ԳԱՎԱՌ, ՕՍԱՐ ԽԱՅԱՄ, ՍԱՆ ՖՐԱՆՑԻՍԿՈ

6. Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) ԱՇՈՏ ԵՐԿԱԹ, ՏԻԳՐԱՆ ՍԵԾ, ՊԵՏՐՈՍ ԱՌԱՋԻՆ, ՄԱԼԻԾԿԱՅԻ ՍՈՒՐԲ ԱՆՆԱ
- 2) ԴԱՎԻԹ ԱՆՀԱՊԹ, ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԿՈՎԿԱՍՅԱՆ ԼԵՌՆԱՇՂԹԱ, ԽՐԻՍՅԱՆ ՀԱՅՐԻԿ ԿԱԹՈՂԻԿՈՍ
- 3) ՄՈՒՂՆՈՒ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ, ՆՈԲԵԼՅԱՆ ՄՐՅԱՆԱԿ, ԱՐԵՎԱՏՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆ, ՆՈՐ ՆԱԽԻԶԵՎԱՆ
- 4) «ԱԶԳԱՅԻՆ ՄԻԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ» ԿՈՒՍԿՑՈՒԹՅՈՒՆ, ՍՈՂՈՄՈՆ ԻՍԱՍՈՒՆ, ԱՐՏԱՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ, ԳՐԻԳՈՐՅԱՆ ՏՈՍՄԱՐ

7. Ո՞ր շարքի բառերի (բառակապակցությունների) բոլոր բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) ՀՈՎՀԱՆՆԵՍ ԱՌԱՔՅԱԼ, ՄԱՐ ԱԲԱՍ ԿԱՏԻՆԱ, ԱՐԱԲԱԿԱՆ ՄԻԱՅՅԱԼ ԷՄԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ, ԴԱՎԹԱԿ ՔԵՐԹՈՂ
- 2) ԾՎԵԴԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՈՍԿԱՆ ԵՐԵՎԱՆՑԻ, ՎԵՐԻՆ ԳԵՏԱՇԵՆ, ԵԶՆԻԿ ԿՈՂԲԱՑԻ
- 3) ԱՌՅՈՒԾ ՄՀԵՐ, ԱՐԵՎԱՏՅԱՆ ԵՎՐՈՊԱ, ԱՐՏԱՇԵՍ ԲԱՐԵՊԱԾՏ, ԱՐԾՐՈՒՆՅԱՅ ՏԻԿԻՆ
- 4) ԱԶԳԱՅԻՆ ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ, ԱՆՔՍԱՄՆՐ ԱՌԱՋԻՆ, ՀՈՎՀԱՆՆԵՍ ՀՈԼՈՎ, ԽՆԿՈ-ԱՊԵՐ

8. Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) ԱՐԵՎԱՏՅԱՆ ԵՓՐԱՏ, ԼԱՍ ՎԵԳԱՍ, ԱՐՏԱՇԵՍ ԲԱՐԵՊԱԾՏ, ՀՆԴԿԱԿԱՆ ՕՎԿԻԱՆՈՍ
- 2) ՎԱՆԻ ՆԱՀԱՆԻ, ՀՈ-ՈՍԵԱԿԱՆ ԿԱՅԱՐՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՔ ԿԱՅԱՐԵՐԻ ԴԱՇԻՆՔ, ՀԱՅՐԵՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ԱՌԱՋԻՆ ԱՍՏԻճԱՆԻ ԸՔԱՆԾԱՆ
- 3) ԿՐԱՍՆՈՅԱՐՍԿԻ ԵՐԿՐԱՄԱՍ, ԼՈՐԴԵՐԻ ՊԱԼԱՏ, ԹՈՆԴՐԱԿՅԱՆ ՇԱՐԺՈՒՄ, ՄՈՒՂՆՈՒ ՍՈՒՐԲ ԳԵՎՈՐԳ
- 4) ՀԵՌԱՎՈՐ ԱՐԵՎԵԼՔ, ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՓՐԱՏ, ԽԱՂԱՂ ՕՎԿԻԱՆՈՍ, ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՌԱՋԻՆ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ

9. Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) ԽԱՂԱՎՈՒԹՅԱՆ ՀԱՍԱԾԽԱՐՀԱՅԻՆ ԽՈՐՀՈՒՐԴ, ԱՐՁԵՍԱԿՑԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՍԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՖԵԴԵՐԱՑԻԱ, «ՀՉՈՐ ՀԱՅՐԵՆԻՔ» ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅՈՒՆ, ԱՐԻՈՒԹՅԱՆ ՄԵԴԱԼ
- 2) ՍԱՀԱԿ ՄԵՎԱԴԱ, ՔԵՆՏԻ ԿՈՍՍՈՒԹՅՈՒՆ, ՀՅՈՒՏԻՍՍՅԻՆ ՍԱՌՈՒՅՅԱԼ ՕՎԿԻԱՆՈՍ, ԱՎԹԱՍԱՐ ԿՂՋԻ
- 3) ՈՐՈՏԱՆԻ ԼԵՌՆԱՍՅՔ, ԲՅՈՒՋԱՆԴԱԿԱՆ ԿԱՅԱՐՈՒԹՅՈՒՆ, ԴԱՐԱՀԱՄԲԻ ՍՈՒՐԲ ՍՏԵՓԱՆՈՍ, ԳԵՂԱՍՍ ԼԵՌՆԵՐ
- 4) ԱՅՈՒՆԻՔԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ, ՎԱՐԴԱՆ ԶՈՐԱՎԱՐ, ԲԵԼԱՌՈՒՄԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, «ՀՈՒՇԱՐՁԱՆ ՍԱՅՐԻԿԻՍ»

10. Ո՞ր շարքի բաղադրյալ հատուկ անունների միայն առաջին բաղադրիչներն են գրվում մեծատառով:

- 1) ՔԱԶ ՆԱԶԱՐ, ՀՈՒԼՅԱՆ ՏՈՍԱՐ, ԵՐԵՍՆԱՄՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ, ՄԵԾ ՊԱՀՔ
- 2) ՀԻՆ ՀՈ-ՈՍ, ՆԵՐՍԵՍ ԱՇՏԱՐԱԿԵՑԻ, ՀԱՐՅՈՒՐԱՍՅԱ ՊԱՏԵՐԱԶՄ, ՄԵԾ ԵՂԵՌՆ
- 3) ԶԱԽՈՐԴ ՓԱՆՈՍ, ՆՈՐ ՏԱՐԻ, «ՆԱԽՐԻՏ» ԳՈՐԾԱՐԱՆ, ՊԱՏՎՈ ԼԵԳԵՈՆԻ ԸՔԱՆԾԱՆ
- 4) ԱԶԳԵՐԻ ԼԻԳԱ, ՍԱՐՏԱԿԱՆ ԽԱԶԻ ԵՐԿՐՈՐԴ ԱՍՏԻՃԱՆԻ ԸՔԱՆԾԱՆ, ԱՆՎԱՆԳՈՒԹՅԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ, ԱՌԱՋԻՆ ՀԱՍԱԾԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏԵՐԱԶՄ

11. Ո՞ր շարքում մեծատառի գործածության սխալ կա:

- 1) Տրդատ Առաջին, Ժաննա դ'Արկ, Արևանյան Հայաստան, Ներսես Լամբրոնացի
- 2) Դավիթ Անհաղթ, Ազգային Ժողով, Մեծ Հայք, Արաբական Սիացյալ Էմիրություններ
- 3) «Գրական թերթ», Նար-Դոս, Հյուսիսային սաղուցյալ օվկիանոս, Լեռնադրո դա Վինչի
- 4) Իվան Ահեղ, Հրո Երկիր, Ղրիմի թերակղզի, Մեծ Բրիտանիայի Սիացյալ Թագավորություն

**ԲԱԺԻՆ 2 ԱՅԲՈՒԲԵՆ, ՏԱՌ, ՀՆՉՅՈՒՆ,
ՏԱՌԵՐԻ ԹՎԱՅԻՆ ԱՐԺԵՔԸ**

1. Ո՞ր տարրերակում է տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:

- 1) ԶԿԳ-853
- 2) ՄԴԵ-294
- 3) ՔՅԿԴ-9354
- 4) ՑԶԻԳ-6723

2. Ո՞ր տարրերակում է տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:

- 1) ՆՅԹ-459
- 2) ՓԶՀԳ -8762
- 3) ՑՍԱԵ-6216
- 4) ՉԼԹ-729

3. Ո՞ր տարրերակում է տառակապակցության թվային արժեքը ճիշտ նշված:

- 1) ԶԶԶ- 785
- 2) ՓԶԽԴ -8934
- 3) ՄՆԶԱ-2481
- 4) ՐՆԼԷ -5327

4. Ո՞ր տարրերակում է տառակապակցության թվային արժեքը սխալ նշված:

- 1) ՇԾԶ- 556
- 2) ԶԼԴ- 934
- 3) ՈԿԲ-768
- 4) ՐՆԻԳ -5423

5. Ո՞ր տարրերակում է տառակապակցության թվային արժեքը սխալ նշված:

- 1) ՏԶՀԹ- 4788
- 2) ՈՒՅԶԷ-7387
- 3) ԶԾԵ-955
- 4) ՓՊԼԲ-8832

6. Ո՞ր տարրերակում է տառակապակցության թվային արժեքը սխալ նշված:

- 1) ԱՅՀԱ- 2371
- 2) ՈՇՃԷ- 1217
- 3) ՎՃԽԴ - 3144
- 4) ՑՈԿԶ- 6666

7. Ո՞ր տարրերակում է տառակապակցության թվային արժեքը սխալ նշված:

- 1) ՊՀԴ- 874
- 2) ՈՀԲ- 678
- 3) ՏՅՀԸ- 4578
- 4) ՓԶՀԱ - 9971

8. Ո՞ր տարրերակում է տառակապակցության թվային արժեքը սխալ նշված:

- 1) ՏՍԾԲ- 4258
- 2) ԱԿԴ - 2064
- 3) ՔԶԴԹ- 9999
- 4) ԱՊՀԳ - 873

9. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դասավորված այբբենական կարգով:

- 1) ածխափոշի, ակնագործ, աղաման, ազբեստ
- 2) ամենաժատ, այլազգի, անարիկ, անքաժանելի
- 3) անուն, անգործ, ամբիոն, առաջադիմական
- 4) անձնագիր, անպարագիծ, անվախճան, անկապտելի

10. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դասավորված այբբենական կարգով:

- 1) արթուն, արմավենի, արփի, անդառնալի
- 2) արտիստ, անշուշտ, անվործ, աղտեղություն
- 3) արտորանք, ավազակ, աքացի, աքսոր
- 4) բանալի, բանջարեղեն, բարբարոս, բարեխառն

11. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դասավորված այբբենական կարգով:

- 1) բավական, բարձրաբերձ, բարություն, բացահայտել
- 2) բերկրալի, բերքատու, բեմադրիչ, բորբոս
- 3) բուսակեր, բուրաստան, բուժում, բուրումնավետ
- 4) բքախեղդ, բերել, բքացում, բժիշկ

12. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դասավորված այբբենական կարգով:

- 1) բուժում, բռնազրոս, բռունցք, բրդատու
- 2) զանձարան, զարեհաց, զարուն, զավառ
- 3) զեղարդ, զեղեցիկ, զեներալ, զետարերան
- 4) զետնամորի, զերած, զերեվարել, զերանդի

13. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դասավորված այբբենական կարգով:

- 1) անկայուն, անկորիզ, անհաջող, ամոքում
- 2) անմտություն, անմահացնել, անորի, անսերունդ
- 3) ավազարուք, ավելանալ, ավյուն, ավտոմատ
- 4) արգելակ, արարշագործ, արդարատենչ, արևագույն

14. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դասավորված այբբենական կարգով:

- 1) բյուզանդական, բնախույզ, բնուրագիր, բողբոջ
- 2) զալուստ, զաղտնիք, զավաթակիր, զազան
- 3) զիխիկոր, զիխանոց, զիրուկ, զյուղատնտես
- 4) զողություն, զոյություն, զոհանալ, զոտեպնդել

15. Ո՞ր շարքի բոլոր բառերն են դասավորված այբբենական կարգով:

- 1) բրաբիոն, բրդուճ, բրոնզ, բյուրապատիկ
- 2) զագար, զահանիստ, զաղափար, զաղութ
- 3) զայլահաչ, զանգատ, զայթակդել, զանգրահեր
- 4) բովանդակել, բեկանել, բորբոքում, բվեճ

16. Ո՞ր շարքի բոլոր բառերն են սկսվում ձայնավոր հնչյունով:

- 1) ուրագ, ուկի, ընկեր
- 2) ընկնել, յուրահատուկ, օգուտ
- 3) սկսել, օրինակ, ուրախ
- 4) երեկո, էական, ոտք

17. Քանի՞ ձայնավոր հնչյուն կա *մոնշում* բառում:

- 1) երկու
- 2) երեք
- 3) մեկ
- 4) չորս

18. Քանի՞ ձայնավոր հնչյուն կա *եզր* բառում:

- 1) մեկ
- 2) երկու
- 3) երեք
- 4) ոչ մի

19. Քանի՞ բաղաձայն հնչյուն կա *երկամերձ* բառում:

- 1) հինգ
- 2) վեց
- 3) յոթ
- 4) ութ

20. Քանի՞ բաղաձայն հնչյուն կա *ողորմելի* բառում:

- 1) յոթ
- 2) չորս
- 3) հինգ
- 4) վեց

21. Քանի՞ բաղաձայն հնչյուն կա *Ողիսև* բառում:

- 1) չորս
- 2) հինգ
- 3) վեց
- 4) երեք

22. Քանի՞ բաղաձայն հնչյուն կա *եմքակայակամ* բառում:

- 1) ութ
- 2) յոթ
- 3) հինգ
- 4) վեց

23. Ո՞ր շարքի բոլոր բառերի տառերի և հնչյունների քանակն է հավասար:

- 1) անորոշ, հայորդի, արջառու, ովքեր
- 2) կտակարան, չարորակ, ապերջանիկ, կաքավորս
- 3) արհամարիել, ալեվարս, անընկեր, բարձրանալ
- 4) կայսերապաշտ, մանրադիտակ, հոգեվարդ, աստղիկ

24. Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) Հայոց այրութենք հինգերորդ դարում ունեցել է 36 տառ, որոնցից յուրաքանչյուրը համապատասխանել է մեկ հնչյունի:
- 2) Միջին դարերում հայոց այրութենք ունեցել է 39 տառ:
- 3) Հայոց լեզուն ունի 6 ձայնավոր հնչյուն:
- 4) Հայոց լեզուն ունի 31 բաղաձայն հնչյուն:

25. Ո՞ր շարքի բոլոր բառերի ընդգծված է-ն է արտասանվում է:

- 1) գետեղը, ինքնաեռ, վերելք, աներեր
- 2) զարկերակ, մեներգ, ուղերթ, տասներեր
- 3) կիսաեփի, անեղը, առերևույթ, թեական
- 4) զուղերգ, ամենաերազկոտ, աներևակայելի, վերելք

26. Բառերից քանիսո՞ն է ընդգծված է-ն արտասանվում յէ.

տասսներեր, ծովեղը, երկու-երեք, ողբերգակ, անեփի, մորեղբայր, արևելք, նրբերշիկ, ստորերկրյա, մարդերգություն:

- 1) ոչ մեկում
- 2) մեկում
- 3) երկուսում
- 4) երեքում

27. Ո՞ր շարքի բոլոր բառերի ընդգծված ո-ն է արտասանվում օ:

- 1) անորակ, անողոք, մարդառս, ութոտնուկ
- 2) անորոշ, սառնորակ, վաղորդայն, կրծռսկը
- 3) տարորոշել, հնառճ, ձկնորս, անորսալի
- 4) քաջորդի, անողնաշար, հանապազորդ, արջառս

28. Ո՞ր շարքի բոլոր բառերում է ո-ն արտասանվում զօ:

- 1) բարձրորակ, ողբազին, աղիողորմ, բարեղջույն
- 2) բարորակ, որդեսեր, անողնաշար, որևէ
- 3) ամենաառակալ, բազմաստ, որքևայրի, նրբառճ
- 4) առողջություն, ոգելից, սևաստ, մարդահմակ

29. Ո՞ր բառում է գաղտնավանկի ը-ն սխալ տեղադրված:

- 1) մթ(ը)նկա
- 2) ձեռն(ը)տու
- 3) շր(ը)խկոց
- 4) ճխ(ը)լվել

30. Ո՞ր բառում է գաղտնավանկի ը-ն սխալ տեղադրված:

- 1) գտ(ը)նվել
- 2) լուս(ը)նկա
- 3) խ(ը)նդրանք
- 4) ձեռ(ը)նբաց

31. Ո՞ր բառում է գաղտնավանկի ը-ն սխալ տեղադրված:

- 1) զ(ը)րկվել
- 2) զն(ը)նել
- 3) մոմ(ը)ռալ
- 4) հազն(ը)վել

32. Ո՞ր բառում է գաղտնավանկի ը-ն ճիշտ տեղադրված:

- 1) հայտն(ը)վել
- 2) լուսն(ը)կա
- 3) խնդ(ը)րանք
- 4) տաս(ը)նմեկ

ԲԱԺԻՆ 3**ՎԱՆԿ, ԾԵԾՏ, ՀՆՉՅՈՒՆԱՓՈԽՈՒԹՅՈՒՆ**

1. Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա:

- 1) նկարակալ, շրջագայություն, զմրուխտյա
- 2) հստակություն, ըմբշամարտ, թոշուն
- 3) թվարկություն, գրաշար, ձեռնամարտ
- 4) խոսակից, հնարամիտ, վնասազերծել

2. Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա:

- 1) սրախողիսող, կրթություն, ակնբախ, ճեպընթաց
- 2) կորոնթարդ, ակնապիշ, հետզիետե, դրվատել
- 3) զղչալ, գրասիրտ, դրաստրեր, կրծատել
- 4) մրցանակ, նախավկա, դրասանգ, այտոսկը

3. Ո՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում գաղտնավանկ կա:

- 1) կայսր, հետացվել, մեղր
- 2) ծանր, աղջկական, կայսրություն
- 3) մկրատ, համր, հայրդ
- 4) նկարիչ, դպրոց, մեղրահաց

4. Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա:

- 1) գրքասեր, ոտնահարել, զվարճանալ, ճեռնթաց
- 2) շնչին, հակադրվել, կրթություն, կրնկակոխ
- 3) կոփամարտ, դասընկեր, գրախոս, գրավ
- 4) գռեհիկ, անմիսիթար, անշրջահայաց, անմատչելի

5. Ո՞ր շարքի բոլոր բառերում գաղտնավանկ կա:

- 1) աննշմար, անընտել, մրրկող, կարծր
- 2) տվյալ, ճշտություն, գաղտնավանկ, կրկնապատկել
- 3) չքնաղակերտ, վրիժառու, սանրվածք, տտիպ
- 4) տվնջյան, տրամաբանել, քստմնելի, օրինել

6. Ո՞ր շարքի ոչ մի բառում գաղտնավանկ չկա:

- 1) կարծր, ըմբռստ, ընկերական
- 2) շարչարանք, երփներանգ, ծանրամարտ
- 3) ծաղկաման, աննկատելի, ակնահաճո
- 4) առանցք, ջերմաչափ, ունկնդիր

7. Ո՞ր շարքի ոչ մի բառում գաղտնավանկ չկա:

- 1) դասընկեր, մանրել, գրքային
- 2) մարդկային, գանգրահեր, զննել
- 3) ատամնաբույժ, ամբաստանյալ, մանրահատակ
- 4) շմուշկ, դեղորայք, փափկամորթ

8. Ո՞ր շաբքի ոչ մի բառում գաղտնավանկ չկա:

- 1) սանրել, դրաստրեր, անդադրում
- 2) գետնամած, դրասանգ, ծակոտկեն
- 3) ակնապիշ, ակնկոր, ակնակապիճ
- 4) օդանցք, ջրանցք, ընչացք

9. Ո՞ր շաբքի ոչ մի բառում գաղտնավանկ չկա:

- 1) մարդատյաց, փղոսկոր, ավետարան, երփնավառ
- 2) աղբակույտ, խորդուրորդ, թղթակից, ուղերք
- 3) երկփեղկ, կեղծարար, նրբաճաշակ, անթեղ
- 4) քանդակագարդ, ոսկեզօծ, հանդիպակաց, ցածրահասակ

10. Ո՞ր շաբքի բառերի և բառաձների բոլոր վանկերն են փակ:

- 1) ծածկել, կոնֆետներ, ընդգծվել
- 2) անծանոք, լրսամփոփ, իջվածք
- 3) դեղնակտուց, կտրտել, այգեպան
- 4) խորհրդակցել, նրբագեղմ, ամրացնել

11. Ո՞ր շաբքի բառերի և բառաձների բոլոր վանկերն են փակ:

- 1) կրծքավանդակ, ընտրարշավ, հնձվոր
- 2) աշհամբույր, տնկարան, ենթարկվել
- 3) կապտել, վայրկյաններ, ընդունված
- 4) համրանալ, պատճառներ, անցկացնել

12. Ո՞ր շաբքի բառերի բոլոր վանկերն են փակ:

- 1) ձեռնարկել, գերդաստան, ընկույզ, նիրիել
- 2) նշմարել, հազվագյուտ, դիպված, կալչուն
- 3) կշտամբել, կորնթարդ, կոպտել, կրպակ
- 4) կսկիծ, հայտնի, մարդասպան, ճարպիկ

13. Ո՞ր շաբքի բառերի բոլոր վանկերն են փակ:

- 1) հնչեցնել, հյուսվածք, բոցկլտալ, հյուլրնկալ
- 2) ժանգոտվել, ժպտերես, ինքնավար, ինչքան
- 3) ընթերցել, ընկղմել, դազգահ, գանգատվել
- 4) գժրմնել, հիշեցնել, բնաշխարհ, բորբոքվել

14. Ո՞ր շաբքի բառերի բոլոր վանկերն են փակ:

- 1) բնակվել, ապշել, տնտեսվար, աղջանուղջ
- 2) Համբարձում, հանդերձանք, արցունքոտ, արվարձան
- 3) համբառնալ, ընդհանրություն, ենթարկել, սարդոստայն
- 4) որդնել, վաղորդայն, սալարկել, հաղթանդամ

15. Ո՞ր շաբքի բառերի և բառաձների բոլոր վանկերն են բաց:

- 1) հնամենի, ժամանակակցի, առաքինի, բացովի
- 2) մեծարզոն, կատաղի, քարե, իհանապի
- 3) վայրենի, գարի, ունելի, քաջարի
- 4) պատանի, աերոբազա, լեզու, քառակի

16. Ո՞ր շաբքի բառերի և բառաձևերի բոլոր վանկերն են բաց:

- 1) անհասկանալի, անհարկի, ակնահաճո, կայանատեղի
- 2) համատեղելի, լուսաբացի, հեղեղելու, պատաճի
- 3) ուրախանայի, նյարդային, հեռանալու, հերյուրելու
- 4) հերոսավեալի, կատու, վարդապետ, գինի

17. Ո՞ր շաբքի բառերի և բառաձևերի բոլոր վանկերն են բաց:

- 1) հետզիետե, հեռակա, հյուրասիրելու, ձեռնտու
- 2) ձևափոխելու, վերարկու, ճախարակի, մեղավորի
- 3) հիշատակելի, հիանալի, հնամենի, հայելի
- 4) մեղմանալու, մեկուսի, միանձնուիի, նայելու

18. Ո՞ր շաբքի բառերի և բառաձևերի բոլոր վանկերն են բաց:

- 1) նավաստի, նեղանալու, նպարեղենի, շահամոյի
- 2) նիհարելու, նոնաքարե, շարունակելի, շառագրունելու
- 3) շաբարաջրի, շաղափելու, ողորմելի, շոգիանալու
- 4) նշանացի, նորատի, ճրագակալի, նորոգելու

19. Ո՞ր շաբքի բոլոր բառերում է վերջին վանկը շեշտված:

- 1) որեւէ, ծանր, գերան, ժամանակ
- 2) կայսր, համալսարան, այնպես որ, կահույք
- 3) ուտել-խմել, օրիչ, Օթելոյի, ազնվական
- 4) որպեսզի, քանիերորդ, մկրատ, զրասեր

20. Շարքերից քանիսո՞ւմ կան վերջին վանկի վրա շեշտ չկրող բառեր:

1. ուրիշ, սպեղանի, նկարակալ, աշակերտական
2. քանիերորդ, արեգակ, անգլերեն, պատշգամբ
3. մաքեմատիկայով, սիրտ տալ, մարգարին, Գյումրի
4. մաքրություն, զարբոնք, քիմիա, հողմեր

- 1) մեկում
- 2) երեքում
- 3) երկուսում
- 4) չորսում

21. Շարքերից քանիսո՞ւմ է շեշտը դրվում բոլոր բառերի և բառաձևերի վերջին վանկի վրա:

1. սրտմաշուկ, բյուրավոր, որերորդ
2. օդապարիկ, հարցուփորձ, Կիլիկիա
3. այգեպանը, դստրիկ, ծանրագույն
4. Գորիս, Էջմիածին, միջնորմ

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

22. Ո՞ր բառում *է(ն)* ձայնավորի հնչյունափոխություն կա:

- 1) հրշեց
- 2) ըղճալի
- 3) իջևան
- 4) ընչաքաղյ

23. Ո՞ր շարքի բոլոր բառերում *է(ն)* ձայնավորի հնչյունափոխություն կա:

- 1) կիզանուտ, սիզաճեմ, համատիրություն, միջադեպ
- 2) գիտակ, վիրահատել, ծխակատարություն, ուղեգորդ
- 3) սիրահոժար, մտամոլոր, գիրուկ, միզապատ
- 4) զինակիր, հանդիսատես, քմահաճույք, հանդիպակաց

24. Ո՞ր շարքի բոլոր բառերում *է(ն)* ձայնավորի հնչյունափոխություն կա:

- 1) իշայծյամ, զնացուցակ, զիսավոր, շիկակարմիր
- 2) իջևանատուն, կիզանուտ, գիշակեր, իզական
- 3) շինական, նշաճե, հանդիսատես, տիրուիի
- 4) մտնել, միզանուշ, կիսանդրի, գիտակցաբար

25. Ո՞ր բառում *ի* ձայնավորի հնչյունափոխություն կա:

- 1) ընկերություն
- 2) ընչազուրկ
- 3) ընդամենը
- 4) ընկնել

26. Ո՞ր շարքի բոլոր բառերում *ի* ձայնավորի հնչյունափոխություն կա:

- 1) հնագույն, մտավախություն, սնափառ, հոգատար
- 2) խճանկար, ալեհույզ, ուղեկալ, փթռուն
- 3) ժպտուն, հոգեգալուստ, բծավոր, դիմակահանդես
- 4) նստակյաց, ամենագետ, ծնունդ, պատվարժան

27. Ո՞ր շարքի բոլոր բառերում *ի* ձայնավորի հնչյունափոխություն կա:

- 1) մարդկային, ձգան, ընչաքաղյ, պատանյակ
- 2) սրբնթաց, մրգառատ, հոգյակ, փոշոտվել
- 3) երկրաբան, տարկետում, տարեվերջ, թվանշան
- 4) վիպագիր, կարմրաթուշ, սրտամոտ, անկողնային

28. Ո՞ր շարքի բոլոր բառերում *ի* ձայնավորի սղում կա:

- 1) ոսկեզօծ, վարչական, արճճագույն, ձգողություն
- 2) նկարչություն, թշնամություն, կապկել, գերել
- 3) կղզյակ, դեղնուց, ընձուղտ, հոգևոր
- 4) գծագիր, վերնահարկ, պատվիրել, հաշվապահ

29. Ո՞ր շարքում *ու* ձայնավորի հնչյունափոխություն կա:

- 1) ընդհանուր, ընկեր
- 2) ընձուղտ, ընդսմին
- 3) ընդեղեն, ընչաքաղյ
- 4) ըղճալի, ընդունայն

30. Ո՞ր շարքի բոլոր բառերում ու ձայնավորի հնչյունափոխություն կա:

- 1) խցանահան, գումկան, տնկարան
- 2) մշկենի, նշաճն, սնունդ
- 3) բոնազբոսիկ, շրջադարձ, շարակցական
- 4) ըմպանակ, կպչուն, չվերթ

31. Ո՞ր բառում ու ձայնավորի հնչյունափոխություն չկա:

- 1) անվանացանկ
- 2) ըմպանակ
- 3) ընչասեր
- 4) նշաճն

32. Ո՞ր շարքի բոլոր բառերում ու ձայնավորի հնչյունափոխություն կա:

- 1) գարնանային, կատվածագ, նշաճող
- 2) ձվածեղ, ընչացք, շնագայլ
- 3) գինետուն, դոնեղուու, կռնատ
- 4) ցլամարտ, հուսահատ, խլահավ

33. Ո՞ր շարքի բոլոր բառերում ու ձայնավորի սղում կա:

- 1) երեսնամյա, տեսչություն, անասնապահ, գլխավոր
- 2) կանգնել, փախստական, առվակ, գրդնական
- 3) լծկան, կատվախաղ, գարնանային, ամրացնել
- 4) կկվականչ, շնչավոր, ուրվական, թռչնորս

34. Ո՞ր շարքի բոլոր բառերում ըստ ձայնավորի սղում կա:

- 1) դրամարկղ, աստղամանուկ, որմնադիր, դստրիկ
- 2) ծանրաձող, փոքրիկ, մանրուք, հիմնադրամ
- 3) ակնդետ, տասնամյակ, հյուսնություն, եզրակար
- 4) մանրադրամ, հրձիգ, խառնիխուուն, վագրենի

35. Ո՞ր շարքի բոլոր բառերում երկենչյումի հնչյունափոխություն կա:

- 1) քրիստոնեություն, անզուգադրելի, կուտակել, դժգունել
- 2) ուխտադրժրեն, անզգուշաբար, բուսաբանական, անժումկալ
- 3) կառուցապատում, ծկնաբուժարան, անթույլատրելի, կապտականաչ
- 4) բուրաստան, գումկան, բնափայտ, դաշունահարել

36. Ո՞ր շարքի բոլոր բառերում երկենչյումի հնչյունափոխություն կա:

- 1) ամենաքնքուշ, բուլակազմ, կեցություն, լուսափթիք
- 2) մատենագիր, զեկուցագիր, ցոլցլալ, պատենավոր
- 3) բուրյան, հրապուրիչ, գործունեություն, սենեկապետ
- 4) ատենակալ, խուսափուկ, ողջունել, աղավնյակ

37. Ո՞ր շարքի բոլոր բառերում երկենչյումի հնչյունափոխություն կա:

- 1) արնաշաղախ, ալբաղաց, սուրալ
- 2) լուսատու, ուսուցչապետ, ալեհույզ
- 3) բուրումնալից, փութաջան, նստացույց
- 4) դրժել, սենեկապետ, խուզարկու

38. Ո՞ր շաբքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:

- 1) վիպական, զինել, իշտեր, կիսատ
- 2) շնչասպառ, մկրտել, որևէ, փախստական
- 3) սկզբնաղբյուր, սղագրել, ելարան, շամփրել
- 4) պատրվակ, նախադպրոցական, նետաձիգ, սնկանման

39. Ո՞ր շաբքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:

- 1) հրաշունչ, դեղնել, ջրազուրկ, արճաներկ
- 2) կամքջել, թուլամորթ, ամրակազմ, կարճատես
- 3) սիրահար, մրջնանց, բաղաձայի, տանտեր
- 4) միամիտ, սրատես, հեռավոր, բնագետ

40. Ո՞ր շաբքի բոլոր բառերում հնչյունափոխություն կա:

- 1) անթացուալ, մանկամիտ, մանրախնդիր, ընչացք
- 2) ընչարաղ, նյարդայնանալ, ընդեղեն, քառամյա
- 3) բազմապիսի, երկվորյակ, խաժակն, համալսարան
- 4) կտրել, հարցուվործ, բանձրանալ, տնանկ

41. Ո՞ր շաբքի բոլոր բառերում երկու հնչյունափոխություն կա:

- 1) հոգերուժարան, բարեսրտորեն, թղթակցություն, հրագեն
- 2) մարդկայնորեն, հավիտենական, մրցութային, ցորնամրիկ
- 3) քինախնդրորեն, մատենադարան, սննդարար, մտերմանալ
- 4) միջնակարգ, թռչուն, սնամեկանալ, ատենադպալիր

42. Բառերից քանիսո՞ւմ երկինչյունի հնչյունափոխություն կա.

այժմեական, արճախում, անքնական, անզքարար, փութաջան, գուշակ, գումկան, խուսափել:

- 1) երեքում
- 2) չորսում
- 3) հինգում
- 4) վեցում

43. Բառերից քանիսո՞ւմ յա երկնչյունի հնչյունափոխություն կա.

ատենակալ, սենեկապետ, գործունեություն, դաշունահարել, մատենագիր, բարեկամ, դարեդար, հովել:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

44. Բառերից քանիսո՞ւմ ձայնավորի սղում կա.

ամրացնել, զրկել, ամսագիր, ընտրել, ժաղունակեմ, լլկանք, խնկարկել:

- 1) երեքում
- 2) չորսում
- 3) հինգում
- 4) վեցում

45. Բառերից քանիստ՝ մ ձայնավորի սղում կա.

Ժպտում, մամրություն, փափկել, կապուտակ, կրբել, համրանալ, հոգաբարձու, մաքրել:

- 1) Երեքում
- 2) Հորսում
- 3) հինգում
- 4) Վեցում

46. Բառերից քանիստ՝ մ ձայնավորի սղում կա.

Մշտապես, նկարչատուն, նրբիրան, ոճրագործ, շամշահատիկ, չքանալ, պտղագործ, սրկել:

- 1) Հորսում
- 2) հինգում
- 3) Վեցում
- 4) Երեքում

47. Բառերից քանիստ՝ մ ձայնավորի սղում կա.

Չնջել, ոնցեղջուր, լուսատու, սնամնկ, սոսոգել, վարչական, վարագործել, տաղտկալի:

- 1) Մեկում
- 2) Երկուսում
- 3) Երեքում
- 4) Հորսում

48. Բառերից քանիստ՝ մ ձայնավորի սղում կա.

Մեսչորյուն, տիրայի, տվաջյան, ցրտել, ուսուցանել, փափկել, փութալ, հնչել, կպչուն:

- 1) Մեկում
- 2) Երկուսում
- 3) Երեքում
- 4) Հորսում

49. Ո՞ր նախադասության մեջ հնչյունափոխված բառ կա:

- 1) Նա սոսուզ փաստեր ուներ, որ պարսիկները գալիս են մեծ բանակով և հիմա հասել են դաշտի արևելյան կողմը:
- 2) Կեսզիշերից անց էր արդեն, երբ վրանի շուրջը ամենքը նիրիել էին. անգամ պահակներից ոմանք հենվել էին նիզակներին:
- 3) Սպարապետն իր այդ որոշումը հայտնեց Կամսարականին, իսկ հրամանատարին պահակագործ ճանապարհեց Սմբատ ասպետի մոտ:
- 4) Այդ գիշեր բոլոր վրաններից ավելի զատկում էր հատկապես մի վրան, որի մոտ կապված էր մի ճերմակ ձի:

50. Ո՞ր նախադասության մեջ հնչյունափոխված բառ կա:

- 1) Դա հայոց բանակն էր, որ երեք օր անընդհատ թերև դադարներով ճանապարհ անցնելուց հետո հանգստ էր առնում:
- 2) Երևում էին նաև վրանների շուրջը անցուղարձ անող պահակներ՝ գորշավուն վերարկուներով:
- 3) Բայց մի առավոտ հանկարծ Սահակը արթնացավ թիւկոցի ձայնից, հազնվեց արագ ու դուրս վագեց:
- 4) -Ի՞՞նչ ես անում, որդի՞ս, - հարցրեց նա մի խուլ, զարմանքից դողացող ձայնով:

51. Ո՞ր նախադասության մեջ հնչյունափոխված քառ կա:

- 1) Այդտեղ ամեն ինչ նույնն էր, ինչ որ մեր բոլոր գյուղերում. մի փոքրիկ, տխուր եկեղեցի՝ քարերը մամուռտած, բայց հպարտ ու աներեր:
- 2) Եվ ինչպես բոլոր գյուղերում, այդտեղ էլ մարդիկ հազար տարի առաջվա պես ժամ էին գնում, մատադ անում:
- 3) Տանուտերը սրանց բոլորին կանչեց ու հայտնեց, որ «քուղթ» է եկել, թող պատրաստ լինեն վաղը քաղաք գնալու:
- 4) Գյուղը հանգիստ չէր. սպասում էր բանակ գնացած տղաների դարձին:

52. Ո՞ր նախադասության մեջ հնչյունափոխված քառ կա:

- 1) Քիչ հետո մենք սպիտակ շենքի մոտ էինք, և այնքան շատ նորույթուն կար մեզ համար:
- 2) Ես տեսա, թե ինչպես պապս շտապեց արագ հասնելու սանդուղքին:
- 3) Հանկարծ երևացին մի քանի ձեռքեր, անքիվ փայլուն կոճակներ և պապիս ալեհեր գլուխը:
- 4) Այն օրից շատ տարիներ են անցել, և պապս վաղուց է մեռել:

53. Ո՞ր նախադասության մեջ հնչյունափոխված քառ կա:

- 1) Նա քարի պես ընկավ քակ, ճանկեց աքաղաղին ու փախսավ:
- 2) Ժողովուրդը հիացավ այս սրամիտ առաջարկով և սկսեց ծիծաղել հյուրի վրա:
- 3) Ասաց, թե նախորդ օրը ինչ է տեղի ունեցել նրա հետ հարբած ժամանակ:
- 4) Կեսօրին շատ մարդ էր հավաքվել ծովափին՝ տեսնելու նրան, ով պիտի դատարկեր ծովի ջուրը:

54. Ո՞ր նախադասության մեջ հնչյունափոխված քառ կա:

- 1) Սուտ լուր տարածվեց, թե բազավորը գաղտնի հեռացել է քաղաքից:
- 2) Աղջկը մեծացավ, խելամիտ մի օրիորդ դարձավ և մահամերձ պապից ստացավ նամակը:
- 3) Մարդիկ համախմբվեցին ու շարունակեցին պայքարը թշնամու դեմ:
- 4) Երևում էր՝ սենյակը երբեք չէր օդափոխվում, որովհետև պատերը խոնավ էին:

55. Ո՞ր նախադասության մեջ հնչյունափոխված քառ կա:

- 1) Հանդարտվում է գյուղի երեկոյան աղմուկը, և սառույցները լույս են տալիս:
- 2) Ես բռնում էի այդ փողը գիշերային գովի դեմ, և փողը մնտադի ձայն էր հանում:
- 3) Նրա աչքերը փայլում էին երիտասարդական ավյունով:
- 4) Մեծերը տխուր էին, տատս լուր լալիս էր, երբ նայում էր բռնան գուլպաներին:

56. Ո՞ր նախադասության մեջ հնչյունափոխված քառ կա:

- 1) Ես երկար նայում եմ դաշտային թիրեռնիկի թևին, որը փայլում է:
- 2) Քարոտ սարալանջին կանաչին են տալիս ցորենի մանր արտերը:
- 3) Իմ ծանոթը պատմում է, որ Զյանքերդում ես կտեսնեմ շատ խաչեր:
- 4) Նա հանեց ծիրանի փողը, որի վրա նվազել էր կապույտ սարերի երգերը:

57. Տրված նախադասություններից քանիս՝ ինչյունափոխված քառ կա:

1. Դա շատ էր նման պապիս պատմությանը, որը եղել է այգիների բանաստեղծ:
 2. Հարդով ծածկված տանիքներին էին բարձրանում գյուղի տղաները, որ վերևից նայեն անցնող աղջկներին:
 3. Մինչև գնացքի գալը նստեցին ստվերոտ տեղերում՝ պատերի տակ:
 4. Ծեր ամուսինները մնացին մենակ.ամբողջ աշունն ու ծմեռը տնից գրեթե դուրս չեկան:
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) բոլորում

58. Տրված նախադասություններից քանիստ՝ մ հնչյունափոխված բառ կա:

1. Նրանց երկար ճանապարհը տնից գոմն էր, գոմից՝ տունը. ողջ ժամանակ զբաղված էին տավարի ու հավերի հոգուվ:
2. Նա էլ իր հերքին նայում էր գյուղի խրճիթներին, որոնք բոլորն էլ կարծես իշել, խրվում էին գետնի մեջ:
3. Երկար պիտի մնար Դավիթը գետափին, եթե նրան չսթափեցնեին մի խումբ ոտարոքիկ երեխաններ:
4. Դրանք հին եզներն էին, որ իհմա բավական պառավել էին, բայց արդեն ավելի փորձառու էին:
 - 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) բոլորում

59. Տրված նախադասություններից քանիստ՝ մ հնչյունափոխված բառ կա:

1. Գյուղաբնետը՝ չերքեզի չուխան հազին, գլակը թեք, բեղերը սուր և երկար, հիշեցնում էր շահին:
2. Օրը կամաց-կամաց երեկոյանում էր, և նա իր հարցի պատասխանը չուներ:
3. Նա օգնեց պապին սայլը նորոգելու, ապա շինելը հազավ և գնաց գյուղ:
4. Նա ամբողջ օրը քրքրել էր բոլոր բարստոցները, բայց ոչինչ չէր գտել:
 - 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) բոլորում

60. Տրված նախադասություններից քանիստ՝ մ հնչյունափոխված բառ կա:

1. Ֆետրե գլխարկով մարդը նկատեց պարիսպների փլվածքը, բուրգը և պատերի հետքերը:
2. Տարիները նույն ծառի միանման տերևներն են, դրա համար էլ պղտորվում է պապի հիշողությունը:
3. Այն կինն ուներ սև թաշե գլխարկ, որի երկար քորոցը նարնջագույն գլուխ ուներ:
4. Ես թերթում եմ ուղեգրությունների իմ տետրը և նրա էջերի արանքում գտնում եմ սուսամբարի երկու տերեւ:
 - 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) բոլորում

61. Տրված նախադասություններից քանիստ՝ մ հնչյունափոխված բառ կա:

1. Ես նորից եմ թերթում իմ տետրը, և սրտիս վրա իջնում է անդորր:
2. Օդը ջինջ է, և լսելի է ծաղիկների մեջ մոլորված մեղվի հանդարտ բզզոցը:
3. Մտրակը դառնում է սև օձ, որ զարկում է ձիու ողորկ մարմնին:
4. Հետո միջանցքի աջ կողմը նույն հանգով երգեց մի այլ դուռ:
 - 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) բոլորում

62. Տրված նախադասություններից քանիսո՞ւմ հնչյունափոխված բառ չկա:

1. Դավիթի դեմքն այս անգամ ծամածովել էր ցավից, գույնը՝ քոել:
 2. Նա լսում էր ջինջ օդում տարածվող ձայները, հիշում էր կնոջը և կրկնում միևնույնը:
 3. Հայրը նստած նայում էր նրան և խնդրում ուրախությունից, որ մենակ շմնաց:
 4. Իսկ Զիրավի դաշտում մնացած հայոց և պարսից զորքերը տակավին շարունակում էին մարտը առաջվա եռանդրվ:
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) ոչ մեկում

63. Տրված նախադասություններից քանիսո՞ւմ հնչյունափոխված բառ չկա:

1. Նրանց հանդիպումը նույնակա ահ էր ազդում, և նա իր երկու զինվորի ուղեկցությամբ հեռու էր պահում իրեն դաշտից:
 2. Քարն ասպաննակեց նժոյյգը և գնաց դեպի զինվորների այդ խոնված բազմությունը:
 3. Կայսրն իր շքախմբով մոտենում էր սպասողներին:
 4. Լուսինը նորից դուրս եկավ սարերի հետևից և հովիտը պատեց իր սպիտակ լույսով:
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) ոչ մեկում

64. Տրված նախադասություններից քանիսո՞ւմ հնչյունափոխված բառ չկա:

1. Մի սպիտակ ամայ անհաս վերևներում լողում է արևի շողերի մեջ:
 2. Արդեն ծաղիկ չկար ծառերի վրա, և բողբոջների փոխարեն երևում էին կանաչ ու մանր պտուղները:
 3. Իսկ երբ քամին ցրում է ամպերը, ձորերում հալվում են ամպի ծվենները:
 4. Ակնոցի արանքից նրա ուսյալ աշքերը տեսնում էին զրահավորներին և մատենազրին:
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) ոչ մեկում

65. Ո՞ր շարքի բոլոր բառերի արմատներում հնչյունափոխություն կա:

- 1) կաշուն, տիսրություն, փախստական
- 2) հեռաստան, ակնթարթ, սրտագին
- 3) ծնունդ, հնչեղ, լծորդ
- 4) արարչագործ, տամկանալ, կուտակել

66. Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատում հնչյունափոխություն կա:

- 1) մտամոլոր, զրոսայգի, թիկնաթոռ
- 2) տարեմուտ, ակնդես, բոշնորս
- 3) ծածկալեզու, դիպակազգեստ, նստակյաց
- 4) զինետուն, լնձուղտ, ծանրաձող

67. Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատում հնչյունափոխություն կա:

- 1) գետնանուշ, բնավեր, խորաքճին
- 2) բարեկամ, սիզածեմ, ուխտազնաց
- 3) տպարան, հանրամատչելի, առվեզերք
- 4) առվույտադաշտ, բռնակալ, պատմագետ

68. Ո՞ր շարքի բոլոր բառերի երկրորդ արմատում հնչյունափոխություն կա:

- 1) մանկամտորեն, մասնակցություն, ձայնագրել
- 2) լրատվական, արևմտյան, ուսումնատենչ
- 3) խաղաշրջան, տեղաբնակ, սպառազեն
- 4) գիտահանրամատչելի, մեղմահնչյուն, տիրահոչակ

69. Ծարքերից քանիսի՝ բոլոր բառերի (բառաձևերի) երկրորդ արմատում հնչյունափոխություն կա:

1. բռչնաբուծարան, կեղծանվան, ցուցափեղկ
2. նկարագրություն, թերագնահատել, մանկապատանեկան
3. տղամարդկային, դասացուցակ, ուղենչային
4. ջրածնային, ալեծփուն, պատասխանատվություն

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

70. Ո՞ր շարքի բոլոր բառերում ածանցի հնչյունափոխություն կա:

- 1) գերապատվություն, ուսուցչություն, բնութագրական, մատուցարան
- 2) ներկայացուցչություն, վերջնազիր, ծննդական, քարստոց
- 3) կառուցապատում, վարչություն, շառագունել, նկարչական
- 4) վարձատրել, ժողովրդական, մշակութային, գրչատուփ

71. Ո՞ր շարքի բոլոր բառերում ածանցի հնչյունափոխություն կա:

- 1) օրացուցային, վերնազգեստ, ուժգնություն, այժմեական
- 2) գրծունեություն, վերջնական, գեղջկուիի, տաղտկալի
- 3) ծաղկեփունջ, քրիստոնեություն, գիտնական, լուսանկարչատուն
- 4) ենթավերնազիր, երևութական, անասնաբույժ, հոգևորական

72. Ո՞ր շարքի բոլոր բառերում ածանցի հնչյունափոխություն կա:

- 1) սննդամբերք, նորոգչական, քաղքենի, անասնապահ
- 2) հատկություն, իրատարակչություն, ժողովրդական, թղթակցություն
- 3) մարդկայնություն, վերջնազիր, բնութագրական, միջնակարգ
- 4) քարզմանչական, խորհրդավոր, փափկասուն, անդնդախոր

73. Բառերից քանիսին և արմատի, և ածանցի հնչյունափոխություն կա.

գնդացրորդ, միջնորմ, չվացուցակ, հանրայնորեն, սմնդարար, գրասրտություն, տարեշրջամ, ընձական, ծննդատուն, մեղվարուժություն:

- 1) երեքում
- 2) չորսում
- 3) հինգում
- 4) վեցում

ԳԼՈՒԽ 2 ԲԱՌԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1 ԻՍԱՍՏԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հոմանիշներ:

- 1) կողմնակալ-աշառու, առընթեր - կից, արձանանալ - անշարժանալ, բարկանալ - սրդողել
- 2) անզուգական - աննման, բարձրաբերձ - երկնաքերծ, խափշիկ - խարտյաշ, բանսարկություն - սաղրանք
- 3) իսկույն - անմիջապես, բաղդատել - բաժանել, առերես - արտաքուստ, անիշաչար - անքինախսնդիր
- 4) հանգույն - գույնզգույն, արագահոս - սրբնացաց, առեղծված - հանելուկ, բարձրորակ - առաջնակարգ

2. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հոմանիշներ:

- 1) կողով - քրոց, կնքուղ - վեղար, բարակ - քերծե, գիշեր - ցայդ
- 2) անպատճառ - անպաճույծ, տիվ - ցերեկ, հակոտնյա - ներհակ, մառան - նկուղ
- 3) կողակից - ամուսին, դժնի - անողորմ, գողտրիկ - բաքուն, ներհուն - լայնախոնի
- 4) աղորիք - երկանք, հորդ - առատահոս, ջնարակ - շնկոլադ, ժումկալ - գուսապ

3. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հոմանիշներ:

- 1) բաժանվել - մասնատվել, բանտարկություն - կալանք, թեզանիք - մանյակ, մեկենաս - բարեգործ
- 2) ամբարտակ - պատնեշ, բարձրարվեստ - նրբաճաշակ, բացատրել - լուսաբանել, ազնվաբարություն
- 3) բարձրանուն - մեծահոչակ, բեկում - շրջադարձ, բբամիտ - բանձրամիտ, ուստր - ոստրել
- 4) բրուտ - ատաղճագործ, անգիք - բերանացի, բացի - զատ, բերկրավետ - ուրախալիք

4. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հոմանիշներ:

- 1) բլուր - բարձունք, անտունի - տնանկ, բծախնդիք - բմաճաշակ, բյուր - բազմաթիվ
- 2) բնազդորեն - ինքնաքերաբար, բնակարան - կացարան, ամոլ - չքեր, բնաշնչվել - կործանվել
- 3) բանքար - անկյունաքար, բնիկ - երկրացի, բողոքել - տրտնջալ, բովանդակ - ամբողջ
- 4) բոստրաբույր - կարմրագույն, բովել - խարենել, գազանաբարություն - վայրենիք, գայրակություն - հրապուրել

5. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հոմանիշներ:

- 1) գամվել - մեխվել, գաղտնապահ - փակերան, գարշադեմ - տգեղ, գնահատելի - արժեքավոր
- 2) գանձարկդ - դրամարկդ, խոնջանալ - սեթեթել, գեղաճաշակ - բարձրաճաշակ, գլխարկ - գդակ
- 3) գիշերերգ - ցայցերգ, արամբի - զամբիկ, գինարբուր - խնջույք, գինդ - ականջօղ
- 4) կեղծանուն - պատվանուն, գիտակցել - ըմբռնել, արմատական - առաջնային, դրվատել - փառաբանել

6. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հոմանիշներ:

- 1) գործակատար - վաճառող, գոտեմարտ - ըմբշամարտ, դժնյա - օճաքարո, դալկանալ - դժգունել
- 2) գորշավուն - մոխրագույն, գրագետ - ուսյալ, գոթիկ - անքարեկիդր, որսատոպրակ - որսաբարակ
- 3) գրադարան - գրատուն, մախսաղ - մախսաթ, սմբուկ - բաղրիջան, վայելուշ - գրավիչ
- 4) կողակից - հարևան, թույր - երանգ, գուրգուրանք - փաղաքշանք, գուցե - քերես

7. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հոմանիշներ:

- 1) կանամքի - կանացի, դաղձ - անանուխ, դադրել - հոգնել, դանդաղաքայլ - դանդաղաճեմ
- 2) աղիողորմ - դառնահամ, դասդասել - դասակարգել, դավաճան - մատնիչ, դեղախոտ - դեղարույս
- 3) դասալիք - զինախույս, կրոնաքան - դավանաքան, դասախոսել - դասավանդել, խրոխտաճայն - ահեղագոյն
- 4) ընչացք - մորուք, զազրաքար - ստորաքար, շախմատ - ճատրակ, լուսահոգի - երջանկահիշատակ

8. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են հոմանիշներ:

- 1) հունցել - շաղախել, զանազանել - տարբերել, բաժդատել - բաժանել, զայրույթ - ցասում
- 2) զվարքատես - ժպտադեմ, ազդրոսկր - զսոսկր, սանձահարել - զսել, կատակաքան - զվարճախոս
- 3) դար - հարյուրամյակ, ընչամոլ - ազահ, ընձյուղել - ծլարձակել, ընկոմել - մխրճել
- 4) գերդատան - ընտանիք, սեղանապետ - քամադա, արքա - շահնշահ, թախծահար - վշտահար

9. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են հոմանիշներ:

- 1) լուծարել - կազմալուծել, վաղորդայն - այգալույս, անշշուկ - անբարբառ, կայծոռիկ - լուսատու
- 2) լիովին - ամբողջովին, պնակալեզ - շողոքորդ, լիասիրտ - լիաքոր, թվանշան - գնահատական
- 3) բռչկոտել - ոստոստալ, ոստան - բնօրիան, ոստ - ընձյուղ, ոստայն - ցանց
- 4) վարկաբեկել - անվանարկել, կիստար - վիթ, զայթել - սայթաքել, թառամել - թոշնել

10. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են հոմանիշներ:

- 1) քեզանիք - քեք, քողարկել - պարտակել, թափրփված - խառնափնթոր, բուրյան - հոտավետ
- 2) շրջմոլիկ - թափառական, ընչացք - քեղ, թամրասանք - ասեկոսե, ընտրող - քվեարկող
- 3) ընձեռել - տրամադրել, մոմուալ - կսկծալ, արտասվել - հեկեկալ, ադամանդ - շողակն
- 4) լայնախոն - լայնահորիզոն, լախտ - մտրակ, գուղձ - հողակոշտ, մակույկ - նավակ

11. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են հոմանիշներ:

- 1) ծավալել - ընդարձակել, քաջածանոք - լավատեղյակ, լաջվարդ - կապտագույն, անըստգյուտ - անթերի
- 2) լեզենդ - ավանդազրույց, բարվոքել - լավացնել, հափշտակել - կողոպտել, գոեհիկ - անբարեկիրք
- 3) շաղակրաստ - շատախոս, բուրփառ - խնձաման, փաղարշանք - գուրգուրանք, վիհ - անդրւնդ
- 4) արտավախատոն - լացակումած, պիրկ - ձիգ, խոռոշ - խորշոն, բարձրորակ - ընտիր

12. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են հոմանիշներ:

- 1) բուսազուրկ - լերկ, ճաղատ - հերաքափ, խրթին - կնճռոտ, բարբարոս - վայրենի
- 2) բարեկեցիկ - ապահով, առաքել - ուղարկել, խանդաղատանք - կորով, շեղ - դեղ
- 3) առյուծորդի - դյուցազն, անհարկի - անպատշաճ, ողջամիտ - խելացի, թանախոս - հոեստոր
- 4) բանադրանք - նզովք, ամբաստանել - մեղադրել, բանակ - զորք, բառարան - բառզիրք

13. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են հոմանիշներ:

- 1) բարգավաճ - ծաղկուն, կիսավեր - խարխուլ, լեզվաբան - լեզվագար, դշխոն - թագուհի
- 2) արքունի - պալատական, արքայախսնձոր - անանաս, կայսր - միապետ, ազնվահոգի - վեհանձն
- 3) նորոգել - բարեկարգել, վախճան - ավարտ, երկնահուապ - բարձրագահ, հպարտ - վես
- 4) խատուտիկ - գույնզգույն, բծախնդիր - չմահավան, բնազդ - ենթագիտակցություն, բնականոն - օրինաչափ

14. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույցերն են հոմանիշներ:

- 1) գրգամոլ - փափկասուն, գրեթե - համարյա, տիրել - նվաճել, կարեկցանք - գուրք
- 2) սփրընել - գունատվել, խցկվել - սողոսկել, սողուն - զեռուն, թափանցիկ - թռուցիկ
- 3) նահատակ - մարտիրոս, զերդ - ինչպես, զիջել - ընկրկել, նողկալ - խորշել
- 4) զղջալ - ապաշխարել, զեվյուռ - հովիկ, զետեղել - տեղադրել, եղելի - նողկալի

15. Տրված բառազույցերից քանի՞սն են հոմանիշներ.

այրական - քարանձավային, կանացի - առնական, խափշիկ - խարտյաշ, խարուսիկ - բվացյալ, եսասիրություն - ինքնասիրություն, ասպնջական - վաղնջական, թանկություն - սղություն, քառակի - խոզանուկ:

- 1) յոթը
- 2) վեցը
- 3) հինգը
- 4) երեքը

16. Ծարքերից քանիսի՞ բոլոր բառազույցերն են հոմանիշներ:

1. թերեփի - կիսահում, թևատ - կոճատ, թքու - կծու, առաձգական - դյուրաքեր
2. անքուն - քնատ, թխվածք - անուշեղեն, անօրինական - աննման, տխմար - պակասամիտ
3. հանապազօրյա - առօրյա, ասեղ - հերյուն, խորունկ - ծանծաղամիտ, վճռական - հաստատական
4. հավաստի - վստահելի, վրդովալից - խոռվահույզ, վտիս - թուլակազմ, ձեղուն - քեղուն

- 1) չորսի
- 2) երկուսի
- 3) մեկի
- 4) ոչ մեկի

17. Ծարքերից քանիսի՞ բոլոր բառազույցերն են հոմանիշներ:

1. սնապարծ - մեծամիտ, առվույտ - երեքնուկ, քառափենիք - հրուշակեղեն
2. ասպնջական - վաղնջական, տարդեղ - պղպեղ, տրամադիր - հակամետ, քուրքատյաց - տաճկատյաց
3. տփայտանք - տառապանք, տարտամ - անորոշ, նաժիշտ - երաժիշտ, տանիքագործ - ձեղնագործ
4. տարրական - պարզագույն, հարթություն - տափարակ, կուալր - ձյութ, մակաղել - մաքառել

- 1) երեքի
- 2) երկուսի
- 3) մեկի
- 4) ոչ մեկի

18. Բառաշարքում երկնշել բառի քանի քանի՞ հոմանիշ կա.

մղկտալ, երկյուղել, պոռքկալ, սարսափել, մտմտալ, ողորել, սոսկալ, առինքնել, կասկածել, ահարեկվել:

- 1) երեք
- 2) չորս
- 3) հինգ
- 4) վեց

19. Տրված բառերից քանի՞ հոմանշային զույգ է հնարավոր կազմել.

մեղադրյալ, երկշուր, կրդա, բուրյան, ապակե, բազին, եղանիկ, վեհերոտ, անդրավարտիք, զավար, եկեղեցի, տարատ:

- 1) մեկ
- 2) երկու
- 3) երեք
- 4) չորս

20. Տրված բառերից քանի՞ հոմանշային զույգ է հնարավոր կազմել.

վեղար, ապահով, կնճուղ, սապատ, սմբուկ, դեղձան, որդի, բաղրախոս, բաղրիջան, խարտյաշ, ուազմիկ, ուստոր:

- 1) հինգ
- 2) չորս
- 3) երեք
- 4) երկու

21. Տրված բառերից քանի՞ հոմանշային զույգ է հնարավոր կազմել.

տնանկ, այսուց, յուրային, ավերակ, վիթ, դաշնակից, առևտրական, ձիրք, առընթեր, քանրար, ագեվազ, գործարար:

- 1) հինգ
- 2) երեք
- 3) երկու
- 4) չորս

22. Ո՞ր շաբքի բոլոր բառազույգերն են հականիշներ:

- 1) նզովք-օրիություն, ճապաղ-սեղմ, ստերջ-քեղմնավոր
- 2) զոց-փակ, վտիտ-մարմնեղ, փութկոտ-ծանրաշարժ
- 3) բնավ-միշտ, պարպել-դատարկել, դյուրին-խրբին
- 4) անձուկ-ընդարձակ, նվաղ-փոքրոզի, խոսուն-համր

23. Ո՞ր շաբքի բոլոր բառազույգերն են հականիշներ:

- 1) քանքարավոր - անտաղանդ, կարծր - փխրուն, տաքարյուն - սառնարյուն, կողակ - ալիք
- 2) հույժ - հզոր, անախորժ - դրւեկան, թերի - անըստօքուտ, տգեղ - գողտրիկ
- 3) անանց - անցողիկ, հարձակվել - տեղի տալ, ներհուն - անխելք, լուսավոր - խավարչտին
- 4) խոնվել - ցրվել, հրապուրվել - հիասքափվել, հետաքրիր - միապաղադ, այրական - առնական

24. Ո՞ր շաբքի բոլոր բառազույգերն են հականիշներ:

- 1) շաղակրատ - շատախոս, չոր - տամուկ, համախմբում - պառակտում, անուժ - կորովի
- 2) առնացի - կանացի, բացառիկ - սովորական, սեղմ - ծավալուն, ողջախոհ - բղջախոհ
- 3) զեհեն - եղեն, եսասեր - անձնուրաց, խթանել - օգնել, փութալ - հապաղել
- 4) շինձու - անկեղծ, բերկրել - տրտմել, հեղիեղուկ - անհողողող, մսխել - կուտակել

25. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:

- 1) համանուն - հոմանիշ, հուժկու - անզոր, առատաձեռն - գծուծ, ուրբաթախոս - շատախոս
- 2) անպարկեշտ - ազնվարարո, անոսր - այտոսկը, վեհերոտ - առյուծափրտ, շենշող - պայծառ
- 3) հանձինն - հակառակ, ժապտերես - խոժոռ, շինձու - քնական, որկրամոլ - քչակեր
- 4) բացճակատ - ամոթահար, խոնջանալ - հանգատանալ, հեղզ - զործունյա, տիվ - ցայզ

26. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:

- 1) ամրակուռ - խարխուլ, օրենսդիր - ապօրինի, հերաթափ - բավամազ, մեծախոս - համեստ,
- 2) հանապազօրյա - ամենօրյա, շեն - ավերակ, խորամանկ - դյուրահավատ, համատեղ - անջատ
- 3) գորովագութ - անբարեսիրտ, ուղղամիտ - նենգամիտ, կուշտ - անոթի, վատարանել - բարեբանել
- 4) ուխտավոր - ուխտագնաց, արևոտ - ամպազարդ, աղմկաշատ - խաղաղ, գրառատ - դժխեմ

27. Ո՞ր շարքի բոլոր բառազույգերն են հականիշներ:

- 1) երկրագել - ատել, ընդդեմ - հանուն, հյուրընկալել - արտաքսել, աստանդական - նստակյաց
- 2) անպաճոյց - զարդարուն, հին - վաղնջական, վտիտ - գիրուկ, ապաքինկել - հիվանդանալ
- 3) անսասան - կայուն, յուրային - օտար, ստերջ - բեղուն, հնազանդ - ինքնասածի
- 4) երկշոտ - վեհերոտ, հոգևոր - աշխարհիկ, հեզ - ամբարտավան, ոսխ - դաշնակից

28. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են հականիշներ:

- 1) ոռոգելի - անջրդի, փառասեր - ինքնասեր, ապառիկ - կանխիկ, վեհանձն - փոքրոգի
- 2) պիղծ - սուրբ, ստվարաբիկ - փոքրաքանակ, կանուխ - ուշ, հաշտվել - գժտվել
- 3) խոժողովել - ժապտալ, անհյուրընկալ - վանատուր, ուռուցիկ - գոզավոր, թուլանալ - սաստկանալ
- 4) սրողված - անբաքույց, վանել - առինքնել, առանցքային - երկրորդական, ընկնել - հառնել

29. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառազույգերն են հականիշներ:

- 1) պերճ - անշուրք, բարեկեցիկ - անապահով, հաստատուն - անկայուն, հոռեստես - լավատես
- 2) լայնաթիկունք - պարթե, խորապես - հարնանցի, մեծահարուստ - ընչազուրկ, կալանավորել - ձերբազատել
- 3) հնարագետ - անճարտար, իրական - երևակայական, ակնածել - արհամարհել, ժումկալ - անզուսպ
- 4) զիտուն - իմաստակ, բիրտ - քնքուշ, բաց - զոց, մարմնեղ - վտիտ

30. Տրված բառազույգերից քանի՞սն են հականիշներ.

անբասիր - արատավոր, պղտոր - ականակիր, տառապել - հեծնել, ծամրաքարշ - զեր, ունեոր - զերծ,
հաստատել - հերկել, ճշմարիտ - բույր, հանգույն - զույնզգույն:

- 1) վեցը
- 2) երեքը
- 3) երկուսը
- 4) մեկը

31. Տրված բառազույգերից քանի՞սն են հականիշներ.

ազդը - սրունք, արտևանունք - հոնք, խուճապ - իրարանցում, դեղերել - բառել, ակնախոռոչ - ակնակապիճ, բացահայտ - զողտրիկ, դրվատել - զովարանել, հեզ - աշխատասեր:

- 1) յոթը
- 2) հինգը
- 3) երեքը
- 4) ոչ մեկը

32. Տրված բառազույգերից քանի՞սն են հականիշներ.

ամբարիչու - փառապամժ, սեփական - անձնական, սրտմաշուկ - սրտակեղեք, սյուր - մրիկ, խրամել - օժանդակել, խելահեղ - անխելք, քնկուր - քնատ, լուսավոր - խավարու:

- 1) ոչ մեկը
- 2) մեկը
- 3) երկուսը
- 4) երեքը

33. Տրված բառերից քանի՞սն ունեն իրենց հականիշները.

աշալուրջ, անգույն, չքմեղ, բացառիկ, տամուկ, արծաթե, զոտեպնդվել, վեհ, սպիտակամորք, դեղիճ:

- 1) բոլորը
- 2) ինը
- 3) ուրը
- 4) յորը

34. Տրված բառերից քանի՞սն ունեն իրենց հականիշները.

հանուն, ամբարտավան, ոչինչ, բառաձայն, արտագաղթ, ապիկար, տմարդի, պնակ, հարձակվել, իրավաբամ:

- 1) ինը
- 2) ուրը
- 3) յորը
- 4) վեցը

35. Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ չեն:

- 1) **աղոտ** լույս - **աղոտ** ճաշ
- 2) **ամել** վիճակ - դաս **ամել**
- 3) **անձուկ** լիճ - **անձուկ** հոգեվիճակ
- 4) սիրո **գերի** - ուազմի **գերի**

36. Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ չեն:

- 1) **արի** հայորդի - նե՛րս **արի**
- 2) հայր **սուրբ** - **սուրբ** գործ
- 3) **բարդ** խնդիր - ցորենի **բարդ**
- 4) **բռի** մեջ պահել - **բռի** պահվածք

37. Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ չեն:

- 1) երկինք - **գետիճ** - Արաքս **գետիճ**
- 2) մեկ կապ **զայլուկ** - գորշ **զայլուկ**
- 3) մկան **քակարդ** - սիլոն **քակարդ**
- 4) զորքի **զունդ** - խմորի **զունդ**

38. Ո՞ր տարբերակի ընդգծված բառերը համանուններ չեն:

- 1) **երամակից** բռչուն - ձիերի **երամակից**
- 2) **դասել** հանցագործին - դառը **դասել**
- 3) **բզի** չիր - մի **բզի** չափ հող
- 4) զոքի **երես** - **երես** առնել

39. Ո՞ր տարրերակի ընդգծված բառերը համանուններ չեն:

- 1) եռանկյան **էջ** - գրքի **էջ**
- 2) աղեկտուր **լալ** - **լալ** ու մարջան
- 3) մի **կաթ** արցունք - թարմ **կաթ**
- 4) **ծարավ** երեխսա - **ծարավ** այգի

40. Ո՞ր տարրերակի ընդգծված բառերը համանուններ չեն:

- 1) **խոզ** ծերունի - **խոզ** փողոց
- 2) **բարակ** թել - արագավազ **բարակ**
- 3) քեզ **համար** - **համար** մելք
- 4) նորաձև **համերձ** - ընտանյոք **համերձ**

41. Տրված նախադասություններում ընդգծված բառերից ո՞րն է մյուս երեքին համանուն (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Անցել են դարեր դարեր **խոչ** իր կամքը դեռ խոսում է:
- 2) Ամպերն են թռչում կապույտ երկնքով **խոչ** շուրջը դաշտերն անծիր ու անծիր:
- 3) **խոչ** Սմբատը արդյոք կա նրա սրտում զգացում այդ աղջկա նկատմամբ:
- 4) Այդ դժվար հարցը հայրդ **խոչ** չի կարող լուծել:

42. Հետևյալ բառաձևերից ո՞րը համանուն չունի:

- 1) կապեր
- 2) զնդեր
- 3) ստեր
- 4) խոսեր

43. Ո՞ր շարքում համանուն ունեցող բառաձևն կա:

- 1) խաղեր, հոգսեր, ելքեր
- 2) ճյուղեր, տոներ, կերեր
- 3) ձորեր, ծառեր, վանքեր
- 4) ծեսեր, մասեր, սրտեր

44. Բառաձևերից քանի՞սն ունեն համանուն.

Կարոտի, աշակերտի, բերդի, երկնքի, սամրի, հավատի, պատի, հերկի, խաղի, ծխի:

- 1) ութը
- 2) վեցը
- 3) երեքը
- 4) բոլորը

45. Ո՞ր տարրերակում համանունների բացատրության սխալ կա:

- 1) **մասյան** - գիրք, **մասյան** (գունդ)- հեծելազոր
- 2) **մեկնել** - մեկնաբանել, **մեկնել** - կարկամել
- 3) **կողակից** - ամուսին, **կողակից** - կողակ ձկից
- 4) **հորդ** - տեղատարափ, **հորդ** - քն հոր

46. Ո՞ր տարրերակում համանուների բացատրության սխալ կա:

- 1) **չկամ** - անբարյացակամ, **չկամ - կամ** բայի ժխտական խոնարհման բայաձև
- 2) **պապ** - ծնողի հայրը, **պապ** - կաթոլիկ եկեղեցու առաջնորդը
- 3) **տալ** - հանձնել, **տալ** - ամուսնու քույրը
- 4) **աներ** - ամուսնու հայրը, **աներ** - անել բայի ըլձական բայաձև

47. Ո՞ր շարքում համանուն չունեցող բառ կա:

- 1) անձուկ, դաշնակ, թառ
- 2) խոզուկ, մարտ, խատուտիկ
- 3) հազար, հանդերձ, կույս
- 4) կուռ, խոզ, աղոտ

48. Ո՞ր բառն է ճիշտ բացատրված:

- 1) **միամորիկ** - միայն մայր ունեցող
- 2) **վարժապետ** - վարժարանի պետ
- 3) **քանդար** - տաղանդ
- 4) **քենակալ** - ոխակալ

49. Ո՞ր բառն է ճիշտ բացատրված:

- 1) **խափշիկ** - դեղձան
- 2) **մախաղ** - ասեղ, հերյուն
- 3) **մաքառել** - ոչխարների իրար մոտ հավաքվելը
- 4) **անսուճի** - ժողովրդական հին երգի տեսակ

50. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) **ակնակապիճ** - աչքի փոսիկ, **աղամորդի** - մարդ արարած
- 2) **անպաճոյժ** - առանց զարդարվելու, **քամքիշ** - լուր բերող
- 3) **այտուց** - ուսուցք, պալար, **այպամել** - նախատել, անարգել
- 4) **բախտակ** - ձկան տեսակ, **զրգամոլ** - փափուկ կյանք սիրող

51. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) **երկարաժիս** - երկար վիզ ունեցող, **իմոլսամմ** - իմ ուժերի չափով
- 2) **հեղեճ** - հույների հին անունը, **սրդողել** - բարկանալ, նեղվել
- 3) **ցորնամրիկ** - ցորենի հիվանդություն, **որձաքար** - ամուր քար
- 4) **հերանոս** - կուապաշտ, **արամքի** - սև ծի

52. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) **ախտալլուկ** - հիվանդությունից տանջված, **խավարտ** - շատ մութ
- 2) **պարույկ** - հարցական նշան, **լաջվարդ** - կապտագույն
- 3) **նշդարենի** - ծառի տեսակ, **վիրապ** - խոր փոս
- 4) **օքոց** - անկողնու ծածկոց, **հակամմատ** - հակված, տրամադիր

53. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) **վաղորդայն** - այգ, առավոտ, **պարմանուիի** - երիտասարդ աղջիկ
- 2) **հովատակ** - արու ծի, **հոմանի** - սիրեկան
- 3) **սկեսրայր** - ամուսնու հայրը, **մեծասոռն** - մեծ տուն
- 4) **հոպոպ** - երկար կեռ կտուցով թռչուն, **դժնդակ** - դաժան

54. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) **Ցիզ** - մետաղյա ամուր ձող, **հովեկ** - գեվյուռ, մեղմ քամի
- 2) **հողաճի** - մերկ, բաց ուսերով, **խոնջաճալ** - հոգնել
- 3) **եռոտաճի** - երեք ոտք ունեցող, **դերճան** - կարի թել
- 4) **դարակազմիկ** - դարաշրջան կազմող, նշանավոր, **մախսաք** - մեծ ասեղ

55. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) **գրչակ** - վաս գրող, **գետնամած** - գետնին տարածված
- 2) **զինդ** - ականջօղ, **անասնակեր** - անասուն ուստող
- 3) **գրտնակ** - խմորը բացելու գլանածն փայտ, **ալոք** - էգ ուլ
- 4) **աղմաստ** - թանկարժեք քար, աղամանդ, **կողակ** - ձկան տեսակ

56. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) **այգերաց** - լուսաբաց, **այլուր** - մեկ ուրիշ տեղ
- 2) **բաղարջ** - առանց թրիմորի հաց, **բաղնջ** - փաթարվող բույս
- 3) **բաղդատել** - համեմատել, **ահյակ** - ձախ
- 4) **կոհակ** - ալիք, **բեռայր** - քրոջ ամուսին

57. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա:

- 1) **կուպր** - ձյութ, **կուոր** - պաշտամունքի առարկա
- 2) **բռնազրոսիկ** - բռնի զբոսանքի գնացող, **վարկ** - պատիվ
- 3) **դեղճան** - շեկ գույնի, **հրավերք** - ճաշկերույթ
- 4) **հրապարակել** - հայտարարել, **մրահոն** - սև հոնքեր ունեցող

58. Ո՞ր շարքում բառիմաստի սխալ բացատրություն կա.

- 1) **հորօռոքել** - մեկի մասին վաստ արտահայտվել, **երամ** - թշումների խումբ
- 2) **կենվոր** - վարձով ապրող, **կտտաճր** - շարչարանք, տանջանք
- 3) **այլուս** - կավից պատրաստված շինանյութ, **կտակատ** - վուշի սերմը
- 4) **կորճել** - արմունկով հենվել, **այրի** - ամուսինը մահացած կին

59. Ազ շարքի բացատրությունները համապատասխանում են ձախ շարքի բառերից չորսին. լուծման տարբերակներից ո՞րն է ճիշտ:

- | | |
|------------|---------------------|
| ա. թեզանիք | 1. ապահով, խաղաղ |
| բ. քուրջ | 2. ուշադիր, սևեռուն |
| գ. անքույթ | 3. շորի փեշ |
| դ. անքթիք | 4. հնամաշ զգեստ |
| ե. քղանցք | |

- 1) ա - 3, թ - 4, զ - 1, դ - 2
- 2) թ - 4, զ - 1, դ - 2, ե - 3
- 3) թ - 4, զ - 2, դ - 1, ե - 3
- 4) ա - 3, թ - 4, զ - 2, դ - 1

60. Տրված բառակապակցություններից որի՞ առաջին բաղադրիչը փոխաբերական իմաստով չի գործածվել:

- 1) կապույտ արյուն
- 2) հպարտ լեռներ
- 3) դեղճան մազեր
- 4) ծով համբերություն

61. Տրված բառակապակցություններից որի՞ առաջին բաղադրիչը փոխաբերական իմաստով չի գործածվել:

- 1) Վարդագույն երազ
- 2) Աև մտքեր
- 3) Սպիտակ անուրջներ
- 4) Կարմիր աղյուս

62. Տրված բառակապակցություններից որի՞ առաջին բաղադրիչը փոխաբերական իմաստով չի գործածվել:

- 1) Դառը ճշմարտություն
- 2) Խոցող հայացք
- 3) Քունոտ պատասխան
- 4) Կծու տարդեղ

63. Տրվածներից ո՞րը, ավելանալով *խոսք* բառին, չի արտահայտի փոխաբերական իմաստ:

- 1) Ծանր
- 2) Կեղտոտ
- 3) Կցկոտուր
- 4) Մահացու

64. Տրվածներից ո՞րը, ավելանալով *զիշեր* բառին, չի արտահայտի փոխաբերական իմաստ:

- 1) Մահահոտ
- 2) Խավարտչին
- 3) Ամենակող
- 4) Դավաճան

65. Ընդգծված բառերից քանի՞ն են գործածվել փոխաբերական իմաստով.

ուկի ձեռքեր, *քրու* դեմք, *քար* լուրջյուն, *սառը* պատերազմ, *մաքուր* հոգի, *ծանր* արկդ, *կծու* խոսք, *կեղտոտ* միտք, *խոզ* բնավորություն, *սուր* հիշողություն:

- 1) Քոլորը
- 2) իմը
- 3) ուրը
- 4) յորը

66. Ո՞ր նախադասության մեջ փոխաբերական իմաստով գործածված բառ չկա.

- 1) Ո՞նց է ժայռում իմ հոգին
Զարին, բարուն, - ամենքին.
Լոյս է տալիս ողջ կյանքիս
Ու էն ճամփիս անմեկին:
- 2) Քանի՞ ձեռքից եմ վառվել,
Վառվել ու հուր եմ դառել,
Հուր եմ դառել՝ լոյս տվել,
Լոյս տալով եմ սպառվել:
- 3) Պատասխան տուր ինձ,
Մատնի՛ սեաչյա,
Սի՞թե Թաքուլը
Քաջ չէր ու սիրուն...
- 4) Հիմի բացել են հանդես
Երգիչները իմ անտես.
Զա՞ն, հայրենի ծղրիդներ.
Ո՞վ է հիմի լսում ձեզ:

67. Ո՞ր նախադասության մեջ փոխարերական իմաստով գործածված բառ չկա:

- 1) Գիշեր է իջել. լրել են բոլոր
Աղմուկները չար, խոսքերը պատիր:
- 2) Մնաս բարյավ, բայց միշտ հիշիր,
Որ քեզ շատ են կարոտել,
Եվ տեսության ժամի համար
Չմոռանաս աղորել:
- 3) Ես մի ճամփորդ եմ մթնում մոլորված,
Ու հոգնած սիրտը դարձել է խոնարի:
- 4) Ես լուս կրաղեմ իմ ցավը միակ,
Չվարք կժպտամ բախտավորի պես:

68. Ո՞ր նախադասության մեջ փոխարերական իմաստով գործածված բառ կա:

- 1) Հեռվից կապտավուն սարերն այնքան պարզ էին երևում, որ կարելի էր համրել նրանց բոլոր ձորակները:
- 2) Լինե՞ր, այնպես լիներ, որ ինքը հնձվոր լիներ, նրանց արտը հնձեր, Սոնան հաց քերեր իրեն:
- 3) Սիրիակն էր. հանգիստ քուջուց անելով փոխում էր արնագույն տոտիկները:
- 4) Այգում երիտասարդ կեռասենիները մրսում էին, քամուց խշշում:

69. Ո՞ր նախադասության մեջ փոխարերական իմաստով գործածված բառ կա:

- 1) Հենց որ բերդի պարիսպների տակ ոտնածայն է լսվում, ցին ու ագռավ աղմկում են, քոչում են բներից և ահարկու պյուլյաներ անում բերդի կատարին:
- 2) Կաքավարերդի բարձունքի միակ ծաղիկը ալպիական մանուշակն է՝ ցողունը կաքավի ոտքի պես կարմիր, ծաղիկը ծիրանի գույնի:
- 3) Արեկց քարերը տաքանում են, և երբ ամպերը ծածկում են քար ու պարիսպ, մանուշակը թերվում է, գլուխը հենում քարին:
- 4) Ֆետրե գլխարկով մարդը կռացավ, պոկեց մանուշակը և դրեց տեսրի այն թերթի արանքը, որի վրա նկարված էին եռոտանին և այն բարակիրան կինը:

70. Տրված հատվածներում ընդգծված բառերից ո՞րը փոխարերական իմաստով գործածված չէ:

- 1) Կապույտ լեռների լանջերի վրա
Սուզ անտառներն են մեղմօրոր **նիրինս**:
- 2) Ու մութը քանի զնաց, ծանրացավ,
Սիրտը հուսարեկ **լայիս է** տխուր:
- 3) Լուսնյակ գիշերին **շոցում են** անքուն,
Յավերը անգուր սիրտս են կեղեքում:
- 4) Վիշտը **հալվեզ**, աղցունք հոսեց,
Վճիտ, ինչպես ջինջ աղբյուր:

71. Տրված բանաստեղծական հատվածում ընդգծված բառերից քանի՞սն են գործածված փոխարերական իմաստով:

*Կյանքի ժխորից մտա անապատ.
Գիշերը եկավ, **քազմեց** փառավոր,
Եվ **հոգնած** հոգիս մեղմիկ ու հանդարտ
Գիշերը **գոկեց**...
Աստղերը երկնի **անհում** խորքերից
Անհում հայացրով **զարքնեցին** նորից:*

- 1) հինգը
- 2) երկուաը
- 3) չորսը
- 4) երեքը

72. Ընդգծված բառերից քանի՞սն են գործածված փոխաբերական իմաստով.

ականակիտ աղբյուր, ճմեռային արձակուրդ, միամիտ բացատրություն, տխուր երեկո, գեղատեսիլ բնություն, խոր կոկիծ, թեժ կրակ, անհատակ վիճ:

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) երեքը

73. Գլուխը լցնել դարձվածքի ո՞ր իմաստն է սխալ:

- 1) մեկին որևէ արարքի դրդել
- 2) լիքը, մինչև վերջ լցնել
- 3) սովորել, յուրացնել
- 4) սովորեցնել, ուսուցանել

74. Թևերը փոել դարձվածքի ո՞ր իմաստն է սխալ:

- 1) պաշտպանել
- 2) հանգստանալ
- 3) հովանավորել
- 4) տարածվել

75. Աստծու կրակ դարձվածքի ո՞ր իմաստն է սխալ:

- 1) դաժան, անողորմ
- 2) չարաճճի, շարժուն
- 3) ցավ, պատիժ
- 4) անշեշ հուր

76. Արյունը ջուր դառնալ դարձվածքի ո՞ր իմաստն է սխալ:

- 1) սարսափելի վախենալ
- 2) արյունահեղությունը սովորական բան դառնալ
- 3) խիստ զայրանալ
- 4) ազգակցական կապերը վերանալ

77. Քերան բաց անել դարձվածքի ո՞ր իմաստն է սխալ:

- 1) դժգոհություն արտահայտել
- 2) վստահությունը կորցնել
- 3) սկսել խոսել
- 4) ապշահար նայել

78. Գլուխը կախ դարձվածքի ո՞ր իմաստն է սխալ:

- 1) ամոբահար
- 2) հեզ, խոնարի
- 3) վշտից կրացած
- 4) ուրիշի գործերին չխառնվող

79. Մեջք ունենալ դարձվածքի ո՞ր իմաստն է ճիշտ:

- 1) ամրակազմ լինել
- 2) նրբագեղ լինել
- 3) հովանավոր ունենալ
- 4) բաժին ունենալ

80. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված:

- 1) **արև ծագել** - երջանիկ կյանք սկսվել
- 2) **արքուն աշքերով** - սրափ կերպով
- 3) **բարեկը մոռանալ** - մոռացկոտ լինել
- 4) **բարոսի տաճար** - զինետուն

81. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված:

- 1) **առաջին ծիծեռնակ** - նախակարապետ
- 2) **առաջին շարքերում** - մի բանի ակտիվ մասնակից
- 3) **առաջին ճեղքից** - առաջին պատահած մարդուց
- 4) **առաջին ջուրակ** - զլիսավոր դեմք

82. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված:

- 1) **երեսի ջուր** - ամոթի զգացում
- 2) **երեսի վրա քողմել** - քողմել պառկած
- 3) **ջրի երես հանել** - բացահայտել
- 4) **երես ծոել** - նվաստանալով խնդրել

83. Ո՞ր դարձվածքի իմաստն է սխալ բացատրված:

- 1) **աչք ծակել** – նախանձ առաջացնել
- 2) **աչք փակել** – չտեսնելու տալ
- 3) **աչքը արյուն կոխել** – սպառնալ
- 4) **աչքը կայչել** – քնել

84. Ո՞ր շարքում դարձվածքի իմաստի սխալ բացատրություն կա:

- 1) **արյունը ջուր դատնալ** - սահնոկել, **աչքերը փակել** - մեռնել
- 2) **աչքը ջուր կտրել** - կարոտով, անհամբերությամբ սպասել, **անձյուն ճմեռ** - անձարակ մարդ
- 3) **զլիսարկը թեր դմել** - նորաձև հագնվել, **զլիսին տալ** - զղալ
- 4) **ժամապաճառ լինել** - իգուր ժամանակ վատնել, **երեսից կախվել** - բախսանձել

85. Ո՞ր տարբերակում են համապատասխանում դարձվածքները և դրանց իմաստները:

- | | |
|------------------------|-------------|
| 1. արյունը զլիսին խփել | ա. համոզվել |
| 2. լեզուն բռնվել | բ. հանձնվել |
| 3. քարը փեշից թափել | գ. զայրանալ |
| 4. զենքերը վայր դնել | դ. կարկամել |

- 1) 1-գ, 2-դ, 3-ա, 4-բ
- 2) 1-դ, 2-գ, 3-բ, 4-ա
- 3) 1-դ, 2-ա, 3-գ, 4-բ
- 4) 1-գ, 2-բ, 3-դ, 4-ա

86. Քառակապակցություններից ո՞րը դարձվածային իմաստ չունի:

- 1) աչքով անել
- 2) աչքը մտնել
- 3) աչքից ընկնել
- 4) աչքը տրորել

87. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառակապակցություններն են դարձվածքներ:

- 1) տունը քանդել, կարապի երգ, կատվի դրախտ
- 2) ձեռնոց նետել, երկու ոտքով կաղալ, սպիտակ ջարդ
- 3) երկու տիրոջ ծառա, գլուխը յուղել, սառույցը շարժվել
- 4) սպիտակ ազոավ, սև կաչաղակ, ծեր աղվես

88. Ո՞ր նախադասության մեջ դարձվածք չկա:

- 1) Այդ աղջկան ինչու՞ չհավանեցիր, ի՞նչն էր պակաս:
- 2) Կնոջը տեսնելով՝ նա չկորցրեց իրեն, ինքն իրեն անմիջապես հավաքեց և ժպտալով մոտեցավ:
- 3) Այդ աղմկափ ուրախության ժամին հանկարծ սառը ջուր մաղվեց բոլորի գլխին:
- 4) Ծաղկափոշու մեջ բարախված գունավոր բգեղին մանուշակը ճոճք է թվում, աշխարհը՝ ծիրանագույն բուրաստան:

89. Ո՞ր նախադասության մեջ դարձվածք չկա:

- 1) Նա ամեն կիրակի եկեղեցի է գնում, մոմ վառում՝ հույս ունենալով արժանանալու երկնային արքայությանը:
- 2) Երկնքի աստղերը կկողոպտեի վարձատրելու համար այն մարդուն, ով ինձ մոռանալ կտար իմ անցյալը:
- 3) - Բավական է մորդ երեսից կախվես, դասե՛րդ սովորիք,- բարկացավ հայրը:
- 4) Այդպես էլ հարցը լուծում չստացավ, և Սուրենը հայտնվեց երկու քարի արանքում:

90. Տրված բառակապակցություններից քանի՞սն են դարձվածք.

աչքի լույս, բարի պտուղ, կայծակի արագությամբ, ոտքի վրա, գլուխը բարը, համեղ պտուղ, հոնքերը կիսել, աչքերը մերկել, ձեռքերը հիճա դժել, ոտքը կախ զցել:

- 1) բոլորը
- 2) ինը
- 3) ուրը
- 4) յորը

91. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Աստաղագործը շիկացած երկարը դրեց սալին, որ սկսի իր ամենօրյա աշխատանքը:
- 2) Նշտարը, ինչպես և վիրաբուժական մյուս գործիքները ախտահանվեցին:
- 3) Բրուտանոցը լեփի-լեցուն էր կավե թասերով, որոնք աչքի էին ընկնում ազգային զարդանախշերով:
- 4) Նրա մեղանչումները նոր դժբախտություններ բերեցին արքայական տոհմին:

92. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Պատառոտված բարփր դժվարացնում էր ձկնորսի աշխատանքը:
- 2) Բամբիշը ներկայացավ բազավորական տան անդամներին իր նոր սանրվածքով:
- 3) Այդ շաղափն այլևս չէր գործածվում պատ ծակելու համար:
- 4) Գրաստը ցեղական էր և իշխանի ամենասիրելին:

93. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Ակութներում հանգան վերջին կրակները, և վրանախումքը ընկոմվեց խավարի մեջ:
- 2) Դժվար էր առանց սարսուի նայել հողածածկ այդ խուղերի մեջ բնակվող մարդկանց դեմքերին:
- 3) Հայ ժողովուրդն իր խորին երախտիքն է հայտնում Ֆրանսիային՝ ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծ ընդունելու համար:
- 4) Ավանդությունը մեզ է փոխանցել այս պատմությունը հերոս իշխանի մասին:

94. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Ֆիզիկոսը Օքսֆորդի համալսարանից հրավեր էր ստացել մասնակցելու միջազգային գիտաժողովին:
- 2) Քազմագրադի լինելու պատճառով հազվագյուտ է ընկերու ամառանոց գալիս:
- 3) Կողմերի անպատճախանատվության և անփութության հետևանքով այդքան կարևոր պայմանագիրը լուծարվեց:
- 4) Ցոփ ու շվայտ կյանքով ապրող որդիները վերջնականապես սնանկացրին իրենց հորը:

95. Ո՞ր նախադասության մեջ բառագործածության սխալ կա:

- 1) Հորեղբայրս հայտնի որսորդ է, սակայն վերջերս խիստ զբաղված լինելու պատճառով արդեն ստեպ-ստեպ է գնում որսի:
- 2) Կատակերգության երկրորդ տեսիլը ամենահաջողվածն էր և գերեց բոլորին:
- 3) Ուսուցչուին դրվագնեց հայոց լեզվի օլիմպիադայում հաղթած ներհուն աշակերտներին:
- 4) Ասպնջական ընտանիքում միշտ էլ հաճելի է հյուրընկալվելը:

96. Ո՞ր շարքում են ճիշտ տրված հետևյալ օտար բառերի հայերեն համարժեքները՝

պառակա, մողա, գաստրոյ, մոզաիկա:

- 1) հանգիստ, ժամանակակից, ելույթ, բնանկար
- 2) դադար, նորաձևություն, հյուրախաղ, խճանկար
- 3) ընդմիջում, նորույթ, թատրոն, քանդակ
- 4) սպասում, արդիականություն, ներկայացում, հավաքածու

97. Ո՞ր շարքում են ճիշտ տրված հետևյալ օտար բառերի հայերեն համարժեքները՝

լիդեր, լոգունգ, լոմբարդ, սայթ:

- 1) դեկավար, կոչ, պահոց, արժանիք
- 2) հետևորդ, խոսնակ, դրամանիշ, տպիչ
- 3) առաջնորդ, կարգախոս, գրավատոն, կայքէջ
- 4) վկա, խրատ, դրամապանակ, վկայական

98. Ո՞ր շարքում են ճիշտ տրված հետևյալ օտար բառերի հայերեն համարժեքները՝

քիլիա, ֆորում, կոմկուրս, սուվերենում:

- 1) կրպակ, հրապարակ, մրցանակ, քագավորական
- 2) մասնաճյուղ, համաժողով, մրցույթ, ինքնիշխան
- 3) բաժին, սկահակ, փոխսպառում, բանաձև
- 4) գրասենյակ, համակարգ, առաջնություն, կարգավիճակ

99. Ո՞ր շարքում են ճիշտ տրված հետևյալ օտար բառերի հայերեն համարժեքները՝

միսիս, սիստեմ, ռեսլիստ, ֆունկցիա:

- 1) գալուստ, կառուցվածք, իրատես, գործուն
- 2) սպասելիք, համալիր, իրական, գործառնություն
- 3) նպատակ, համախումբ, խկություն, գործողություն
- 4) առաքելություն, համակարգ, իրապաշտ, գործառույթ

ԲԱԺԻՆ 2 ԲԱՌԱԿԱԶՄՈՒԹՅՈՒՆ

1. Տրված բառերից ո՞րը կազմությամբ պարզ չէ:

- 1) հրաման
- 2) խրամատ
- 3) պատգամ
- 4) հրահանգ

2. Ω՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:

- 1) հրաժեշտ, խարիսխ, կորիզ, ապուխտ
- 2) դշխոն, ներքան, ներկա, սնողիկ
- 3) երաժիշտ, համբավ, համարձակ, դարման
- 4) տկար, բժիշկ, դրվագ, սաղավարտ

3. Ω՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:

- 1) հեքիաք, դժնի, գլխարկ, սկիզբ
- 2) նաժիշտ, դանակ, վարունգ, վախճան
- 3) սնգույր, աղի, սկահակ, սխտոր
- 4) դեղձան, ստերջ, գավաք, սեպուհ

4. Ω՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:

- 1) քաղաք, եղջյուր, երիտասարդ, լուսնկա
- 2) աղիք, եղեգն, խավար, խոժող
- 3) գրպան, արդուկ, կանաչ, կատակ
- 4) դշխոն, փափուկ, խախուտ, կանոն

5. Ω՞ր շարքի բոլոր բառերն են կազմությամբ պարզ:

- 1) հանդես, հասարակ, արեղա, ճարպիկ
- 2) հանճար, հասակ, վարսակ, մառան
- 3) հավասար, նոճի, գարի, կայսր
- 4) հավատ, կիսատ, մաքուր, մարգարիտ

6. Նշված բառերից քանի՞ն են կազմությամբ պարզ.

Դժբախտ, հաստիկ, կապիկ, նամակ, զնողակ, հրապարակ, սոսազ, լազվարդ, կառք, դժինեմ:

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) յոթը

7. Ω՞ր շարքի բոլոր բառերում և բառաձևերում է յ-ն արմատական հնչյուն:

- 1) քեյից, Ալեքսեյին, խոյահարել, Սիքայել
- 2) Սերգեյից, Կարոյի, բայական, հայելի
- 3) զործունյա, լեռնային, արդյոք, աղյուս
- 4) մերենայորեն, խնայել, կաթայատուն, Նոյեմբար

8. Տրված բառերից ո՞րը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի:

- 1) ականավոր
- 2) ականակիտ
- 3) ականատես
- 4) ականապատ

9. Տրված բառերից ո՞րը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի:

- 1) սնամեջ
- 2) սնանկ
- 3) սնունդ
- 4) սնոտի

10. Տրված բառերից ո՞րը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի:

- 1) գաղտնաձածուկ
- 2) ծխածածկույթ
- 3) ծակուծուկ
- 4) ծածկաթերթիկ

11. Տրված բառերից ո՞րը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի:

- 1) հրացան
- 2) աքցան
- 3) աղցան
- 4) ցիրուցան

12. Տրված բառերից ո՞րը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի:

- 1) թզենի
- 2) թզուտ
- 3) թզուկ
- 4) թզաշիր

13. Տրված բառերից ո՞րը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի:

- 1) հնոտի
- 2) հնոց
- 3) հնավանդ
- 4) հնազետ

14. Տրված բառերից ո՞րը մյուսների հետ ընդհանուր արմատ չունի:

- 1) արջանուկ
- 2) արջասպ
- 3) արջապար
- 4) արջասպան

15. Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է միավաճիկ:

- 1) բարձրուդեշ, հայրենադարձ, հուշարձան
- 2) հարցասեր, տարեդարձ, խրձաձև
- 3) կարեվեր, ազեվազ, ուսումնատեսն
- 4) պնդողակ, սնապարծ, հպանցիկ

16. Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է միավաճել:

- 1) գրակալ, կայարանամերձ, ձնագնդի
- 2) ցլամարտիկ, օրավարձ, ծանրաձող
- 3) սևահող, սրարշավ, քաղցրահամ
- 4) բռչնորս, հրկիզել, թթվահամ

17. Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է միավաճել:

- 1) կրափոշի, թիավարել, տղամարդ
- 2) անասնապահ, մորաքույր, մտահայեցություն
- 3) ավարառու, գնդասեղ, կուսակցական
- 4) կետորսանավ, ալեծուփ, մշտադալար

18. Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է միավաճել:

- 1) յուրովսանն, բազմահնար, սալշարդ
- 2) քմահաճ, բնուրազիր, շրահանդես
- 3) դիպաշարային, հայրենադավ, երազահան
- 4) բնավեր, վաղանցիկ, դեսպանատուն

19. Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին արմատն է միավաճել:

- 1) արյունահետ, հնամենի, եռոտանի, հիմնադրել
- 2) արդարադատ, հնադարյան, սնահավատ, լրտես
- 3) խառնաշփոթ, կաթնակեր, կարգապահ, հյուրասեր
- 4) կենսատու, լայնարձակ, ծածկագրություն, թխակն

20. Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին արմատն է միավաճել:

- 1) ծովահեն, ընդդիմադիր, որդեսպան, չորքոտանի
- 2) բանկարժեք, տնտեսվարող, երկդիմի, երթևեկություն
- 3) երդմնազանց, նույնանիշ, ակնահաճո, շրջանավարտ
- 4) շրջմոլիկ, հաղորդակցություն, կալրապատ, բարակիրան

21. Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին արմատն է միավաճել:

- 1) շահամոլ, կառավարում, չարաշահել, բծախնդիր
- 2) շահագրգուել, մանրազնին, վերնաշապիկ, տեղատվություն
- 3) վաղանցիկ, անմեղսակից, ինքնուսույց, փոշեկուլ
- 4) կորփամարտ, ալեկոծ, կենսաժպիտ, սահադաշտ

22. Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին արմատն է միավաճել:

- 1) չվացուցակ, միջօրեական, միահավասար, քվեատուփ
- 2) կուսակալ, լեզվագնական, քրձազգեստ, պարզերես
- 3) պերճաշուք, բարենապաստ, օգտագործվել, տեղափոխել
- 4) հեծելազոր, միջնադարյան, արծաթահնչյուն, հեռատեսություն

23. Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է բազմավաճել:

- 1) բազմազբաղ, պատմվածաշար, փոշեկուլ
- 2) որդեսեր, մանրախնդիր, դրույքաշափ
- 3) ծամծմված, ծնրադիր, սկզբնապատճառ
- 4) ջորիհնեք, ուղեվճար, կնճռապատ

24. Ո՞ր շարքի բոլոր բառերի առաջին արմատն է բազմավանկ:

- 1) նկարակալ, ջարդուփշուր, երախտամոռ
- 2) վարչակազմ, արձվարույն, կարոտախտ
- 3) հավատափոխ, ծաղկափրիթ, ճամփարաժան
- 4) կարկտարեր, բուրումնալից, աշխարհազոր

25. Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին արմատն է բազմավանկ:

- 1) մաքրաջրել, ծայրաստիճան, ծածկանուն, ծաղկաշղթա
- 2) մեղադրանք, խաչեղբայր, լուսանկարչական, կենսաժպիտ
- 3) հյուսիսարևելյան, գեղարվեստական, ոսկեղեղձան, մշտադալար
- 4) ծովածավալ, կիսախավար, չնաշխարհիկ, պարտաճանաչ

26. Ո՞ր շարքի բոլոր բառերի վերջին արմատն է բազմավանկ:

- 1) ծանրակշիռ, խորազնին, բարեխնամ, խնկածաղիկ
- 2) ծանորագրություն, ատենադպիր, գաղտնածածուկ, ուազմաճակատ
- 3) մեծաշնորհ, քաղցրօրոր, մելամաղձոտ, մեղրամիս
- 4) մեծապատիվ, միահամուռ, նվիրատվություն, գեղագանգուր

27. Տրված բառերից ո՞րն է բարդ:

- 1) տիկնիկ
- 2) կրկնակոշիկ
- 3) լուսատտիկ
- 4) բռնագրոսիկ

28. Տրված բառերից ո՞րը բարդ չէ:

- 1) բրաշուշան
- 2) հաղթաբազուկ
- 3) դաշունահարված
- 4) ամպածածկ

29. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդ:

- 1) շքերթ, շնչակտուր, բարբառ, իրապաշտ
- 2) քաջամարտիկ, տրտմաշուր, փափկասուն, տնանկ
- 3) պարագիծ, դասվար, ականակիր, կրծոսկր
- 4) վերջնարկ, հաշմանդամ, ընչազուրկ, արքայազարմ

30. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բարդ:

- 1) գետեզը, հեռատես, արտոնագիր, սխտոր
- 2) բանքեր, մտամոլոր, դժբախտ, հանրահավաք
- 3) ոսկրախտ, հեռազիր, ինչևէ, գրասեղան
- 4) ջրմուղ, կաթոզին, հերոսարար, խնկաբույր

31. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են բարդ:

- 1) ջլաբազուկ, պարուրաձն, որսատոպրակ, ձյունապսակ
- 2) աշնանածաղիկ, հստակամիտ, ներբողազիր, հրուշակավաճառ
- 3) նկողահարկ, կանխազուշակ, ջերմուկաբույժ, ծիրանավառ
- 4) ստնտու, սոխակաձայն, արձվաքիթ, կոռոնկերամ

32. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են բարդ:

- 1) ներբանակաշի, նշտարածն, նախանձախնդիր, ամենաբռն
- 2) անվանատառ, անկյունագիծ, աստղափրփուր, պերճիմաստ
- 3) արձակագիր, անջահյուս, արմավահյութ, արձճափայլ
- 4) կանթեղալույց, սոսնձապատ, արտամարզ, մրցադահլիճ

33. Ո՞ր շարքի բոլոր բառերն են հոդակապով:

- 1) արջառս, բազմափորձ, բազմատարր, բարգավաճ
- 2) բյուրաքանչ, բազկարձակ, որդեսեր, տնտեսագետ
- 3) բարձրատոհմ, բարձիթողի, բարյացակամ, բեռնանավ
- 4) բանակատեղ, բառապաշար, բարեբնույթ, բարձրանիստ

34. Ո՞ր շարքի բոլոր բառերն են հոդակապով:

- 1) շողավարդ, շողարձակ, շնորհաշատ, շուշանաբույր
- 2) մանածարել, մայրապետ, միամիտ, մինուճար
- 3) նորափթիթ, առանձնապետ, շեշտակիր, ականանետ
- 4) ձերբակալել, կառավարել, անասուն, փափկասուն

35. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անհոդակապ:

- 1) գառնարած, առաջընթաց, մսաղաց, աղեկտուր
- 2) զօրուգիշեր, գերեվարել, շաքարավազ, լեռնաշխարհ
- 3) հացքուխ, անընդմեջ, ազեվազ, լրջմիս
- 4) ձկնկիթ, նրբերանգ, արևիատ, ձյունառատ

36. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անհոդակապ:

- 1) նամակագիր, վերարկու, տնօրեն, կուսանոց
- 2) զբոսայգի, ջրաղաց, լուսամկուփ, վիպասան
- 3) ծովեզը, սևերես, գնդածն, բարեհոգի
- 4) երթևեկ, ունկնդիր, գինետուն, սաղավարտ

37. Ո՞ր շարքում հոդակապով բառ կա:

- 1) բնաշխարհիկ, նականուն, ցողառատ, աշառու
- 2) բնավեր, սևուսուգ, շաքարավազ, բանապուր
- 3) շանթարգել, գետնանուշ, բռնարարք, արևառ
- 4) դառնանուշ, ջրարբի, շարիշար, առևտուր

38. Ո՞ր շարքում հոդակապով բառ չկա:

- 1) գործակցում, գրտնակում, զգացում, գոյացում
- 2) սնանկություն, աղաման, հուկառատ, հարեւանցի
- 3) գուլպայագործ, թիկնարոռ, անալի, դասավարտ
- 4) սպիտակարյուն, դավադիր, երկնառաք, դարենդար

39. Ո՞ր շարքում հոդակապ չունեցող բառ կա:

- 1) միջակոտոր, մենատնտես, մեծակոհակ, մաքրահոգի
- 2) մրահոն, մարտահրավեր, մահճակալ, մահաճառ
- 3) միջամտել, հոչակագիր, հրապարակ, հրաբողբոջ
- 4) ճրագակալ, ճապաղախոս, ճաճանչափայլ, հոդածին

40. Ո՞ր շաբառում հոդակապ չունեցող բառ կա:

- 1) հոգնաբեկ, հոգետանջ, մեծասրանչ, հզորազոր
- 2) հետաքրքիր, հետամնաց, հետայսու, հետաքնին
- 3) հայտանշան, հայկազարմ, աղեքորբ, աղերսախառն
- 4) աղոթագիրք, աղյուսագույն, աղմկալից, աղավնեկտուց

41. Ո՞ր բառում -ոց ածանց չկա:

- 1) դեղնուց
- 2) այսուց
- 3) կտուց
- 4) նեղուց

42. Ո՞ր բառում -իք ածանց չկա:

- 1) կարծիք
- 2) աղիք
- 3) շարիք
- 4) տանիք

43. Ո՞ր բառում -ուկ ածանց չկա:

- 1) փափուկ
- 2) նորելուկ
- 3) հանելուկ
- 4) բանուկ

44. Ո՞ր բառում -ակ ածանցը փոքրացուցիչ նշանակություն չունի:

- 1) ծովակ
- 2) գնդակ
- 3) նավակ
- 4) գրչակ

45. Ո՞ր բառում -(ա)ցի ածանցով կազմված բառը «որևէ տեղի բնակից» իմաստը չունի:

- 1) լեռնիցի
- 2) փաստացի
- 3) հարավցի
- 4) սևանցի

46. Տրված բառերից քանիսու՞ն ապ(ա)- նախածանցը ժխտական իմաստ չի արտահայտում.

ապաբախտ, ապերասան, ապիկար, ապուշություն, ապերջանիկ, ապօրինի, ապաշնորհ, ապացույց, ապազգային, ապարդյուն:

- 1) ոչ մեկում
- 2) մեկում
- 3) երեքում
- 4) հինգում

47. Ո՞ր շաբքում առ - նախածանց չունեցող բառ կա:

- 1) առինքնել, առաջ, առկախ, առմիշտ
- 2) առանցք, առտնին, առափնյա, առայժմ
- 3) առջև, առևտուր, առնչվել, առնմանում
- 4) առավել, առարկել, առէջ, առանձին

48. Տրված բառերից քանի՞ն ունեն -ակ վերջածանց.

հպատակ, քարյակ, սպիտակ, սևակ, հովատակ, քանակ, պարտիզակ, ծիծեռնակ, կոչմակ, կտակ:

- 1) բոլորը
- 2) ութը
- 3) վեցը
- 4) չորսը

49. Ծարքերից քանիսո՞ն նախածանց չունեցող բառ կա:

- 1) չբեր, չտալ, չխոսկան, չունենոր
- 2) տարբեր, տարկետում, տարհանել, տարասեռ
- 3) պարբերություն, պարփակ, պարագլուխ, պարականոն
- 4) նախերգ, նախաբան, նախատել, նախօրոք

- 1) ոչ մեկում
- 2) մեկում
- 3) երկուսում
- 4) երեքում

50. Ո՞ր շաբքում վերջածանց ունեցող բառ կա:

- 1) ապերասան, անքնին, մակնիշ, նախագուշակ
- 2) անվեհեր, ամենահատակ, առհավետ, նախարազուկ
- 3) անքոյթ, անսասան, ապերջանիկ, անապահով
- 4) անանցատ, ներդաշնակ, մակդիր, անապակ

51. Ո՞ր շաբքի ոչ բոլոր բառերն են ածանցավոր:

- 1) ձգան, կայան, կծան, շարան
- 2) քարոտ, խնկահոտ, յուղոտ, խավոտ
- 3) ցանցկեն, ծակոտկեն, լուսեղ, հոնեղ
- 4) գորոն, գործոն, թափոն, ծամոն

52. Ո՞ր շաբքի ոչ բոլոր բառերն են ածանցավոր:

- 1) պատահար, կերպար, կտցար, տիպար
- 2) անթացուպ, անտերունչ, անմեռուկ, անքասիր
- 3) խոյակ, վրիպակ, դասակ, սուզակ
- 4) դյուրին, նրբին, անմեկին, խորին

53. Ո՞ր շաբքի բոլոր բառերն են վերջածանցավոր:

- 1) ձողիկ, աճուրդ, կաթողին, ելարան
- 2) կտրոն, կպրագույն, կայծակ, խարույկ
- 3) փրկազին, անցյալ, փողք, սառույց
- 4) կանուխ, աղերսազին, թափուտ, վերջին

54. Ո՞ր շարքում միայն մեկ ածանց ունեցող բառ կա:

- 1) ազգայնական, ամենապուրիչ, անտարբեր, անտեսում
- 2) անանձնական, բանակային, առողջություն, անվերադարձ
- 3) գրաբարյան, չխոսկան, անտրամադիր, անհարկի
- 4) անհուսալի, անմիջական, անօրինակ, անմնացորդ

55. Ո՞ր շարքում միայն մեկ ածանց ունեցող բառ կա:

- 1) անգիտակ, ներկայություն, անձավային, անդադրում
- 2) անհաճող, անհամահունչ, անցումային, անհագուրդ
- 3) անառիկ, անենթակա, թռչուն, անկարևոր
- 4) անասուն, անզգայուն, անընդհատ, անիրական

56. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն երկու ածանց:

- 1) անքանակ, անփարատելի, շրջանային, անարժան
- 2) անդանակ, առաձգական, աշխատանքային, արդարացիորեն
- 3) առանձնապես, ապաշխարանք, անարդյունավետ, բարդատական
- 4) ապացուցում, ապխտել, առանցք, արգելակում

57. Ո՞ր շարքի բոլոր բառերն ունեն երկու ածանց:

- 1) մակրայական, համաստորադաս, տարաշխարհիկ, բարձրաշխարհիկ
- 2) տձևություն, երևութական, տարեվերջյան, տարարժույթ
- 3) անըստօդյուտ, տարկետում, վերելակ, հատկանշական
- 4) անտեղյակ, տարաբնույթ, ամենախելացի, նամականի

58. Ո՞ր բառում է -ական վերջածանցով գոյական կազմվել:

- 1) բաղաքական
- 2) մտավորական
- 3) ուսանողական
- 4) տնտեսական

59. Ո՞ր բառում է -եղեն ածանցով ածական կազմվել:

- 1) հրեղեն
- 2) հրուշակեղեն
- 3) սպիտակեղեն
- 4) բանջարեղեն

60. Տրված բառերից որի՞ արմատներից մեկին կարող է միանալ և նոր բառ կազմել -ոց վերջածանցը (առանց երկրորդ ածանցի):

- 1) երկարավիզ
- 2) թիկնաքոռ
- 3) լուսամուտագող
- 4) ուսաղիր

61. Տրված բառերից որի՞ արմատներից մեկին կարող է միանալ -մուճք ածանցը և նոր բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):

- 1) ավարառու
- 2) հիմնարկեք
- 3) համեմել
- 4) անասնաբույժ

62. Տրված բառերից որի՞ արմատներից մեկին կարող է միանալ և նոր բառ կազմել -վածք վերջածանցը (առանց երկրորդ ածանցի):

- 1) թխամորթ
- 2) զլուխվա
- 3) անդրադառնալ
- 4) արծաթապատում

63. Տրված բառերից որի՞ արմատներից մեկին կարող է միանալ և նոր բառ կազմել -յան վերջածանցը (առանց երկրորդ ածանցի):

- 1) բուրաստան
- 2) արնաննան
- 3) հոգեհանգիստ
- 4) հոգեգալուստ

64. Տրված բառերից քանիսի՞ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ -աւ վերջածանցը և նոր բառ կազմել (առանց երկրորդ ածանցի).

գանգամաշկ, կիսամյակ, հաստարում, ամրակուռ, կավածեփ, քնարաքախ, ապիկար, ձյունափայլ, արևակառ, հոգեառ:

- 1) իննի
- 2) ուրի
- 3) հինգի
- 4) երեքի

65. Տրված բառերից քանիսի՞ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ -յակ վերջածանցը և նոր բառ կազմել (առանց երկրորդ ածանցի).

օրնիքում, հայորդի, երեսնական, մանաժագործ, հարսանեկան, ժամտադեմ, դղոդյում, սարալանջ, սենեկապետ, բերքառատ:

- 1) վեցի
- 2) հինգի
- 3) չորսի
- 4) երկուսի

66. Տրված բառերից քանիսի՞ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ -ուճք վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի).

պարապուրյուն, ծաղկավաճառ, բուրավետ, մասմազետ, կճամեծար, զարնանացան, զգայարան, ականապատ, մանրավաճառ, բարձրատոհմիկ:

- 1) երկուսի
- 2) երեքի
- 3) չորսի
- 4) հինգի

67. Տրված բառերից քանիսի՞ արմատին (արմատներից մեկին) կարող է միանալ -ուիի վերջածանցը և բառ կազմել (առանց երկրորդ ածանցի):

ուսանողական, տոնավաճառ, գեղջկական, երգչախումբ, հայելապատ, պարագիծ, մտերմություն, ուսուցապետ, մարզպետարան, պշրանք:

- 1) հինգի
- 2) երեքի
- 3) մեկի
- 4) ոչ մեկի

68. Ω՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:

- 1) վճարունակ, ցայգալույս, միջնորմ
- 2) ընչարադ, հետաքննիչ, գործուղում
- 3) անհեռատես, շանթարգել, մեղմահնչյուն
- 4) բնօրրան, լրակյաց, բարեկեցիկ

69. Ω՞ր շարքի բոլոր բառերն են բարդածանցավոր:

- 1) բնօրրան, ածխահանք, դիտարժան, տնտեսություն
- 2) յորօրինակ, տարկետում, վիպասան, տանտիրուիի
- 3) բնութագիր, արևայրուք, պարփակել, խոսքարվեստ
- 4) տափողակ, տրտմաշուք, խոտհարք, երեսունչորս

70. Ω՞ր շարքի ոչ բոլոր բառերն են բարդածանցավոր:

- 1) ռազմերգու, ջղաձգորեն, ընչագրկում, երկերեսանի
- 2) միաձուլում, մեղսունակ, ուսումնասեր, նույնահնչյուն
- 3) թիկնոցավրան, սպիրտայրոց, յուղարսուք, նավթապահեստ
- 4) արյունագեղում, հաղթաբազուկ, աշառու, նեղաջք

71. Ω՞ր բառն է հապավում:

- 1) հրահանգ
- 2) տնտեսագետ
- 3) գործավար
- 4) տնտեսվար

72. Ω՞ր բառն է հապավում:

- 1) բնականոն
- 2) բնակմակերես
- 3) գեղասահք
- 4) զնանկում

73. Ω՞ր բառը հապավում չէ:

- 1) տեխսզննում
- 2) տնտիհաշվարկ
- 3) մարզխորհուրդ
- 4) մարզափայտ

74. Ո՞ր բառը հապավում չէ:

- 1) ֆիզարձակուրդ
- 2) ժողոատարան
- 3) ժողովրդավար
- 4) սոցմրցում

75. Ո՞ր շարքի բոլոր բառերն են հապավումներ:

- 1) գյուղբարակից, մուլտֆիլմ, բնակվարձ, ֆիզմաք
- 2) ջրմուղ, սոցհարցում, խնայդրամարկղ, ուսմասվար
- 3) դրկից, պետապահովրություն, Եվրախորհուրդ, ԿԲ
- 4) շինաղբ, մարզկենտրոն, բուժքույր, գաղթօջախ

76. Ո՞ր շարքի բոլոր բառերն են հապավումներ:

- 1) արհմիություն, դասղեկ, ԱԱԽ, Էլցանց
- 2) երիտրելականներ, ԼԴՀ, տնտիաշվարկ, տնտես
- 3) զիտարշավ, ջրցան, կուսթեկնածու, ԿԳՆ
- 4) քաղաքաշտպանություն, ձիարշավ, կազմկոմիտե, հէկ

77. Ո՞ր շարքում հապավում չկա:

- 1) տեղանուն, լրտես, ինքնուս, չարքաշ
- 2) երկրետո, պատկից, պետկրետ, ջրշուն
- 3) փղոսկր, մարզպետ, կուրսղեկ, խոտիունձ
- 4) գետանց, վերհուշ, քաղբյուրո, շուրջկալ

78. Տրված բառերից քանի՞ն են հապավումներ.

հանրահավաք, փոխխոսնակ, զինուժ, քաղծառայող, քաղիան, բնապահպան, ուզմաքաղաքական, շրջայց, ներուժ, օրենսգիրք:

- 1) բոլորը
- 2) յոքը
- 3) երեքը
- 4) երկուը

79. Տրված բառերից քանի՞ն են հապավումներ.

խճայրանկ, արտզործնախարար, տեխսզնում, կազմքաժին, պետառևտուր, պատրարտուլար, հեռաստեսիլ, ֆինմախ, աշխարհասփյուռ, մանկինոր:

- 1) բոլորը
- 2) ինը
- 3) ուրը
- 4) յոքը

80. Տրված հապավումներից ո՞րն է սխալ գրված:

- 1) աէկ
- 2) ԲՌԻՀ
- 3) ԲՌՀ
- 4) զազս

81. Ո՞ր շաբաթում հապավումների բոլոր տեսակներից կան:

- 1) գիտքարտուղար, **Պետդումա**, երիտշարժում
- 2) զազս, դասղեկ, **Քանաքեռհեկ**
- 3) պետհամարանիշ, ուսխորհուրդ, զինգրքույկ
- 4) սոցքարտ, սանհանգույց, բուժֆակ

82. Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) նախազահ - **նախ**՝ ածանց, **զահ**՝ արմատ, **ա**՝ հոդակապ
- 2) նախանձավառ - **նախանձ**, **վառ**՝ արմատներ, **ա**՝ հոդակապ
- 3) նախնադար - **նախ**՝ ածանց, **դար**՝ արմատ, **ա**՝ հոդակապ
- 4) մեծարգո - **մեծ**, **արգ**՝ արմատներ, **ո**՝ ածանց

83. Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) ճամփարաժան - **ճամփա**, **րաժ**՝ արմատներ, **աճ**՝ վերջածանց
- 2) հրազանգուր - **հոր**, **զանգուր**՝ արմատներ, **ա**՝ հոդակապ
- 3) մոխրագույն - **մոխրիր**, **գույն**՝ արմատներ, **ա**՝ հոդակապ
- 4) ցորնամրիկ - **ցորեն**, **մրիկ**՝ արմատներ, **ա**՝ հոդակապ

84. Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) նամակադրոշ - **նամակ**, **դրոշ**՝ արմատներ, **աճ**՝ հոդակապ
- 2) ներգոյական - **գոր**՝ արմատ, **ներ**, **ական**՝ ածանցներ
- 3) մոլորակածիր - **մոլորակ**, **ծիր**՝ արմատներ, **աճ**՝ հոդակապ
- 4) համատրամաշափ - **չափ**՝ արմատ, **համ(ա)**, **տրամ** նախածանցներ, **աճ**՝ հոդակապ

85. Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) ճոքակոշիկ - **ճիռ**, **կոշիկ**՝ արմատներ, **ք**՝ ածանց, **աճ**՝ հոդակապ
- 2) ծաղկահասակ - **ծաղիկ**, **հաս**՝ արմատներ, **ակ**՝ վերջածանց, **աճ**՝ հոդակապ
- 3) ծածկախորհուրդ - **ծածոկ**, **խորդ**՝ արմատներ, **որդ**՝ վերջածանց, **աճ**՝ հոդակապ
- 4) հետնամուտը - **հետն**, **մոտս**՝ արմատներ, **ք**՝ վերջածանց, **աճ**՝ հոդակապ

86. Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) հերուկազրկում - **հեր**, **զրկի**՝ արմատներ, **ուկ**, **ում** վերջածանցներ, **աճ**՝ հոդակապ
- 2) սննդամբերք - **սուն**, **մբեր**՝ արմատներ, **ունդ**, **ք**՝ վերջածանցներ, **աճ**՝ հոդակապ
- 3) ստնտվություն - **սուստ**, **տու**՝ արմատներ, **ուրյուն**՝ վերջածանց
- 4) հետաքննիչ - **հետ**, **քնիմ** արմատներ, **իչ**՝ վերջածանց, **աճ**՝ հոդակապ

87. Ո՞ր բառի բառակազմական վերլուծության մեջ սխալ կա:

- 1) օղերևութաբան - **օղ**, **երև**, **բաժ** արմատներ, **ոյթ**՝ վերջածանց, **աճ**՝ հոդակապ
- 2) ժանյակապատ - **ժանյակ**, **պատ**՝ արմատներ, **ա՛**՝ հոդակապ
- 3) հայցադիմում - **հայց**, **դեմ** արմատներ, **ում** վերջածանց, **աճ**՝ հոդակապ
- 4) սաղավարտակիր - **սաղավարտ**, **կիր**՝ արմատներ, **ա՛**՝ հոդակապ

ԳԼՈՒԽ 3 ԶԵՎԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1 ԳՈՅԱԿԱՆ

1. Ընդգծվածներից ո՞րը գոյական չէ:

- 1) Սարոյանը, թեև զրում էր անգլերեն, իրեն հայ օրոք էր համարում:
- 2) Դասարանում բանաստեղծություններից որո՞ք երկու աղջիկ կար. մեկը Մարիամն էր:
- 3) Միջակ լրագրողներ էլ կան, որոնք իրենց չկայացած օրոք են կարծում:
- 4) Այսօր քերը զիտեն, որ հանճարեղ օրոք Անտոն Չեխովը նաև բժիշկ էր:

2. Ընդգծվածներից ո՞րը գոյական չէ:

- 1) Հաջողությամբ հանձնեց քննությունները և դարձավ բժշկական համալսարանի ուսանող:
- 2) Վերջերս էր ստացել պետական ծառայողի կարգավիճակ:
- 3) Բարեենես մատուցող ստեղ-ստեղ մոտենում էր նորապսակների սեղանին:
- 4) Թեյլերյան ծնող ազգի վրիժառուների պակաս չի կարող ունենալ:

3. Տրված բառերից քանի՞սը գոյական չեն.

գարուն, խեցգետին, ամիս, ատյան, չտես, ուկե, ընդպղում, թվական, զիշերային, շարական, տնական, խոստում:

- 1) չորսը
- 2) երեքը
- 3) երկուսը
- 4) մեկը

4. Ո՞ր շարքի բոլոր գոյականներն են անձնանիշ:

- 1) բրուտ, վարձակ, մեծատուն, շամբուտ
- 2) քենակալ, խափշիկ, մատակ, քուրմ
- 3) համհարզ, դրացի, հտպիտ, հոտաղ
- 4) քարայր, նաժիշտ, քեռայր, ուսիվիրա

5. Ո՞ր շարքում հոգմակի թվի կազմության սխալ կա:

- 1) սրճեփներ, կաղրեր, ֆիդայիներ, օրիներգեր
- 2) գրասերներ, կարմրախայտեր, հացատներ, սկիզբներ
- 3) զրաշարներ, երկրապահներ, պատճեններ, շարասյուներ
- 4) համերգավարներ, ոտնաձայներ, ճարտասաններ, այտոսկրեր

6. Ո՞ր շարքի բոլոր գոյականների հոգմակի թիվն է կազմվում – եղ վերջավորությամբ:

- 1) անձ, սենյակ, դրամարկղ, հուն
- 2) տուն, գարուն, գիրք, հազուս
- 3) բոշնաբույն, կարգ, դուստր, որսաշուն
- 4) բառատետր, անվաղող, որմնաղիր, հանքահոր

7. Ո՞ր շարքի բոլոր գոյականների հոգմակի թիվն է կազմվում -եղ վերջավորությամբ:

- 1) սպա, հաճրահոր, հեռազիր
- 2) եզրակար, շարասյուն, շտար
- 3) կնքամայր, ժանր, օրիններզ
- 4) տոնածառ, հացարույս, թիկնապահ

8. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգմակի թիվն է կազմվում -եղ վերջավորությամբ:

- 1) հոգեբույժ, դրամատուն, շարասյուն, եզրակար
- 2) ենթաճյուղ, աստղաբույլ, նորատետր, հողմացույց
- 3) եզրագիծ, զարդատուփ, միլիոնատեր, զուգերզ
- 4) երկրամաս, հետազիծ, հացարույս, տավղահար

9. Ո՞ր շարքի բոլոր բառերի հոգմակի թիվն է կազմվում -մեղ վերջավորությամբ:

- 1) տոնացույց, որդեզիր, կաթնասուն, մեններզ
- 2) նավակար, հետախույզ, անցարուղթ, սառցահատ
- 3) օրապահ, սրունք, գրաբեր, արքայադրուստը
- 4) հանքափոր, պատճեն, տակդիր, դասալիք

10. Ո՞ր շարքի բոլոր գոյականների հոգմակի թիվն է կազմվում –մեղ վերջավորությամբ:

- 1) դասընկեր, նախամարդ, խճաքար, ժամացույց
- 2) օղաչու, ուղևոր, բեռնակիր, մեծատուն
- 3) խցանահան, գիսաստղ, թվաշարք, տեղաբնակ
- 4) դերբայ, ամսաթիվ, պատմաբան, երևանցի

11. Բառերից քանիսի[՝] հոգմակի թիվն է կազմվում –մեղ վերջավորությամբ.

բնազիր, նշանազիր, ընծայազիր, ամբաստանազիր, վերջնազիր, առակազիր, դաշնազիր, լրազիր, մանկազիր, խորազիր:

- 1) երկուսի
- 2) մեկի
- 3) հինգի
- 4) վեցի

12. Բառերից քանիսի[՝] հոգմակի թիվն է կազմվում –եղ վերջավորությամբ.

ապացույց, նշանացույց, ուղեցույց, կողմնացույց, տարեցույց, նստացույց, աստիճանացույց, ժամանակացույց, հարացույց, տոնացույց:

- 1) բոլորի
- 2) ուրի
- 3) մեկի
- 4) երկուսի

13. Բառերից քանիսի[՝] հոգմակի թիվն է կազմվում –մեղ վերջավորությամբ.

զանգակատուն, ցախատուն, մեծատուն, իջևանատուն, դրամատուն, մաքսատուն, գրավատուն, դիվանատուն, խաղատուն, վաշկատուն:

- 1) երկուսի
- 2) ուրի
- 3) չորսի
- 4) վեցի

14. Քառերից քանիսի՝ հոգնակի թիվն է կազմվում -*մեր* վերջավորությամբ.

այսրերգ, ընթացակարգ, հանքահոր, զժամապ, գրաստ, կոճղ, բերդակալ, գլխատառ, շոռ, թռչնորս:

- 1) երկուսի
- 2) չորսի
- 3) վեցի
- 4) ութի

15. Քառերից քանիսի՝ հոգնակի թիվն է կազմվում -*եր* վերջավորությամբ.

մայրամուտ, ջերմաչափ, բնարույժ, կուսակալ, աստղագետ, անտառահատ, հարկահան, հերակալ, կարգախոս, կարքածող:

- 1) մեկի
- 2) չորսի
- 3) վեցի
- 4) ոչ մեկի

16. Տրվածներից ո՞րը հավաքական գոյական չէ:

- 1) երկրագրություն
- 2) արձաքեղեն
- 3) աշխատավորություն
- 4) նամականի

17. Գոյականներից քանի՞սն են հավաքական.

կանաչեղեն, անարգանք, ուսանողություն, զորք, խորհրդապաշտություն, դեղորայք, բանջարեղեն, կանայք, ավագանի, հիշողություն:

- 1) չորսը
- 2) վեցը
- 3) յոթը
- 4) ութը

18. Ո՞ր շարքում ներքին հոլովման ենթարկվող բառ չկա:

- 1) վանահայր, սառցալեռ, աշուն
- 2) ծնունդ, գարուն, անկյուն
- 3) հանգիստ, մականուն, սեր
- 4) շարժում, մեծատուն, դոփյուն

19. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *աճ* հոլովման:

- 1) գարուն, մուկ, հղկում, մանուկ
- 2) արյուն, աշուն, ձուկ, քաջություն
- 3) մոտեցում, լեռ, սյուն, անուն
- 4) անկյուն, գառ, ամառ, երդում

20. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթարկվում *կա* հոլովման:

- 1) ուրբաթ, կեսօր, վաղը, ժամանակ
- 2) ցերեկ, իրիկնամուտ, ամիս, առավոտ
- 3) երեկ, գիշեր, տարի, ժամ
- 4) ամառ, մահ, շաբաթ, ձմեռ

21. Ո՞ր շաբքի բոլոր բառերն են ենթարկվում ու հոլովման:

- 1) անկողին, գինի, լուցկի, վազել
- 2) այգի, մթիլիսի, օղի, կաղին
- 3) կիրակի, ամուսին, աղախին, բարդի
- 4) պատաճի, որդի, պապ, գարի

22. Ո՞ր շաբքի ոչ բոլոր բառերն են ենթարկվում ու հոլովման:

- 1) ապակի, բարդի, թզենի, ոզնի
- 2) ծաղկափոշի, թերակղզի, հավաքատեղի, երթուղի
- 3) լուցկի, մատաճի, հայորդի, մորի
- 4) մարդ, կառուցել, ամուսին, անկողին

23. Ո՞ր շաբքում ոչ հոլովման չպատկանող բառ կա:

- 1) դասընկեր, մորաքույր, տանտիկին, սկեսուր
- 2) կալվածատեր, սկեսրայր, տալ, ամեր
- 3) երեցկին, տեզը, պարտատեր, բուժքույր
- 4) բաժնետեր, հարսնաքույր, զուգընկեր, հողատեր

24. Ո՞ր շաբքի բոլոր գոյականներն են ենթարկվում ներքին հոլովման:

- 1) նուռ, կնճահայր, տուն
- 2) անուն, շարայուն, լիուքյուն
- 3) փոստատուն, աստվածամայր, մանուկ
- 4) անկյուն, գարուն, որսաշուն

25. Շարքերից քանիսի՞՞ ոչ բոլոր բառերն են ենթարկվում ամ հոլովման:

1. մանուկ, ծագում, սաղցալեռ, անուն
2. քաղաքադուռ, դիմում, աշուն, երդում
3. հեռագրասյուն, գարուն, ծագում, ուղերեն
4. ամառ, ձգտում, շնաձուկ, նորոգում

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

26. Բառերից քանի՞սն են ենթարկվում ա ներքին հոլովման.

մրրկածյուն, զիտուրյուն, դաշտամուկ, դերանուն, շարժում, ձմեռ, բազմանկյուն, արյուն, հաշյուն, անկում:

- 1) երկուաը
- 2) չորսը
- 3) հինգը
- 4) յոթը

27. Քառերից քանի՞սն են ենթարկվում ներքին հոլովման.

Առու, գալուստ, խաչեղայր, գրիգորեակ, զբուրյուն, ուղղամշյուն, վաշկատուն, համբահոր, ազնվամորի, մասնատում:

- 1) ութը
- 2) վեցը
- 3) չորսը
- 4) երեքը

28. Ո՞ր շարքում հոլովական սխալ ձև չկա:

- 1) կայսերի, հարության, մանկան, սիրո
- 2) վաշկատան, դուստրի, Լոռու, Համբարձումի
- 3) մեծատունի, ծոռան, սգոն, կաղինի
- 4) հորեղբոր, տալոց, Սոչիի, վայրկյանվա

29. Ո՞ր շարքի բոլոր գոյականները որոշիչ հոդ ունեն:

- 1) տղան, գործին, աղջկան
- 2) մահվան, քահանան, ոստրեն
- 3) պատճեն, քվեն, աշտեն
- 4) լեռան, արեղան, մարդուն

30. Ո՞ր շարքի բոլոր քառերը հոդ չունեն:

- 1) պատճեն, գայիստն, կարկին, հանդ
- 2) վրձին, հոգուդ, բազին, սառը
- 3) բատրոն, դեղատուն, հարս, գինին
- 4) պարադոքս, գիրքս, ներս, բերդ

31. Ո՞ր նախադասության մեջ որոշիչ հոդի գործածության սխալ կա:

- 1) Այս երիտասարդն սկսնակների մեջ ամենաշնորհալին է թվում:
- 2) Աղջիկը Աշոտի հետ ծանրանալուց հետո ինքնամփոփի էր դարձել:
- 3) Դպիրները խոնարի շարվել էին դահլիճի դռան մոտ՝ վեհափառի աջն համբուրելու համար:
- 4) Սուրհանդակն շտապում էր ժամ առաջ հասնելու ամբոց:

32. Նշված գոյականներից քանի՞ն են դրված որոշյալ առումով.

ծվեն, պարեն, աշտեն, հյուլեն, պատճեն, ոստրեն, քերծեն, ցորեն, գեհեն, երեն:

- 1) հինգը
- 2) վեցը
- 3) չորսը
- 4) յոթը

33. Նախադասություններից քանիսո՞ւմ որոշիչ հոդի գործածության սխալ կա:

1. Իմաստունն օգուշությանք փակեց աչքերը և հրաժեշտ տվեց կյանքին:
 2. Ահազնադրորդ ծափերը անմիջապես խախտեցին դահլիճի քար լրությունը:
 3. Այդ պահին պարեկն եկավ իշխանի մոտ և հաղորդեց թշնամու գալստյան մասին:
 4. Զորականի աչքերն հաղորդյան բերկրանքից փայլում էին:
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

34. Ո՞ր նախադասության մեջ ցուցական հոդ կա:

- 1) Մինչև հիմա հիշում եմ մորս արցունքները:
- 2) Գիշերս կարևոր հանդիպում ունեմ:
- 3) Այդ արարքը վայել չեր քաջարի զինվորիդ:
- 4) Այս տարի լույս տեսավ վերջին վեպս:

35. Ո՞ր նախադասության մեջ ցուցական հոդ կա:

- 1) Շնորհիր կրկին ողորմությունդ լրվածիս անօգ, Ամենապարզ տերդ բոլորի...
- 2) Մի ծաղիկը ծիածան չէ, յոթ գույնով եմ ես ցնծում, Ես մեղուն եմ... Ողջ ազգերը ծաղիկներս են ծաղկոցում:
- 3) Թո՞ն թափառիկ հովերը պիղծ, մարմնիդ ճամփով մի՛ զնա, Վերադարձիր սրտիդ ճամփով, որ ողջ սիրտս քեզ մնա...
- 4) Կարծես շատ է քիչ աշխարհիս հողը, Որ մարդիկ մեռնում ու հոդ են դառնում:

36. Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդ կա:

- 1) Հայրենիքիս ջուրը ամենաքաղցրն է:
- 2) Պիտի փարզիմ չքնաղ լանջիդ:
- 3) Գրողներս պարտավոր ենք լինել առաջին շարքերում:
- 4) Զեզ տեսա, ու միտք եկան հազար ու մի հուշեր:

37. Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդ կա:

- 1) Սրբազն, քող այսուհետու ոչ մի արհավիրը չխափանի աղոթքդ և եկեղեցուդ զանգերի դողլանջը:
- 2) Սակայն հիշելով վերստին լույսիդ բարիքներն անհատ՝ Պարզեված քեզնից համառ թշվախս, Քո աղերսով քեզ պիտի պաղատեմ...
- 3) Ազգային գրադարանում մեծարում էին ներկայիս ամենահամբավավոր բանաստեղծներից մեկին:
- 4) Օրերս անցնում էին միայնության մեջ, տաղտկալի ու միօրինակի:

38. Ո՞ր նախադասության մեջ դիմորոշ հոդ կա:

- 1) Հրաշալի վարդերը ձեռքներիս՝ անհամբեր սպասում էինք օդանավի վայրէջքին:
- 2) Սեպտեմբերի քսանմեկին հայերս մեծ շուրջով տոնեցինք Հայաստանի անկախության պանծալի քսանամյակը:
- 3) Մոայլ խորհրդածությունները թույլ չտվեցին գիշերս աչք փակել:
- 4) Աշքերիդ փայլից երևում է, որ նպատակդ կատարվել է:

39. Ո՞ր նախադասության մեջ ստացական հոդ կա:

- 1) Խայամն ասավ իր սիրուհուն. «Ոտղ զգո՛յշ դիր հոդին»:
- 2) Աշխարհում իմն դուն իս:
- 3) Վերջերս հանդիպեցի իմ հին ծանոթին:
- 4) Ուսանողներդ խորհրդանշում եք երկրի ապագան:

40. Նախադասություններից քանիսո՞ւմ ստացական հոդ կա:

1. Հոգուդ կրակը թեժ պիտի պահես,
Եղանակները վաղ են ցրտելու:
2. Մի օրավար կյանքս անցավ
Անձրևի տակ ու կայծակի:
3. Այն աչքերը, որ չեն լացել,
Քան չեն տեսել աշխարհումս:
4. Հույսը միայն մոտս մնաց,
Մոտս մնաց անուշ մոր պես:
 - 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

41. Նախադասություններից քանիսո՞ւմ դիմորդ հոդ կա:

1. Սենք մեզ սամումից խլել ենք,
Թափվել ու բռշնել ենք, և սակայն
Ինքներս մեր միջից ծլել ենք:
2. Բայց ես այս աշխարհում
Բախտավոր եմ, քանզի
Բռնակալն եմ խոսքիս,
Խողճս՝ թիապարտը:
3. Երեխաներն ենք բոլորս մի տան,
Ողջո՞յն քեզ, հրա՛շք հավիտենության:
4. Ի՞նչ երջանիկ պահեր էին,
Ոտքերիս տակ սարեր էին:
 - 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

ԲԱԺԻՆ 2 ԱԾԱԿԱՆ, ԹՎԱԿԱՆ, ԴԵՐԱՆՈՒՆ

1. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը ածական չէ:

- 1) Արարշագործ աստղի առաջ
Վշտու սիրտս բացեցի:
- 2) Բաղերը վայրի բռան շվարած.
Ո՞վ է արշավում մոայլ գիշերով:
- 3) Եվ քո քարազած բռունցքում հիմա
Ես սուրճ եմ դնում ահեղ ճշմարտի:
- 4) Ու կոռունկների քարավանը նորից
Անուշ կարկաչով գարունն է բերում:

2. Ո՞ր նախադասության մեջ ածական կա:

- 1) Վիճակի ամորոշությունից քահանան, որ մշտապես հուսադրում էր ուրիշներին, ինքը կորցրել էր ինքնավստահությունն ու վճիռ կայացնելու կարողությունը:
- 2) Ծեմարանից այդ տարի նույնպես հրավեր չեկավ, և օգոստոսի վերջին գյուղի արդեն հոգնած, ճռուցող սայլը տեր Սուրբիասին ու Վահանին տարավ Թիֆլիս:
- 3) Այս անգամ հայրը ուր գնար, տղային տանում էր հետու, իսկ Թիֆլիսն իր՝ հրաշքի նմանվող կյանքով շարունակում էր զարմացնել տասներկուամյա տղային:
- 4) Արամի հետ ապրող տղաները մտերմաբար էին վերաբերվում Վահանին, նույնիսկ Նիկողոսը, որ առանձնանում էր ժլատությամբ, իր կողպած սնդուկից հաճախ միրգ էր հանում և հյուրասիրում նրան:

3. Ո՞ր նախադասության մեջ ածական չկա:

- 1) Կարոտել էր տնեցիներին. վատն այն էր, որ գյուղի մասին Ներսեսից բացի ուրիշ ոչ մեկի հետ խոսել չեր կարողանում:
- 2) Ներկայացման երկրորդ մասը ձգձգված էր ու ձանձրալի. դահլիճում բոլորը խոսում էին, խաղին գոեթե հետևող չկար:
- 3) Իսկ տերտերը ծախել էր արդեն Շեկո հորթը և հենց այդ պահին, սեղանին հակված, կենտրոնացած լրացնում էր նոյեմբեր ամսվա ելքի և մուտքի մատյանները:
- 4) Մինչ զահելմերն արագ-արագ իրեն էին տեղավորում կառքի մեջ, մեծերը, մի-մի բաս առած, հաջողություն էին մաղթում տեր Սուրբիասին:

4. Ո՞ր նախադասության մեջ գոյականաբար գործածված ածական կա:

- 1) Ասում եմ, ավաղ, և հայրենիքը՝ պերճ արոտավայր հարուստների ցոփ...
- 2) Սիրում եմ աչքերիդ տխրությունը խորին,
Անաղմուկ խոսքերիդ դաշնակները հիվանդ...
- 3) Աղբյուրները հնչում են ու անց կենում,
Ծարավները տենչում են ու անց կենում...
- 4) Եվ հավիտյան էլ մնացին քնած՝
Դավին անտեղյակ, ցավին անտարեր...

5. Ո՞ր նախադասության մեջ գոյականաբար զործածված ածական կա:

- 1) Դու, Արագա՛ծ, ալմա՛ստ վահան
Կայծակեղեն թրերի,
Գագարներդ բյուրեղ վրան
Թափառական ամպերի:
- 2) Ինչքա՞ն ցավ եմ տեսել ես,
Նենգ ու դավ եմ տեսել ես,
Տարել, ներել ու սիրել,
Վատը լավ եմ տեսել ես:
- 3) Բարակ ամպերը մաղում են ոսկի,
Ջրերը անուշ հեքիաթ են ասում...
- 4) Խարխուլ մակույկով հանձնվիր ծովին,
Քան թե հավատա կնոջ երդումին:

6. Տրվածներից քանի՞սն են ածականներ.

կարկաչյուն, ժամտ, ընտրանի, մայիսյան, վարդագույն, գեղանի, քարաշեն, հմագույն, արտաքուստ, ամրողովին:

- 1) Երեքը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) յոթը

7. Տրվածներից քանի՞սն են ածականներ.

վաղորդայն, մանուշակ, արծարե, պարզ, բռումցը, աշխատանք, քարի, լուսե, աշխատանքային, մարմարե, հմայք, մոտեցում:

- 1) չորսը
- 2) երեքը
- 3) հինգը
- 4) վեցը

8. Ածականներից քանի՞սը չունեն համեմատության աստիճաններ.

կարևոր, անաղարտ, արտասովոր, բորիկ, ճաղատ, ապաշնորի, կաղ, ամորի, պճնամոլ, համր:

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) յոթը

9. Ո՞ր շարքի բոլոր բառերն են բվականներ:

- 1) քառամյա, քառասնական, քառորդ
- 2) իննունիններորդ, իխնյակ, չորս իինգերորդական
- 3) երկուական, առաջին, ութսունչորս
- 4) վեցուկես, տասնավոր, տրիլիոն

10. Քառերից քանի՞սն են թվականներ.

Վարչուական, հարյուրքասանմեկամյա, հարյուրյակ, տասամոց, հազարավոր, քառապատիկ, մեկուկես, չորիցս, բյուր, մեկ առ մեկ, երկուստեր:

- 1) երկուաը
- 2) չորսը
- 3) վեցը
- 4) հինգը

11. Քառերից քանի՞սն են թվականներ.

Մեկ հինգերորդ, վեցհարկանի, վեցական, հինգ տասնորդական, հարյուրամյա, վեց-վեց, քսաներեքերորդ, միլիոնավոր, երեսունական, միլիարդ:

- 1) երեքը
- 2) հինգը
- 3) յոթը
- 4) ութը

12. Ո՞ր նախադասության մեջ թվականի գրության սխալ կա:

- 1) Գրիգոր Լուսավորիչը վարչունինգ օր քրիստոնեություն է քարոզում դարձի եկած Տրդատին:
- 2) «Մշու կամ Տոնական ճառնտիրի» մի կեսը կշռում է տասիննական, մյուսը՝ քսանութ կիրովամ:
- 3) Միջնադարի բանաստեղծ Ֆրիկը ապրել է տասներեքերորդ դարի երեսունական թվականներից մինչև տասնչորսերորդ դարի առաջին քառորդը:
- 4) Ավանդությունն Անիի եկեղեցիների թիվը հասցնում է հարյուր մեկի:

13. Ո՞ր շարքում թվականի գրության սխալ չկա:

- 1) 2-ական, 5-րդ, քսաներեքերրորդ
- 2) 30-րդ, տասերկու, հարյուր վեց
- 3) 1-ին, քսանինինգ, 60-երրորդ
- 4) հազար հարյուր մեկ, 19-րդ, ութ-ութ

14. Ո՞ր շարքի բոլոր քառերն են դերանուններ:

- 1) նույնքան, ինչքան, փոքր-ինչ, ոմն
- 2) մի քանի, ոչ ոք, ամենայն, մինչդեռ
- 3) համայն, իրենք, ինչ-ինչ, միմյանց
- 4) ինչ ոք է, որոշ, քանիերորդ, այստեղ

15. Ո՞ր շարքի բոլոր քառերն են դերանուններ:

- 1) այսինչ, մի քանի, մեկը, քառորդ
- 2) ինչու, ոչ ոք, որպեսզի, մյուս
- 3) որպիսի, սույն, ողջ, ոմն
- 4) ով, նույնպիսի, ոչինչ, քազմից

16. Դերանուններից քանի՞սը հոգմակի թիվը չունեն.

սա, որևէ, որտեղ, դու, ինչ, ով, յուրաքանչյուրը, ոչ ոք, ոմա, երբ, մա:

- 1) չորսը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) ութը

17. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են կազմությամբ պարզ:

- 1) ինքներս, սա, որևէ
- 2) որքան, ուր, ինչ
- 3) որոշ, այլ, բոլոր
- 4) ոք, ինչպես, այս

18. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են կազմությամբ պարզ:

- 1) այս, ոմն, մյուս, ուրևէ
- 2) բոլոր, իրար, ամենը, ուրիշ
- 3) յուրաքանչյուր, մի քանի, նույն, սրանք
- 4) որոշ, այլ, միմյանց, մեկմեկու

19. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են կազմությամբ բարդ:

- 1) նույնայիսի, այսքան, միևնույն, ամենքը
- 2) այդքան, որևէ, որչափ, քանիսը
- 3) երեսէ, այդքափ, որտեղ, ոչ մի
- 4) ոչինչ, ոչ ոք, ամեն ինչ, մյուս

20. Ո՞ր շարքում հոլովվող դերանուն կա:

- 1) ինչ-ինչ, քանի, այնպես
- 2) ինքդ, ինչպես, ինչու
- 3) մի, այս, ինչքան
- 4) ուր, ոչ ոք, ողջ

21. Ո՞ր շարքի բոլոր դերանուններն են հոլովվող:

- 1) դուք, սա, ողջը, ամենքը
- 2) ինքը, ինչ, ով, միմյանց
- 3) դրանք, այստեղ, այսպես, ոչ մեկը
- 4) ոմն, իրենք, յուրաքանչյուր ոք, մենք

22. Ո՞ր շարքում չհոլովվող դերանուն կա:

- 1) դա, երբ, ինքդ, մենք
- 2) ամենքը, բոլորը, ես, ինքը
- 3) յուրաքանչյուրը, սրանք, իրենք, իրար
- 4) նրանք, ինչ, ով, սա

23. Ո՞ր շարքում չհոլովվող դերանուն կա:

- 1) մենք, դա, ինչ
- 2) այստեղ, ինքը, նրանք
- 3) որոնք, ոչ մի, դուք
- 4) իրենք, միմյանց, ոչ ոք

24. Ո՞ր շարքի բոլոր դերանունները չեն հոլովվում:

- 1) ինքներս, ովքեր, ինչպես, որտեղ
- 2) ամեն ոք, ոչ մեկը, ինչ-ոք, ողջ
- 3) յուրաքանչյուր ոք, ոմն, ամեն մի, ուր
- 4) իրար, այսպես, ինքդ, երբէւէ

25. Ո՞ր նախադասության մեջ դերանվան սխալ գործածություն կա:

- 1) Իմ վրայի բժերը ցույց տալուց առաջ մաքրի՛ր ձեռքերդ:
- 2) Սույնով հայտնում ենք մեր շնորհակալությունը Ձերդ մեծությանը՝ մեր հրավերն ընդունելու համար:
- 3) Գործարանի ամբողջ բանվորների շրջանում տարածվում էր ըմբոստության ալիքը:
- 4) Ոչ մեկը չէր հասկանում՝ ինչն էր նրա զայրույթի պատճառը:

26. Ո՞ր նախադասության մեջ դերանվան սխալ գործածություն չկա:

- 1) Բանախոսի դեմ ելույթ էին ունեցել երկու տեղացի նկարիչներ, ոմն արվեստագետ Ֆրանսիայից և այլոր:
- 2) Հասկանո՞մ եք, ոչ մեկ շփորձեց օգնել ինձ, երբ մենակ էի ու ամօգ:
- 3) Զգիտեմ՝ ո՞ր կարող է գլուխ հանել այդ խճճված գործից:
- 4) Ոչնչից և ոչ որից այնքան չէր զգուշանում, որքան իրեն անձնական թիկնապահից:

27. Ո՞ր շարքի բոլոր բառերն են որոշյալ դերանուններ:

- 1) ամեն, ողջ, յուրաքանչյուր, որերորդ
- 2) որևիցե, ամբողջ, բոլոր, ամեն մի
- 3) ամենքը, ամեն ոք, համայն, ամենայն
- 4) մի քանիսը, ամեն մեկը, յուրաքանչյուր ոք, ամեն ինչ

28. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ցուցական դերանուններ:

- 1) մյուս, սույն, նույնչափ, այնտեղ
- 2) նույն, այսպիսի, այդչափ, որպիսի
- 3) միևնույն, որչափ, այսքան, սրանք
- 4) դա, այս, այնտեղ, ինչպիսի

29. Ո՞ր նախադասության մեջ ցուցական դերանուն կա:

- 1) Աստված գիտե, թե ինչ արավ,
իրար տվեց, իր մեջ առավ
Խութն ու խոռոչը:
- 2) Ամպրոպ է խմում քամին,
Հեզնում է, ում պատահի,
Ծառերը բռնում են դրան:
- 3) Քեզ բախտն ուր էլ տարավ,
Մտքով քո տանն էիր:
- 4) Քամին մի ամբողջ աշուն է տարել,
Ամբողջ աշխարհ է շուր տվել քամին:

30. Ո՞ր շարքում են միայն ցուցական դերանուններ:

- 1) այստեղ, ահա, նույն, սա
- 2) սրանք, իրենք, այսքան, այդպես
- 3) այդ, նույնպիսի, նա, մյուս
- 4) այնչափ, ահավասիկ, միևնույն, այս

31. Ո՞ր շաբաթում անձնական դերանուն կա:

- 1) ոճանք, դրանք, ովքեր, ամեն ոք
- 2) ով, ամեն մի, ոչ ոք, յուրաքանչյուր ոք
- 3) մեկը, ոմն, ո՞ւմ, ամենքը
- 4) սա, ամեն մեկը, իրենք, ո՞րը

32. Ո՞ր տարրերակում հարաբերական դերանուն չկա:

- 1) Այս իմ հրաշք աշխարհն է, ուր
Գլխիվայր են ծառերն աճում:
- 2) Ել չեմ հավատում այդ ջինջ աշքերին
Եվ խորունկ ձայնիդ նվազին քնքուշ,
Որ հնչում էր միշտ այնքան նտերիմ:
- 3) Զգիտեմ՝ այս տիսուր աշխարհում
Որն է լավ, ո՞րը՝ վաս:
- 4) Կար մի դյուրական ուրիշ ժամանակ,
Երբ նրա կանչի հրաշքին հլու
Ես քողնում էի օրերս մենակ:

ԲԱԺԻՆ 3**ԲԱՅ**

1. Ո՞ր շարքի բառերից ոչ մեկը չի կարող գործածվել որպես բայ:

- 1) երդում, շարժում, մոտեցում
- 2) զարգացում, ընկալում, անկում
- 3) անցում, հերոսացում, ծալում
- 4) խոստում, հիացում, զգացում

2. Ո՞ր շարքում են խոնարհման բայ կա:

- 1) հագեցել, ծուլանում, մոտեցավ, մեծացել
- 2) ելավ, կիսորանա, բարձրանում, խունացած
- 3) մոնշացող, հերոսացել, փութացող, զվարճանում
- 4) զայրացել, շողալու, լիացած, հպարտանում

3. Ո՞ր շարքի բոլոր բայերն են և խոնարհման:

- 1) եկել է, տեսած, վազում եմ, նստած
- 2) կերավ, փախչում է, տարանք, սևացել
- 3) կանգնում են, ծիծառող, հագավ, առնում
- 4) մտանք, հսսած, սուրում են, տառապած

4. Ո՞ր շարքի բոլոր բայերն են և խոնարհման:

- 1) հոգնած, սիրող, կարդում է, ծովի
- 2) կանչում, հեռացիք, չեն թռչում, զարգացող
- 3) ներկած, չի մեռնի, սկսիք, թեյելու էր
- 4) զովում էր, կզբունեն, հիացել ենք, ուղղված

5. Ո՞ր շարքի բոլոր բայերն են առ խոնարհման:

- 1) մուսչում են, տենչում էինք, հոգացել են
- 2) որսացեք, մուրում են, մխիթարեցին
- 3) ողբացին, կաղում էր, առավ
- 4) դարձել է, կորան, մոռացեք

6. Ո՞ր շարքի բոլոր բայերն են առ խոնարհման:

- 1) մոտեցրեց, հագած, դարձավ, բազմանում են
- 2) կիեռանամ, գնալու է, հագեցավ, ծխացող
- 3) բարձրացնեի, կարդում է, չի հակասում, մոռացիք
- 4) արթեցնող, փախսած, զգացող, կիմտանա

7. Ո՞ր նախադասության մեջ առ խոնարհման բայ կա:

- 1) Ուժենու տակ տխուր նստել էր Լիլիթը՝ ճակատը բազուկներին հենած:
- 2) Ամեն օր նայում է աշխարհին և ամեն օր զարմանում, կարծես առաջին անգամն է տեսնում աշխարհը:
- 3) Տեսավ Սարա աշխարհի հնագեղ հրաշքները և կապույտ ծովերի ծփուն բյուրեղը:
- 4) Սարդս խանձարուրից մինչև գերեզման անպարտելի հույսերով ձգտում է երջանկության՝ առանց լըմբոնելու՝ ինչ է այն:

8. Ո՞ր շարքի բոլոր բայերն են պարզ (առանց բայական ածանցի):

- 1) ամրապնդում է, ավերեցին, կորավ, գալիս եմ
- 2) վայելե՛ք, տասնապատկել են, ա՛ռ, թվացող
- 3) հեռանամ, եկել է, կխոսի, ապացուցել
- 4) ըմբոշխնեցին, թիավարում ենք, կժամանեն, իմաստավորում են

9. Ո՞ր շարքի բոլոր բայերն են պարզ (առանց բայական ածանցի):

- 1) կանգնել, փոշոտել, օգնել, բռնել
- 2) վատնել, փշրտել, երկրպագել, խաղալ
- 3) նմանվել, շնորհել, հավատալ, գղջալ
- 4) բարգմանել, վիճարկել, ուշանալ, մնալ

10. Ո՞ր շարքի բոլոր բայերն են պարզ (առանց բայական ածանցի):

- 1) վերակառուցել, արտահայտել, սառչել, մեծանալ
- 2) կանչել, ննջել, շնչել, սրբագրել
- 3) ջարդել, հուզվել, հոգալ, զալ
- 4) ցատկուտել, լուսավորել, ավարտել, ծամել

11. Ո՞ր շարքի բոլոր բայերն են սոսկածանցավոր:

- 1) հասնել, սառչել, ուրանալ, հոգնել
- 2) համընկնել, փախչել, պրծնել, մոտենալ
- 3) հանգչել, կառչել, կպչել, սառչել
- 4) մտնել, ընկնել, խրտնել, բուսնել

12. Ո՞ր շարքի բոլոր բայերն են սոսկածանցավոր:

- 1) կմտնենք, հագել է, ունեցած, կանգնել
- 2) օտարացած, հանգավ, կառչելու, դիպել է
- 3) առել է, ընկերացող, պրծնել, իջավ
- 4) երկնել, սառչել, հզրացած, պարծեցել

13. Ո՞ր շարքում սոսկածանցավոր բայ չկա:

- 1) հանձնել, հեծնել, հանդինել, սփրբնել
- 2) հանգչել, հնչել, ճանաչել, ներշնչել
- 3) խայտալ, մեռնել, շորորալ, վրնջալ
- 4) մթագնել, պճնել, խրտնել, կանգնել

14. Ո՞ր շարքում սոսկածանցավոր բայ չկա:

- 1) մարտնչել, կառչել, մքնել, բռնել
- 2) զարթնել, պոկոտել, հանգչել, փախցնել
- 3) կարկաչել, մոլեգնել, այրվել, մտնել
- 4) ցատկուտել, մերձենալ, խայտալ, դեղնել

15. Ո՞ր շարքի բոլոր բայերն ունեն բազմապատկական ածանց:

- 1) պատառոտել, ճանկրտել, համառոտել
- 2) ծեծկոտել, կապոտել, փշրտել
- 3) մկրտել, ցատկուտել, նստոտել
- 4) ժանգոտել, կոխսկոտել, կտրտել

16. Ո՞ր շաբթում բազմապատկական բայ չկա:

- 1) օժտել, ճիվլտել, բտել, կարոտել
- 2) մկրատել, անջատել, շաղակրատել, կտրատել
- 3) մաղձոտել, ցատկոտել, աղտոտել, կմճռոտել
- 4) պրատել, խախտել, ցեխոտել, խոչընդոտել

17. Քայերից քանի՞ն են կազմությամբ պարզ (առանց քայական ածանցի).

մոլեգմել, խոցոտել, խմանալ, հեռանալ, խելազարվել, գովարանել, մեկնել, փառարանել, մոնչալ, հորատել:

- 1) երեքը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) ութը

18. Ո՞ր նախադասության մեջ բայի կազմության սխալ ձև կա:

- 1) Հայոց թագավորները որևէ գործ ձեռնարկելիս Անահիտ աստվածուհուց էին հովանավորություն հայցում:
- 2) Խոռվություններին միջամտում է Աստղիկը՝ խնդրելով դադարացնել կրիվները:
- 3) Միհրի անունից է ծագում հայոց հերանոսական հին սրբավայրերի ընդհանուր կոչումը՝ մեհյան:
- 4) Հնում Սպանդարամետին նույնացրել են հունական Դիոնիսիոսի կամ Բաքոսի հետ:

19. Քայերից քանի՞ն են կազմված գոյականներից.

երջանկանալ, քարանալ, մերձենալ, տիրանալ, արլորանալ, չորանալ, ընկերանալ, ծիծաղել, լրջանալ, հզորանալ:

- 1) երեքը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) ութը

20. Ո՞ր պնդումն է սխալ:

- 1) **Չ** սոսկածանց ունեցող բայերը **ե** խոնարհման են:
- 2) **ԱՌ** և **ԵՌ** սոսկածանց ունեցող բայերը **ա** խոնարհման են:
- 3) Պատճառական ածանց ունեցող բայերը կարող են լինել **և** **ե**, **և** **ա** խոնարհման:
- 4) Կրավորական բայերը **ե** խոնարհման են:

21. Ո՞ր շաբթի բոլոր բայերն են չեզոք սերի:

- 1) ամպել, ավանդել, արտագաղթել, թպտալ
- 2) օգնել, բարախել, դժգունել, զառանցել
- 3) ծնել, դրվել, զանազանել, ընդհարվել
- 4) բվալ, փաղաքշել, դառնալ, ուռչել

22. Ո՞ր շաբթում չեզոք սերի բայ չկա:

- 1) նզովել, նվազել, մոնչալ, հիվանդանալ
- 2) մոռանալ, պահպանել, զապել, ընդգծել
- 3) զգել, թիկնել, շարադրել, ողջակիցել
- 4) որոնել, նազել, կանխազգալ, տնտեսել

23. Ո՞ր շաբթում չեղոք սեռի բայ չկա:

- 1) բերել, բափել, անսալ, փակել
- 2) տեսնել, սպասել, սիրել, հարգել
- 3) զբել, վերցնել, նշել, տանել
- 4) հիշել, դափաճանել, նկարել, մաքրել

24. Ո՞ր բառակապակցության մեջ չեղոք սեռի բայ կա:

- 1) քայլել բոբիկ ոտքերով
- 2) մանկությունը հիշել
- 3) խլացնել շառաչը
- 4) գրկել որդուն

25. Ո՞ր շաբթի բոլոր բայերն են չեղոք սեռի:

- 1) մոլեգնել, ճերմակել, խորովել, սրբարթալ
- 2) արձանագրել, շվշվացնել, հրաժարվել, թերևանալ
- 3) հօդս ցնդել, մտաբերել, արձանանալ, գրկախառնվել
- 4) ընդիարվել, գնալ, ապավինել, առկայծել

26. Ո՞ր շաբթի ոչ բոլոր բայերն են չեղոք սեռի:

- 1) պառկել, բնակվել, հարբել, սլանալ
- 2) հարձակվել, խշխշալ, տխրել, ննջել
- 3) կառչել, նստել, հոգնել, քայլել
- 4) փնտինթալ, ընկողմանել, սիրահարվել, վազեցնել

27. Ո՞ր շաբթի բոլոր բայերն են ներգործական սեռի:

- 1) ազատել, ըմբոշինել, թողարկել, թափառել
- 2) ընդգրկել, խնամել, գալարել, հանգչել
- 3) զունավորել, զոհաբերել, բաղդատել, կոտրել
- 4) ձևակերպել, ճանապարհել, ճախրել, դեկավարել

28. Ո՞ր շաբթի բոլոր բայերն են ներգործական սեռի:

- 1) գծել, զարմանալ, ջարդել, սրբել
- 2) ծիծաղել, փռվել, օրորել, քայլել
- 3) կառուցել, ներկել, թերթել, ցանել
- 4) տարբերել, սուրալ, հաշվել, խշալ

29. Ո՞ր շաբթում ներգործական սեռի բայ չկա:

- 1) ծխալ, կագորուրվել, փակել, կպչել
- 2) բազադրել, թռշնել, գժվել, դալկանալ
- 3) ընդարձանալ, արձագանքել, արշավել, աջակցել
- 4) զինել, երկմտել, մերձենալ, խորշել

30. Ընդգծվածներից ո՞րը ներգործական սեռի բայ չէ:

- 1) Խաչքարերը **կանգնեցնում էին** սրբավայրերում, գերեզմանատներում, մեծ ու փոքր ճանապարհների եզրերին:
- 2) Ուսւ իմաստանք Կողման Պրուտկովն ասել է. «Պտուղը **վայելելիս** հիշի՛ր ծառի արմատները»:
- 3) 393 թվականին Սեսրոպ Մաշտոցի ձեռքով **աշխարհ է եկել** հայերեն ձեռագիր առաջին մատյանը:
- 4) Օտարերկրացիները միայն մեր Մատենադարանում կարող են տեսնել իրենց հեղինակների կորած բնագրերի հնագույն թարգմանությունները:

31. Ո՞ր նախադասության մեջ ներգործական սեռի բայ չկա:

- 1) Բայց հոգիս չունի ոչ մի հանգրվան,
Նորից քովում է ինձ ոսկե հեռուն:
- 2) Եվ տեսնում էի՝ զմրուխտ շորերով
Սի նավ էր սահում օրոր ու շորոր:
- 3) Հայրենի գետի զմրուխտ ափերին
Մեր հին տնակն է կրել մենավոր:
- 4) Իմ սիրտն այնտեղ է, ուր նախնիքը մեր
Կերտել են շքեղ կոթողներ հավերժ:

32. Նախադասություններից քանիսո՞ւմ ներգործական սեռի բայ կա:

1. Ուսումնատենչ երիտասարդները օտար համալսարաններում էին մեղմացնում իրենց ուսման ծարավը:
2. Այս քանի առաջին մեզ է հասել հազարամյա պատմության խորքերից:
3. Նախորդ դարերում այս ու այնտեղ առկայժած որմնանկարչությունը փքքեց Տաթևում և Անիի տաճալիներում:
4. Կան նաև ուրիշ հանգամանքներ, որոնք հիմնավորապես մերժում են Գլածորը Թանահատում տեղադրելու վարկածը:

 - 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

33. Ո՞ր շարքի բոլոր բայերն են կրավորական սեռի:

- 1) Քևավորվել, փլվել, կովել, շարվել
- 2) անտեսվել, կառուցվել, կողոպտվել, ջարդվել
- 3) մեջքերվել, բնակվել, ծրագրվել, խոցվել
- 4) գործարկվել, դատապարտվել, սիրահարվել, քանդվել

34. Ո՞ր շարքի բոլոր բայերն են կրավորական սեռի:

- 1) շղթայվել, համեմվել, գգվել, հոշոտվել
- 2) շրջվել, ցավել, խոռվել, նշվել
- 3) գժվել, բողավել, զգվել, հրճվել
- 4) օրորվել, առաքվել, տաքացվել, սիրվել

35. Ո՞ր շարքի բոլոր բայերն են կազմությամբ կրավորական:

- 1) հյուսվել, թոքովել, վճռվել, հաշվառվել
- 2) խոռվել, կոչվել, փոշոտվել, թափվել
- 3) գրգռվել, հաշվվել, սկսվել, տարվել
- 4) ժողովել, փնտովել, բարելավվել, համբուրվել

36. Ո՞ր շարքում կազմությամբ կրավորական բայ չկա:

- 1) կշռվել, դիմագրավել, վրդովել, ջնջվել
- 2) գորովվել, բռնագրավել, արշավել, բովել
- 3) ապահովել, քավել, պարապել, խրվել
- 4) ծարավել, չվել, ջատագովել, առնչվել

37. Ո՞ր շաբթում կրավորական սեռի բայ չկա:

- 1) արշավել, գրավել, գբաղվել, գրկախառնվել
- 2) համբուրզվել, տանջվել, խորովել, ծնվել
- 3) խոռվել, տեսնվել, հավաքվել, լցվել
- 4) հայտնվել, խուսանավել, զգացվել, հարձակվել

38. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված կրավորական սեռի բայ:

- 1) Մնացողները կծիկ են դառնում
Թրջվելու վախից
Եվ կամաց-կամաց բներն **են բաշվում**:
- 2) **Գժված** գլուխս ափիս մեջ առել,
Նստել արածիս վարձին եմ նայում:
- 3) Ստվերները **խեղովում են** շողից,
Քարդիները մրսում են:
- 4) Երկնքում բամբյուն ու բոց,
Երկնքում կայծ ու կոհիվ,
Քախվում են խորթ ու խոռվ
Ամպերը խորիվ-խորիվ:

39. Ներգործական կառուցվածքի ո՞ր նախադասությունը չի կարող փոխակերպվել կրավորական կառուցվածքի:

- 1) Քաղաքի դարպասների մոտ մարդիկ դառնապես ծաղրեցին նրան:
- 2) Այսօր նրա բարեկամ եղանիկներն ու այժյամներն անգամ նկատեցին իրենց բարեկամի զայրացկութ հայացքը:
- 3) Երեխաները լուռ լսում էին ջրերի ձայնը:
- 4) Նա զիտեր բազում հերիաքներ:

40. Նախադասություններից քանիսո՞ւմ չեղոք սեռի բայ կա:

1. Հողն արևի տակ բոց էր բռնել ու ավելի էր շիկանում:
2. Օդի մեջ ծովային թռչունների հատու կանչերն են սավառնում:
3. Փողոցով շարժվում է վաճականների թափորը:
4. Սանրանկարիչները նկարազարդում էին սուրբ գորեր, ժամանակագրություններ, ասպետական վեպեր:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

41. Պնդումներից ո՞րն է սխալ:

- 1) Ներգործական սեռի բայերը պահանջում են ուղիղ խնդիր լրացում:
- 2) Կրավորական սեռի բայերը կազմվում են ներգործականներից **զածանցով**:
- 3) Չեղոք սեռի բայերը պահանջում են ներգործող անուղղակի խնդիր:
- 4) Բայի սեռը արտահայտում է գործողության և առարկաների տարրեր հարաբերություններ:

42. Ո՞ր շաբթի բոլոր դերբայներն են անորոշ:

- 1) հպարտանալ, խաղացել, դողացնել, խոցոտել
- 2) հասել, հանգել, կորցնել, չորանալ
- 3) ծիծաղել, ուրախացրել, ուռչել, պոկոտել
- 4) պարծենալ, մոտեցնել, իմացվել, լինել

43. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անորոշ դերբայներ:

- 1) բռել, ավել, կորել, ընկել
- 2) խոխոջել, մավել, աղալ, ծամթել
- 3) զբալ, արագանալ, իմանալ, ծանոթանալ
- 4) գդալ, պսպղալ, սովորել, հեկեկալ

44. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անորոշ դերբայներ:

- 1) բղավել, խրախուսել, փախել, գրել
- 2) տնկել, ընկել, գտնել, լուսաբանել
- 3) բափրփել, ծիծաղել, հմտանալ, կարմրել
- 4) իջնել, դարձել, ցնծալ, երկմտել

45. Ո՞ր շարքում միայն անորոշ դերբայներ չեն:

- 1) մազլցել, կարեկցել, հայցել, գերազանցել
- 2) անցել, բռնակցել, շրջանցել, նվազակցել
- 3) զեկուցել, խցել, զառանցել, գրանցել
- 4) բափանցել, ընթերցել, գոցել, կցել

46. Ո՞ր շարքում սխալ բայաձև չկա:

- 1) աշխատեցնել, հաջողացնել, կորել է, տուժող
- 2) հանգչող, նզեցված, սովորեցնել, ուռչում է
- 3) բարմացնող, փախնել, հիշեցրին, սառչում է
- 4) խոսած, ծիծաղող, կպած, բուրել

47. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անորոշ դերբայներ:

- 1) սխալ, նվալ, աղալ, խաղալ
- 2) ծխալ, զուլալ, նազել, հալել
- 3) մեծանալ, լիանալ, ափսոսալ, զլանալ
- 4) զբալ, գդալ, թվալ, վխտալ

48. Ո՞ր շարքի բոլոր բառերն են անորոշ դերբայներ:

- 1) սկսել, գրվել, հեռանալ, թռել
- 2) փախել, նայել, խաղալ, զարգանալ
- 3) հագել, սիրել, հմայվել, աղալ
- 4) սրբնել, ջարդվել, կոխսկոտել, տեսնել

49. Ո՞ր նախադասության մեջ անորոշ դերբայ կա:

- 1) Վաղուց է փախել աշխարհն իր հունից,
Մեկ էլ ե՞րբ է նա իրեն գտնելու:
- 2) Թափվել ու բոշնել ենք, և սակայն
Ինքներս մեր միջից ծլել ենք:
- 3) Բուժել է պետք ժամանակին,
Հոգալ է պետք
Ժամանակի կարիքները:
- 4) Երբ որ նշան են բռնել թիկունքիդ,
Քո զգաստությունն էլ իմաստ չունի:

50. Ո՞ր շաբթում անորոշ դերքայ չկա:

- 1) հսկատացել, խաղացել, գործակցել, ջանացել
- 2) ցնցել, զնացել, անսացել, եռացել
- 3) որսացել, գոռացել, գրացել, ժպտացել
- 4) բարձացել, հղիացել, տողանցել, մեղմացել

51. Ո՞ր նախադասության մեջ անորոշ դերքայ չկա:

- 1) Ինձ ելնելու սարեր կան դեռ...
- 2) Գյուղ էին իջել հովիվ պատահիք՝
Աղջիկ տեսնելու, պարի ու կոխի:
- 3) Ես չգիտեմ՝ վաղվա խաչերի մեջ
Մեր խաչն ով է արդյոք շալակելու...
- 4) Կյանք տիսուր հովիտ՝ հավիտյան լալու:

52. Ո՞ր շաբթում անորոշից ձևով տարբերվող վաղակատար դերքայ չկա:

- 1) նստել, մտել, ստել, ավարտել
- 2) ողողել, քողել, խճողել, սքողել
- 3) վայելել, ելել, այցելել, խլել
- 4) վարգել, երգել, հարգել, նորոգել

53. Ո՞ր շաբթում անորոշից ձևով տարբերվող վաղակատար դերքայ չկա:

- 1) աքսորել, կորել, տոշորել, գլորել
- 2) բախել, փախել, շաղախել, խիզախել
- 3) խրախուսել, բուսել, հյուսել, տարակուսել
- 4) սովորել, ձևավորել, մտորել, ոգևորել

54. Ո՞ր շաբթում վաղակատար դերքայ չկա:

- 1) պատճառել, առել, սպառել, թափառել
- 2) կպել, ընպել, պարպել, հպել
- 3) խցկել, ընկել, ցատկել, փրկել
- 4) մեռնել, ելնել, քողնել, լինել

55. Քառակապակցություններից որո՞ւմ հարակատար դերքայ չկա:

- 1) խարված մարդ
- 2) դիտել ապշած
- 3) խորոված պատրաստել
- 4) քնածին արթնացնել

56. Ո՞ր շաբթի ոչ բոլոր բառերն են հարակատար դերքայներ:

- 1) նստած, կարդացած, մոտեցրած, տեսած
- 2) ընկած, գրած, կերած, հեռացած
- 3) շնորհած, ամոթխած, կարոտած, մոռացած
- 4) տպագրված, հոչակված, տարածված, հաշված

57. Ո՞ր շաբթի ոչ բոլոր բառերն են հարակատար դերքայներ:

- 1) մեռած, ժամանած, հոչակված, անիծված
- 2) ներկած, վարկած, հանգած, հուզված
- 3) ոգևորված, կուտակված, սրբված, պոկված
- 4) ժամանած, իմացած, քերած, կազմված

58. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են հարակատար դերբայներ:

- 1) հպարտացած, բնակված, անցած, նկատված
- 2) համախմբված, հյուրասիրված, ոգևորված, որոշված
- 3) կատարված, հակահարված, հպարտացած, տպված
- 4) գտած, խաչված, տառապած, վաստակած

59. Ո՞ր նախադասության մեջ հարակատար դերբայ չկա:

- 1) Հիմա արդեն ոչ ոքի համար առեղծված կամ հայտնություն չէ Հայկի ու Խալդի նույնությունը:
- 2) Գլաձորի բարձր դպրոցն էին ընդունվում, այսօրվա լեզվով ասած, միջնակարգ կրթություն ստացած լավագույն երիտասարդները:
- 3) Մեր վիթխարի Սայաթ-Նովան մի վիթխարի սիրահար է՝ բռնված ու բռնկված սիրո հրդեհով:
- 4) «Պարզատումարը» տոմարացույց է և ունի երազահան ու աստղագուշակություններ, որոնք նման են «Աղթարքի» պարունակածին:

60. Նախադասություններից քանիսո՞ւմ է ընդգծվածը հարակատար դերբայ:

1. Բախսի կուանը կամքն է թեև, բայց **դիավածն** է տիրական...
2. Ծովափի կինը կարծ **խուզած** մազեր ուներ:
3. Այդ կինն այդպես էլ **առեղծված** մնաց նրա համար:
4. Հեղինակը բավական ընդարձակ **հավելված** էր կցել իր աշխատությանը:

 - 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

61. Նախադասություններից քանիսո՞ւմ է ընդգծվածը հարակատար դերբայ:

1. **Սքամած** երկնքում երբեմն փայլատակում էր կայծակի շեղքը:
2. Բուրմունից **արրեցած** մի բգեց քնել էր առեջըների մեջ:
3. **Խորովածը** ճաշակելուց հետո շարունակեցին ճանապարհը:
4. **Խաշնարած** այդ ցեղը այդպես էլ մնում է քաղաքակրթության մայրուղու եզրին:

 - 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

62. Ո՞ր շարքի բոլոր բառերն են ենթակայական դերբայներ:

- 1) վազող, խաղող, հմայող, լսող
- 2) նկարող, տեսնող, հասնող, գնահատող
- 3) սիրող, ահուղող, կարկաչող, ստացող
- 4) հնչող, գրավող, խուսափող, խոսափող

63. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են համակատար դերբայներ:

- 1) երգելիս, խոսելիս, կարդալիս, խաղալիս
- 2) ընկնելիս, նայելիս, վազելիս, ուտելիս
- 3) աշխատելիս, մշակելիս, կատարելիս, մաքրելիս
- 4) ջրելիս, ասելիս, ասուլիս, հիշելիս

64. Ո՞ր շաբքի բոլոր բառերն են համակատար դերայներ:

- 1) ավետելիս, ավետիս, հնձելիս, ջրելիս
- 2) նվազելիս, բժշկելիս, նվիրելիս, կառուցելիս
- 3) աշխատելիս, կատարելիս, կզաքիս, էտելիս
- 4) ողջունելիս, չվելիս, օազիս, քանդելիս

65. Տրված ենթակայական դերայներից ո՞րն է նաև գոյական:

- 1) բափառող
- 2) վերցնող
- 3) հաղթող
- 4) ընտրող

66. Ո՞ր շաբքում են միայն անկախ դերայներ:

- 1) բրթուացող, վախեցած, հագել, փախչելիս
- 2) կարողացել, հարատացնելով, կպած, ստուգվող
- 3) զայրացնել, կռացող, երթեւկելիս, ծուլացած
- 4) արտասանի, բովուացող, գտած, քննեցնելիս

67. Դերայներից ո՞րը չի կարող հոլովվել:

- 1) համակատարը
- 2) ենթակայականը
- 3) անորոշը
- 4) հարակատարը

68. Ո՞ր շաբքում դերայական սխալ ձև կա:

- 1) փթթած, նստած, խոսացած, աճած
- 2) ծխող, ծխացող, մարմրող, սրբարթացող
- 3) ջնջելիս, ջոկելիս, զգալիս, հոգնելիս
- 4) հաջողեցնել, բարմացնել, նստեցնել, սովորեցնել

69. Ո՞ր նախադասության մեջ բայաձևի գործածության սխալ կա:

- 1) Զուրը ծառերի տակ կապելուց հետո Լառ-Մարզարը պառկում էր շվաքի տակ և աչքերը կիսախուփ անում:
- 2) Զուրը կապելուց նա ջրի հետ էլ գնում էր, մինչև զուրը այգուն հասներ:
- 3) Փողոցի լորենու սաղարթները շոշափելուց Լևոնը մեծ հաճույք էր զգում:
- 4) Մարզարը ծիրանի կորիզները տանելուց առաջ բավական մտածեց:

70. Նշվածներից ո՞րն է կախյալ դերայ (ձևաբայ):

- 1) մոտեցրել
- 2) վախեցած
- 3) զերմանալ
- 4) բռչելիս

71. Ո՞ր շաբքի բոլոր բառերն են անկատար դերայներ (ձևաբայ):

- 1) աշխատում, եփում, լվանում, վազում
- 2) խոստում, փայլեցնում, երդում, հմայում
- 3) ցասում, բռնվում, եռում, հաղորդում
- 4) լիացնում, ուսում, զարդարում, մրսում

72. Ո՞ր շաբքի բոլոր բառերն են վաղակատար դերբայներ (ձևաբայեր):

- 1) հեռացել, ունեցել, գտնել, փախել
- 2) բռել, մոտեցել, մեռել, հազել
- 3) սիրել, հասցնել, տեսել, փակցրել
- 4) վարժեցրել, սառչել, թողել, սևացել

73. Ո՞ր շաբքում անորոշ դերբայ չկա:

- 1) օրելու էր, հեռանալու է, պատրաստվում է նվաճելու, եկել է երգելու
- 2) կարդալու զիրք, ասելու էի, չի մոտենալու, հիշելու դեպք
- 3) գոջալու էին, խուսափելու է, չի մոռանալու, գրավելու ենք
- 4) եկել է վրեժ լուծելու, չի կարողանալու, երգելու ցանկություն, չեն հասնելու

74. Ո՞ր շաբքում անորոշ դերբայ չկա:

- 1) գնում են հաղթելու, շափելու ժամանակ, չի պլծելու
- 2) հաղթելու ցանկություն, չիր քազակայելու, ուտելու ընթացքում
- 3) եկել է պատմելու, անցնելու ճամփա, հետ չի դառնալու
- 4) չենք ենթարկվելու, նվաճելու եք, չի տեսնելու

75. Ո՞ր նախադասության մեջ Ժխտական դերբայ (ձևաբայ) կա:

- 1) Երբ անտեղի հարց չեն տալիս, սուս պատասխան չեն ստանում:
- 2) Չեր անցնում այդ փողոցով, որ պատահաբար չհանդիպի Աստղիկին:
- 3) Սենավո՞ր իմ սիրտ, մոլորվա՞ծ թշչուն,
- Կարոտիդ կանչը չի հասնի նրան:
- 4) Թե՛ մորդ անգամ մտքից հանես,
- Քո մայր լեզուն շմոռանաս:

76. Ո՞ր նախադասության մեջ Ժխտական դերբայ (ձևաբայ) կա:

- 1) Մի՛ դատիր, որ չդատվես:
- 2) ... Իսկ մեր օրում ընկերների ո՞չ որոնիր, ո՞չ կանչիր:
- 3) Իմ խոր վերքերը ո՞վ կնյութեր ինձ
Թե՛ չիննեին ընկեր, բարեկամ...
- 4) Քեզ երբեք սիրտս չի մոռանա,
Իմ մաքո՞ւր, առաջի՞ն իմ անուր:

77. Ո՞ր նախադասության մեջ Ժխտական դերբայ (ձևաբայ) կա:

- 1) Մի՛ հավատա ստվերներին, հենվի՞ր միայն քեզ վրա....
- 2) Ես չեմ կամենա ողջունել մարդկանց,
Նրանց սեղանից պատառ չեմ կտրի:
- 3) Ոգիս ազատ է, ես չեմ հանդուրժում
Ինձ վրա իշխող ոչ մի զորություն:
- 4) Իմ գերեզմանին դրոք շմոտենար...

78. Ժխտական դերբայը ո՞ր եղանակի կազմությանն է մասնակցում:

- 1) լրջական
- 2) սահմանական
- 3) հրամայական
- 4) ենթադրական

79. Ո՞րը պարզ դիմավոր ձև չէ:

- 1) չէր պատմում
- 2) պիտի աչքը մտներ
- 3) մի՛կերեք-խմեր
- 4) գլուխ տվեց

80. Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված սահմանական եղանակով:

- 1) հոգնում էր, չէր տեսնի, զնալու եմ, թռավ
- 2) զնացիր, սովորիր, գտել է, չի խոսում
- 3) զիտեմ, չեմ զնալու, խստեցրիք, մտանք
- 4) տեսնեմ, հասնում էր, փախչում էին, եկան

81. Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված սահմանական եղանակով:

- 1) զրեց, հեռանա, անցա, մտածեցի
- 2) ասելու էր, տեսավ, մտել է, առ
- 3) հասնում է, ուշացավ, զիտեր, սիրեց
- 4) պիտի նկատի, մոտեցրել էր, հազցրի, տեսնում է

82. Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված սահմանական եղանակով:

- 1) տպել է, հևում էր, չեմ զդառ, գտավ
- 2) երգեմ, բաժանեցիր, մատուցելու է, չաշչարեցին
- 3) բուժվելու էր, սխալվել է, հնչում էին, թռավ
- 4) նստում է, արշավեց, չէր ուզի, չի հանդելու

83. Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված սահմանական եղանակով:

- 1) արտասվեցինք, ճանաչեր, հարցրել է, ունեմ
- 2) զալիս էի, զվարճանում եք, չի խառնվի, ներկայացրին
- 3) սրժեմ, բարձեցի, վախեցրել են, լալիս էին
- 4) նորանար, տնկեցինք, սովորեցնում է, զիտեի

84. Ո՞ր շարքի բոլոր բայերն են դրված սահմանական եղանակով:

- 1) քրել է, հիշում էր, չգար, եկավ
- 2) լալիս է, եղավ, չեմ քերի, քերելու եմ
- 3) զիտեմ, ունեմ, չեմ գալու, զրել եմ
- 4) չուզեց, զրեմ, փախել էինք, հիշելու է

85. Նախադասություններից քանիսո՞ւմ սահմանական եղանակի բայաձև կա:

1. Սարի հետևում շողերը մեռան,
Անուշ դաշտերը պատեց կապույտ մեզ:
2. Աստղերն են ժպտում լուսեղենն նազով,
Խաղաղ դաշտերը մութն է համբուրում:
3. Եվ երք չի մնա ոչ մի հույս զադոնի,
Սիրտդ կճշա, արդյոք ո՞ւր ես, կա՞ս:
4. Ես չզիտեմ՝ ո՞ւր են տանում հեռավոր
Ուղիների ժապավեններն անհամար:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

86. Ո՞ր շաբթի բոլոր բայերն են դրված անցյալ կատարյալ ժամանակով:

- 1) սիրենք, չղրեցի, բռավ, տվեց
- 2) նայեց, զարգացրու, տեսավ, գտան
- 3) հազար, մեծացար, առանք, հասար
- 4) մոտեցրի, չեմ բռչի, գրեցիք, աղաց

87. Ո՞ր շաբթում անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության սխալ կա:

- 1) հանգավ, դրիք, հեռացվեցին
- 2) տվեցինք, զգուշացրեցի, մոռացար
- 3) խոսեցին, դիպան, վերցրի
- 4) բռանք, բերեցին, կանգնեցին

88. Ո՞ր շաբթում անցյալ կատարյալ ժամանակաձևի կազմության սխալ ձև կա:

- 1) ասացինք, լվացին, հանգչեց, ուրախացան
- 2) բռանք, ընկերացա, կորցրինք, կոտրատեցիր
- 3) մոտեցանք, եղաք, կերան, հարցրի
- 4) պոկոտեցի, կորանք, դիպավ, հազեցա

89. Ո՞ր շաբթի բոլոր բայերն են դրված հրամայական եղանակով (շեշտերը դրված չեն):

- 1) հեռացիր, մի մոռացիր, զարգանա, տես
- 2) մոտեցրու, տուր, խաղա, փոխիր
- 3) կարդա, հասիր, բռցրու, վազի
- 4) կտեսնես, հիշեց, տար, տայիր

90. Ո՞ր շաբթի ոչ բոլոր բայերն են դրված հրամայական եղանակով (շեշտերը դրված չեն):

- 1) փշիր, մոտեցրու, կգտնես, մի խաղա
- 2) մի խառնեք, հանիր, ծաղկեք, բաշխիր
- 3) պահիր, տար, մտեք, մի լսեք
- 4) տոնիր, որոնեք, մի ձռնիր, հարցրու

91. Ո՞ր նախադասության մեջ հրամայական եղանակի բայաձև կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Մոռանալ մոռանալ ամեն ինչ
Ամենին մոռանալ
Չսիրել չխորհել չափսոսալ
Հեռանալ:
- 2) Թող շուրջս փռվի անանց լրություն
Թող ինձ չիշեն բռղ ինձ մոռանան:
- 3) Իմ գերեզմանին դուք չմոտենաք
Հարկավոր չէ ինձ ոչ ծաղիկ ոչ սուգ:
- 4) Այսօր եղիր քրոջ պես
Անշար մաքուր և գքոտ:

92. Ո՞ր նախադասության մեջ հրամայական եղանակի կազմության սխալ ձև կա:

- 1) Ինձ անլաց թաղեցե՛ք, ինձ անխոս թաղեցե՛ք.
Լռությո՛ւն, լռությո՛ւն, լռությո՛ւն անսահման:
- 2) Ասացե՛ք, արդյոք նա էլ թախծո՞ւն էր,
Արդյոք տրտո՞ւն էր նա էլ ինձ նման:
- 3) Կորի՛, գնա՛, էլ աչքիս չերևաս:
- 4) Ուրախ սրտով դուք ձեր սերը
Վայելեցե՛ք անթառամ:

93. Արգելական հրամայականի ձևերից քանի՞սն են սխալ.

մի՛ խոսիր, մի՛ հեռացեք, մի՛ մոտենա, մի՛ հավատա, մի՛ խառնվի, մի՛ կոտորեցեք, մի՛ տար, մի՛ կարծեք, մի՛ փախեք, մի՛ թռող:

- 1) մեկը
- 2) երկուաը
- 3) երեքը
- 4) չորսը

94. Ո՞ր շաբաթում լրջական եղանակի բայածն չկա:

- 1) չի հարցնի, չխսես, կրացվի, երգիր
- 2) կաս, լինում է, չեմ գնա, ասում ենք
- 3) լինեի, ունեմ, չզնային, տեսնենք
- 4) չես ասի, նստի, կորչում է, կգա

95. Ո՞ր շաբքի բոլոր բայերն են դրված լրջական եղանակով:

- 1) չբերեմ, չեմ բերի, չզրեիր, խսենմ
- 2) չուզեր, չուզեց, կարդայինք, մոտենային
- 3) բերեմ, ունեմ, հարցնեմ, ասեմ
- 4) չզայի, ընդունվի, հարգեր, լսվեին

96. Ո՞ր շաբքի բոլոր բայերն են դրված ենթադրական եղանակով:

- 1) կուտեմ, չեմ սուզվի, կաշխատենք, ջանա
- 2) կապրենք, կուտակենք, կտեսնի, կուշանա
- 3) կգաս, չի աղոթի, կամայանա, կընկերանային
- 4) կշտամբեց, կայրի, կուղարկի, չի ուղղի

97. Ո՞ր շաբքի ոչ բոլոր բայերն են դրված ենթադրական եղանակով:

- 1) կերգեմ, կխոսի, կաղաս, կայրեր
- 2) կարդուկեն, կոշտացնի, կուղղեմ, կարդարանա
- 3) կանվանեն, կարժևորվի, կխրխնջա, կուսանի
- 4) կառաքեմ, կառաջարկեմ, չեմ գժվի, կայցելես

98. Ընդգծվածը ո՞ր եղանակի բայածն է:

*Այսօր զքանք իրարու,
Խեղճ լինենք ու չամաշենք:*

- 1) հրամայական
- 2) լրջական
- 3) սահմանական
- 4) ենթադրական

99. Պնդումներից ո՞րն է սխալ:

- 1) Բայը նախադասության մեջ հանդես է զալիս երկու ձևով՝ դիմավոր և անդեմ:
- 2) Հայերենի անկախ դերբայներն են՝ անորոշ, ենթակայական, հարակատար և ժխտական:
- 3) Վաղակատար դերբայը կազմվում է **եղ** մասնիկով:
- 4) Ապակատար դերբայով կազմում են սահմանական եղանակի երկու բաղադրյալ ժամանակածեր:

100. Տրված նախադասության ստորոգյալը ի՞նչ ժամանակաձևով է արտահայտված:

Նա ուներ խորունկ, երկնագույն աչքեր,
Քննութ ու տրտում որպես իրիկուն:

- 1) լրջական անցյալ
- 2) անկատար անցյալ
- 3) անցյալ կատարյալ
- 4) ենթադրական անցյալ

101. Ո՞ր նախադասության մեջ անկանոն բայ չկա:

- 1) Անուշ դաշտերը պատեց կապույտ մեզ.
Տխուր երեկոն զարկել է վրան:
- 2) Ինձ թաղեք, երբ տխուր մքնշաղն է իջնում,
Երբ լրում են օրվա աղմուկները զվարք:
- 3) Եվ ես արքնացա խնդրության ցավից.
Գիշերվա հովն էր լալիս դաշտերում:
- 4) Իմ գերեզմանին դուք չմոտենաք,
Թողեք, որ հանգչի իմ սիրող հոգնած:

102. Շարքերից քանիսո՞ւմ անկանոն բայ կա:

1. քերվել, սառչել, թողնել, մոռանալ
 2. զարկել, հյուսել, ցանկալ, գերել
 3. հանգչել, կառչել, ուտել, իջնել
 4. գնալ, լինել, տանջել, մարել
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

103. Նախադասություններից քանիսո՞ւմ անկանոն բայ կա:

1. Սրիկա է նա, ով հայր է լինում, ով երանավետ ծոցից ոչնչի
Գոյուրյան կոչում թշվառ հյուլեին և զլխին վառում գեհենն այս կյանքի...
 2. Իմ մեջ այրվում է մի անհագ կարուտ, կարեկից մի սիրու՝ լացող հավիտյան...
 3. Արշավեք, հողմեք, իմ հոր տան վերա, քանդեք, ավերեք հիմերը նրա:
 4. Իմ բարի՛ ճամփա, տա՛ր ինձ, կորցրո՛,
Չքվեմ, տանջանքս մարդիկ չիմանան:
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

104. Նախադասություններից քանիսո՞ւմ մեկից ավելի անկանոն բայ կա:

1. Մինչև ես բարձր կանչեցի և ձիու սանձից բռնած՝ վագեցի սանդուղքի կողմը, պապս արդեն թափ էր տալիս փեշերը:
 2. Երբ փոքրիկ էր լինում և մրրիկ, նա տեսնում էր Լիլիթին իր մոտով շեշտակի անցնելիս:
 3. Եվ փոքրիկ թուղթը, որ շորի մեջ ամուր փաթաթելուց հետո տասու դրեց սնդուկի մեջ, մեզ համար դարձավ և ամենից քանիլը, և ահավորը:
 4. -Հուր-հավիտյան պարտական մնաս, քե պատասխան ստանալիս չգաս և իմ գերեզմանին իմաց շտաս, - ասել էր նա վերջին լուսաբացին:
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

105. Ո՞ր շաբթում պակասավոր քայլա:

- 1) լրել, առնել, իմանալ, ելնել
- 2) լվալ, հուզվել, ուտել, տեսնել
- 3) դնել, բռնել, անել, հազնել
- 4) բխել, կորչել, լալ, դառնալ

106. Ո՞ր նախադասության մեջ է գործածված անկանոն քայլ՝ խոնարհման կանոններից շեղվող ձևը:

- 1) Մթնաձոր տանող միակ արահետն առաջին ձյունի հետ փակվում է, մինչև գարուն ոչ մի մարդ ոտք չի դնում անտառներում:
- 2) Սիրով ընդունեցի քարեկամիս առաջարկը՝ ուսուցիչ լինել այդ գյուղում:
- 3) Որքա՞ն մեծ եղավ իմ ուրախությունը, երբ մյուս օրն իմացա, որ նրա փոքր քույրը սովորում է մեր դպրոցում:
- 4) Պատահմամբ նայեց պատշգամբի կողմը. տեսավ ինձ, հեռացավ կտուրից և խառնվեց աղջիկների խմբին:

107. Անկանոն քայերից քանիսի՞ տվյալ ձևերն են շեղված խոնարհման կանոններից.

ասա՛, առանք, բերում է, բողեցի, եղել է, կդառնա, կերան, ելնում էին, դրել եք, տեսա:

- 1) իննի
- 2) ուրի
- 3) վեցի
- 4) հինգի

108. Անկանոն քայերից քանիսի՞ տվյալ ձևերը ունեն կանոնավոր կազմություն.

տե՛ս, անելու եք, ասում են, առեք, դառնալու են, վեր կացան, չանես, տո՛ր, եկել է, կրողնեք:

- 1) բոլորի
- 2) ուրի
- 3) վեցի
- 4) չորսի

109. Զեարանական վերլուծության ո՞ր տարրերակում սխալ կա:

Լուսինը մի անհամբեր երեխա է եղել. մի օր, երբ մայրը խմոր է շաղախում, լալով զալիս է, մորից հաց ուզում, իսկ մայրը խմորու ծեղորով զայրացած ապտակում է լուսնին, անիծում, որ նա երբեք չկշտանա:

- 1) **եղել** - անորոշ դերբայ, չեզոք սեռ
- 2) **լալով** - անորոշ դերբայ, զործիական հոլով
- 3) **զայրացած** - ածանցավոր քայլ, հարակատար դերբայ
- 4) **անիծում** - անկատար դերբայ, եխոնարհում

110. Զեարանական վերլուծության ո՞ր տարրերակում սխալ կա:

Սեր առաջին գրական աղբյուրները հաղորդում են, որ Աշտիշատի մեհյանները կործանելով՝ նրանց տեղերում նոր հավատի սրբարաններ են կառուցել քրիստոնյա դարձած մեր նախնինները:

- 1) հաղորդում են - եխոնարհում, ներգործական սեռ
- 2) կործանելով - պարզ քայլ, ներգործական սեռ
- 3) կառուցել են - ներգործական սեռ, սահմանական եղանակ
- 4) դարձած - ախոնարհում, ներգործական սեռ

111. Զնարանական վերլուծության ո՞ր տարրերակում սխալ կա:

Սիրայելը շատ անգամ էր պարծեցել իր ընկերների մոտ, քեզ հոր մահից հետո այնքան է ծախսելու, որքան ոչ ոք դեռ չի ծախսել, ու այսօր ինձանում է, որ դեռ պետք է սպասել:

- 1) պարծեցել էր - վաղակատար անցյալ
- 2) ծախսելու է - ապակատար ներկա
- 3) ինձանում է - անկատար ներկա
- 4) պետք է սպասել - հարկադրական ապառնի

112. Զնարանական վերլուծության ո՞ր տարրերակում սխալ կա:

Մի օր մեղմաշում մի քամի, բարձունքներից մերքն սահելով, իջավ ոսկեալիք Նեղոսի ափերը և մի դեռատի արմավենու ոտքերի տակ փուլեց հլիին:

- 1) **սահելով** - անորոշ դերբայ
- 2) **իջավ** - ներգործական սեռ
- 3) **արմավենու** - **ու** հոլովում
- 4) **փուլեց** - սահմանական եղանակ

113. Զնարանական վերլուծության ո՞ր տարրերակում սխալ կա:

Ես տեսնում եմ, որ կյանքը մշտնջենական անհաշտ մաքառման մեջ է մահի դեմ, և իմ բոլոր իղծերը, աղբյուրների պես իրար հյուսվելով, ընթանում են մի հունով:

- 1) **ող** - ստորադասական շաղկապ, **մշտնջենական** - ածական
- 2) **մաքառման** - **ան** արտաքին հոլովում, **մեջ** - հետադիր կապ
- 3) **իմ** - անձնական դերանուն, **բոլոր** - անորոշ դերանուն
- 4) **իրար** - փոխադարձ դերանուն, **հյուսվելով** - անորոշ դերբայ

ԲԱԺԻՆ 4**ՍԱԿԲԱՅ, ԿԱՊ, ՇԱՂԿԱՊ, ՎԵՐԱԲԵՐԱԿԱՆ**

1. Ո՞ր շարքում են միայն մակրայներ:

- 1) գողեգող, ավանդաբար, այնպես, լիովին
- 2) վաղը, ցմահ, առհավետ, երթևիցե
- 3) ամենուրեք, դեսուդեն, ներքե, սարն ի վեր
- 4) բոլորովին, այնչափ, քանիցս, հաճախ

2. Ո՞ր շարքի բոլոր բառերն են մակրայներ:

- 1) ամբողջովին, դժբախտաբար, բերանքսիվայր, ի դեա
- 2) եռակի, կիսով չափ, ցավոք սրտի, զօրուգիշեր
- 3) առանձնապես, բազմիցս, արտաքուստ, մասսամբ
- 4) հանկարծ, անընդհատ, այնուհանդերձ, ստեպ-ստեպ

3. Ո՞ր շարքում մակրայ չկա:

- 1) անիրավ, իրավունք, իրավամբ, իրավական
- 2) ազգային, ազգովի, ազգական, ազգատյաց
- 3) սակարան, սակագին, սակավացուր, սակավ առ սակավ
- 4) պարտական, պարտապան, պարտառու, պարտավոր

4. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը մակրայ:

- 1) Կինը նստել էր օջախի **առաջ**, հաճախ բարձրացնում էր թեյամանի կափարիչը և նայում տաքացող ջրին:
- 2) Անզորայի **առաջ** գնա, ինչ որ լինի, քող լինի:
- 3) Զարթնում էր Պետին, տան **առաջ** հոսող առվակի ջրում երեսը լվանում:
- 4) Քանի - քանիսն անցան քեզ պես, քեզնից **առաջ**, քո **առաջ**:

5. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը մակրայ:

- 1) Ես **Էլ** երբ դեռ ջահել էի քեզ նման,
Երբ դեռ հոգիս թևեր ուներ երազի,
Փնտրում էի իմ երազի աղջկան....
- 2) **Էլ** քեզ չեմ սիրում, մի՛ նայիր այդպես....
- 3) Դուք **Էլ** իմ հետ ձեն տվեք,
Իմ դարդերի քայ սարեր:
- 4) **Էլ** գող փիսոն, **Էլ** քաշալ շուն,
Բանը հասավ դիվանքաշուն:

6. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը մակրայ:

- 1) **Ատելու շափ** սիրի՛ր մարդկանց, բայց լավուրյուն միշտ արա:
- 2) Գյուղից **քավականաշափ** հեռացել էինք, երբ մանր անձրև սկսվեց:
- 3) Ծառն **այնքան** էր բարձրացել, որ հասնում էր սենյակիս պատուհանին:
- 4) **Աղքա՛ն** ենք մենք խաղացել, իրար սիրել ու ծեծել....

7. Ծարքերից քանիսո՞ւմ են միայն մակրայներ:

1. քառապատիկ, հապճեպ, զօրուգիշեր, արտաքուստ
2. տարեցտարի, դեմ հանդիման, վերուստ, կողքանց
3. հնուց, ներկայումս, հավիտյան, գիշերը
4. ընդառաջ, նյութապես, իսպառ, հոտնկայս

 - 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

8. Նախադասություններից քանիսո՞ւմ է ընդգծվածը մակրայ:

1. Լինե՛ք հեռու մի անկյուն,
Լիներ մանկան արդար քուն:
2. Հեռու երկրի լուսե հովտում
Օրերն ուրիշ երգ են հյուսում:
3. Թե ինչպես հանկարծ նա գնաց հեռու,
Ել չի դառնալու, ել չի դառնալու:
4. Եվ թողնում էի օրերս մենակ
Եվ այս աշխարհից սլանում հեռու:

 - 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

9. Ո՞ր շարքի ոչ բոլոր բառերն են տեղի մակրայներ:

- 1) ամենուրեք, այլուր, շուրջը, դուրս
- 2) ներս, դրնեղուու, ներքուստ, տեղից տեղ
- 3) ընդառաջ, տեղ-տեղ, ցած, տնետուն
- 4) վերև, դեմ դիմաց, հեռու, դեսուդեն

10. Ո՞ր նախադասության մեջ տեղի մակրայ կա:

- 1) Են ձորի միջին ահա մի տնակ:
Ենտեղ էս գիշեր Սարոն է մենակ:
- 2) Փունջ-փունջ աղջիկներ սարերը ելան՝
Վիճակ հանելու աշխույժ երգերով:
- 3) Մեր առջև ձորն էր թշշում խավարչտին,
Մեր դեմը խաղում գիշերվան շունչը:
- 4) ...Ու ձորի զլխին մոլորված կանգնած՝
Նայում է ներքն՝ սիրտը սևակնած:

11. Ո՞ր նախադասության մեջ ձևի մակրայ կա:

- 1) Կժերն ուսած՝ բռվուալով՝
Զուրն են իջնում աղջիկներ....
- 2) Են ո՞ւմ յարն է նստած լալի
Հոնիգուր-հոնիգուր էն սարում....
- 3) Ու դարվիշն էնտեղ անհծում է ինձ,
Թե՛ դրա օրը լացով անց կենա....
- 4) Սիրտս էլ միշտ փա՛կ, սիրտս էլ միշտ մո՛լք,
Ի՞նչ կա, չգիտեմ, իմ առջև պահված....

12. Ո՞ր նախադասության մեջ ժամանակի մակրայ կա:

- 1) Նախիքը տուն քշելիս մի իրիկուն նա գյուղում անսովոր իրարանցում տեսավ:
- 2) Մյուս առավոտը տավարը տանելիս Պետին սիրտ չարեց կալերի կողմը նայելու:
- 3) Գյուղում այլևս նրան չէին նկատում:
- 4) Այդ ժամանակ նրան թվում էր, թե վաշտապետը դիտմածք է զենք տվել իրեն:

13. Տրված քառերից քանի՞սն են չափի մակրայ.

Չափազանց, քառակի, զույգ-զույզ, խստիկ, փոքր-ինչ, քազմից, համարյա, շեշտակի, հանկարծ, խորապես:

- 1) երեքը
- 2) հինգը
- 3) յոթը
- 4) ինը

14. Տարբերակներից որո՞նք կապ չկա:

- 1) հանձին տնօրենի
- 2) դեպքերի կապակցությամբ
- 3) իբրև հոգեբան
- 4) միասին գնալ

15. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված կապ:

- 1) Ո՞վ է տվել էստեղ քեզ սար,
Սարն ամենքիս է **հավասար**:
- 2) Էս աշխարհում,
Սարդկանց շարքում
Ո՞վ կլինի քեզ **հավասար**,
Ո՞վ քաջ Նազար:
- 3) **Հավասար** քայլով չափում էր ճամփան
Այն քարավանը ոլոր ու մոլոր:
- 4) Սարզիկների ուժերը **հավասար** էին. ծանր մարտ էր սպասվում:

16. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծված կապ:

- 1) Լիներ **հեռու** մի անկյուն....
- 2) Ո՞վ է ձեռքով անում, ո՞վ
Հեռվից անթիվ ձեռքերով:
- 3) Զեզ հետ եմ, բայց միշտ **հեռու** եմ, **հեռու**,
Ես ունեմ բովիչ մի առանձնարան:
- 4) Անմուրազ մեռած սիրահարների
Աստղերը թռած իրար են զալիս,
Գալիս, կարոտով մի հեղ համբուրվում
Աշխարհից **հեռո՞ւ**, լազուր կամարում:

17. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը կապ չէ:

- 1) **Սինչև** ե՞րբ պիտի շարունակվի այս ամենը:
- 2) **Սինչև** առուն ջուր գա, գորտի աշքը դուրս կգա:
- 3) **Սինչև** գյուղից հեռանալը որոշեց այցելել նաև տարեց ուսուցչին:
- 4) **Սինչև** վերջին բոպեն ծերունին հավատում էր, որ մի օր պատասխանը գալու է:

18. Ո՞ր նախադասության մեջ կապ կա:

- 1) Ով պատմություն ունի, չի կարող հետ չնայել:
- 2) Առաջ գիտեի, իիմա չգիտեմ:
- 3) Տարիներ հետո քեզ տեսա նորից:
- 4) Սինչև չտեսնես, չհավատաս:

19. Ո՞ր նախադասության մեջ կապ չկա:

- 1) Առանց ընկճելու երկրի թշնամուն՝ Նրա սուրբ երբեք չի մտել պատյան:
- 2) Ես գիտեմ՝ մի օր պիտի չքանաս Ինչպես մի երազ՝ չծնված բնավ:
- 3) Բայց վառվում է դեռ մեր ակութներում Հիմավորց ուխտի կրակը անշեց:
- 4) Բախսոր ինձնից քուավ, գնաց Վերջալույսի շողերի մեջ:

20. Նշվածներից քանի՞ն են կապ.

Դիմաց, ընդդեմ, հնուց, միջև, բացառությամբ, արդեմ, վերջապես, վերաբերյալ, հօգուս, դեռ:

- 1) երեքը
- 2) հինգը
- 3) վեցը
- 4) ութը

21. Ո՞ր շարքի բոլոր կապերն են նախադրություններ:

- 1) օրոք, հանդերձ, նայած, փոխարեն
- 2) մինչ, առ, դեպի, իբրև
- 3) ինչպես, առթիվ, պես, մասին
- 4) համար, ներքո, հանդեպ, հանձին

22. Տրված կապերից քանի՞նը կարող են դրվել կապվող բառից և առաջ, և հետո.

մասին, ի դեմս, միջև, հակառակ, առթիվ, ամկախ, որպես, բացի, համար, մինչև:

- 1) վեցը
- 2) հինգը
- 3) երեքը
- 4) ոչ մեկը

23. Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:

- 1) Հենց այդ գյուղն է մեր որոնածը:
- 2) Այնպես էին խառնել ամեն ինչ, սատանան իսկ գլուխ չեր հանի:
- 3) Հենց զարունը բացվի, կտեղափոխվենք:
- 4) Չնայած սառնամանիքին՝ մրցուները չեն դադարել:

24. Ո՞ր նախադասության մեջ շաղկապ կա:

- 1) Մեր երկրին հենց այդպիսի մտավորականներ են անհրաժեշտ:
- 2) Իսկ Արարատյան դաշտում բերքահավաք է:
- 3) Մահն իսկ չի կարող բաժանել մեզ:
- 4) Որքան մոտենում ես, լեռն այնքան հեռանում է:

25. Ո՞ր նախադասության մեջ շաղկապի սխալ գործածություն կա:

- 1) Թեև շատ էր ծերացել Սաադին, այնուամենայնիվ նրա հոգին երազի աչքերով տեսնում էր աշխարհի չքնաղ իրերը:
- 2) Եթե մահը չիներ, ապա չէին լինի հիվանդություն և ծերություն, քաղց ու կախաղան:
- 3) Եվ որովհետև ես եմ ստեղծել ժամանակն ու տարածությունը, սակայն ես հզոր եմ, անմահ:
- 4) Դրսում իրար պատահելիս ոչ միայն բարեւում էինք, այլև ջերմ գրկախառնվում:

26. Ո՞ր նախադասության մեջ շաղկապի սխալ գործածություն կա:

- 1) Թե ես Արա Գեղեցիկն եմ, դու Նվարդս չես:
- 2) Ուզում եմ, որպեսզի միշտ ծաղկի իմ երկիրը:
- 3) Դու պետք է նրանց օգնեիր, այլ ոչ թե սպասեիր, որ նրանք դա խնդրեին:
- 4) Ես որ քեզ չիիշեմ, դու ինձ չես հիշի:

27. Ո՞ր շարքում են միայն ստորադասական շաղկապներ.

- 1) նույնապես, նայած թե, քան թե, որպեսզի
- 2) չնայած, որովհետև, մինչև, քանի որ
- 3) եթե, կամ թե, հենց, նախքան
- 4) սակայն, թեպետ, քանի որ, այնինչ

28. Ո՞ր նախադասության մեջ է ընդգծվածը ստորադասական շաղկապ (նախադասությունները կետադրված չեն):

- 1) **Թե** Կարինե Չորանձյանին տեսնեք Կարսի փողոցներում
Ասեք նրան Չարենցն ասավ մնաս բարով մնաս բարով:
- 2) Սոնան մամկության առկալի ջրերն էր կարոտել **թե** պատահմամբ մոտեցավ հնձանի դռնակին
Դիլան դային չիմացավ:
- 3) Լինել **թե** չինել այս է խնդիրը:
- 4) Այս քամին է քափում աշնան չոր սաղարթը
Թե օդի է քափվում իմ թմրած ուղեղին:

29. Ո՞ր տարբերակում ստորադաս նախադասությունը գլխավորին միացած չէ ստորադասական շաղկապով:

- 1) Ով եկել էր գյուղից հեռու,
Նա քողել էր հողը խոնավ...
- 2) Իմաստում խոսքեր սովորեցի ես,
Որ իրապուրեմ զորությամբ մթին:
- 3) Ապրելուց քաղցը է մեռնել քեզ համար,
Զգալ, որ դու կաս և լինել հեռու:
- 4) Եթե սեր չկա, ինչի՞ համար
Պիտի չարչարվեմ չար աշխարհում:

30. Շարքերից քանի՞սում համադասական շաղկապ կա:

1. քանի որ, հենց, կամ, որպեսզի
2. մինչդեռ, եթե, որովհետև, սակայն
3. քայց, նախքան, չնայած, քան
4. թեպետ, իսկ, թե, մինչև

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

31. Ո՞ր նախադասության մեջ է լնդգծվածը վերաբերական:

- 1) **Ո՛չ** տրտունջ, **ո՛չ** մրմունջ սգավոր
Հեռացիք մոռացիք ինձ հավետ:
- 2) **Ո՛չ**, չես կարող, ինձ չես կարող մոռանալ:
- 3) **Ո՛չ** իր մեղրով հայտնվել եր ծանր կացության մեջ:
- 4) **Ո՛չ** մի ծաղկով գարուն կգա, **ո՛չ** մի գույնով՝ ծիածան:

32. Ո՞ր նախադասության մեջ վերաբերական չկա:

- 1) Թող ոչ մի զոհ չպահանջվի ինձնից բացի:
- 2) Սի՞թե ես պիտի երգեմ քեզ օրոր:
- 3) Կարիճ սիրոս գերի մնաց սև աչքերին, ել ի՞նչ երգեմ:
- 4) Ա՞խ, ո՞ր թե գեթ մի աստղիկ ինձ ժպտար:

33. Ո՞ր նախադասության մեջ վերաբերական չկա:

- 1) Այցիք, գոնե երազ բեր, գեթ երազով մուրազի
Ինձ այս զիշեր մենակ մի՛ թող թեկուզ այցով երազի:
- 2) Արի, եղբայր, փառաբանենք մեր քաղցրաբառ հայոց լեզուն:
- 3) Գուցե ես լամ բախտիդ համար, իմ անգի՞ն:
- 4) Ո՞նց է ժպտում իմ հոգին
Զարին, բարուն, ամենքին:

34. Ո՞ր նախադասության մեջ վերաբերականը պիտի տրոհվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Ախր ես ինչպես վեր կենամ գնամ:
- 2) Բարձրացնում եմ բազուկու ահա
Որպես ոխակալ օձն անապատի:
- 3) Հայրենիքը հիրավի մարդու մեծագույն սրբություններից է:
- 4) Սիգուցե միասին կարողանանք հարցը լուծել:

35. Բառերից քանի՞սն են վերաբերականներ.

հիրավի, արդյոք, այո, դեռևս, թերևս, ահա, սուկ, այլ, ցավոք, զոնե:

- 1) ուրը
- 2) վեցը
- 3) չորսը
- 4) բոլորը

36. Ընդգծվածներից քանի՞սն են վերաբերականներ:

1. **Արդյոք** ո՞ր ես դու ... Ա՞խ, արդյոք դու, որ
Ծանապարհների հեռուն ես մաշում:
2. Ծողացին, ժպտացին, **եկ** չկան,
Ել չկան պատրանքները սիրուն:
3. Սի փրկություն կա միայն,
լոկ մի ճանապարհ:
4. Աշխարհից ես չեմ տրտնջում.
Չե՞ոք բոլորն են տանջվում:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

37. Ծարքերից քանիսի՞՞ ոչ բոլոր բառերն են վերաբերական:

2. ի դեպ, անտարակույս, ըստ երևույթին, չլինի թե
3. երանի, ինչ խոսք, գոնե, ահավասիկ
4. ապա, դժբախտաբար, բարեկամաբար, իբրև թե
5. ով զիտի, իսկապես, հազիվ թե, հոգեպես

 - 1) մեկի
 - 2) երկուսի
 - 3) երեքի
 - 4) չորսի

38. Բառերից քանի՞սն են հաստատական վերաբերական.

անշոշտ, թերևս, անտարակույս, ամկասկած, ինչեղեց, այնուհանդերձ, միայն, արդյոք, ինչ խոսք, միջև իսկ:

- 1) երկուսը
- 2) չորսը
- 3) վեցը
- 4) ութը

39. Բառերից քանի՞սն են կոչական ձայնարկություններ.

բռ՝ թ, տրզզ, հե՛յ, հարս՝ յ, ա՝ յ, վա՝ յս, փիշի՛-փիշի՛, ո՛ւֆ, քը՛շ, պա՛հ, տռ՝

- 1) չորսը
- 2) վեցը
- 3) ութը
- 4) տասը

ԳԼՈՒԽ 4 ԾԱՐԱՀՅՈՒՄՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ 1 ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ՏԵՍԱԿՆԵՐԸ

1. Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:

- 1) Դաշտը խոր նիրհել էր:
- 2) Վա՛յ, ընկնում եմ:
- 3) Այժմ անձրևում է:
- 4) Սենյակում չաղմկե՛լ:

2. Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:

- 1) Ուշ գիշեր է:
- 2) Լույսը շուտով կրացվի:
- 3) Երեխաններ, մի՛ վազեք:
- 4) Վերջապես խախտվեց լուրջունը:

3. Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:

- 1) Ինձ չեն հասկանում:
- 2) Նունուֆարը վախից կանգ առավ:
- 3) Սենք կապոցները վերցրինք:
- 4) Բոլորը գլուխ եին պահում:

4. Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:

- 1) Ես միտք էի անում:
- 2) Նա զիրք տվեց:
- 3) Վարդանը ճառ կարդաց:
- 4) Խորհում էի անվերջ:

5. Ո՞րն է պարզ համառոտ նախադասություն:

- 1) Զինվել ենք ժամանակին:
- 2) Վասակի դավաճանության հարցը վիճելի է:
- 3) Ծիշտն այսօր դա է:
- 4) Պատմականությունը պահպանված էր:

6. Ո՞րը պարզ համառոտ նախադասություն չէ:

- 1) Նշմարվում էր ճշմարտությունը:
- 2) Սենք կոկորդ էինք պատռում:
- 3) Գտնվեց լուծումը:
- 4) Սա արդիականությունը պահպանել է:

7. Ո՞րը պարզ համառոտ նախադասություն չէ:

- 1) Փաստն անտեսված է:
- 2) Գործը գլուխ եկավ:
- 3) Նոր հետևություններ արվեցին:
- 4) Կյանքը զարմանալի է:

8. Քաղաքիչ նախադասություններից քանի՞սն են համառոտ:

Մի պահ Ասոմբ քարացավ (1), անկարող եղավ միանգամից ըմբռնել (2)՝ իմշ կատարվեց (3), և, անշուշտ, կարկամեց (4), որովհետև զգաց (5), որ վիճակը անելանելի է (6):

- 1) Երկուաը
- 2) Երեքը
- 3) Չորսը
- 4) Ինչոքը

9. Նախադասություններից քանի՞սն են համառոտ:

1. Սրտապնդիչ էր նախարարի խոսքը:
2. Սուրբ չափանիք բարձրանա մեզ վրա:
3. Իրոք, կախարդական է բնությունը:
4. Անշուշտ, տարակուսանքները գլուխ էին բարձրացրել:

- 1) Մեկը
- 2) Երկուաը
- 3) Երեքը
- 4) Չորսը

10. Նախադասություններից քանի՞սն են ընդարձակ:

1. Կկոտորեն հայրենիքն ուրացողներին:
2. Ուրեմն ելի՛ր, ժողովո՛րդ:
3. Հասել է օրը կենաց ու մահու կրվի:
4. Մենք ենք դուրս գալու թշնամու դեմ:

- 1) Մեկը
- 2) Երկուաը
- 3) Երեքը
- 4) Չորսը

11. Քաղաքիչ նախադասություններից քանի՞սն են ընդարձակ:

Այրեմմ զգում էր (1), որ ինքը հողապաշտ է (2), որովհետև հող հայրենին իր համար միայն հող չէր (3), և սարսափում էր (4), երբ հանկարծ մտածում էր (5), որ այն վտանգված է (6):

- 1) Երկուաը
- 2) Երեքը
- 3) Չորսը
- 4) Ինչոքը

12. Նախադասություններից քանի՞սն են պարզ:

1. Նամակը տուն բերելով՝ մի քանի անգամ մանրազնին կարդացի՝ ամեն անգամ միտքս կենտրոնացնելով դասընկերներից որևէ մեկի վրա:
2. Որսկանի ձեռքից փախած, բայց կարեվեր խոցված՝ եղջերուն վայր էր ընկել:
3. Հենց դա, համոզված եմ, եղավ մեր բաժանման հիմնական պատճառը:
4. Լոելյայն կարդում էի նրա նամակը, ու իմ՝ անքնությունից կարմրած աշքերից գլոր-գլոր թափվում էր արտասուբը:

- 1) բոլորը
- 2) Երեքը
- 3) Երկուաը
- 4) Մեկը

13. Հետևյալ քառյակում քանի՞ բաղադրիչ պարզ նախադասություն կա:

Իմ կմուճիմ երկիճքը՝ ժամ, արևը՝ ջահ սրբազն,
Ծիածանը նարոտ եղավ, ամենքի սերն՝ ավազան.
Սարը եղավ կմքահայրս, ցողը՝ մյուսոն կենսավետ,
Ու կճռողս Նա ինքն եղավ, որ սահմանեց ինձ պոետ:

- 1) չորս
- 2) հինգ
- 3) վեց
- 4) ութ

14. Հետևյալ քառյակում քանի՞ պարզ նախադասություն կա:

Ամեն անգամ Քո տվածից երր մի քան ես Դու տանում,
Ամեն անգամ երր նայում եմ, թե ինչքա՞ն է դեռ մնում,
Զարմանում եմ, թե ո՞վ Շոայլ, ինչքա՞ն շատ ես տվել ինձ,
Ինչքա՞ն շատ եմ դեռ Քեզ տալու, որ միանանք մենք նորից:

- 1) հինգ
- 2) վեց
- 3) յոթ
- 4) ինը

15. Ժիտական նախադասություններից որո՞ւմ սխալ կա:

- 1) Էւկան չի, թե մեզնից ով ճիշտ կլինի տվյալ իրադրության մեջ:
- 2) Հաճի աղան փախուստի ժամանակ վճռում է անդամալույթ քրոջը չվերցնել, որովհետև սահմանության տեղ չկար:
- 3) Գրականագիտական նյութը չի կարող փոխարինել գրական բնագրի ընթերցանությանը:
- 4) Առանց խոսքի մարդը ոչ մի դեպքում պաշտպանված չէր լինի:

16. Ժիտական նախադասություններից որո՞ւմ սխալ կա:

- 1) Նա տեղից չվեր կացավ, երբ ազգականները պատրաստվում էին լքել իրենց տունը:
- 2) Գրողը պատմական անցյալը վերականգնելիս չի կարող մոռանալ իր ժամանակը:
- 3) Գրողը չաետք է հեռանա կենդանի կյանքից:
- 4) Այդ ստեղծագործությունը հասարակական-քաղաքական կյանքի ծնունդ չէ:

17. Ժիտական նախադասություններից որո՞ւմ սխալ չկա:

- 1) Հավանաբար խուճապն այնքան մեծ չի, որ շփորփենք ու սայրաբենք:
- 2) Չեն քնած քաղաքի արվարձաններից մեկի հոգնած, քայլ վաստակած մարդիկ:
- 3) Նրա հայրենիքը, ինչքան էլ պնդեն հավաքվածները, քարոտ Սասունը չէ:
- 4) Դիմացի բլրակի լանջին գյուղի եկեղեցին չի:

18. Ժիտական նախադասություններից որո՞ւմ սխալ չկա:

- 1) Այդ ամենից կարելի չէ ենթադրել, որ նման հրապարակումները կենթարկվեն մեղադրանքների:
- 2) Ինչքան էլ կյանքը նրա հետ դաժան էր վարվել, միևնույն է, նա չէր հուսահատված:
- 3) Նա շթույլ տվեց, որ իր հարազատների հետ վարվեն օտարի պես:
- 4) Սակայն այն ամենը, ինչ նրանք թողել են իրենցից հետո, ստվեր չի եղել, այլ խարույկ:

19. Ժիտական նախադասություններից որո՞ւմ սխալ չկա:

- 1) Այն, որ նրա գրական ժառանգությունը վաղուց է դարձել ոռու և այլազգի գրականագետների ուսումնասիրության առարկա, նորություն չի մեջ համար:
- 2) Այստեղ սովորողը պետք չէ ընկալի գրականության պատմական զարգացման ընթացքը:
- 3) Կեղծ դատողություններ պետք չի պարտադրվեն երեխաներին:
- 4) Այս աշխատանքի նպատակը չէ ստանալ ընդիանուր, միասնական և վերջնական լուծում:

20. Ժիտական նախադասություններից որո՞ւմ սխալ չկա:

- 1) Այդ շրջանում դեռևս չէին զարգացած գրականությունը, մանրանկարչությունն ու երաժշտությունը:
- 2) Բացի այդ հնարավոր չի, որ հեղինակի և ընթերցողի միջև հակասություն առաջանա:
- 3) Կարևոր չի նաև, թե այդ խոսակցությունը ինչ հետևանքներ կարող է ունենալ:
- 4) Մարդն առանց խոսքի չէր կարող իր զգացմունքները, հույզերը, մտահոգությունները ներկայացնել:

21. Ժիտական նախադասություններից որո՞ւմ սխալ չկա:

- 1) Նա այնքան եսասեր չի, որ այդ դժվար պահին չմտածի իր մտերիմների մասին:
- 2) Դա հայց ստեղծարար, անկոտրում ոգու ձայնը չէ միջնադարի գորշ ու դժվարին ժամանակների մեջ:
- 3) Նա համոզված էր, որ իր կայացումը դեռևս ավարտված չի:
- 4) Նրանց ստեղծածը տեսական մտքի ստվերային կողմը չէ ներկայացնում:

22. Նախադասություններից ո՞րն է քերի:

- 1) Աշուն, քեզ ի՞նչ քննչությամբ,
ի՞նչ խոսքերով երգեմ քեզ:
- 2) Մեզ է, անձրև է, մշուշ է
Իմ այգում մերկ:
- 3) Ո՞վ կվառե ոսկեվառ
Երազ ու հույս:
- 4) Եվ քաղցր է լինել քո կամքի գերին:

23. Նախադասություններից քանի՞սը քերի չեն:

1. Հեռու ես, անհաս, իմ լուսե՛ երազ:
2. Գալիս ու որպես ալիք
Գնում են օրերն անհազ:
3. Եվ մայրս ահա հիվանդ
Սրսում է, արև է ուզում:
4. Արեգակը հուր ոսկի է մաղում
Արտերիս մաքուր ոսկեծովի մեջ:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

24. Ո՞ր նախադասությունն է անդեմ:

- 1) Չիսմբվե՛լ, ցրվե՛լ:
- 2) Սինչև քեզ նեղություն չտաս, ուրիշին լավություն չես կարող անել:
- 3) Մարտի վերջին օրերն էին:
- 4) Քաշում են տնից, քաշում են դռնից,
Ու չես իմանում՝ որ կողմը թռչես:

25. Ո՞ր նախադասությունն է անդեմ:

- 1) Լուրջուն կա Կաքավարերդի գլխին:
- 2) Սուարկե՞լ, չհավատա՞լ նրան:
- 3) Սարերում այս տարի վաղ ցրտեց:
- 4) Արմենին կանչում են վարչությունից:

26. Նախադասություններից քանի՞սն են անդեմ:

1. Ի՞նչ հրաշալի աչքեր, ի՞նչ զրավիչ դեմք, բայց գունատ ու տխուր, ինչպես մարմարե անդրի:
2. Ահա մեր գետը, մեր զուլալ գետը:
3. Փողոցում լուրջուն էր ու քանձր խավար:
4. Խմե՞լ, խմե՞լ, հազենա՞լ, կյա՞նք առնել...

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

27. Նախադասություններից քանի՞սն են անդեմ:

1. Այս ցուրտ երկրի անհայտում անհուն
Ընկնել, կորչել և ննջել հավետ:
2. Նորից անձրև՝, մշո՞ւշ, ա՞մպ,
Թախի՞ծ անհուն, տխրա՞նք հեզ:
3. Իմ խաղաղ երեկոն է հիմա
Մեղմալույս, և տխուր, և անուշ:
4. Արդյոք կժպտա՞ս, լուսեղե՞ն երազ:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

28. Նախադասություններից քանի՞սն են անվանական անդեմ:

1. Անուժ ցավի ցուրտ կապար...
Մահացողի տխուր կյանք.
Անմիտա՞ր, անսպա՞ռ
Վհատության հեկեկանք...
2. Լուրջո՞ւն, լրությո՞ւն, լրությո՞ւն անսահման:
3. Ուկե տեսիլնե՞ր, անուրջների լո՞ւյս:
4. Լինե՞ր հեռու մի անկյուն,
Լինե՞ր մանկան արդար քուն:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

29. Ո՞ր նախադասությունն է անենթակա:

- 1) Վարդի մուրաբան պատրաստում են թեյի վարդից:
- 2) Կովով քաշվե՞լ աջակողմյան լեռնակիրճը:
- 3) Որի՞ն մոտենալ, որի՞ հետ ձուլվել առմիշտ:
- 4) Ծխելն արգելվում է:

30. Ո՞ր նախադասությունն է անենթակա:

- 1) Երկու օր շարունակ անձրևում է:
- 2) Ապրել, ապրել, այնպես ապրել,
Որ սուրբ հոդի երբեք չզգա քո ավելորդ ծանրությունը:
- 3) Սուրաբայի վարդը իր ցողունից առանձնացվում է թարմ վիճակում:
- 4) Ահա մեծ քաղաքի լրված ծայրամասերից մեկի թաղը:

31. Ո՞ր նախադասությունն է անենթակա:

- 1) Լոենք միայն մի մեղմող
Լուրջունով ու հանգչենք:
- 2) Սուրբ է հոգիս հոգնարեկ,
Թախիծով լի և անհույս:
- 3) Սուայլ զիշերն է լուս,
Խավար զիշերն անենուր:
- 4) Սիրեցի, յարս տարան,
Յարս տվին ու տարան:

32. Տրվածը ինչպիսի՞ նախադասություն է:

*Աև զիշեր, և՛ հուշեր, և՛ խոհեր անհամար,
Սոռացված երազներ, շուշաններ քառամած:*

- 1) քերի
- 2) անվանական անդեմ
- 3) բայական անդեմ
- 4) անենթակա

33. Տրվածը ինչպիսի՞ նախադասություն է:

Ի՞նչ ես զազազում, իմ վիրավոր սիրու:

- 1) բայական անդեմ
- 2) անենթակա
- 3) քերի
- 4) անվանական անդեմ

ԲԱԺԻՆ 2 ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՍՆԵՐ

1. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:

- 1) Այդ հիշողությունները ալեկոծում էին Գարեգինի **հոգին**:
- 2) Նրա **սիրոս** հաճելիորեն քրորաց ինչ-որ քաղցր հիշողությունից:
- 3) Ասես հետմիջօրեի անդորրության մեջ անտառի խոլ **խաչումն** եմ լսում:
- 4) Բերանքսիվայր ըմբռշխնում եմ գետի սառնահամ **ջուրը** և չեմ կշտանում:

2. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:

- 1) Դողդոց **ձեռքերը** ծնկներին դրած՝ խոսում եր ծերունական բարակ ձայնով:
- 2) Իրիկնանում է. քաղաքում կամաց-կամաց զարթում է երեկոյան **սղմուկը**:
- 3) Իմ հպարտության առարկան վայելչազրության **տեսքն** է:
- 4) Մի՞թե **ընկեր** կարող է համարվել նա, ով լրել է քեզ դժվար պահին:

3. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:

- 1) **Տնօրեն** Հակոբյանի և այցելուի միջև սկսվեց մի հետաքրքիր բանավեճ:
- 2) Ֆուտբոլ խաղալիս վայր ընկավ և **թև** կոտրեց:
- 3) Ապրել ազմիվ, աշխատել նվիրումով, օգտակար լինել մարդկանց. **սրանք** էին ավագ ընկերոջն կարգախոսները:
- 4) Կախարդական մի **շոթա** կա երկնքում
Աներևույթ, որպես ցավը խոր հոգու:

4. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:

- 1) Քո ոտքերի վրա դու կրերես **հետքը**,
Ո՞վ գիտե, ինչպիսի՞ արահետների:
- 2) Եվ կոպերիդ ներքո շոայլությամբ վերջին
Արևը իր **բռյուրը** կվառե:
- 3) Գնում ես դեպի **հեռուները** վսեմ:
- 4) Քո ոունգերից, քո սրտից, քո հետքերից հառնած՝
Մեզ կողջունեն **օրերի**:

5. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:

- 1) Սենյակը լուսավորվեց՝ ի հայտ բերելով հինավոր արվեստի նրբաճաշակ **զարդարանքները**:
- 2) Արդեն **ճրագալույց** էր, երբ իշխանը հասավ ամրոցի հարավարևմտյան դրանը:
- 3) Լինում էին **վայրելյաններ**, երբ նա ուզում էր հեռանալ, անհայտության մեջ մոռացվել:
- 4) Դա մի նեղլիկ **սենյակ** էր, որտեղ խոնավության պատճառով ոչ մի վանական չէր ապրում:

6. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ենթակա:

- 1) Ուրիշ բլբուլ կգա, կմտնի **քաղը**:
- 2) Իսկ ժամանակը՝ որպես հավերժական երգիչ,
Կշշնջա անմահական **քառերի**:
- 3) Քսանամյա **որդին** շտապով ապրանքը դարակներից քափում էր մի տոպրակի վրա:
- 4) Երբ մտավ շուկա, խանութպանների եռուզեռում մի **անկարգություն** նկատեց:

7. Ո՞ր նախադասության ընդգծված բառը ենթակա չէ:

- 1) **Սա** արդեն խոցում էր նրա սիրտը:
- 2) **Հաճի մարը** պահել էր հուզմունքը:
- 3) **Վեր բարձրացրեց խոնարհած գլուխը** և խելազարի պես նայեց շորջը:
- 4) **Երկը** ներկայացնում է Առաջին համաշխարհային պատերազմի փոքր դրվագներից մեկը:

8. Ընդգծվածներից քանի՞որ ենթակա չեն:

1. **Հայաստան** են ասում,
Երկնքի համ ու բույրից
Հարբում է հողը նորից:
 2. Գնամ **բնաշխարհն** իմ բարձրագմբեթ,
Մտնեմ վիհավոր կիրճերը նրա:
3. Ա իս, ինչքա՞ն **զոհելը** ենք տվել,
Որ պահենք այս հողը մի բուռ:
4. Գնամ մարդկանց մոտ իմ բնաշխարհի,
Որոնք դեռ հողում արմատներ ունեն:
- 1) մեկը
 - 2) երկուսը
 - 3) երեքը
 - 4) չորսը

9. Ո՞ր նախադասության մեջ գոյականի ուղղական հոլովով արտահայտված որոշիչ չկա:

- 1) Ծաղիկների մեջ այդ անուրջ կույսի շշուկը մնաց,
Եվ ծաղիկները այդ սուրբ շշուկով իմ սիրտը լցրին:
- 2) Աստղերն են ժապում լուսեղին նազով,
Խաղաղ դաշտերը մութն է համբուրում:
- 3) Հրաշք աղջիկ, գիշերների բագուիի,
Ճառագայթող քո աշքերով դու եկար:
- 4) Կախարդ լուսնի հրապուրող շողի պես
Դու ժպտացիր գուրգուրանքով սեթենք:

10. Ո՞ր նախադասության մեջ է ենթական արտահայտված ածականով :

- 1) Իմ խոր վերքերը ո՞վ կնյութեր ինձ,
Թե չինեին ընկեր, բարեկամ:
- 2) Պառկել է ծառի ստվերն անշշուկ,
Սեղքին է ընկել թաց գետնի վրա:
Խեղճը կմրսի:
- 3) Մարգարեներ են բոլոր հասկերը,
Հասկը չի քնում, անքուն է հասկը ...
- 4) Եվ ոչինչ հարկավոր չեր ինձ,
Հերիք էր լինելու:

11. Նախադասություններից քանիսո՞ւմ դերանունով արտահայտված ենթակա կա:

1. Անկասկածելի թիվը նշեցե՛ք այն կանոնների,
Ինչից մենք հաճախ հասունացել ենք:
2. Ով մեզնից հաղթող դուրս գա, թող նա էլ իր հետ տանի աղջկան:
3. Ի՞նչ է սպասում այս մոլորակին,
Ի՞նչ պատասխանես...
4. Մարիս մ, դու լսո՞ւմ ես,
Տեսն՞ում ես, Մարիսմ...

- 1) մեկում
- 2) երեքում
- 3) երկուսում
- 4) չորսում

12. Նախադասություններից քանիսո՞ւմ դերանունով արտահայտված ենթակա կա:

1. Բոլորը, մեծ հաղորդյան լուրն առնելով, շտապում էին Դվին:
 2. Հեռվից նայողին այնպես էր թվում, թե ոչինչ չի պատահել այդ գյուղերին:
 3. Ընդհանուր ցնծության մեջ նրա հաղորդյան լուրը էլ ավելի բարձրացրեց ուրախության ալիքը:
 4. Մեկը ներս բերեց ոսկեզօծ աշտանակը և դրեց պերճաշոր պատվանդանի վրա:
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

13. Նախադասություններից քանիսո՞ւմ դերբայով արտահայտված ենթակա կա:

1. Նախորդ օրը սրահում կատարվածը բոլորին շփոթեցրել էր:
 2. Նրանք չիմացան, թե ինչու էր զայրացել պատերազմի աստվածը:
 3. Տախտակամածը ամբողջովին ծածկված էր ձկան թեփուկներով:
 4. Դաշտում կանգնածները դառն արտասուր էին թափում իրենց տիրոջ մահվան համար:
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

14. Նախադասություններից քանիսո՞ւմ դերբայով արտահայտված ենթակա կա :

1. Պատիվի պահող չկա,
Մասրենի՛, բարի՛ մասրենի:
 2. Տեսնես ո՞ւ էր հարկավոր
Այսքան ապրելս:
 3. Երբ հերկածիս համար
Ինձ հատուցող չկա,
Էլ խոպանն ու խութը
Ինչպե՞ս ս հերկեմ:
 4. Լուծ զանգ է կյանք
Ես՝ ավերակ վանքս,
Էլ աղոթող չունեմ:
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

15. Ո՞ր տարբերակում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված :

- 1) Նրա մոտ նստածը մանկահասակ, նազելի, սիրունատես երիտասարդ մի կին էր: (*ածական*)
- 2) Դրանք իրարից բոլորովին անջատված հայկական գավառներն էին: (*դերանուն*)
- 3) Տեղ-տեղ հաղորդակցությունը կտրում էին մթին, անթափանց անտառները: (*գոյական*)
- 4) Այցելողը կարող է տեսնել մարդկության վաղնջական ժամանակների՝ առեղծվածներով լի կյանքի պատկերը: (*դերբայ*)

16. Ո՞ր տարբերակում է ենթակայի արտահայտությունը սխալ նշված :

- 1) Ամեն ինչ դարձել է անցյալ,
Ու մենք առափնյա այգում ենք դարձյալ: (*անորոշ դերանուն*)
- 2) Իմ տխուր հոգում ծագում է ոսկի
Ծածանչը հուս հարատև կյանքի: (*գոյական*)
- 3) Մանուկ պահելը ծանր է ավելի: (*անորոշ դերբայ*)
- 4) Անդարձ կորել է սրտիս խնդումը,
Թունոտ մի մեզ է իջել հոգում իմ: (*գոյական*)

17. Ո՞ր շարքի բոլոր դերանունները կարող են կատարել ենթակայի պաշտոն:

- 1) դուք, այսպէս, սրանք, որը
- 2) դա, ոմն, ինքն, ամենքը
- 3) նրանք, միմյանց, յուրաքանչյուրը, ես
- 4) սա, ով, ոչ ոք, ամեն մեկը

18. Ընդգծված նախադասություններից որո՞ւմ պարզ ստորոգյալ կա:

- 1) **Այդ երաժշտության համար նրա խելքը գնում էր:**
- 2) **Ես արդեն արթուն էի, և զգացի, թե ինչպես մայրս ծածկեց ինձ վերմակով:**
- 3) **Պարզվեց, որ հայրս ու Հակոբը մանկության ընկերներ էին:**
- 4) **Աշխարհը շատ է անարդար, և մենք չենք կարող զապել մեր ցավը:**

19. Ո՞ր նախադասության մեջ պարզ ստորոգյալ չկա:

- 1) Երբ տնօրենը ներս մտավ, մենք արդեն ոտքի կանգնեցինք ու մեր կեցվածքով մեղմեցինք նրա զայրույթը:
- 2) Հայաստանի ազատագրության հայ զադոնի բանակի մարտիկների սխրանքները պիտի ոգեշնչեն մեր սերունդներին այնքան ժամանակ, քանի դեռ մեր սրտում մխում է հայոց ցեղասպանության ցավը:
- 3) Թուրքական պատմագրությունը վերաշարադրում է անցյալը, ծառայեցնում իր տերության շահերին:
- 4) Հայրը շատ ուրախ էր, որ իր դուստրը երջանիկ է:

20. Նշվածներից քանի՞սը կարող են գործածվել որպես պարզ ստորոգյալ.

Կերազեմ, գալիս ենք, բարձրանամ, սկիսի փակեն, հաղորդող է, կհամոզվես, տալիս է, մի՛ աղորեք, շարունակելու է, շահագուշ:

- 1) հինգը
- 2) յոթը
- 3) ութը
- 4) ինը

21. Նախադասություններից քանիսո՞ւմ է պարզ ստորոգյալը քայի բաղադրյալ ժամանակաձևով արտահայտված:

1. Գետնով տան ինձ, թե վեր թոցնեն,
Իմ մշտական տեղում եմ ես:
2. Օվկիանոսները ելնում են ափից
Եվ պատառտում իրենց անխնա:
3. Այստեղ է լացել իմ մայրը
Սորմոքը և իր օրորը:
4. Որպես արքան այն՝ մանուկ Արան,
Չեմ դավաճանի իմ Նվարդին:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

22. Ո՞ր նախադասության մեջ քաղաքայի ստորոգյալ կա:

- 1) Հեռու ես, անհաս, իմ լուսե՝ երազ:
- 2) Ծաղիկներն ահա քննուշ փակվեցին,
բացվեցին երկնի ծաղիկներն անհաս:
- 3) Իմ շիրմին դալկացող ծաղիկներ ցանեցե՛ք,
որ խաղաղ ու հանդարտ մահանան:
- 4) Նորից կրողնեմ քաղաքն աղմկոտ
ու ճամփա կը նկնի միայնակ:

23. Ո՞ր նախադասության մեջ քաղաքայի ստորոգյալ չկա:

- 1) Եվ չափագանց զգո՞ւյշ եմ ես,
Նույնիսկ վախսուու:
- 2) Բայց սիրում են նրանք իրենց հայրենիքի շքնադ բնությունը:
- 3) Սենք ականջալուր էինք մեր մեծերի իմաստուն զրույցին:
- 4) Այդ պահին մենք հպարտ էինք ու չէինք կարողանում զսպել մեր հիացմունքը:

24. Ո՞ր նախադասության մեջ քաղաքայի ստորոգյալ չկա:

- 1) Նրա համար թանկ էին ընկերոջ դեմքը, ձայնն ու քայլվածքը, անգամ սովորություններն ու բնավորությունը:
- 2) Ասում էր, որ արդեն ուրախ է և հանգիստ:
- 3) Նա կարոտ էր բարի խոսքի, ջերմ վերաբերմունքի և արժանի էր զմահատվելու:
- 4) Վերջապես ձեռք բերեցինք նոր դասագրքերը և պիտի բարեխսդորեն պատրաստվենք բնություններին:

25. Ո՞ր նախադասության մեջ քաղաքայի ստորոգյալ չկա:

- 1) Դրանցից մի քանիսի կեղևը շատ կարծր էր, իսկ երկուսինը՝ ուսած:
- 2) Ինք կիմանաս այդ ամենը, երբ ծնողներիդ կտակած կարողությունը ձեռք բերես:
- 3) Սենակ էի ես,
Ինձ հետ էիր դու:
- 4) Իմ հիմնական գործն այսուհետև բոլորին լսելն է ու նրանց ցանկությունները կատարելը:

26. Ստորոգելին ի՞նչ խոսքի մասով է արտահայտված:

Զրվեժն օրնիբուն ամքուն է:

- 1) քայով
- 2) զոյականով
- 3) դերանունով
- 4) ածականով

27. Նախադասություններից քանիսո՞ւմ գոյականի ուղղական հոլովով դրված ստորոգելի կա:

1. Նիրի էին մտել ծաղկունքը բուրյան աղամանդներով, շքեղ գիներով:
2. Սենությունն է իմ սերը հիմա, երկինքն աստղաբեր՝ վրանս հայրական:
3. Եվ քաննցըներից կախ էին ընկնում և աչքերի մեջ Աբու-Լալայի Շաղ էին տալիս բուռերով փոշի:
4. Կյանքը երազ է, աշխարհը՝ հեքիաթ, ազգեր, սերունդներ՝ անցնող քարավան:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

28. Ո՞ր տարբերակում է սխալ նշված ստորոգելիի արտահայտությունը:

- 1) Սիրտս ջահել է նորից,
Սիրտս սիրում է կրկին: (*ածական*)
- 2) Մենք բոլորս, բոլորս
Մանուկներ ենք որք: (*որոշյալ դերանուն*)
- 3) Մենք նետված ենք բոլորս
Երկիրն այս հեռու: (*հարակաստար դերբայ*):
- 4) Միևնույն են ինձ Հյուսիս թե Հարավ,
Մի խենք տագնաապ կա իմ հիվանդ սրտում: (*ցուցական դերանուն*)

29. Ընդգծվածներից քանի՞ն են գոյականական անդամի լրացումներ:

Աշնանամուտի ջրերը քարակ

Նորից մասուր են բերում սարերից:

Քրաք շալակած իջնում են սարից

Խուլ, խորիրդավոր, **մթնած** սարերը:

Գազանների մոտ **հացի** կնատեմ,

ողջույնը կառնեմ **ոռոենիների**:

Ելավ քաջ Դավիթ՝ **իշխան** Սասունա,

Կոիլ խոյացավ ի Մարա վրա:

- 1) երկուսը
- 2) երեքը
- 3) հինգը
- 4) վեցը

30. Ո՞ր նախադասության մեջ առարկայի հատկանիշ ցույց տվող դերանուն կա:

- 1) Արդյոք որտե՞ղ պիտի հանգչի
գլուխս անտուն, բափառական:
- 2) Իրար գիրկ ընկան անհուն կարոտով
Եվ համբուրվեցին երկար ու երկար:
- 3) Այնպես զգվող է երեկոն անափ,
Ծաղկներն այնպես նազով են փակվում:
- 4) Անձրևի նման լալս են անվերջ
Այն հնչյունները մեղմ ու միաձայն
Պատի հետևում և իմ հոգու մեջ:

31. Ո՞ր նախադասության մեջ ենթակայական դերբայով արտահայտված որոշիչ կա:

- 1) Լառ-Մարգարին այնպես էր թվում, թե հավքը լազուրի վրա միայնակ սահող ամափի կտորի հետ է խաղում:
- 2) Կարծես սյունի վրայից նայողը Անդոն չէր, այլ անմարմին մի խրտվիլակ:
- 3) Ճրագի շուրջը նստողների ստվերները քրթում էին պատերի վրա:
- 4) Պատմագիրը նայեց հաղողներին, որոնց փառքի մասին առասպելներ էր հորինել:

32. Տարբերակներից որո՞նմ որոշիչ կա:

- 1) մեղմորեն օրորել
- 2) հանդարտ խոսել
- 3) այդշափ վագել
- 4) այնքան կարոտ

33. Ընդգծվածներից ո՞րն է որոշիչ:

- 1) **Մեղմ** ու սիրազին ժպտում էր նա ինձ
Օտար կողմերում, այն ճամփի վրա:
- 2) **Դժվար** նայում են ժայռերը խոժոն,
Տիսուր խաղում են ալիքները ժիր:
- 3) Ես կգամ, երբ դու կիհնես **տրտում**,
Երբ երազներդ հավետ կմեռնեն:
- 4) Կանգնած եմ նորից **ահեղ** անտառում
Սութ ուղիների բաժանումի մոտ:

34. Ո՞ր նախադասության մեջ գործիական հոլովով արտահայտված որոշիչ կա:

- 1) Այդ թագավորի օրոք են կատարվել նման վայրագույքուններ:
- 2) Նա մեծ համբերությամբ էր լսում յուրաքանչյուրին և իր բարի խորհուրդները տալիս:
- 3) Նա մեծ ախորժակով էր ուսում բրնձով վիլավը:
- 4) Կամրջով անցնելիս նա սիրում էր հետևել ջրերի խաղաղ ընթացքին:

35. Ո՞ր նախադասության մեջ թվականով արտահայտված որոշիչ կա:

- 1) Տասնյակ հազարավոր մարդիկ էին խմբվել ամրոցի շուրջը:
- 2) Մեր հավաքականի եռակի չենայոնի ոտքը վնասվել էր:
- 3) Առաջին մրցանակը ստացավ տարիքով ամենափոքրը:
- 4) Մենք երկուսով կարողացանք հաղթահարել այդ դժվարությունը:

36. Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված որոշիչ կա :

- 1) Զմրուխտյա երգեր, երազներ ջրեղ
Գարնան վարդի հետ եկան, զնացին:
- 2) Ե՛յ դու, ջահել, հպար՝ ն հասակ,
Անցար ուկի ամայի պես:
- 3) Այս ձորերում ամեն ինչից
Օրորոցի հոտ է զալիս:
- 4) Ի՞նչ ես զազազում, իմ վիրավո՞ր սիրտ,
Որ զազազում ես, ի՞նչ պիտի անես:

37. Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված որոշիչ կա:

- 1) Մենավո՞ր իմ սիրտ, մոլորվա՛ծ թռչուն,
Կարոտիդ կանչը չի հասնի նրան:
- 2) Կմոռանամ հեռվի աղմուկը ահեղ,
Կզզամ համբույրը ուրիշ օրերի:
- 3) Ինձ հեռվից լույս փարոս չի կանչում,
Չի ժպտում ինձ խաղաղ հանգրվան:
- 4) Թովիչ քնքշությամբ հանգչող աշխարհում
Երեկոն վառեց լույսեր դժգունակ:

38. Նախադասություններից քանիսո՞ւմ դերանունով արտահայտված որոշիչ կա:

1. Նա մի մարդու հանդիպեց, որը ճամաշել էր իր հորը:
2. Հանկարծ նկատեց, որ նույն էջը կարդում է չորրորդ անգամ:
3. Նման մարդու հետ չէր կարելի այդպես վարվել:
4. Նա իրեն այդպես չէր դրսնորի այլ հանգամանքներում:

- 1) Երկուսում
- 2) չորսում
- 3) մեկում
- 4) երեքում

39. Ո՞ր շարքի բոլոր դերանունները կարող են կատարել որոշչի պաշտոն:

- 1) ամեն, այս, ինչպիսի, ով
- 2) ոչ մի, բոլոր, ոմն, մենք
- 3) մյուս, ոչ մի, սույն, ամեն
- 4) սա, այդպիսի, միևնույն, ողջ

40. Ո՞ր շարքի դերանուններից ոչ մեկը չի կարող կատարել որոշչի պաշտոն:

- 1) սա, ոչ ոք, ինքս, երբ
- 2) դու, որ, ինչպես, ովքեր
- 3) որքան, երբեմ, իրենք, որոշ
- 4) այլ, ամենքը, այդպես, ով

41. Ո՞ր նախադասության մեջ է անորոշ դերբայը որոշիչ:

- 1) Ապրելուց քաղցր է մեռնել քեզ համար...
- 2) Այդ քաղաքում այլևս տեսնելու քան չկար:
- 3) Սահման մասին մտածելու համար ժամանակ չկա:
- 4) Գալիս էին իրենց հարգանքը մատուցելու հոբելյարին:

42. Ո՞ր դերբայը նախադասության մեջ չի կարող կիրառվել որպես որոշիչ:

- 1) հարակատարը
- 2) համակատարը
- 3) անորոշը
- 4) ենթակայականը

43. Նախադասություններից քանիսո՞ւմ դերբայով արտահայտված որոշիչ կա:

1. Չարտասանված տիխուր խոսքեր,
Որ դոդում եք անպատասխան:
 2. Ընդմիշտ օրինեցի անհատակ ուղին,
Ուր փարոսում ես դու, քաղցր պատրանք:
 3. Հիվանդ քնքությամբ երկինք է պարզում
Մեռնող ծաղիկը իր բույրը վերջին:
 4. Կազմ ու պատրաստ սպասում են
Մոտիկ ժամին մրցության:
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

44. Նախադասություններից քանիսո՞ւմ հարակատար դերբայով արտահայտված որոշիչ կա:

1. Այս եղած-շեղած մեղաց աշխարհում,
Հնուց իր ուղին շեղած աշխարհում,
Հմաստունների թիվն այնքան է շատ,
Որ իմաստությունն էլ իմաստ չունի:
 2. Կոռունկներ, ո՞ւր եք զնոս,
Ինձ թողած, այդ ո՞ւր, կոռունկներ:
 3. Մենք իրար աշքով արինք,
Շիկնեցինք, մնացինք շիկնած:
 4. Այս քաշեմ, ավաղ կանչեմ
Փուշ անցած օրերին համար:
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում

4) չորսում

45. Նախադասություններից քանիսո՞ւմ ենթակայական դերբայով արտահայտված որոշիչ կա:

1. Մի լույս բերեք հոգնած ու հեզ
Ծամփա պահող ճրագմերից:
 2. Երբ հերկածիս համար
Ինձ հատուցող չկա,
Ել խոպան ու խութը
Ինչպե՞ս հերկեմ:
 3. Նստեցե՛ք հով անեմ շոգին,
Մրգերս քաղեցե՛ք մեկ-մեկ,
Տնկողիս ողորմի՛ տվեք:
 4. Տեսնես ի՞նչ էին ասում իրար
Մեռնող արևը սարերն ի վեր
Եվ ճերմակ մութը ձորերն ի վար:
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

46. Ո՞ր նախադասության մեջ բառակապակցությամբ արտահայտված որոշիչ կա :

- 1) Վայում է քամին. ցուրտ, ձմեռնամուտ,
Չոր տերևները շուրջու է դիզում:
- 2) Հայրենի գետի զմրուխտ ափերին
Սեր հին տնակն է կրել մենավոր:
- 3) Խոսեցին անցած-զնացած օրերի մասին,
Ասպա քուն մտան անհոգ, բախտավոր:
- 4) Հուր-հավլերից՝ թևերն արծաք,
Ինձ կպատմեն ոսկի հերիաք:

47. Ընդգծվածներից ո՞րն է հատկացուցիչ:

- 1) Սիայն հայ վանականն էր, որ առանց **ծածկոցի** ամբողջ գիշեր պայքարել էր ալիքների դեմ:
- 2) Ծերունին ասես **նավի** հետ տարութերվում էր մտքերի ծովում:
- 3) Հիվանդն աչքերը բացեց և իր առջև տեսավ մի անձանոք **երիտասարդի:**
- 4) **Սոնի** թրոռուն լույսը դեպի իրեն ձգեց ասես հենարան փնտրող նրա հայացքը:

48. Ո՞ր նախադասության մեջ հատկացուցիչ չկա:

- 1) Նրան և ընտանիքն զարդարում էր առաքինի լինելը:
- 2) Կաղնի տնկելիս պապը երևի պատկերացրել էր դրա այժմյան վեհությունն ու գեղեցկությունը:
- 3) Ծառի տակ հավաքվածները քննարկում էին օրվա իրադարձությունները:
- 4) Դու պիտի հնչես, հնչես հաղթական, իմ հին հայ լեզու՝ բարձր ու սրտարուխ:

49. Ընդգծված բառերից քանի՞սն են հատկացուցիչ:

1. Հիշյալ լեռների հսկայական **շրջանակի** մեջ երևում էր ընդարձակ դաշտավայրը:
2. Բոլորի հայացքներն իսկույն շրջեցին **պատաճի** երաժշտի կողմը, որի հայտնությունը շափազանց անսպասելի էր:
3. **Լուսուների** առէջներում մարգարիտներ էին ցոլում:
4. **Զեր** ակունքներն եմ գտել ժեռ քարերի արանքում:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը

4) չորսը

50. Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված հատկացուցիչ կա:

- 1) Ողջ հին աշխարհը նախատեսել էր նրա գալուստը:
- 2) Սպասողական լուրջունը խզող այդ դեղձանիկների աշխույժ դայլայլը լոեց հյուրերի ոտնաճայներից:
- 3) Սրբազնի բացման խոսքը բոլոր հավաքվածների սրտերը լցրեց հոգմունքով:
- 4) Արծարյա գավաթների լիահնչյուն ընդհարումները խլացնում էին խոսակցության ձայները:

51. Ո՞ր նախադասության մեջ դերբայով արտահայտված հատկացուցիչ կա:

- 1) Ամրոցի մատուցներին հասնողների ականջներին հասան ինչ-որ տարօրինակ ձայներ:
- 2) Նրանց շփումները հարևան մշակույթների հետ բազմապատկվում էին օրեցօր:
- 3) Պատմության ամենից լուսաճանանց մտքի հնոցում ծնված հոմեռոյան պոեմները վերացած աշխարհի արձագանքն են:
- 4) Վերջապես նրա հայացքը կանգ առավ գրառումների քսանյորերորդ էջի պարբերության վրա:

52. Ո՞ր նախադասության մեջ ենթակայական դերբայով արտահայտված հատկացուցիչ կա:

- 1) Իմ հեռավոր – հեռու սարահովիտ,
Երգս ոսրերս ընկներ արարողիոտ:
- 2) Բացվող օրվա հետ վեր թռան հանկարծ
Լույսի խտուտից զարբնած սարերը:
- 3) Ով գնաց, գնաց, էլ ետ չի զալու,
Եկողներին էլ խորհուրդ չեն տալու
Փնտրել անհնարն ու անկարելին:
- 4) Ավա՞ն, ինչո՞ւ նույնն է նաև
Մեզ բաժանող ամբարտակը:

53. Ո՞ր նախադասության մեջ բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Շեներն ու գյուղակներն իրար միացնող խճողված ճանապարհների հազիվ ընդգծված եզրերին քամին կուտակել էր ծիածանի բոլոր գույները:
- 2) Թափված տերենները մայրամուտին տեղ-տեղ կարմրին էին տալիս թվում էր կրակներ էին վառվում մրգաբափ դաշտում բլորների վրա:
- 3) Առվակների ոլորքով կանգնած բարդիները մեղմ օրորվում էին ինչպես խմբապարի հավաքված աղջիկներ:
- 4) Նրա իմ վաղեմի ծանոթի հետ իջևանել էի երկրաբանների վրանում:

54. Նախադասություններից քանիսո՞ւմ բացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

1. Հազրոն առավ իր միակ հարազատին աղջկան և քարայծի արահետներով հոգնած գնաց հարավի կողմը:
2. Հարևան կտորների վրայից տների պատշգամբներից կանայք և աղջիկները դիտում էին լեռնականների պարը:
3. Մեր գյուղի մասին խոսելիս այժմ էլ օրերի մշուշից ելնում է իմ առջև մեր իին տունը:
4. Ահա մեր գետը մեր գուլալ գետը կարող ես ջրի տակ խիճերը մեկ-մեկ հաշվել:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

55. Ո՞ր նախադասության մեջ բուն քացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Ծերունի մի դերվիշ ճակատն արևատ եկավ որ սփինքսից հարցումներ անի:
- 2) Գնա և պատգամիր հանուր աշխարհին հարավին հյուսիսին արևելքին արևմուտքին երջանկության իմաստը:
- 3) Այս գեղգեղանքը սիրավառ սրտի մի ամբողջ հեքիաթ էր մի դյութական հեքիաթ ծաղկների բույրով ներդաշնակված:
- 4) Մի աղջկ իր ընկերուի հիմների հետ անցավ իբրև մի թարմագեղ զարուն:

56. Նախադասություններից քանիսո՞ւմ բուն քացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

1. Այդ մի մատղաշ ու խարտյաշ եղնիկ էր խորունկ և ու ջինջ աչքերով նուրբ թարթիչներով եղնիկ:
2. Սեկ-մեկ ուշադիր նայում էր սարերին հեռու անտառներով վարաթված:
3. Եղնիկը գիտեր որ ինքը դողանջուն անտառների ազատ երեխան ծնվել է այդ հեռու անտառներում:
4. Երբ գրկում էի նրան այդ նազելի էակին նրա վճիռ աչքերի մեջ տեսնում էի մի թախծալի կարոտ:

 - 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

57. Ո՞ր նախադասության մեջ մասնական քացահայտիչ կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Ուրախանում էր իբրև խաղով տարված մի երեխա սակայն հոգու խորքում անհուսության ստվերներն էին խտացած:
- 2) Շնչում էին նարինջները որպես թե կանաց մետաքսե քղանցքների սարսունները լինեին:
- 3) Կայսրը որպես երկնքի որդի հավակնում էր կարծել թե իրավունք ուներ տիրելու ինչպես մարդկային տարերին այնպես էլ բնությանը:
- 4) Նրա ահեղագոչ ձայնը անցավ որպես փոքրորիկ այդ երկրի մի սահմանից մինչև մյուս սահմանները:

58. Ընդգծվածներից ո՞րը բայական անդամի լրացում չէ:

- 1) Բայց հուշերիս մեջ նայում ինձ **դարձյալ**.
Ժպտում են դարձյալ աչքերով որ ջինջ:
- 2) Ու ես շասացի **ոչ որի** ոչինչ,
Մինչև այս երգը լույս աշխարհ եկավ:
- 3) Ճակատագիրն ինձ շպրտեց հարավ,
Իսկ **ոռ** երազը քեզ հյուսիս տարավ:
- 4) Ուղեկցում է ահը մահվան
Սեղ ծննդյան պահից:

59. Ո՞ր նախադասության մեջ բայական անդամի՝ դերանվամբ արտահայտված լրացում չկա:

- 1) Որտե՞ղ որոնեմ երջանկություն սուս
Եվ ինչպե՞ս գտնեմ վերադարձի լաց:
- 2) Մի՛ կանչեք ինձ, հույսի նոր
Խոսքերով ինձ մի՛ դյութեք:
- 3) Որքան էլ գիշերն ահավոր իջնի,
Եվ ուր էլ գնամ՝ գլուխ դմելու,
Հարազատ հող ես չեմ գտնելու:
- 4) Ո՞ր երկրի սրտում թախիծ կա այնքան,
Եվ այնքան ներում՝ ո՞ր երկրի սրտում:

60. Ո՞ր նախադասության ընդգծված բառն է ուղիղ խնդիր:

- 1) Մենք հոգնեցինք **ամենքին** անտեղի սպասելուց:
- 2) **Լիճն** ասես իրդեհիւ էր վերջալույսի շողերից:
- 3) Մենք լսեցինք Կոմիտասի մի քանի **ստեղծագործություններ**:
- 4) Վերջապես մեծ դժվարությամբ հասանք **տուն**:

61. Ո՞ր նախադասության մեջ ընդգծվածը ուղիղ խնդիր չէ:

- 1) Եվ հոգիս **աշքերը** սրբում,
Սրավկած կանգնում է կողքիս:
- 2) Ձեռքերիս հետ նրա մեջ
Սիրոս էլ լվանամ,
Առաջվա պես մաքրվեմ և ազնվանամ:
- 3) Երբ **Հայաստան** են ասում,
Քարն արքնանում է քնից:
- 4) Եվ **աստղերը** երկնքից
Ականջիդ բան են ասում:

62. Նախադասություններից քանիսո՞ւմ դերանունով արտահայտված ուղիղ խնդիր կա:

1. Գնամ նրանց մոտ, խառնվեմ նրանց,
Սարդահոտ առնեմ, սիրեմ բոլորին:
2. Ա՛խ, ինչեր, ինչեր, ինչեր են անում,
Որ միլիոն տարվա մեր ծուխը կտրեն:
3. Թե ձեզ չլրենք ու մեզ հավատանք,
Կչքվի ստվերն այս անելության:
4. Թող ընդունի իմ խանդն ու ողջույնը
Հասկի ստվերում ննջած մրջյունը:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

63. Ո՞ր նախադասության մեջ հանգման անուղղակի խնդիր կա:

- 1) Նրանք մի պահ լուր անցնուու էին կադնու և մասրենու թփերով եզերված սայլուղին:
- 2) Անասուններին շինականները ստիպված ջրում էին տանը:
- 3) Ժայռի կատարին փթթում է ճերմակազգեստ մասրենին:
- 4) Նա սկսեց հետևել խանութպանի ձեռքի շարժումներին:

64. Ո՞ր նախադասության մեջ դերանունով արտահայտված հանգման անուղղակի խնդիր կա :

- 1) Հեկեկում է այդ երգը այնտեղից
Եվ ձուլվում է արդեն իմ հոգուն:
- 2) Նա ինձ մոտեցավ քննուշ,
Փայփայող սիրո խորքերով:
- 3) Եվ աղոքեց նա հիվանդ որդուն,
Օրինեց երկնային ուղիս դժվար:
- 4) Քանի դեռ կա այսպիսի
Սաքուր մի գետակ,
Զեր մաքրության հանդեսին
Պիտի հավատաք:

65. Ո՞ր նախադասության մեջ վերաբերության անուղղակի խնդիր կա:

- 1) Օվկիանոսները ելնում են ափից
Եվ պատառոտում իրենց անխնա:
- 2) Աշխարհն ինձ համար հովիտ էր բարու,
Յավերը ինձնից դեռ հեռու էին:
- 3) Պատմում են անցած արհավիրքներից,
Պատմում են զալիք հարսանիքներից:
- 4) Իրենց անգիր պատմություններով
Ինձ անէության սարսափից խլում
Ու հանձնում են ինձ:

66. Ո՞ր նախադասության մեջ պարագա չկա:

- 1) Որտեղի՞ց եկանք և ո՞ւր ենք գնում,
Երեկ չկայինք, վաղը չենք լինի:
- 2) Ինչո՞ւ ապշած են, լճակ,
Ու չեն խայտար քո ալյակք:
- 3) Եվ ծլվլաց աշխարհով մեկ
Լույսը առավոտի:
- 4) Օրը գնաց հավասարվեց
Հազար տարվա մեռելներին:

67. Ո՞ր շարքի բոլոր դերանունները կարող են կատարել պարագայի պաշտոն:

- 1) որքան, այդպես, երբ, որանք
- 2) այդշափ, ինչպես, երբեւ, ոչ ոք
- 3) այսքան, ինչո՞ւ, այնպես, ուր
- 4) այստեղ, նույնքան, ինչպես, ոչ մի

68. Ո՞ր շարքի դերանուններից ոչ մեկը չի կարող կատարել պարագայի պաշտոն:

- 1) սա, այսպիսի, դուք, այսքան
- 2) բոլոր, ոչինչ, ինչպես, մեկը
- 3) ուր, մյուս, նույնպիսի, նա
- 4) որոշ, ոչ մի, ամբողջ, ամեն ոք

69. Ո՞ր նախադասության մեջ ձևի պարագա կա:

- 1) Ասում են, թե միանգամից կյանքում ոչինչ չի կատարվում:
- 2) Փերիները սարի գլխին հավաքվեցին զիշերով:
- 3) Պիտի նրանց հոգու համար
Սոմեր վառեմ ոսկեղեղին:
- 4) Ես սիրում եմ նստել ամեն իրիկուն
Պատուիանիս առաջ երկար ժամեր...

70. Նախադասություններից քանիսո՞ւմ մակրայով արտահայտված պարագա կա:

1. Կարոտներս էլ վեր են կենում,
Խումբ-խումբ գնում, նստոտում են:
 2. Միշտ ինձ կիշեն,
Երբ մտնեն անտառ:
 3. Վաղոց է փախել աշխարհն իր հունից,
Վաղոց է խրտնել ինքն իր անունից:
 4. Ես գնամ նորից ինձ որոնելու
Ճրագով, մոմով, կայծակի լույսով:
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

71. Ո՞ր նախադասության մեջ կապային կառույցով արտահայտված պարագա կա:

- 1) Թող գեր մի օր ապրեի,
Բայց ապրեի ջրի պես:
- 2) Այնպիս են գալիս, այնպիս են գնում,
Որ դժվար է մարդ գլխի ընկնում՝
Բերածդ ինչ էր, տարածդ՝ ինչ:
- 3) Ել կածանը քեզ չի տանի
Աղոթարան սարը:
- 4) Իսկ երազները աչք էին փակում,
Երբ որ լուսաստղը աչքը բացում էր:

72. Տարբերակներից որո՞ւմ է սխալ նշված պարագայի տեսակը:

- 1) Թոշեի թրջված հավքի հետևից
Եվ չրոնեի մինչև իրիկուն: (Ժամանակի պարագա)
- 2) Քրիցս կարծես ծուխ է բարձրանում,
հնչո՞ւ է կորածն այսրան քաղցրանում: (Ապատակի պարագա)
- 3) Իմ ներբանները նվոս են հիմա,
Ու ես տիսրում եմ **չափից ավելի:** (Հավի պարագա)
- 4) Հրամայե՛ք, որ քարանամ
Եվ **ձեզ նման** բոլոր, բոլոր
Սերունդներին ընկերանամ: (Ճեփ պարագա)

73. Ընդգծվածներից ո՞րը դերքայական դարձված չէ (նախադասությունները կետադրված չեն):

- 1) **Սի ակնքարք չանցած** հիվանդը կարկառեց ձեռքերը և գրկեց աստվածուհու ծնկները:
- 2) Աղամը որ հեռվում կանգնած հափշտակված նայում էր Լիլիթին **սիրու առնելով** մոտեցավ նրան:
- 3) Գնաց լճափ, բափառեց պուրակներում **արայտելով ամեն թուփ ու մազան:**
- 4) Մինչեւ Աղամը շնչասպան վազում է **շուտով հասմելու գեղեցիկ քարերի ձորը:**

74. Նախադասություններից որո՞ւմ դերքայական դարձված չկա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Տիեզերքի ամենատես աչքից վատ արարքներդ ծածկելու համար չես կարող պատսպարվել ոչ ծովի անդունդներում ոչ լեռների խորին վիհերում:
- 2) Իմաստունը նորից իջավ մարդկանց մեջ ճշմարտություն պատգամելու աշխարհին:
- 3) Զօրուգիշեր երկար ճանապարհ կտրելով հոգնած հասավ նա Բուխարայի պարիսպներին:
- 4) Բանաստեղծը տեսավ թե ինչպես է ժողովուրդը գլուխ տալով ողջունում մեծատունին:

75. Նախադասություններից որո՞ւմ միջադաս դերքայական դարձված կա (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Նայում էր փողոցին պատշգամքի բարիքին կորնած և հանկարծ նկատեց մոտեցող կառքը:
- 2) Չիրուխլուից զարտուի ճանապարհով փախուստ տալով Կամսարյանը հապճեպ հասավ թիֆլիս:
- 3) Նա գրում էր երկար անշտապ մոռացած դեպի լուսաբաց թերքով խավարի մասին այլևս չսելով գիշերային ձայների արձագանքը:
- 4) Տղան կանգնում էր ժայռի գլխին պարսատիկը թափով պտտում և քարը զարկված ագռավի պես թպրտալով ընկնում էր ձորը:

76. Տրված նախադասության մեջ քանի՞ դերքայական դարձված կա (նախադասությունը կետադրված չէ):

Անակնկայի զալով մի պսի ընկրկում ենք բայց իսկույն ևեր կառչելով քարերից ու մացառներից ողի առնելով մղվում ենք առաջ երգելով ու կատակելով:

- 1) մեկ
- 2) երկու
- 3) երեք
- 4) չորս

77. Ընդգծված դերայական դարձվածն ի՞նչ պաշտոն է կատարում:

*Պատերից յուրաքանչյուրը բաժանվում էր չորս կամարամասի՝ հիմքական զույգ որմնասյուներով՝ **հաստատված ամուռ պատվանդանի վրա:***

- 1) ձևի պարագայի
- 2) որոշչի
- 3) պատճառի պարագայի
- 4) հիմունքի պարագայի

78. Ընդգծված դերայական դարձվածն ի՞նչ պաշտոն է կատարում:

***Հասնելով Քերպասարի ստորոտին՝** իշխանը դանդաղեցրեց արագ սլացող ծիերի ընթացքը:*

- 1) ձևի պարագայի
- 2) պատճառի պարագայի
- 3) ժամանակի պարագայի
- 4) նպատակի պարագայի

79. Ընդգծված դերայական դարձվածն ի՞նչ պաշտոն է կատարում:

*Նա պարտաճանաչ մարդ էր և զիտեր, որ իրավունք չունի **իր հոգու վայելրով տարվելու:***

- 1) որոշչի
- 2) հատկացուցչի
- 3) նպատակի պարագայի
- 4) հանգման անուղղակի խնդրի

80. Նախադասության ի՞նչ անդամ է դերայական դարձվածը:

Հարսանիքների ժամանակ նորելուկ ու մշանավոր աշուղների հետ մրցում էին ճակա տեղացիների մեջ հայտնի հորովել երգողները:

- 1) որոշիչ
- 2) ուղիղ խնդիր
- 3) ստորոգելի
- 4) ենթակա

81. Նախադասության ի՞նչ անդամ է դերայական դարձվածը:

Շիրվանզադեի քնավորության բացասական գծերից մեկը ուրիշ գրողների արժանիքները չճանաչելի էր:

- 1) պատճառի պարագա
- 2) որոշիչ
- 3) ենթակա
- 4) ստորոգելի

82. Նախադասության ի՞նչ անդամ է դերայական դարձվածը:

Նա իր զավակներին տարել էր Փարիզ և գրողի իր տաղանդը զմահատողների աջակցությամբ բարձրագույն կրթության տվել նրանց:

- 1) որոշիչ
- 2) հատկացուցիչ
- 3) հանգման անուղղակի խնդրի
- 4) հիմունքի պարագա

83. Նախադասության ի՞նչ անդամ է դերբայական դարձվածք:

Այս գործիքը Հայաստանի արվեստի օրերի առիրող Սոսկվա այցելածների խմբում էր:

- 1) հատկացուցիչ
- 2) հանգման անուղղակի խնդիր
- 3) ստորոգելի
- 4) որոշիչ

84. Նախադասության ի՞նչ անդամ է դերբայական դարձվածք:

Ուրիշն Զարյանը օր առ օր զրի էր առել վերջին քառասուն տարում մեր արվեստի մեծերից տեսածն ու լսածը:

- 1) ենթակա
- 2) ուղիղ խնդիր
- 3) որոշիչ
- 4) հատկացուցիչ

85. Նախադասության ի՞նչ անդամ է դերբայական դարձվածք:

Սևադա իշխանն իր ուրախությունը դստեր բոլոր իղձերը կատարելն էր համարում:

- 1) ենթակա
- 2) ստորոգելի
- 3) ուղիղ խնդիր
- 4) որոշիչ

86. Նախադասություններից քանիսո՞ւմ է դերբայական դարձվածքը կատարում ձևի պարագայի պաշտոն:

1. Դժվարությամբ հաղթահարելով վերջին մետրերը՝ լեռնագնացները ոտք դրին լեռան լանջին:
2. Բազմոցից վեր կենալով՝ հանդիսավոր քայլերով մոտեցավ սեղանին:
3. Հիվանդանոցից դուրս գրվելով՝ Վահանը պատրաստվեց գյուղ մեկնելու:
4. Մրտի ցավով հրաժշտ տալով հարազատներին՝ ուղևորվեց օդանավակայան:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) ոչ մեկում

87. Նախադասություններից քանիսո՞ւմ է դերբայական դարձվածքը կատարում ժամանակի պարագայի պաշտոն:

1. Վիրավոր գազանը, ահարկու մոնշյուններ արձակելով, զաղիթափ լանջով գլորվում էր դեպի ձորը:
2. Ամեն անգամ ճիշտ ժամանակին անհրաժեշտ տեղում հայտնվելով՝ երթեք անհաջողության չէր հանդիպում:
3. Մեղմ ժպտալով՝ մոտեցավ և խնդրեց ազատել սրահը:
4. Սիրանույշը լուր նայում էր հիվանդի դեմքին՝ ժամանակ առ ժամանակ թաշկինակով սրբելով արցունքները:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) ոչ մեկում

88. Ընդգծվածը նախադասության ի՞նչ անդամ է:

*Ամեն երեկո ծերութիւները նստում էին տաճիքներին և պատմում հին-հին **քաջերից**:*

- 1) անջատման անուղղակի խնդիր
- 2) ներգործող անուղղակի խնդիր
- 3) վերաբերության անուղղակի խնդիր
- 4) պատճառի պարագա

89. Ընդգծվածը նախադասության ի՞նչ անդամ է:

*Վայրի աղավնիմ՝ **կուրծքը վիրավոր**,*

Հնկել էր մենակ աղբյուրի եզրին:

- 1) բուն բացահայտիչ
- 2) հատկացուցիչ
- 3) որոշիչ
- 4) մասնական բացահայտիչ

90. Ընդգծվածը նախադասության ի՞նչ անդամ է:

*Սեր՝ **երեխաներիս** աչքը չէր հեռանում նրանցից. ուշիւշով դիտում էինք արագիլների ամեն մի շարժումը:*

- 1) մասնական բացահայտիչ
- 2) հատկացուցիչ
- 3) որոշիչ
- 4) բուն բացահայտիչ

91. Ընդգծվածը նախադասության ի՞նչ անդամ է (նախադասությունը կետադրված չէ):

*Սեր միտքը կիզող արեգակի առաջ հալզում է ցնդում **որպես անձրևի կաթիլ**:*

- 1) բուն բացահայտիչ
- 2) որոշիչ
- 3) ձևի պարագա
- 4) մասնական բացահայտիչ

92. Քացառական հոլովով դրված բառը նախադասության ի՞նչ անդամ է:

Եվ հառաշեցին լեռները ցալից,

Անեծք ժայթքեցին հրաբուխներով:

- 1) ներգործող անուղղակի խնդիր
- 2) անջատման անուղղակի խնդիր
- 3) պատճառի պարագա
- 4) վերաբերության անուղղակի խնդիր

93. Գործիական հոլովով դրված բառը նախադասության ի՞նչ անդամ է:

Համր քայլերով դարերմ են անցնում,

Արտոյտը երգում է իր զովքը զարնամ:

- 1) ժամանակի պարագա
- 2) ներգործող անուղղակի խնդիր
- 3) միասնության անուղղակի խնդիր
- 4) ձևի պարագա

94. Ընդգծված ածականը նախադասության ի՞նչ անդամ է:

*Հատակից քար ես հանում,
Մարտոր է այնքան,
Քարից բուրմունք ես առնում
Կարմրախայտ ձկան:*

- 1) որոշիչ
- 2) ձևի պարագա
- 3) ստորոգելի
- 4) ենթակա

95. Ի՞նչ պաշտոն է կատարում անորոշ դերբայր տրված նախադասության մեջ:

*Ես զնամ՝ նորից՝ ինձ որոշելու
Ծրագով, մոմով, կայծակի լույսով:*

- 1) որոշչի
- 2) հատկացուցչի
- 3) նպատակի պարագայի
- 4) հանգման անուղղակի խնդրի

96. Ի՞նչ պաշտոն է կատարում հարակատար դերբայր տրված նախադասության մեջ:

*Վհատ սուկումի տաճանքով կզաս,
Որ որոժածող բնակ չես զտնի:*

- 1) ենթակայի
- 2) հանգման խնդրի
- 3) ստորոգելի
- 4) ուղիղ խնդրի

97. Ի՞նչ պաշտոն է կատարում հարակատար դերբայր տրված նախադասության մեջ:

*Հոգմած նայում եմ ճամփաներին,
Սերմնացանները չդարձան տուն:*

- 1) ձևի պարագայի
- 2) ստորոգելի
- 3) որոշչի
- 4) պատճառի պարագայի

98. Ի՞նչ պաշտոն է կատարում ենթակայական դերբայր տրված նախադասության մեջ:

*Մեզ սիրողներին մենք մինչև անգամ
Չենք էլ կամ ենում քարի լույս ասել:*

- 1) ուղիղ խնդրի
- 2) վերաբերության անուղղակի խնդրի
- 3) հանգման անուղղակի խնդրի
- 4) հատկացուցչի

99. Ի՞նչ պաշտոն է կատարում Ենթակայական դերբայը տրված նախադասության մեջ:

Հայոց մշակութային գանձերի վրա եկող պատուհասները ոչ նորություն էին, ոչ էլ զարմանալի:

- 1) բացահայտչի
- 2) ստորոգելիի
- 3) որոշչի
- 4) ձևի պարագայի

100. Ենթակայական դերբայը ի՞նչ պաշտոնով հանդես գալ չի կարող:

- 1) բացահայտչի
- 2) որոշչի
- 3) ստորոգելիի
- 4) պարզ ստորոգյալի

101. Ո՞ր տարրերակում է նախադասության ընդգծված անդամի պաշտոնը սխալ նշված:

- 1) Երբ կհոգնես, կգազագես **աշխարհից**.
Դարձի՞ր ինձ մոտ, վերադարձի՞ր դու նորից: (*անջատման անուղղակի խնդիր*)
- 2) Ես ու դու էլ շղթայված ենք **իրարու**.
Կարուտավառ երազում ենք միշտ իրաք: (*հանգման անուղղակի խնդիր*)
- 3) Երկնքում անուրջ աստղեր կվառես,
Կլցնես հոգիս անուշ **երազով**: (*ներգործող անուղղակի խնդիր*)
- 4) Զմռան գիշերն է մեղմորեն ընկնում
Եվ մեծ քաղաքի **ոեմքը** մշուշում: (*ուղիղ խնդիր*)

102. Շարահյուսական վերլուծության տարրերակներից ո՞րն է սխալ:

Գևորգ իշխանը, տեսմելով Գոռին՝ որդուն, որը, գլուխը մի կոճղի հենած, անուշ քննով մրափում էր, կանգ առավ նրա զիսի վերևում:

- 1) **որդուն** - բուն բացահայտիչ
- 2) **զիսի** - ենթակա
- 3) **անուշ** – որոշիչ
- 4) **նրա** - հատկացուցիչ

103. Նախադասության նշված անդամներից ո՞րը չի կարող արտահայտվել գործիական հոլովով:

- 1) ձևի պարագան
- 2) ժամանակի պարագան
- 3) միջոցի անուղղակի խնդիրը
- 4) հանգման անուղղակի խնդիրը

104. Նախադասության ի՞նչ անդամ չի կարող լինել հարակատար դերբայը:

- 1) որոշիչ
- 2) ձևի պարագան
- 3) տեղի պարագան
- 4) ենթակա

105. Նախադասության նշված անդամներից ո՞րը կարող է արտահայտվել ենթակայական դերայով:

- 1) ձևի պարագան
- 2) ժամանակի պարագան
- 3) որոշիչը
- 4) պարզ ստորոգյալը

106. Պնդումներից ո՞րն է սխալ:

- 1) Հարակատար դերբայը կարող է կատարել ձևի և ժամանակի պարագայի պաշտոններ:
- 2) Որոշիչը կարող է արտահայտվել բոլոր անկախ դերբայներով:
- 3) Ենթակայական դերբայը կարող է ունենալ ուղիղ խնդիր լրացում:
- 4) Հատկացուցիչը չի կարող դրվել որոշյալ առումով:

107. Պնդումներից ո՞րն է սխալ:

- 1) Պարզ նախադասության բոլոր անդամները կարող են արտահայտվել երկրորդական (ստորադաս) նախադասությամբ:
- 2) Վերաբերության անուղղակի խնդիրը կարող է դրվել բացառական հոլովով:
- 3) Համակատար դերբայով կազմված դերբայական դարձվածը կատարում է ժամանակի պարագայի շարահյուսական պաշտոն:
- 4) Երկրորդական (ստորադաս) նախադասությունը գլխավորին (գերադասին) կարող է միանալ հարաբերական դերանունով:

108. Պնդումներից քանի՞ն են ճիշտ:

1. Որոշիչը կարող է արտահայտվել անձնական, ցուցական, որոշյալ, անորոշ դերանուններով:
 2. Բուն բացահայտիչը կարող է լինել միայն ենթակայի լրացում:
 3. Ուղիղ խնդիր երկրորդական նախադասությունը գլխավորին կապվում է միայն շաղկապների միջոցով:
 4. Ստորոգելին արտահայտվում է միայն գոյականով և ածականով:
- 1) մեկը
 - 2) երկուաը
 - 3) երեքը
 - 4) ոչ մեկը

109. Պնդումներից քանի՞ն են ճիշտ:

1. Հատկացուցիչը կարող է ստանալ ստացական հոդ:
 2. Ժխտական դերանունները կարող են ձևի պարագայի պաշտոն կատարել:
 3. Անորոշ դերբայը կարող է կատարել ժամանակի պարագայի պաշտոն:
 4. Ժխտական դերբայով կարող է կազմվել բաղադրյալ ստորոգյալ:
- 1) մեկը
 - 2) երկուաը
 - 3) երեքը
 - 4) ոչ մեկը

ԲԱԺԻՆ 3 ՍՏՈՐԱԴԱՍ (ԵՐԿՐՈՐԴԱԿԱՆ) ՆԱԽԱԴԱՍՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ի՞նչ բնույթի է տրված բարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասությունը:

Այսօր էլ, երբ լսում եմ մրա երգը, իմ աշքի առաջ կանգնում է մա՛ իր թախծուտ ղեմքով, միշտ ստեղծագործական ապրումներով լի, միշտ երգով հմայված իր սրտով:

- 1) ժամանակի պարագա
- 2) մասնավորող բացահայտիչ
- 3) ենթակա
- 4) որոշիչ

2. Ի՞նչ բնույթի է տրված բարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասությունը:

Արտառոց է ինձ համար, երբ դրամատիկական երկը համեմատում եմ բամբակի, իսկ ներկայացումը՝ նրանից ստացված հազուստի հետ:

- 1) ժամանակի պարագա
- 2) ստորոգելի
- 3) ենթակա
- 4) պայմանի պարագա

3. Ի՞նչ բնույթի է տրված բարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասությունը:

Հնկերներիս հուսահատ կանչի արձագանքը մինչև օրս չարչրկում է ինձ, ինչպես չհանգած խղճի խայթը է խոցոտում ընտանեթող հոր սիրտը:

- 1) ժամանակի պարագա
- 2) չափ ու քանակի պարագա
- 3) ձևի պարագա
- 4) որոշիչ

4. Ի՞նչ բնույթի է տրված բարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասությունը:

Հանձնիր իշխանին, ինչ որ զրի ես առել այդ վաղեմի անցքերի մասին:

- 1) ենթակա
- 2) ստորոգելի
- 3) ուղիղ խնդիր
- 4) որոշիչ

5. Ի՞նչ բնույթի է տրված բարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասությունը:

Նրանք՝ այդ մարդիկ, որ աշխարհի չորս ծագերից եկել հավաքվել էին, սկսուի հետևեին ցլամարտության հանդեսներին:

- 1) բացահայտիչ
- 2) որոշիչ
- 3) ենթակա
- 4) ուղիղ խնդիր

6. Տրված բարդ ստորադասական նախադասություններից որի՞ երկրորդական (ստորադաս) նախադասությունն է ենթակա:

- 1) Ով քաղաքից էր հեռացել, Նա բողել էր մշուշը ծեր:
- 2) Ու գիտեմ հիմա՝ մի սովորական Աղջիկ էիր դու՝ նման ամենքին:
- 3) Մի՞թե արժանավորը նա չէր, ով քեզ փրկեց կործանումից:
- 4) Չեմ կարող մոռանալ, թե ինչպիսի տիսոր ու աղերսոր աչքերով էր մեզ նայում վիրավոր եղնիկը:

7. Նախադասություններից քանիսու՞մ խնդիր երկրորդական (ստորադաս) նախադասություն կա:

1. Եկավ նա, ում բոլորը կարուսով սպասում էին:
2. Օգնի՛ր նրան, ով կարիքն ունի քո օգնության:
3. Հանկարծ հիշեցի փոքրիկ տղային, որը փայլում էր իր արտասովոր ընդունակություններով:
4. Նրանք, ովքեր պայքարում են սփյուռքում հայի հայ մնալու համար, արժանի են դրվատանքի:

 - 1) բոլորում
 - 2) երեքում
 - 3) երկուսում
 - 4) մեկում

8. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ համապատասխանում բարդ ստորադասական նախադասությունները նշող թվերն ու նրանց երկրորդական նախադասության բնույթը նշող տառերը:

1. Հենց որ գրիչ եմ վերցնում ձեռքս, աչքերս շաղվում են:
2. Ասես մարդու չէր, որ երգում էր այդ հորովելը, այլ մայր բնությունը:
3. Սեր հորովելներն ամենահնադարյան երգերից են, որ առհասարակ ստեղծել է մարդը:
4. Այդ փաստաբուղը հենց այն էր, ինչ գրվել էր երկու հարյուր տարի առաջ՝ դեռևս պարսից իշխանության օրոք:

ա. ենթակա
բ. ստորոգելի
գ. որոշիչ
դ. ժամանակի պարագա

- 1) 1-զ, 2-ա, 3-ք, 4-դ
- 2) 1-դ, 2-ա, 3-զ, 4-ք
- 3) 1-զ, 2-ք, 3-դ, 4-ա
- 4) 1-դ, 2-զ, 3-ք, 4-ա

9. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ համապատասխանում բարդ ստորադասական նախադասությունները նշող թվերն ու նրանց երկրորդական նախադասության բնույթը նշող տառերը:

1. Այն, ինչ արել եմ մինչև հիմա, նախաբանն է մի մեծ գործի:
2. Նրան շատ էր վշտացրել այդ տարի մեր լեռներում եղած ահեղ երկրաշարժը, որ հուշարձաններ էր կրոծանել:
3. Սի օր գնացի մեր պետական պատմական թանգարան, որ պրոֆեսոր Լիսիցյանին տեսնեմ:
4. Զորյանի կինը՝ տիկին Սաքենիկը, շատ սիրալիր ինձ ներս հրավիրեց, թես ինձ չէր ճանաչում:

ա. նախատակի պարագա
բ. ենթակա
գ. գիշման պարագա
դ. որոշիչ

- 1) 1-դ, 2-զ, 3-ա, 4-ք
- 2) 1-ք, 2-դ, 3-ա, 4-զ
- 3) 1-ք, 2-զ, 3-դ, 4-ա
- 4) 1-զ, 2-ա, 3-ք, 4-դ

10. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ համապատասխանում բարդ ստորադասական նախադասությունները նշող թվերն ու նրանց երկրորդական նախադասության բնույթը նշող տառերը:

1. Մակրերի իշխելու տենչանքը տիտանական ընդգրկումներ ունի, որոնք սովորական մահկանացուի չափերով չեն չափվում:
 2. Սուսերամարտը Խտալիայում հարզի է այնքան, որքան մեզանում ֆուտբոլն է տարածված:
 3. Նրա դերակատարումները կմնան անկրկնելի, մինչև մեր բեմերում հայտնվի մի նոր Զարիֆյան :
 4. Ես չեմ հանդուրժում, եթե որևէ մեկը հետապնդում է ինձ:
 - ա. ժամանակի պարագա
 - բ. չափ ու քանակի պարագա
 - գ. որոշիչ
 - դ. ուղիղ խնդիր
- 1) 1-գ, 2-ք, 3-ա, 4-դ
 - 2) 1-դ, 2-գ, 3-ք, 4-ա
 - 3) 1-ք, 2-դ, 3-գ, 4-ա
 - 4) 1-գ, 2-ք, 3-դ, 4-ա

11. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ համապատասխանում բարդ ստորադասական նախադասությունները նշող թվերն ու նրանց երկրորդական նախադասության բնույթը նշող տառերը:

1. Չնայած լավ գիտակցում էր իր բացառիկ արժանիքները, երբեք չհպարտացավ դրանցով:
 2. Ես չեմ սպասում, իշխան, որ լու պիտի կշտամբես ինձ դաշինք կազմելու համար:
 3. Վրաց թագավորը դիտմամբ ուշացել էր Գանձակում, որ մեր թագավորի հետ միասին նույն օրը մտնի Գարդման:
 4. Երկրում մի անկյուն չկար, որ ենթարկված չիներ հրեշավոր ավերածության:
- ա. հանգման անուղղակի խնդիր
 - բ. գիշման պարագա
 - գ. որոշիչ
 - դ. նպատակի պարագա
- 1) 1-ք, 2-դ, 3-ա, 4-գ
 - 2) 1-դ, 2-ք, 3-գ, 4-ա
 - 3) 1-ք, 2-ա, 3-դ, 4-գ
 - 4) 1-ա, 2-գ, 3-ք, 4-դ

12. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ համապատասխանում բարդ ստորադասական նախադասությունները նշող թվերն ու նրանց երկրորդական նախադասության բնույթը նշող տառերը:

1. Նախկին կասկածները հանկարծ տեղի տվին մի վստահության, որ կարծես հենց նույն րոպեին ծնվեց յուր մեջ դեպի բարի դայակը:
 2. Առաջին փորձներից արդեն երեսաց, որ բատերական աշխարհ է մուտք գործել արվեստի մի իսկական նվիրյալ:
 3. Մեր զորքերից մի քանի գունդ շուտով պիտի հասցնենք թագավորին, քանզի ներքին գավառներում ապստամբություն է ծագել:
 4. Պահապանները, ի նշան խոհեմության, նիզակները խոնարհեցին այնքան, որ դրանց սուր ծայրերը կպան գետնին:
- ա. որոշիչ
 - բ. չափ ու քանակի պարագա
 - գ. պատճառի պարագա
 - դ. ենթակա
- 1) 1-ա, 2-բ, 3-դ, 4-գ
 - 2) 1-բ, 2-ա, 3-զ, 4-դ
 - 3) 1-զ, 2-ա, 3-դ, 4-բ
 - 4) 1-ա, 2-դ, 3-զ, 4-բ

13. Բարդ ստորադասական նախադասություններից քանիսի^o երկրորդական նախադասության բնույթն է ճիշտ նշված:

1. Արքայորդին ամենագեղեցիկն էր այն երիտասարդներից, ովքեր երբեւ խնդրել են իմ դստեր ձեռքը: (*որոշիչ*)
 2. Գրաշարներին պարտադրվել էր, որ անմիջապես սկսեն նրա նոր գործի շարվածքը: (*ուղիղ խնդիր*)
 3. Չնայած մեր «հանճարեղ հայր» Ստալինը դժոխքում էր արդեն, բայց մեր արյան մեջ մտած սարսափը չէր լրում մեզ: (*զիջման պարագա*)
 4. Մորդ դուր չէր եկել այն, որ իշխանը ընտրության իրավունքը թողել էր քո կամքին: (*ստորոգելի*)
- 1) մեկի
 - 2) երկուսի
 - 3) երեքի
 - 4) չորսի

14. Քարդ ստորադասական նախադասություններից քանիսի՝ երկրորդական նախադասության բնույթն է ճիշտ նշված:

1. Փռուն, գեղեցիկ բառերի սիրահար հեղինակն ինձ իշխեցնում է գավառացի հարուստ կնոջ, որ գեղեցկության համար բոլոր մատները զարդարում է մատանիներով: (*ուղիղ խնդիր*)
2. Անդրանիկ Ծառուկյանին շատ լավ հայտնի էր, որ թշնամի բանակների բաժանված հայերն իրար հղողուում են հանուն իրենց շահերի: (*Ենթակա*)
3. Տիուր հուշերի հորձանքը վանելու համար Թումանյանը խոսք բացեց այն հերոսական կրիվների մասին, որ մի ժամանակ վարել էր Լոռու գյուղացիությունը պարսիկների ու լեզգիների դեմ: (*Վերաբերության անուղղակի խնդիր*)
4. Այն օրերին, երբ Թիֆլիսի բոլոր հայ տղամարդկանց լցրին բանտերն ու աքսորեցին, ձերբակալվածների հարազատները հանգիստ չէին տալիս Թումանյանին: (*որոշիչ*)

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

15. Քարդ ստորադասական նախադասություններից քանիսի՝ երկրորդական նախադասության բնույթն է ճիշտ նշված:

1. Որքան էլ մեծ վստահություն ուներ բերդակալի հանդեպ, թագուհին այնուամենայնիվ կարգադրել էր նրան բանալիները դոյակ բերել: (*զիջման պարագա*)
2. Դայակի շուրբերից լսելով այն, ինչ որ ինքն արդեն ստույգ իմացել էր, տիրուհին կրկին անձնատուր եղավ տիսուր խորհրդածությունների: (*ուղիղ խնդիր*)
3. Ժամանակի հշխանությունը չէր արտոնել, որ ակադեմիայի դահլիճում նշվի նախկին դաշնակցականի հոբելյանը: (*Ենթակա*)
4. Մտաբերո՞ւմ ես այն օրը, երբ դու և մեծ իշխանուհին վերադարձաք Խաչենից: (*որոշիչ*)

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

16. Քարդ ստորադասական նախադասություններից քանիսի՝ երկրորդական նախադասության բնույթն է ճիշտ նշված:

1. Զեռքի այդ շարժումը նշան էր, որ ստորոտում գտնվողներն սկսեին վերելքը: (*հասուկացուցիչ*)
2. Գրեթե չէի հավատում, որ երբեմնի վտիս ու փխրուն այդ աղջնակը այդքան շնորհալի մի դերասանուիի է դարձել: (*ուղիղ խնդիր*)
3. Յավալի է, որ այդ տաղանդավոր դերասանը այդպես էլ շբացահայտեց իր ստեղծագործական կարողությունն ամրողությամբ: (*Ենթակա*)
4. Իշխանը իիշեց այն երանելի օրը, երբ ինքն առաջին անգամ ոտք դրեց այդ տան շեմին: (*որոշիչ*)

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

17. Քարդ ստորադասական նախադասություններից քանիսի՝ երկրորդական նախադասության բնույթը է ճիշտ նշված:

1. Պատմաբան այդ տիկնոջը զարմացրեց այն, որ կրոնների վերաբերյալ այդքան խոր ու հիմնավոր գիտելիքներ ունեմ: (*ուղիղ խնդիր*)
 2. Սուպել արդարացի կլիներ, եթե ներկայի փոքրիկ վշտերը մեղմացնեինք անցյալի քաղցր հիշողություններով: (*պայմանի պարագա*)
 3. Հաստատվեց ծովափնյա մի փոքրիկ քաղաքում, որտեղ երիտասարդ տարիներին ուսուցչություն էր արել հայրը: (*տեղի պարագա*)
 4. Նպատակն այն էր, որ այդ ուղևորության ընթացքում այցելեմ նաև օդեսացի ընկերուիուս: (*ստորոգելի*)
- 1) մեկի
 - 2) երկուսի
 - 3) երեքի
 - 4) ոչ մեկի

18. Ո՞ր տարրերակում է քարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասության բնույթը սխալ նշված:

- 1) Նա շատ էր տիրում, որ հնարավորություն չուներ մշտապես բնակվելու բնության այդ խաղաղ անկյունում: (*պատճառի պարագա*)
- 2) Նահապես քուչակի քերպությունը ապացուցում է, որ մեր ժողովուրդն ընդունակ է կենսուրախության ու մեծ թոփքների: (*ուղիղ խնդիր*)
- 3) Եվ կրկին հիշողության հեռավոր ծալքերում արթնացավ նա, ումից բաժանվել էր նա պատանության տարիներին: (*անջատման անուղղակի խնդիր*)
- 4) Նրանք ծանոթացան այն օրը, երբ Աստոիկը կայարան էր գնացել՝ ամուսնուն դիմավորելու: (*որոշիչ*)

19. Ո՞ր տարրերակում է քարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասության բնույթը սխալ նշված:

- 1) Գրում էր դժվարությամբ, կարծես գրչի ճռնչյունով փորագրում էր պղնձի վրա: (ձևի պարագա)
- 2) Վայ նրան, ով արվեստի մեջ ընտրում է թույլ դիմադրության ճանապարհը: (հանգման անուղղակի խնդիր)
- 3) Կատարվեց այն, ինչին սպասում էին արդեն մի քանի օր: (հանգման անուղղակի խնդիր)
- 4) Հայտատանում գրագետ մարդ շմնաց, որ կարդացած չլիներ այդ ոգեշունչ հոդվածը: (որոշիչ)

20. Ո՞ր տարրերակում է քարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասության բնույթը սխալ նշված:

- 1) Սարյանը, թեև ծնվել է Ուսասատանում, ծնողների կողմից հայրենասիրական ոգով է դաստիարակվել: (*զիշման պարագա*)
- 2) Ինչ որ ապրել էր սիրիյան հեռավոր աքսորավայրում, հիշում էր ամենայն մանրամասնությամբ: (*ենթակա*)
- 3) Օ՛, թագուհիս, մի՞թե քո սիրելի դայակը ծերացել է այնքան, որ այլև ոչ մի քանի պիտանի չէ: (*չափի պարագա*)
- 4) Հայտնիր ինձ՝ ինչ է խանգարում արքայորդու ամուսնությանը իշխան Սևադայի դստեր հետ: (*ուղիղ խնդիր*)

21. Ո՞ր տարրերակում է բարդ ստորադասական նախադասության երկրորդական (ստորադաս) նախադասության բնույթը պիտի նշված:

- 1) Նա սկսեց յուր հաղթական արշավանքները, նախքան թշնամին կհարձակվեր: (*Ժամանակի պարագա*)
- 2) Իշխանն այլևս չի պարծենա, որ իր դուստրն է հայոց արքունիքի միակ զարդը: (*Վերաբերության անուղղակի խնդիր*)
- 3) Մտաբերում եմ այն երջանիկ վայրկյանը, երբ առաջին անգամ ներկայացա թագավորին: (*Որոշիչ*)
- 4) Այդ իշխաններից շատերը հակառակ էին, որ Աշոտ Երկարը ամուսնանար քեզ հետ, թագուհին: (*հանգման անուղղակի խնդիր*)

ԲԱԺԻՆ 4 ԽՆԴՐԱՌՈՒԹՅՈՒՆ, ՀԱՍՏԱՎՆՈՒԹՅՈՒՆ, ԾԱՐԱԴԱՍՈՒԹՅՈՒՆ

1. Նախադասություններից քանիսո՞ւմ են ընդգծված անդամները կապակցվել խնդրառությամբ:

1. Լուսաբարձր սպասումի մեջ ինչ-որ **խոռվը էր պատել** Մարտանին:
2. **Սիրում եմ** աչքերիդ **տիսրությունը** խորին:
3. Այդ վայրկյանին մտքումս **անիծեցի** երջանիկ **երգչուհուն**:
4. **Լունին հայտնեցի** Լուիզայի ուղևորության մոտալուտ ժամանակը:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

2. **Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) Հուզմունքով մտանք վանքի ներքին բաժինը:
- 2) Նա տեր չէր կանգնում իր սեփականությանը. կարծես հյուր լիներ:
- 3) Նրա վտիտ մարմինը ցնցվում էր ընդհատ ու խզված շնչառությունից:
- 4) Դուան շեմում անշարժ կանգնած՝ նայում եմ մորս գունատ դեմքին:

3. **Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) Գայանե մորաքույրս, արցունքն աչքերին, լսում էր բժշկի բացատրությունները:
- 2) Երիտասարդը սիրում է հաճախանալ ծովի ավում:
- 3) Զնայած չափազանց թույլ լինելուն՝ մայրս դանդաղ վեր կացավ անկողնուց:
- 4) Հանկարծ կանգ առա՝ նրա հետ խոսելու անդիմադրելի ցանկությամբ համակված:

4. **Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) Սեր հայացքներն իրար հանդիպեցին, և ես նրա աչքերում ժպիտ տեսա:
- 2) Լուսնյակ գիշերներին հովը սառնություն էր բերում ցերեկվա շոգից խանձված դաշտերին:
- 3) Եթե բարձրանար ամպի վրա, Լառ-Մարգարը սարերի հետևից պահված իրենց գյուղը կտեսներ:
- 4) Սի անգամ Մարգարը ինձ մոտ խոսեց օտարության մեջ գտնվող որդուց:

5. **Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) Անգերը թռչում են բներից և ահարկու պտույտներ անում բերդի կատարում:
- 2) Սի պառավ շինական ձեռնափայտով ավագի վրա նշաններ էր գծում, նշանների հետ փորփրում գլխով անցածը:
- 3) Ես երեք չեմ մոռանա այդ լուսնյակ գիշերը լեռնային մի գյուղում:
- 4) Աշխարհի շար ու բարուց անտեղյակ, միամիտ երեխաներ էին:

6. **Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:**

- 1) Երբ գետը վարարում է, կոճղեր է իրեն բերանն առնում, գազազած բաշը մեկ այս ափին տալիս, մեկ՝ այն:
- 2) Այդ գարնանը ձյունը դժվար հալվեց.գյուղի մի մասը դեռ ծածկված էր ձյունով:
- 3) Բոլոր իրերն իրենց կարծ ու գորշ պատմությունն ունեին, բացի ծաղկամանից:
- 4) Երկիարկանի տան կողքին մշուշի միջից ցցվում էին բարձր սյուները:

7. Ո՞ր նախադասության մեջ խնդրառության սխալ կա:

- 1) -Ես դեռ Զեր փաստաթղթերի հետ չեմ ծանոթացել, եկեք վաղը,- ասաց տնօրենը:
- 2) Սրտով խաղաղ եմ ես հիմա ու խոհերով հստակ, մարուր:
- 3) Նա միանգամայն անվարժ էր մարդկանց շողոքորթելու արհեստում:
- 4) Ես կխորհեմ ձեր ասածների մասին և կանեմ անհրաժեշտը:

8. Նախադասություններից քանիսո՞ւմ խնդրառության սխալ կա:

1. Երբ բորիկ ոտքերով քայլում էր առվի կողքով, բահով ճումերն առվից դեն էր զցում:
2. Անտառն աստիճանաբար խտանում էր, և հանդիպում էինք հաստարուն ծառերի:
3. Գիշերվա ցողը անձրևի նման թափվում էր ձիու վրա, ին վրա:
4. Արահետը վերջացավ և անտառի խորքում խառնվեց ավելի լայն ու փափուկ ճանապարհի:

 - 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

9. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Կա և՛ բախիծ այդ երգի մեջ, կարծես մեկը մոլորվել է խոր ձորերում և տխուր հեկեկում է, կա և՛ ջինչ ուրախություն, երբ լեռների վրա ծագում է արևը, վերջապես կա և կարոտի հնչյուններ՝ վերադարձի և վերջին հույսի:
- 2) Նրա ելույթից հետո ժողովուրդը մի պահ քարացած մնաց, ապա հանկարծ զարթնեց որոտընդոստ ծափերի մի տեղատարափով:
- 3) Արաբական Միացյալ Էմիրությունները կազմավորվել է 1971 թ. դեկտեմբերին և գտնվում է Պարսից ծոցի հարավային ափերին:
- 4) Ժումանյանին՝ որպես հյուրընկալ տաճտիրոջ ու անգույքական սեղանակցի, շատերն են ճանաչում, բայց երևի ոչ բոլորը գիտեն խաշի հայտնի պատմությունը:

10. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Մերձալպյան և ալպյան գոտիներում մի քանի տեսակի թռչուններ կա՝ արծիվ, անգո, լեռնային հնդկահավ և այլն:
- 2) Իր մակերևույթի ինքնատիպ ձևով և հարուստ բուսականությամբ աշքի է ընկնում Ալպերը:
- 3) Պեղումների ժամանակ գտնվել են բազալտ գեղեցիկ սկահակներ, որ զարմացնում են քարի մշակման տեխնիկայով:
- 4) Հայկական գրանիտը՝ որպես բարձրորակ նյութ, լայն կիրառություն ունի քանդակագործության մեջ:

11. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Նրա բազմաթիվ հորերից բխող նավթը՝ խեղդում, և գործարանի ծովիսը կուրացնում էր նրանց աշքերը:
- 2) Շիրվանզադեի պարթե հասակը, հպարտ կեցվածքը այդ վայրկյանին մի տեսակ անշուր թվաց:
- 3) Սի կողմում կանգնած էր մեռնողի կինն աղջկա հետ, մյուս կողմում՝ որդիները:
- 4) Ամեն ինչ փոխվում ու նորոգվում էր տեսդագին թափով:

12. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Ալիմյանին՝ որպես քաղաքի առաջին միլիոնատեր, սանձարձակ ծաղրում էին, զրայարտում, սակայն միայն հետևից:
- 2) Ամենք լայիս էինք և արտավախառն ծայներով պատմում մեռնողի տանջանքների մասին:
- 3) Ո՞չ Սմբատը, ո՞չ մյուս որդիները իրավունք չունեին իրենց բաժին ժառանգությանը տիրանալու, եթե չկատարեին հոր պատվիրանները:
- 4) Տան ընդարձակ բակում խոնվել էր խեղճերի ահազին բազություն:

13. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Թող իմ մասին քո ունեցած որոշ հիշողություններ չխամբեցնեն ուրախությունը:
- 2) Ինձ է հասնում այն ծովայինների երգը, որոնք պատրաստվում են ափ հանել իրենց նավակները:
- 3) Մեր նկարների մի մասը մրցույթում հաղթող ճանաչվելուց հետո ուղարկվեցին Պրահա:
- 4) Ողջ օյուղն անհամբերությամբ սպասում էր նրանց, ովքեր հաղթանակով էին վերադառնում պատերազմից:

14. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Նոյից հետո հավատացյալ ընտանիքներով առավել փայլում են Աքրահամ, Իսահակ և Հակոբ նահապետները:
- 2) Քեզ հայտնի է մարդկային ոգու զարմանահրաշ պահանջները:
- 3) Ամեն ինչ նրա թույլ բնավորությունից էր, և անհրաժեշտ էր, որ միշտ ինչ-որ մեկը հսկեր նրան:
- 4) Եթե կարողանայիր մի փոքր թափանցել հոգուս խորքերը, ապա կտեսնեիր, որ նմանօրինակ վարվեցողությունն ինձ հատուկ չէ:

15. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Կարծում եմ, որ մեր կյանքում մշտապես միանում են ճակատագիրն ու կամքի ազատությունը:
- 2) Իսկ դա էլ հենց առողջության և ուժի նշաններն են՝ բնության ամենաբնորոշ պարզեցները:
- 3) Իմ ունեցածի մի զգալի մասը կորավ այդ գիշեր, երբ ես այդքան անփույր էի ոչ միայն իմ անցյալի ու ներկայի, այլև ապագայի նկատմամբ:
- 4) Եվ բնական էր, որ նրա մտքերը, ցանկություններն ու ձգտումները կենտրոնանում էին միայն մի մտքի շուրջ:

16. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Ամերիկայի Սիացյալ Նահանգները առայժմ չեն ընդունել հայոց ցեղասպանությունը հաստատող որևէ փաստաթուղթ:
- 2) Բայերը գործողություն ցույց տվող բառերն են:
- 3) Շումերը հասակակից է հային:
- 4) Կայսերը մեծ շոքով դիմավորեցին:

17. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ կա:

- 1) Մուրն ընկնելուն պես եկան Աշոտն ու Օհան ապերը, պատմեցին օրվա ամենավառ դեպքերը:
- 2) Ես չի կարողանում սրափել պատահածից հետո, սակայն ծիապանի խոսքերը ինձ անսպասելիորեն զգաստացրեց և մղեց նոր ձեռնարկումների:
- 3) Մեր հայացքներն իրար հանդիպեցին, փոքրիկ աղջիկն ինչ-որ բաներ ասաց, իսկ բազմությունը լուս լսում էր:
- 4) Զյան վրա մնացել էին վաղ առավոտյան խփած գայլի հետքերն ու արյան շիթեր:

18. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Երբ մենք բարձրանում էինք, Ալպերը ծածկված էին ձյան հաստ շերտով:
- 2) Մեծ ջանքեր պահանջվեց, մինչև հիշողությանս մեջ հայտնվեցին ծանոթ մեղեդիների փշրանքները:
- 3) Դժվարությամբ, բայց հնարավոր դարձան արգելվների վերացումը:
- 4) Վասակի դաշտանության հիմնահարցը վիճելի է թե՛ պատմագրության, թե՛ բանասիրության մեջ:

19. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Որպեսզի ժխտվեն այդ անուղղակի ազդեցությունների գոյությունը, պիտի կարողանաս ժխտել ճակատագիրը:
- 2) Հայրեններն անցնելիս անհրաժեշտ են խոսել բառապաշարի, պատկերավորման միջոցների և տաղաչափության նախին:
- 3) Ստեղծագործությունը ներկայացնելիս պետք են վերլուծել և ըստ բովանդակության, և ըստ արվեստի:
- 4) Դրանք կազմված են գլխավորապես չորս տողից:

20. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Կարելի է ներկայացնել նրա հոդվածը, որ կա զարմանալի բանաստեղծական տողեր:
- 2) Այսօր կորոշենք՝ ինչպես պիտի ընթանա մեր հետագա գործողությունները:
- 3) Որպես բարոյական դաս՝ գրողի ստեղծագործություններում իշխատակվում է հայ հայրենասեր փափկասուն տիկնայք:
- 4) Նա բացեց իր աշխարհը հույզերի, որ իրենից հետո կոչվեց և կոչվելու է իր իսկ անունով՝ որոյանական:

21. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Նրանց միշտ, ամենուրեք և հաստատապես պետք է պատճառն ու նպատակը:
- 2) Լույսի շուրջը պտտվում են թիթեռնիկները, իսկ բաց պատուհաններից ինձ են հասնում ծաղիկների բուրմունքը:
- 3) Ազատ հայրենիք և ազատ մարդ. ահա Նալբանդյանի գաղափարախոսությունը:
- 4) Կան մարդու գոյության իմաստը քննող բազում հետաքրքիր ֆիլմեր, որոնցից առանձնանում են «Կորուսյալները»:

22. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Ժողովուրդը ցնծագին բացականչություններով դիմավորեց իրենց սպարապետին:
- 2) Որպես մարդ նա հարգված էր, բայց որպես քժիշկ նրան այնքան էլ չէին սիրում:
- 3) Ուղեգրի արժեքի մեջ մտնում է նաև նախաճաշն ու ընթրիքը:
- 4) Մարիամը դատեր ու քոռների հետ հաճախ էր լինում թատրոնի սրճարանում:

23. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Ես չեմ պատրաստվում հրաժարվել իմ ընկերներից, չնայած ամեն ինչ ինձ համար արդեն վերջացել են:
- 2) Հիշողությունն ինձ խանգարում է ընդունելու ուրիշ մեկին:
- 3) Ամեն մեկը չեն կարողանա այդպես արտահայտել իրենց մտքերը:
- 4) Բոլոր տները և հիվանդանոցը ներկված էր սպասակ գույնով և զարմացնում էր իրենց մաքրությամբ:

24. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Գործակալությունում ընդունվում է տոմսերի նախնական պատվերներ:
- 2) Երբ ընկա, ակնոցներս կոտրվեց:
- 3) Ստուգումներին կմասնակցեն կամ Հակոբը, կամ Եվան:
- 4) Ամեն մի ծառ ու թուփ ծանոք էր Դիլան դայուն:

25. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Վերջին ամիսներին նրա մազերը ծածկվեց ճերմակով, և ներքին մի ձայն հանդարտության կոչ արեց:
- 2) Քո հոգու մեջ եղած ամեն լավ բան իր արտացոլումը կգտնի իմ բանաստեղծություններում:
- 3) Աշխատողների կեսը անհասկանալի պատճառներով չէին ներկայացել անսպասելի հրավիրված ժողովին:
- 4) Նրանք համոզված էին, որ իրենց գեղեցիկ հաղթանակից ոչ ոք ոչինչ չեն կորցնի:

26. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Որպեսզի հասկանալի լինի ասածներս, հարկավոր է համբերատար լսել:
- 2) Երգիչների կեսը ներկայացան բավականին ուշացումով և տեղիք տվեցին հանդիսականների արդարացված դժողոհության:
- 3) Ծաղկեների զգիշից բույրը դեռ երկար կխենթացներ նրանց, եթե չփակեին պատուհանները:
- 4) Ինձ՝ որպես լավագույն ասմունքող, հրավիրեցին մասնակցելու տոնական համերգին:

27. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Մեզ անհրաժեշտ էին բոլոր հանգամանքների և բոլոր մանրամասների ստուգումների արդյունքը:
- 2) - Մեզ՝ իբրև ճշտապահ ծառայողներ, ուշ թե շուտ կնկատեն և կխրախուսեն, -հուսադրում էր գևորգը հավաքվածներին:
- 3) Մտատաճուրյունների վերջին հյուլեն միանգամից և ամբողջությամբ անհետացավ նրա հոգուց:
- 4) Իմ բոլոր մտքերն ու հույզերը դարձել են մի միացյալ ցանկություն, և ես այլ բանի մասին չեմ կարողանում մտածել:

28. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Բայց քո տարակուսանքն ու պոռթկումն այնքան բնական էր, որ ես ամեննին չփորձեցի քեզ հանգստացնել:
- 2) Տերյանի պոեզիան հեղեղված են մենության, քախծի տրամադրություններով:
- 3) Շաբաթ օրերը այնտեղ ահազին մարդ է հավաքվում, հանդիսավոր պարեր է լինում, և յուրաքանչյուրն իր պարընկերոջն է փնտրում:
- 4) Պատմվածքները ներկայացված են համապատասխան ժողովածուների շրջանակներում:

29. Ո՞ր նախադասության մեջ համաձայնության սխալ չկա:

- 1) Այս շարքի բանաստեղծությունները հայրենասիրական դաստիարակության լավագույն օրինակն է:
- 2) Թե ինչ կխոսեն մարդիկ, ինչ հետևություններ կանեն, ինձ բոլորովին չեն հետաքրքրում:
- 3) Բազում սայթաքումներից ու կորուստներից հետո ես վերջապես հասկացա, որ ամեն ինչից չեմ, որ ես պատրաստ եմ հրաժարվելու:
- 4) Իմ օրերը հոսում են վերին աստիճանի միապաղադար ու ձանձրալի:

30. Նախադասություններից քանիսո՞ւմ համաձայնության սխալ կա:

1. Հանքային ջրերի մի մասը երկրի ներքին ջերմության շնորհիվ շատ տաք է:
2. Ամեն ինչ՝ բույսերը, բռնունները, մարդը, կազմում են կենդանի բնությունը:
3. Բարելունում կավից պատրաստվում էր ամանեղեն, ջրաղացքարեր, սեղաններ:
4. Օշականում կատարվող թարգմանչաց տոնի արարողությանը մասնակցում է ողջ ժողովուրդը:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

31. Ո՞ր նախադասության մեջ շարադասական սխալ կա:

- 1) Սրնաձորում սկսվեց անհավասար մի կորիվ մարդու և զազանի միջև:
- 2) Աղմուկից դրդաց անտառը. դեղին տերևներից ցորի խոշոր կաթիլները մետաղի ծանրությանը ընկան խազալի վրա:
- 3) Միանգամայն անսպասելի կերպով ձորի կողմից քաղաք մտան չորս ձիավորներ:
- 4) Ապա կրացավ, դժվարությամբ շալակեց չորսացած ցողունների կապը և հոգնած ոտքերը հուշիկ ծերունու քայլերով փոխեց դեպի այգու դուռը:

32. Ո՞ր նախադասության մեջ շարադասական սխալ կա:

- 1) Եթե վերջին հնչյունները բրթուալով մարեցին գերեզմանային լուրյան մեջ, հանդարտ արտիստը հեռացավ բեմից:
- 2) Ամեն ոք շտապում էր դեպի կուլիսներ՝ անձամբ սեղմելու երիտասարդ հանճարի ձեռքը:
- 3) Որքան այդ հնչյունները դյուրիչ էին, այնքան գեղեցիկ ու հնայիշ էր ինքը՝ Անտոնիո Բոնվինին:
- 4) Նրա բարեկազմ հասակը, հրացայտ աչքերը, դեմքը արևառ, ճակատը հանճարեղ մի սքանչելի ներդաշնակություն էին կազմում նրա ջուրակի մոգական հնչյունների հետ:

33. Ո՞ր նախադասության մեջ շարադասական սխալ չկա:

- 1) Սի քանի կետերում հապճեպ քարաքենորներ կուտակեցին՝ թշնամուն հարվածելու համար:
- 2) Սուշեղը հոգաց այն ամենը, ինչ ոք կարևոր էր թշնամուն հանկարծահաս դիմակայելու համար:
- 3) Սկզբում նա ձեռքը վերցրեց ուղարի դեղնավուն կաշվով պատաժ նեղ ու երկարուկ տեսքը:
- 4) Կանաչության թմրաքեր բույրերով հագեցած օղից և երկար ժամանակ պառկած լինելուց հաճելի նա քայլում էր մի զիսապտույտով:

34. Նախադասություններից քանիսո՞՞ն շարադասական սխալ կա:

1. Խորհրդավոր կախարդանքի մանկության ուժով մենք նորից աներկբայրեն հավատում ենք, որ ամեն մարդ իր աստղն ունի:
2. Անաղուկ մեքենան սլանում էր ասֆալտապատ, հարք մայրուղով:
3. Սլացիկ հասակով մեկ կանգնում էր, մի ակնքարք նայում լուրք, անէացած երկնքին:
4. Հայացքը մեջընդմեջ ուղղում էր լուսնկայի արձաք շողերի տակ փայլվլող բիբլիական Մասիսին:

 - 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

35. Նախադասության մեջ ի՞նչ կարգի սխալ կա :

Նա անդադրում թափառեց օտար ժողովուրդների հայրենիքներում, ցալակից եղավ անօգ մարդուց:

- 1) խնդրառության
- 2) համաձայնության
- 3) շարադասության
- 4) բառագործածության

36. Նախադասության մեջ ի՞նչ կարգի սխալ կա:

Նայեց Մեծ ու Փոքր Մասիսներին, և բրրում արցունքներից ցողվեցին ծաղկաթերթերը:

- 1) շարադասության
- 2) համաձայնության
- 3) բառագործածության
- 4) խնդրառության

37. Նախադասության մեջ ի՞նչ կարգի սխալ կա:

Երգչին՝ որպես աշխարհ տեսած մարդ, հանդիսատեսք դիմավորեց բուռն ծափահարություններով:

- 1) բառագործածության
- 2) խնդրառության
- 3) համաձայնության
- 4) շարադասության

ԲԱԺԻՆ 5 ՓՈԽԱԿԵՐՊՈՒՄՆԵՐ

1. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Սեր ժողովրդի երգն այնքան հարուստ է ու գունագեղ, որ հիացնում է անգամ օտար արհեստավարժ երաժշտագետներին:

- 1) Սեր ժողովրդի երգը հիացնում է անգամ օտար արհեստավարժ երաժշտագետներին՝ հարուստ ու գունագեղ լինելու շնորհիվ:
- 2) Սեր ժողովրդի երգը հիացնում է անգամ օտար արհեստավարժ երաժշտագետներին՝ լինելով հարուստ ու գունագեղ:
- 3) Սեր ժողովրդի երգը հարուստ է ու գունագեղ անգամ օտար արհեստավարժ երաժշտագետներին հիացնելու չափ:
- 4) Անգամ օտար արհեստավարժ արվեստագետներն են հիանում մեր ժողովրդի երգով՝ նրա հարուստ ու գունագեղ լինելու շնորհիվ:

2. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսում էր նա՝ այն մարդը, որ ճանապարհն հանդիպել էր մեզ:

- 1) Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսում էր այն մարդը՝ ճանապարհն մեզ հանդիպածը:
- 2) Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսում էր ճանապարհն մեզ հանդիպած մարդը:
- 3) Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսում էր նա՝ ճանապարհն մեզ հանդիպած մարդը:
- 4) Երկրորդ հարկի պատշգամբից ճառախոսողը նա էր՝ ճանապարհն մեզ հանդիպած մարդը:

3. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Սարյանը ոգևորված պատմում էր այն մասին, որ մտադրություն ունի ստեղծելու «Միսիքար սպարապետ» օպերա:

- 1) Սարյանը ոգևորված պատմում էր «Միսիքար սպարապետ» օպերա ստեղծելու իր մտադրության մասին:
- 2) Սարյանը ոգևորված պատմում էր «Միսիքար սպարապետ» օպերա ստեղծելու՝ իր ունեցած մտադրության մասին:
- 3) Սարյանը ոգևորված պատմում էր իր՝ «Միսիքար սպարապետ» օպերա ստեղծելու մտադրություն ունենալու մասին:
- 4) Սարյանի ոգևորված պատմությունը՝ իր՝ «Միսիքար սպարապետ» օպերա ստեղծելու մտադրություն ունենալու մասին էր:

4. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Իմ սիրելի ուսուցիչը, որ բնավ առնչություն չուներ գրականության հետ, մի օր ինձ հանձնեց Պ. Դուրյանի հատորյակը:

- 1) Գրականության հետ բնավ առնչություն չունեցող իմ սիրելի ուսուցիչը մի օր ինձ հանձնեց Պ. Դուրյանի հատորյակը:
- 2) Իմ սիրելի ուսուցիչը, բնավ առնչություն չունենալով գրականության հետ, մի օր ինձ հանձնեց Պ. Դուրյանի հատորյակը:
- 3) Իմ սիրելի ուսուցիչը, չնայած գրականության հետ բնավ առնչություն չունենալուն, մի օր ինձ հանձնեց Պ. Դուրյանի հատորյակը:
- 4) Պ. Դուրյանի հատորյակը մի օր ինձ հանձնած իմ սիրելի ուսուցիչը բնավ առնչություն չուներ գրականության հետ:

5. Ո՞րն է տրված բարդ ստորադասական ճախաղասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Նրանց հատկապես նյարդայնացնում էր, որ ազգությամբ լեի Բողդան Գեմբարսկին հայ ազգային վերազարդոնքի շեփորահարն էր դարձել:

- 1) Նրանց հատկապես նյարդայնացնում էր հայ ազգային վերազարդոնքի շեփորահարը դարձած Բողդան Գեմբարսկու՝ ազգությամբ լեի լինելը:
- 2) Նրանց հատկապես նյարդայնացնում էր ազգությամբ լեի Բողդան Գեմբարսկու՝ հայ ազգային վերազարդոնքի շեփորահարը դառնալը:
- 3) Նրանց հատկապես նյարդայնացնող ազգությամբ լեի Բողդան Գեմբարսկու՝ հայ ազգային վերազարդոնքի շեփորահարը դառնալն էր:
- 4) Նրանց հատկապես նյարդայնացնում էր հայ ազգային վերազարդոնքի շեփորահարը դարձած, ազգությամբ լեի Բողդան Գեմբարսկին:

6. Ո՞րն է տրված բարդ ստորադասական ճախաղասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Նա խորապես հիասքափված էր, որ երիտասարդ հեղինակները պատերազմի օրերին զրադարձ էին իրենց անձնական նեղ խնդիրներով:

- 1) Նա խորապես հիասքափված էր պատերազմի օրերին իրենց անձնական նեղ խնդիրներով զրադարձ երիտասարդ հեղինակներից:
- 2) Երիտասարդ հեղինակների՝ պատերազմի օրերին իրենց անձնական նեղ խնդիրներով զրադարձ խորապես հիասքափեցնում էր նրան:
- 3) Նա խորապես հիասքափված էր երիտասարդ հեղինակներից՝ պատերազմի օրերին իրենց անձնական նեղ խնդիրներով զրադարձ պատճառով:
- 4) Նա խորապես հիասքափված էր երիտասարդ հեղինակների՝ պատերազմի օրերին իրենց անձնական նեղ խնդիրներով զրադարձ պատճառով:

7. Ո՞րն է տրված բարդ ստորադասական ճախաղասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Եթե հայ զինվորը կովի դաշտում վերք է ստացել, հայ կնոջ պարտավորությունն է դարմանել նրան:

- 1) Հայ կնոջ պարտավորությունն է դարմանել կովի դաշտում վերք ստացած հայ զինվորին:
- 2) Հայ զինվորի՝ կովի դաշտում վերք ստանալու դեպքում հայ կնոջ պարտավորությունն է դարմանել նրան:
- 3) Կովի դաշտում վերք ստանալու դեպքում հայ կնոջ պարտավորությունն է դարմանել հայ զինվորին:
- 4) Հայ զինվորի՝ կովի դաշտում վերք ստանալու դեպքում հայ կնոջ պարտավորությունը նրան դարմանելն է:

8. Ո՞րն է տրված բարդ ստորադասական ճախաղասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Սիրո շղթաները այն ամենածանր կապանքներն են, որոնք զապում են տղամարդու փառասիրական ձգուումները:

- 1) Տղամարդու փառասիրական ձգուումները զապու ամենածանր կապանքները սիրո շղթաներն են:
- 2) Սիրո շղթաները տղամարդու փառասիրական ձգուումները զապու ամենածանր կապանքներն են:
- 3) Սիրո շղթաները տղամարդու փառասիրական ձգուումները զապու կապանքներից ամենածանրն են:
- 4) Տղամարդու փառասիրական ձգուումները զապու սիրո շղթաները նրա ամենածանր կապանքներն են:

9. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Սերը շատ անգամ արագորեն մարտում է, որովհետև ծնված է լինում կարեկցությունից:

- 1) Սիրո՞ շատ անգամ արագորեն մարելու պատճառը կարեկցությունից ծնված լինելն է:

2) Կարեկցությունից ծնված սերը շատ անգամ արագորեն մարտում է:

3) Սերը շատ անգամ արագորեն մարտում է՝ կարեկցությունից ծնված լինելու պատճառով:

4) Արագորեն մարտող սերը շատ անգամ ծնված է լինում կարեկցությունից:

10. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Այդ նույն նավը, որ ժամանակին փրկության լաստ էր դարձել ինձ համար, վերադարձնում էր ինձ նորից նույն դժոխքը:

- 1) Ժամանակին ինձ համար փրկության լաստ դարձած նավը վերադարձնում էր ինձ նորից նույն դժոխքը:

2) Ինձ նորից նույն դժոխքը վերադարձնող նավը ժամանակին փրկության լաստ էր դարձել ինձ համար:

3) Այդ նույն նավը, ժամանակին ինձ համար փրկության լաստ դառնալով, վերադարձնում էր ինձ նորից նույն դժոխքը:

4) Ժամանակին ինձ համար փրկության լաստ դարձած այդ նույն նավը վերադարձնում էր ինձ նորից նույն դժոխքը:

11. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Աշխարհում հազվագյուտ են այդպիսի մարդիկ, որոնք բարեգործություն կատարելուց հետո երախտագիտություն չեն ակնկալում:

- 1) Աշխարհում հազվագյուտ են բարեգործություն կատարելուց հետո երախտագիտություն չակնկալող այդպիսի մարդիկ:

2) Աշխարհում հազվագյուտ են բարեգործություն կատարելուց հետո երախտագիտություն չակնկալող մարդիկ:

3) Բարեգործություն կատարելուց հետո երախտագիտություն չակնկալողները աշխարհում հազվագյուտ մարդիկ են:

4) Աշխարհում այդպիսի հազվագյուտ մարդիկ բարեգործություն են կատարում՝ երախտագիտություն չակնկալելով:

12. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Այդ անհաջողությունը պատճառ դարձավ, որ բազավորը նոր պատերազմի պատրաստություն տեսնի:

- 1) Այդ անհաջողության պատճառով բազավորը նոր պատերազմի պատրաստություն էր տեսնում:

2) Այդ անհաջողությունը բազավորի՝ նոր պատերազմի պատրաստություն տեսնելու պատճառ դարձավ :

3) Նոր պատերազմի պատրաստություն տեսնելը բազավորի անհաջողության պատճառ դարձավ:

4) Այդ անհաջողությունն էր բազավորի՝ նոր պատերազմի պատրաստություն տեսնելու պատճառը:

13. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Այդ մարդը, որ արտաքուստ այնքան գորեղ և աննկուն էր երևում, մի նորատի կնոջ չափ փափուկ սիրտ ուներ:

- 1) Այդ մարդը, մի նորատի կնոջ չափ փափուկ սիրտ ունենալով, արտաքուստ գորեղ և աննկուն էր երևում:
- 2) Այդ մարդը, չնայած արտաքուստ այնքան գորեղ և աննկուն լինելուն, մի նորատի կնոջ չափ փափուկ սիրտ ուներ:
- 3) Սի նորատի կնոջ չափ փափուկ սիրտ ունեցող այդ մարդը արտաքուստ գորեղ և աննկուն էր երևում:
- 4) Արտաքուստ այնքան գորեղ և աննկուն երևացող այդ մարդը մի նորատի կնոջ չափ փափուկ սիրտ ուներ:

14. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Ես, որ աշակերտել եմ թատերական արվեստի համաշխարհային դեմքերին, հայրենիքում անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:

- 1) Թատերական արվեստի համաշխարհային դեմքերին աշակերտած լինելով՝ հայրենիքում ես անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:
- 2) Չնայած թատերական արվեստի համաշխարհային դեմքերին աշակերտած լինելու՝ հայրենիքում ես անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:
- 3) Ես՝ թատերական արվեստի համաշխարհային դեմքերին աշակերտածս, հայրենիքում անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:
- 4) Թատերական արվեստի համաշխարհային դեմքերին աշակերտելով հանդերձ ես հայրենիքում անփոխարինելի դասեր էի առնում Արմենյանից:

15. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Երգահանը սաստիկ վրդովվում էր, երբ գուսանական կամ ժողովրդական երգերի մեջ խորք ու օտարամուտ տարրեր էր նկատում:

- 1) Երգահանը սաստիկ վրդովվում էր գուսանական կամ ժողովրդական երգերի մեջ խորք ու օտարամուտ տարրեր նկատելու պատճառով:
- 2) Երգահանը սաստիկ վրդովվում էր գուսանական կամ ժողովրդական երգերի մեջ խորք ու օտարամուտ տարրեր նկատելիս:
- 3) Երգահանը սաստիկ վրդովվում էր գուսանական կամ ժողովրդական երգերի մեջ իր նկատած խորք ու օտարամուտ տարրերից:
- 4) Երգահանը սաստիկ վրդովվում էր գուսանական կամ ժողովրդական երգերի մեջ խորք ու օտարամուտ տարրեր նկատելու դեպքում:

16. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Թագավորի այցելություններն Ուտիք այնքան հաճախակի դարձան, որ կասկածներ արթնացրին արքունիքի տիկնանց շրջանում:

- 1) Թագավորի այցելություններն Ուտիք հաճախակի դարձան արքունիքի տիկնանց շրջանում կասկածներ արթնացնելու չափ:
- 2) Թագավորի այցելություններն Ուտիք հաճախակի դարձան՝ կասկածներ արթնացնելով արքունիքի տիկնանց շրջանում:
- 3) Թագավորի այցելություններն Ուտիք կասկածներ արթնացրին արքունիքի տիկնանց շրջանում՝ այնքան հաճախակի դառնալու պատճառով:
- 4) Թագավորի այցելություններն Ուտիք, այդքան հաճախակի դառնալով, կասկածներ արթնացրին արքունիքի տիկնանց շրջանում:

17. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Կնոջ փիլրուն սիրտը դառնում է աղամանդ, երբ կապվում է ճշմարիտ արժանիքների տեր հերոսի հետ:

- 1) Կնոջ փիլրուն սիրտը դառնում է աղամանդ ճշմարիտ արժանիքների տեր հերոսի հետ կապվելուց:
- 2) Ճշմարիտ արժանիքների տեր հերոսի հետ կապվելը կնոջ փիլրուն սիրտը դառնում է աղամանդ:
- 3) Կնոջ փիլրուն սիրտը դառնում է աղամանդ ճշմարիտ արժանիքների տեր հերոսի հետ կապվելուց հետո:
- 4) Կնոջ փիլրուն սիրտը դառնում է աղամանդ ճշմարիտ արժանիքների տեր հերոսի հետ կապվելու շնորհիվ:

18. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Աշոտ թագավորի հաղթանակներն այնքան ոգևորեցին իշխաններին, որ մոռացվեցին նրանց միջև եղած գժտությունները:

- 1) Իշխանների միջև եղած գժտությունները մոռացվեցին Աշոտ թագավորի հաղթանակներով նրանց ոգևորվելու շնորհիվ:
- 2) Աշոտ թագավորի հաղթանակներով ոգևորվելով՝ իշխանները մոռացան իրենց միջև եղած գժտությունները:
- 3) Աշոտ թագավորի հաղթանակները ոգևորեցին իշխաններին նրանց միջև եղած գժտությունները մոռացվելու աստիճան:
- 4) Իշխանների միջև եղած գժտությունները մոռացվեցին Աշոտ թագավորի հաղթանակներով նրանց ոգևորվելուց:

19. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Այդպես որոշեց թագուհին, հենց որ արքայորդին մտավ Գարդման:

- 1) Այդպես որոշեց թագուհին արքայորդու՝ Գարդման մտնելու պահին:
- 2) Այդպես որոշեց թագուհին արքայորդու՝ Գարդման մտնելուն պես:
- 3) Այդպես որոշեց թագուհին արքայորդու՝ Գարդման մտնելու ժամանակ:
- 4) Այդպես որոշեց թագուհին արքայորդու՝ Գարդման մտնելուց հետո:

20. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Հենց այդ օրը, երբ տեսավ հիվանդ մոր անօգնական ու ծանր վիճակը, Արամը վճռեց քժիշկ դառնալ:

- 1) Հիվանդ մոր անօգնական ու ծանր վիճակը տեսնելու օրը Արամը վճռեց հենց քժիշկ դառնալ:
- 2) Հիվանդ մոր անօգնական ու ծանր վիճակը տեսնելով՝ Արամը վճռեց քժիշկ դառնալ:
- 3) Հիվանդ մոր անօգնական ու ծանր վիճակը տեսնելուն պես Արամը վճռեց քժիշկ դառնալ:
- 4) Հենց հիվանդ մոր անօգնական ու ծանր վիճակը տեսնելու օրը Արամը վճռեց քժիշկ դառնալ:

21. Ո՞րն է տրված բարդ ստորադասական նախադասության՝ պարզի փոխակերպման ճիշտ տարրերակը:

Սենք, որ դրսից հենց նոր էինք եկել, հազիվիազ կարողացանք զսպել մեր ուր որ է պոռքացող ծիծաղը:

- 1) Դրսից գալուն պես մենք հազիվիազ կարողացանք զսպել մեր ուր որ է պոռքացող ծիծաղը:
- 2) Սենք, դրսից հենց նոր գալով, հազիվիազ կարողացանք զսպել մեր ուր որ է պոռքացող ծիծաղը:
- 3) Սենք՝ դրսից հենց նոր եկածներս, հազիվիազ կարողացանք զսպել մեր ուր որ է պոռքացող ծիծաղը:
- 4) Սենք, քանի որ դրսից հենց նոր էինք եկել, հազիվիազ կարողացանք զսպել մեր ուր որ է պոռքացող ծիծաղը:

22. Ո՞ր տարրերակում է բարդ ստորադասական նախադասությունը սխալ փոխակերպված պարզի:

- 1) **Ճանապարհի եզրերին էլեկտրասյուներ կան, որ լույս են տանում լեռների ծալքերում ծվարած գյուղերին:**
Ճանապարհի եզրերին լեռների ծալքերում ծվարած գյուղերին լույս տանող էլեկտրասյուներ կան:
2) **Նկարիչը հորս միջոցով հավաքվածներին խնդրեց, որ հեռանան, գնան իրենց տները:**
Նկարիչը հորս միջոցով հավաքվածներին խնդրեց հեռանալ, գնալ իրենց տները:
3) **Շատերը չին հավատում, որ Աղասի Խանջյանը ինքնասպանություն է գործել:**
Շատերը չին հավատում Աղասի Խանջյանի՝ ինքնասպանություն գործելուն:
4) **Որքան կոպիտ ու առնական են մեր լեռները, այնքան քննուշ ու մեղեղային են մեր լեռնցիների երգերը:**
Մեր լեռները կոպիտ ու առնական են մեր լեռնցիների երգերի տիտուր ու մեղեղային լինելու չափ:

23. Ո՞ր տարրերակում է բարդ ստորադասական նախադասությունը սխալ փոխակերպված պարզի:

- 1) **Մենք ապրում ենք Գորիսի մեր խրճիթում, որ հայրս էր մի երկու տարի առաջ կառուցել:**
Մենք ապրում ենք մի երկու տարի առաջ հորս կառուցած Գորիսի մեր խրճիթում:
2) **Այժմ ո՞ւմ սիրելի չէ Ակսել Բակունցի «Նամակ ոուսաց թագավորին» պատմվածքը, որը ասք է մարդկային մեծ կյանքի մեծ ողբերգության մասին:**
Այժմ ո՞ւմ սիրելի չէ Ակսել Բակունցի «Նամակ ոուսաց թագավորին» պատմվածքը՝ մարդկային մեծ կյանքի մեծ ողբերգության մասին ասքը:
3) **Մեր քաղաքի մարդիկ, որոնք տակավին չեն մոռացել հողագործությունը, մի փոքր անվստահ են ձեռք տալիս մատղաշ ծառերին:**
Մեր քաղաքի՝ հողագործությունը տակավին չմոռացած մարդիկ մի փոքր անվստահ են ձեռք տալիս մատղաշ ծառերին:
4) **Իմ որ կատարվեց տաճարի պատերից դուրս՝ քաղաքի փողոցներում, անհնար էր նկարագրել:**
Տաճարի պատերից դուրս՝ քաղաքի փողոցներում կատարված անհնար էր նկարագրել:

24. Ո՞ր տարրերակում է բարդ ստորադասական նախադասությունը սխալ փոխակերպված պարզի:

- 1) **Գրողներից ովքեր մտերմություն էին անում Զորյանի հետ, զիտեին նրա նրբազգաց քնավորությունը:**
Գրողներից Զորյանի հետ մտերմություն անողները զիտեին նրա նրբազգաց քնավորությունը:
2) **Ճանաչեց ինձ, նոյնիսկ իիշեց իր խորհուրդը, որ տվել էր ինձ՝ սովորել, բարձրագույն կրթություն ստանալու մասին ինձ տված խորհուրդը:**
Ճանաչեց ինձ, նոյնիսկ իիշեց սովորելու, բարձրագույն կրթություն ստանալու մասին ինձ տված խորհուրդը:
3) **Կարդում էր հանդարտ, մի այնպիսի ջերմությամբ, որ աննկատելի նվաճում էր ընթերցողին:**
Կարդում էր հանդարտ, ընթերցողին աննկատելի նվաճող մի ջերմությամբ:
4) **Թումանյանի հորելյանը մի սովորական հանդես չէր, որ կատարվում է նշանակված օրը և հետևյալ օրն իսկ մոռացվում:**
Թումանյանի հորելյանը նշանակված օրը կատարվող և հետևյալ օրն իսկ մոռացվող մի սովորական հանդես չէր:

25. Քարդ ստորադասական նախադասություններից քանի՞ն են սխալ փոխակերպված պարզի:

1. Բեմադրվեց նաև Ծերսապիրի վերջին գործը՝ «Փորորիկը», որ մեծ թատերագրի բողած մարգարեական ժառանգությունն էր նոր ժամանակներին:
Բեմադրվեց նաև Ծերսապիրի վերջին գործը՝ «Փորորիկը»՝ մեծ թատերագրի՝ նոր ժամանակներին բողած մարգարեական ժառանգությունը:
 2. «Մակրեթի» մեջ Ծերսապիրը հանգում է այս գաղափարին, որ մարդու մեջ անհաղթահարելի է փառամղոթյան ձգումը:
«Մակրեթի» մեջ Ծերսապիրը հանգում է մարդու մեջ փառամղոթյան ձգուման անհաղթահարելի լինելու գաղափարին:
 3. Կամքի բոլորությունից չէ, որ Համետը չի իրագործում իրեն պարտադրված անդրշիրհմյան հրամանը:
Համետի՝ իրեն պարտադրված անդրշիրհմյան հրամանը չիրագործելը կամքի բոլորությունից չէ:
 4. Շատ սիրող հայրը փշացնում է որդուն այնպես, ինչպես շատ վարար առվակը քշում-տանում է նորաբույս տունկը:
Շատ սիրող հայրը փշացնում է որդուն շատ վարար առվակի՝ նորաբույս տունկը քշել-տանելու պես:
- 1) մեկը
 - 2) երկուաը
 - 3) երեքը
 - 4) ոչ մեկը

26. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված քարդի:

Դվինի ողջ ժողովուրդը անհամբեր սպասում էր թագավորի՝ ապարանքից ելնելուն:

- 1) Դվինի ողջ ժողովուրդը անհամբեր սպասում էր թագավորին, որ ելնելու էր ապարանքից:
- 2) Դվինի ողջ ժողովուրդն անհամբեր սպասում էր, որ թագավորը ելնի ապարանքից:
- 3) Դվինի ողջ ժողովուրդն անհամբեր սպասում էր, թե երբ է թագավորը ելնելու ապարանքից:
- 4) Դվինի ողջ ժողովուրդն անհամբեր սպասում էր, որպեսզի թագավորը ելնի ապարանքից:

27. Ո՞ր տարբերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված քարդի:

Շատերն այդ խոտածարակներից մեռնում էին վնասակար խոտեր ուտելուց:

- 1) Այդ խոտածարակներից շատերը մեռնում էին նրանից, որ վնասակար խոտեր էին ուտում:
- 2) Շատերն այդ խոտածարակներից մեռնում էին, եթե վնասակար խոտեր էին ուտում:
- 3) Այդ խոտածարակներից շատերը, որոնք վնասակար խոտեր էին ուտում, մեռնում էին:
- 4) Շատերն այդ խոտածարակներից մեռնում էին, եթե վնասակար խոտեր էին ուտում:

28. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Արքայորդին, այդ աղջկա կապանքներից ազատվելով, ավելի եռանդով սկսեց գրադարձ յուր հետաձգված գործերով:

- 1) Արքայորդին, որ ազատվել էր այդ աղջկա կապանքներից, ավելի եռանդով սկսեց գրադարձ յուր հետաձգված գործերով:
- 2) Երբ արքայորդին ազատվեց այդ աղջկա կապանքներից, ավելի եռանդով սկսեց գրադարձ յուր հետաձգված գործերով:
- 3) Արքայորդին, երբ ազատվեց այդ աղջկա կապանքներից, ավելի եռանդով սկսեց գրադարձ յուր հետաձգված գործերով:
- 4) Արքայորդին, այդ աղջկա կապանքներից ազատվելով, ավելի եռանդով սկսեց գրադարձ յուր այն գործերով, որոնք հետաձգվել էին:

29. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Մեծահամբավ ցլամարտիկի տապալվելուն պես կրկեսի անտարբեր ավազը կխմի նրա արյունը:

- 1) Եթե մեծահամբավ ցլամարտիկը տապալվի, կրկեսի անտարբեր ավազը կխմի նրա արյունը:
- 2) Երբ որ մեծահամբավ ցլամարտիկը տապալվի, կրկեսի անտարբեր ավազը կխմի նրա արյունը:
- 3) Հենց որ մեծահամբավ ցլամարտիկը տապալվի, կրկեսի անտարբեր ավազը կխմի նրա արյունը:
- 4) Կրկեսի անտարբեր ավազը կխմի մեծահամբավ ցլամարտիկի արյունը, երբ նա տապալվի:

30. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Թիֆլիսում պատշաճ ընդունելության չարժանանալով՝ դերասանների խումբը հիասքափված վերադարձավ Պոլիս:

- 1) Դերասանների խումբը, որը Թիֆլիսում պատշաճ ընդունելության չէր արժանացել, հիասքափված վերադարձավ Պոլիս:
- 2) Թիֆլիսում պատշաճ ընդունելության չարժանանալով՝ դերասանների խումբը վերադարձավ Պոլիս, քանի որ հիասքափված էր:
- 3) Քանի որ Թիֆլիսում պատշաճ ընդունելության չէր արժանացել, դերասանների խումբը հիասքափված վերադարձավ Պոլիս:
- 4) Քանի որ դերասանների խումբը Թիֆլիսում պատշաճ ընդունելության չէր արժանացել, այն հիասքափված վերադարձավ Պոլիս:

31. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Հեղիեղուկ հանդիսատեսը իր պաշտամունքի առարկա կուոքի տապալումը տեսնելիս մոռանում է երեկվա իր հիացմունքը:

- 1) Հեղիեղուկ հանդիսատեսը իր պաշտամունքի առարկա կուոքի տապալումը տեսնելիս մոռանում է, որ երեկ հիանում էր նրանով:
- 2) Երբ հեղիեղուկ հանդիսատեսը տեսնում է իր պաշտամունքի առարկա կուոքի տապալումը, մոռանում է երեկվա իր հիացմունքը:
- 3) Եթե հեղիեղուկ հանդիսատեսը տեսնում է իր պաշտամունքի առարկա կուոքի տապալումը, նա մոռանում է երեկվա իր հիացմունքը:
- 4) Հեղիեղուկ հանդիսատեսը, երբ տեսնում է իր պաշտամունքի առարկա կուոքի տապալումը, մոռանում է երեկվա իր հիացմունքը:

32. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Բեմական ներքին շնորհից գուրկ այդ դերասանուին մի կարծ ժամանակ աղմկեց մեր բեմերում մինչև իր արտաքին անհերքելի շնորհների խամրելը:

- 1) Այդ դերասանուին, որ գուրկ էր բեմական ներքին շնորհից, մի կարծ ժամանակ աղմկեց մեր բեմերում մինչև իր արտաքին անհերքելի շնորհների խամրելը:
- 2) Բեմական ներքին շնորհից գուրկ այդ դերասանուին մի կարծ ժամանակ աղմկեց մեր բեմերում, մինչև խամրեցին իր արտաքին անհերքելի շնորհները:
- 3) Այդ դերասանուին աղմկեց մեր բեմերում մի կարծ ժամանակ մինչև իր արտաքին անհերքելի շնորհների խամրելը, քանի որ գուրկ էր բեմական ներքին շնորհից:
- 4) Բեմական ներքին շնորհից գուրկ այդ դերասանուին աղմկեց մեր բեմերում մի կարծ ժամանակ, քանի որ խամրեցին իր արտաքին անհերքելի շնորհները:

33. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Այդ ստեղծագործության բեմականացման իմ մտադրությունն իրագործելու համար ինձ բացառիկ պայմաններ էին տրամադրել:

- 1) Ինձ բացառիկ պայմաններ էին տրամադրել իրագործելու համար իմ մտադրությունը, որ այդ ստեղծագործության բեմականացումն էր:
- 2) Ինձ բացառիկ պայմաններ էին տրամադրել, քանի որ պիտի իրագործեի այդ ստեղծագործության բեմականացման իմ մտադրությունը:
- 3) Ինձ բացառիկ պայմաններ էին տրամադրել, որպեսզի իրագործեի այդ ստեղծագործության բեմականացման իմ մտադրությունը:
- 4) Ինձ տրամադրել էին պայմաններ, որոնք այդ ստեղծագործության բեմականացման իմ մտադրությունն իրագործելու համար բացառիկ էին:

34. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Համայնապատկան բոլոր բարիքները կողոպտում են և երեսպաշտորեն փշրանքներ նետում այդ բարիքն արտադրողներին:

- 1) Համայնապատկան բոլոր բարիքները կողոպտում են և երեսպաշտորեն փշրանքներ նետում այն մարդկանց, ովքեր արտադրում են նույն այդ բարիքը:
- 2) Ովքեր համայնապատկան բոլոր բարիքները կողոպտում են, երեսպաշտորեն փշրանքներ էին նետում նույն այդ բարիքն արտադրողներին:
- 3) Համայնապատկան բոլոր բարիքները կողոպտում են և երեսպաշտորեն փշրանքներ նետում նրանց, ովքեր արտադրում են նույն այդ բարիքը:
- 4) Բոլոր բարիքները, որ համայնքին են պատկանում, կողոպտում են և երեսպաշտորեն փշրանքներ նետում նույն այդ բարիքն արտադրողներին:

35. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Չինելով գրող կամ գրականագետ՝ Ռոմանոս Մելիքյանը իր հոտառությամբ և նուրբ ճաշակով հիանալի հասկանում էր գրական երկերը:

- 1) Ռոմանոս Մելիքյանը, որը գրող կամ գրականագետ չէր, իր հոտառությամբ և նուրբ ճաշակով հիանալի հասկանում էր գրական երկերը:
- 2) Չինելով գրող կամ գրականագետ՝ Ռոմանոս Մելիքյանը հիանալի հասկանում էր գրական երկերը, քանի որ նուրբ ճաշակ և հոտառություն ուներ:
- 3) Թեև գրող կամ գրականագետ չէր, Ռոմանոս Մելիքյանը իր հոտառությամբ և նուրբ ճաշակով հիանալի հասկանում էր գրական երկերը:
- 4) Չնայած Ռոմանոս Մելիքյանը գրող կամ գրականագետ չէր, իր հոտառությամբ և նուրբ ճաշակով նա հիանալի հասկանում էր գրական երկերը:

36. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Բռնապետական իշխանության խարդավանքներից չվախեցողները հրապարակավ ժաղրում էին նրա ստորաբարշ պահկածքը:

- 1) Ովքեր հրապարակավ ժաղրում էին նրա ստորաբարշ պահկածքը, չէին վախենում բռնապետական իշխանության խարդավանքներից:
- 2) Բռնապետական իշխանության խարդավանքներից չվախեցողներն էին, որ հրապարակավ ժաղրում էին նրա ստորաբարշ պահկածքը:
- 3) Ովքեր չէին վախենում բռնապետական իշխանության խարդավանքներից, հրապարակավ ժաղրում էին նրա ստորաբարշ պահկածքը:
- 4) Բռնապետական իշխանության խարդավանքներից չվախեցողները նրանք էին, ովքեր հրապարակավ ժաղրում էին նրա ստորաբարշ պահկածքը:

37. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Եթնայի ստորոտում ապաստանած Կատանիա քաղաքը հայտնի է նախ և առաջ իր բնակիչները անզուսապ և դյուրաբորբոք բնավորություն ունեն:

- 1) Եթնայի ստորոտում ապաստանած Կատանիա քաղաքը նախ և առաջ հայտնի է, որովհետև նրա բնակիչները անզուսապ և դյուրաբորբոք բնավորություն ունեն:
- 2) Եթնայի ստորոտում ապաստանած Կատանիա քաղաքը նախ և առաջ հայտնի է, որովհետև նրա բնակիչների անզուսապ և դյուրաբորբոք բնավորությամբ հայտնի Կատանիա քաղաքն է, որ ապաստանել է Եթնայի ստորոտում:
- 3) Նախ և առաջ բնակիչների անզուսապ և դյուրաբորբոք բնավորությամբ հայտնի Կատանիա քաղաքն է, որ ապաստանել է Եթնայի ստորոտում, հայտնի է նախ և առաջ իր բնակիչների անզուսապ և դյուրաբորբոք բնավորությամբ:

38. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Նրա անունը լսելիս կամ նրան հիշելիս իմ սիրտը լցվում է զորյանական մի մեղմ ջերմությամբ և ազնվորությամբ:

- 1) Երբ լսում եմ նրա անունը կամ հիշում եմ նրան, իմ սիրտը լցվում է զորյանական մի մեղմ ջերմությամբ և ազնվորությամբ:
- 2) Երեւ լսում եմ նրա անունը կամ հիշում եմ նրան, իմ սիրտը լցվում է զորյանական մի մեղմ ջերմությամբ և ազնվորությամբ:
- 3) Իմ սիրտը զորյանական մի մեղմ ջերմությամբ և ազնվորությամբ է լցվում, քանի դեռ լսում եմ նրա անունը կամ հիշում եմ նրան:
- 4) Իմ սիրտը զորյանական մի մեղմ ջերմությամբ և ազնվորությամբ է լցվում այն քանի շնորհիվ, որ լսում եմ նրա անունը կամ հիշում եմ նրան:

39. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Այդ ազնվատոհմ երիտասարդներից շատերն իշխանի գեղանի դստեր փեսայության պարծանքը վաստակելու նպատակով էին հաճախում Գարդման:

- 1) Այդ ազնվատոհմ երիտասարդներից շատերի՝ Գարդման հաճախելու նպատակն այն էր, որ իշխանի գեղանի դստեր փեսայության պարծանքը վաստակեն:
- 2) Այդ ազնվատոհմ երիտասարդներից շատերը Գարդման էին հաճախում, որովհետև նպատակ ունեին վաստակելու իշխանի գեղանի դստեր փեսայության պարծանքը:
- 3) Այդ ազնվատոհմ երիտասարդներից շատերը Գարդման էին հաճախում, որպեսզի վաստակեն իշխանի գեղանի դստեր փեսայության պարծանքը:
- 4) Այդ ազնվատոհմ երիտասարդներից շատերի՝ Գարդման հաճախելու նպատակն էր, որ վաստակեն իշխանի գեղանի դստեր փեսայության պարծանքը:

40. Ո՞ր տարրերակում է տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասությունը ճիշտ փոխակերպված բարդի:

Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ աշխարհիկ կեղծավորությամբ կիսովին ապականված այդ հազվագյուտ մանուշակը, այլևս չի հուզում Համլետի անտարբեր սիրտը:

- 1) Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան, որ աշխարհիկ կեղծավորությամբ կիսովին ապականված հազվագյուտ մի մանուշակ է, այլևս չի հուզում Համլետի անտարբեր սիրտը:
- 2) Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ այդ հազվագյուտ մանուշակը, այլևս չի հուզում Համլետի անտարբեր սիրտը, քանի որ կիսովին ապականված է աշխարհիկ կեղծավորությամբ:
- 3) Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ աշխարհիկ կեղծավորությամբ կիսովին ապականված այդ հազվագյուտ մանուշակն է, որ այլևս չի հուզում Համլետի անտարբեր սիրտը:
- 4) Անգամ միամիտ և հրապուրիչ Օֆելյան՝ այդ հազվագյուտ մանուշակը, որ կիսովին ապականված է աշխարհիկ կեղծավորությամբ, այլևս չի հուզում Համլետի անտարբեր սիրտը:

41. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված բարդի:

- 1) *Նա հետաքրքրվում էր ոչ միայն Սայաթ-Նովայով, այլև նրանից առաջ ու հետո ապրած քիչ հայտնի աշուղներով:*
Նա հետաքրքրվում էր ոչ միայն Սայաթ-Նովայով, այլև քիչ հայտնի աշուղներով, որ ապրել էին նրանից առաջ ու հետո:
- 2) *Սարերից իշնում էին հազարավոր քոչվորներ՝ իրենց խաշնարածության բարիքներով հեղեղելու գորիսի մեծ տոնավաճառը:*
Սարերից իշնում էին հազարավոր քոչվորներ, որպեսզի իրենց խաշնարածության բարիքներով հեղեղեն գորիսի մեծ տոնավաճառը:
- 3) *Նրա զրույցներից մեկի նյութը մեր հարուստներից շատերի անձաշակ հազնվելն էր:*
Նրա զրույցներից մեկի նյութն էր այն, որ մեր հարուստներից շատերը անձաշակ են հազնվում:
- 4) *Նվազախմբի ծայնը երկրաշարժի տպավորություն բողեց գորիսեցիներից հատկապես Ծենում ապրողների վրա:*
Նվազախմբի ծայնը երկրաշարժի տպավորություն բողեց գորիսեցիներից հատկապես նրանց վրա, ովքեր Ծենում էին ապրում:

42. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված քարդի:

- 1) **Այդ երեկո մայրս մեզ համար կարդաց Բակունց Ստեփան դայու տղայի՝ Ալեքսանդրի գրածը:**
Այդ երեկո մայրս մեզ համար կարդաց այն, ինչ գրել է Բակունց Ստեփան դայու տղան՝ Ալեքսանդրը:
- 2) **Գուսանական ու ժողովրդական երգեր լսելու համար Սաքյանը հաճախ էր գալիս ժողովրդական ստեղծագործության տուն:**
Սաքյանը հաճախ էր գալիս ժողովրդական ստեղծագործության տուն, որպեսզի գուսանական ու ժողովրդական երգեր լսեր:
- 3) **Նա գրածանաշ էր դարձել 1921-ին՝ վեց տարեկանը դեռ չլրացած:**
Նա գրածանաշ էր դարձել 1921-ին, երբ վեց տարեկանը դեռ չէր լրացել:
- 4) **Թոռոցիկը պատմում էր դեկավարներից մեկի՝ Թիֆլիսում ինքնասպան լինելու մասին:**
Թոռոցիկը պատմում էր դեկավարներից մեկի մասին, որը Թիֆլիսում ինքնասպան էր եղել:

43. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված քարդի:

- 1) **Այդ երեկոյի ժամանակ՝ բոլոր արտահայտվողների՝ ելույթներն ավարտելուց հետո, մենք ընկերներով մոտեցանք Թումանյանին:**
Այդ երեկոյի ժամանակ, երբ ավարտվեցին բոլոր արտահայտվողների ելույթները, մենք ընկերներով մոտեցանք Թումանյանին:
- 2) **Ինքնազործ թատերական խմբերի համար մեկ գործողությամբ պիեսներ գրելու պատվերներ էինք ստացել:**
Պատվերներ էինք ստացել, որ ինքնազործ թատերական խմբերի համար մեկ գործողությամբ պիեսներ գրենք:
- 3) **Գնացել էի Ծինուհայր գյուղը՝ Դավիթ-Բեկի մասին գրույցներ հավաքելու:**
Գնացել էի Ծինուհայր գյուղը, որ գրույցներ հավաքեմ Դավիթ-Բեկի մասին:
- 4) **Տղաներ, գոնեն շնորհակալություն հայտներ ձեզ շոր ու կոշիկ նվիրողին:**
Տղաներ, գոնեն շնորհակալություն հայտներ նրան, ով ձեզ շոր ու կոշիկ է նվիրում:

44. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված քարդի:

- 1) **Խորամանկ, խելացի և ճկում դիվանագետ լինելով հանդերձ չկարողացավ ըմբռնել իշխանական դավերի տրամարանությունը:**
Չնայած խորամանկ, խելացի և ճկում դիվանագետ էր, չկարողացավ ըմբռնել իշխանական դավերի տրամարանությունը:
- 2) **Դարասկզբին այդ մարդու անունն ամրաժան էր մեր մտավորականներից, հատկապես ազգային կյանքով հետաքրքրվողներից:**
Դարասկզբին այդ մարդու անունն անբաժան էր մեր մտավորականներից, հատկապես նրանցից, ովքեր հետաքրքրվում էին ազգային կյանքով:
- 3) **Պոլսում Փափազյանին խնդրել էին մասնակցել բուրքական թատրոնի ստեղծման ուղղությամբ իրենց ձեռնարկումներին:**
Պոլսում Փափազյանին խնդրել էին մասնակցել իրենց ձեռնարկումներին, որոնք ուղղված էին բուրքական թատրոնի ստեղծմանը:
- 4) **Ոճի հանդեպ աշխարհիս հզորների ամսաբրեր լինելուց նոր ոճիրներ են ծնվում:**
Նոր ոճիրներ են ծնվում նրանից, որ աշխարհիս հզորները անտարբեր են ոճի հանդեպ:

45. Տրված պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից ո՞րն է սխալ փոխակերպված քարտի:

- 1) Դեղյեմոնա խաղալու էր Արուար՝ իր արտաքին շնորհներով ու ներքին անգնահատելի տվյալներով այդ դերին հարմար եկող միակ դերասանուին թատրոնում: Դեղյեմոնա խաղալու էր Արուար, որը իր արտաքին շնորհներով ու ներքին անգնահատելի տվյալներով այդ դերին հարմար եկող միակ դերասանուին էր թատրոնում:
- 2) Մամուլը ոչինչ չէր կարող մերժել այդ հրապուրիչ մեկենասուիհներին՝ իր գոյությամբ պարտական էր նրանց ամուսինների նյութական օժանդակությանը:
- 3) Այդ ժամանակամիջոցում մասնակցեցի թատրոնի՝ դեպի Սիցիլիա կատարած ուղևորությամբ: Այդ ժամանակամիջոցում մասնակցեցի այն ուղևորությանը, որ թատրոնը կատարեց դեպի Սիցիլիա:
- 4) Դժվարությամբ համոզեցի Ալրտիչ Զանամին հետաձգել իր վաղեմի ցանկության իրազործումը: Դժվարությամբ համոզեցի Ալրտիչ Զանամին, որ հետաձգի իր վաղեմի ցանկության իրազործումը:

46. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞ն են ճիշտ փոխակերպված քարտի:

1. Քանտում Սիմոնին հանդիպածներից չկարողացանք որևէ բան իմանալ նրա մասին: Նրանցից, ովքեր բանտում հանդիպել էին Սիմոնին, չկարողացանք որևէ բան իմանալ նրա մասին:
 2. Գագիկ Արծրունին էլ հազարացիների հետ էր միացել Բագրատունյաց հարստությունը ջնջելու հույսով: Գագիկ Արծրունին էլ հազարացիների հետ էր միացել, որպեսզի ջնջեր Բագրատունյաց հարստությունը:
 3. Գարդմանա իշխանը չէր կարողանում ընտրություն կատարել իր գեղամի դստեր ձեռքը խնդրողների միջև: Գարդմանա իշխանը չէր կարողանում ընտրություն կատարել նրանց միջև, ովքեր խնդրում էին իր գեղանի դստեր ձեռքը:
 4. Գարրիել Սունդուկյանը արևմտահայության տառապանքներին առաջինն արձագանքողներից մեկն էր: Գաբրիել Սունդուկյանը առաջիններից մեկն էր, որ արձագանքեց արևմտահայության տառապանքներին:
- 1) մեկը
 - երկուաը
 - երեքը
 - բոլորը

47. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞ն են ճիշտ փոխակերպված բարդի:

1. Երևի խեղճ աղջկան հուսահատեցրել են՝ անհնարին համարելով նրա ամուսությունը արքայորդու հետ: Երևի խեղճ աղջկան հուսահատեցրել է այն, որ անհնարին են համարել նրա ամուսությունը արքայորդու հետ:
2. Գուգարքը նվաճելուց և Վասակ ու Աշոտ Գնքունի իշխաններին հանձնելուց հետո նա անցավ Վրաստանի սահմանը: Երբ Գուգարքը նվաճեց և հանձնեց Վասակ ու Աշոտ Գնքունի իշխաններին, նա անցավ Վրաստանի սահմանը:
3. Իմչո՞ւ, սակայն, իշխանից գաղտնի պահեցիր քո ով լինելը: Ինչո՞ւ, սակայն, իշխանից գաղտնի պահեցիր, թե ով ես դու:
4. Կարողիկոսին եկեղեցու անմիաբան համայնքները միավորելու հորդոր էին հղել: Կարողիկոսին հորդոր էին հղել միավորելու եկեղեցու այն համայնքները, որոնք անմիաբան էին:
 - 1) մեկը
 - 2) երկուսը
 - 3) երեքը
 - 4) չորսը

48. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞ն են ճիշտ փոխակերպված բարդի:

1. Ստեղծագործական ամուլ դրության պատճառով գեղարվեստն ու գրականությունը գոհանում էին երեկով հնոտիքը ծամծմելով: Գեղարվեստն ու գրականությունը գոհանում էին երեկով հնոտիքը ծամծմելով, քանի որ ստեղծագործական ամուլ դրություն էր:
2. Նրա մեկնարաննամք այդ անզուգական ողբերգությունը հասարականում էր հոր ու զավակների միջև մի սովորական ընտանեկան կովի վերածվելու աստիճան: Նրա մեկնարաննամք այդ անզուգական ողբերգությունը այն աստիճան հասարականում էր, որ վերածվում էր հոր ու զավակների միջև սովորական ընտանեկան կովի:
3. Այդ կարճատև ճանապարհորդությունը վերջնականացնեց ինձ հրաժարվել անհայրենիք բափառումներից: Այդ կարճատև ճանապարհորդությունը վերջնականացնեց ինձ, որպեսզի հրաժարվեմ անհայրենիք բափառումներից:
4. Իմչո՞ւ Գյորեի և Հեղեղի ժողովուրդը չըմբոստացավ այլքան արյուն տեսնելուց: Ինչո՞ւ Գյորեի և Հեղեղի ժողովուրդը չըմբոստացավ, եթք այլքան արյուն տեսավ:
 - 1) մեկը
 - 2) երկուսը
 - 3) երեքը
 - 4) ոչ մեկը

49. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞ն են ճիշտ փոխակերպված բարդի:

1. Եվրոպայի՝ հայոց անլոր ողբերգության հանդեպ անտարբեր կեցվածքը ընդունելը հայիտենական ամորի խարան է նոյն այդ Եվրոպայի ճակատին:
Այն, որ Եվրոպան հայոց անլոր ողբերգության հանդեպ անտարբեր կեցվածքը ընդունեց, հավիտենական ամորի խարան է նոյն այդ Եվրոպայի ճակատին:
 2. Նրա դերասանական տաղանդը, ավա՞ն, սահմանափակված էր դերասանի խառնվածք է կոչվում:
Նրա դերասանական տաղանդը, ավա՞ն, սահմանափակված էր այդ խոչընդոտով, որ դերասանի խառնվածք է կոչվում:
 3. Անվերսապահ դրվատանքներ հյուսելու համար չգրեցի այս գիրքը:
Նրա համար չգրեցի այս գիրքը, որ անվերապահ դրվատանքներ հյուսեմ:
 4. Թագուհին սկսեց արտասվել՝ այլևս անկարող լինելով դիմադրել սրտի հոգմանն ու հոգեկան խոռվթին:
Թագուհին, որ այլևս անկարող էր դիմադրել սրտի հոգմանն ու հոգեկան խոռվթին, սկսեց արտասվել:
- 1) մեկը
 - 2) երկուսը
 - 3) երեքը
 - 4) չորսը

50. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞ն են ճիշտ փոխակերպված բարդի:

1. Գրելու այս դժվարությունը բացատրվում էր Ծիրվանզադեի՝ իր գործի հանդեպ ծայրահեղ խստապահանջ լինելով:
Գրելու այս դժվարությունը բացատրվում էր նրանով, որ Ծիրվանզադեն ծայրահեղ խստապահանջ էր իր գործի հանդեպ:
 2. Դժվարանում էինք որևէ սփոփիչ խոսք ասել՝ վախենալով նրա ծայրահեղ հուսահատ հոգեվիճակից:
Դժվարանում էինք որևէ սփոփիչ խոսք ասել, քանի որ վախենում էինք նրա ծայրահեղ հուսահատ հոգեվիճակից:
 3. Որոշ գրողներ էլ, իրատարակած լինելով մի քանի ժողովածուներ, այնուամենայնիվ դեռևս սկսնակ են կոչվում:
Որոշ գրողներ էլ, որոնք իրատարակել են մի քանի ժողովածուներ, այնուամենայնիվ դեռևս սկսնակ են կոչվում:
 4. Այդ տարիների իշխանություններին միշտ քծնողաբար դրվատելն անգամ Զապելին չփրկեց քանտ ընկնելուց:
Անգամ այն, որ միշտ քծնողաբար դրվատում էր այդ տարիների իշխանություններին, Զապելին չփրկեց քանտ ընկնելուց:
- 1) մեկը
 - 2) երկուսը
 - 3) երեքը
 - 4) չորսը

51. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞ն են ճիշտ փոխակերպված բարդի:

1. **Քննիչները բոլոր բույլատրելի և անթույլատրելի միջոցներով պարտադրում էին ինձ տեղեկություններ հայտնել նրա մասին:**
Քննիչները բոլոր բույլատրելի և անթույլատրելի միջոցներով պարտադրում էին ինձ, որ տեղեկություններ հայտնեմ նրա մասին:
 2. **Դժվար էր զարմացնել Ռուբենին՝ տարիներ շարունակ գրականության ու արվեստի մեծերի հետ շփված մարդուն:**
Դժվար էր զարմացնել Ռուբենին, որ տարիներ շարունակ գրականության ու արվեստի մեծերի հետ շփված մարդ էր:
 3. **Իր զգացմունքների մասին ընկերոջն ամեն ինչ պատմելը նրա մեծագույն սխալն էր:**
Նրա մեծագույն սխալն այն էր, որ իր զգացմունքների մասին ամեն ինչ պատմել էր ընկերոջը:
 4. **Մայր Սեղա, Աշոտին մեկ անգամ տեսնողը չի կարող այլևս մոռանալ նրան:**
Մայր Սեղա, ով մեկ անգամ տեսնում է Աշոտին, չի կարող այլևս մոռանալ նրան:
- 1) մեկը
 - 2) երկուսը
 - 3) երեքը
 - 4) չորսը

52. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞ն են սխալ փոխակերպված բարդի:

1. **Կմիտրիմ իր սիրածիմ փրկելու համար իր վրա է վերցնում հանցանքը և նրա փոխարեն կախաղան բարձրանում:**
Որպեսզի Դմիտրին փրկի իր սիրածիմ, իր վրա է վերցնում հանցանքը և նրա փոխարեն կախաղան բարձրանում:
 2. **Ես, ծանոր չի կարող լեզվին ու վրացական բատերազրությանը, դժվարությամբ էի հետևում այդ ներկայացումներին:**
Ես, որ ծանոր չի կարող լեզվին ու վրացական բատերազրությանը, դժվարությամբ էի հետևում այդ ներկայացումներին:
 3. **Սիրանոյշը, շնայած Արմենյանի նկատմամբ չաքողված հակակրանք ունենալուն, օգտվում էր նրա մտահղացումներից:**
Թեև Սիրանոյշը Արմենյանի նկատմամբ չաքողված հակակրանք ուներ, օգտվում էր նրա մտահղացումներից:
 4. **Հազարավոր հովեկներ էին գալիս հեռավոր քաղաքներից՝ վայելելու մեր լեռնային քաղաքի օդն ու ջուրը:**
Հազարավոր հովեկներ էին գալիս հեռավոր քաղաքներից, որպեսզի վայելեն մեր լեռնային քաղաքի օդն ու ջուրը:
- 1) ոչ մեկը
 - 2) մեկը
 - 3) երկուսը
 - 4) երեքը

53. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞ն են սխալ փոխակերպված բարդի:

1. Նա գրում էր ֆիզիկական ծանրագույն մի գործ կատարելու նման: Նա գրում էր այնպես, կարծես ֆիզիկական ծանրագույն մի գործ էր կատարում:
 2. Ձեր կարծիքով՝ Փարիզը չտեսած մարդը չի՝ կարող դաստություններ անել գեղեցկության մասին: Ձեր կարծիքով՝ եթե մարդ Փարիզը չի տեսել, չի՝ կարող դատողություններ անել գեղեցկության մասին:
 3. Լինելով հնչյունների նույր վարպետ՝ բանաստեղծության մեջ Ռոմանոս Սելիքյանը գնահատում էր մեղեդայնությունը, արձակում՝ ոիբմը: Քանի որ Ռոմանոս Սելիքյանը հնչյունների նույր վարպետ էր, բանաստեղծության մեջ նա գնահատում էր մեղեդայնությունը, արձակում՝ ոիբմը:
 4. Երևի չափությունը ավելի տարվելի նրանով՝ նրա մահով անփարատելի տառապանքի շնատնվելու համար: Երևի չափությունը ավելի տարվելի նրանով, որ նրա մահով անփարատելի տառապանքի շնատնվելի:
- 1) մեկը
 - 2) երկուսը
 - 3) երեքը
 - 4) ոչ մեկը

54. Պարզ (դերբայական դարձվածով) նախադասություններից քանի՞ն են սխալ փոխակերպված բարդի:

1. Ներկայի փոքրիկ դառնությունները հեշտությամբ մոռացության են տալիս անցյալում մեր ապրած քաղցր պահերը: Ներկայի փոքրիկ դառնությունները հեշտությամբ մոռացության են տալիս մեր այն քաղցր պահերը, որ ապրել ենք անցյալում:
 2. Նա իմ աշքում բարձրացավ՝ հատկապես արևմտահայ գրականությանը քաջատեղյակ լինելով: Նա իմ աշքում հատկապես բարձրացավ, որովհետև քաջատեղյակ էր արևմտահայ գրականությանը:
 3. Մեր գրականության երախտավորների մասին նրա գրածը անվերապահ վստահության է արժանի: Այն, ինչ գրել է նա մեր գրականության երախտավորների մասին, անվերապահ վստահության է արժանի:
 4. Ի՞նչ զիտեի հայության մասին ես՝ հայրենիքից հեռու՝ օտար միջավայրում ապրած: Ի՞նչ զիտեի հայության մասին ես, որ ապրել էի հայրենիքից հեռու՝ օտար միջավայրում:
- 1) ոչ մեկը
 - 2) մեկը
 - 3) երկուսը
 - 4) երեքը

55. Պարզ (դերքայական դարձվածով) նախադասություններից քանի՞ն են սխալ փոխակերպված բարդի:

1. *Ըննադասության հանդեպ նրա արհամարհամբը առաջ էր եկել նախկինում անարդարացի ու աշառու քննադասության ներարկվելուց:*
Քննադասության հանդեպ նրա արհամարհամբն առաջ էր եկել, երբ նախկինում անարդարացի ու աշառու քննադասության է ենթարկվել:
 2. *Թիֆլիսը սիրեց ինձ, փայփայեց ու գորգուրեց իմ ծննդավայրը մոռանալ տալու աստիճան:*
Թիֆլիսը սիրեց ինձ, փայփայեց ու գորգուրեց այնքան, որ մոռացա իմ ծննդավայրը:
 3. *Խնդրեցի մի նավաստու իրավիճակի մասին մի երկտող հասցնել հարազատներիս:*
Խնդրեցի, որ մի նավաստի իրավիճակի մասին մի երկտող հասցնի հարազատներիս:
 4. *Հեծյալների՝ Սահակ Սևադայի ապարանքին հասնելուց հետո իշխանը միայնակ առաջ անցավ:*
Եթե հեծյալները հասնում էին Սահակ Սևադայի ապարանքին, իշխանը միայնակ առաջ անցավ:
- 1) մեկը
 - 2) երկուսը
 - 3) երեքը
 - 4) չորսը

56. Պարզ (դերքայական դարձվածով) նախադասություններից քանի՞ն են սխալ փոխակերպված բարդի:

1. *Անտառամիջյան ճանապարհով դեսի զյուղ էին իջնում ցորենի խրձերով ծանրաբեռնված մի քանի սայլեր:*
Մի քանի սայլեր, որոնք զյուղ էին իջնում անտառամիջյան ճանապարհով, ծանրաբեռնված էին ցորենի խրձերով:
 2. *Ալֆոնս Դոդեկի հումորի նրբությունը անհասկամալի է Ֆրամսիայում չափող մարդուն:*
Մարդուն անհասկանալի է Ալֆոնս Դոդեկի հումորի նրբությունը, եթե նա Ֆրանսիայում չի ապրում:
 3. *Զնայած արդեմ ալեզարդ ծերունի լինելուն՝ Շիրվանզադեն արվեստի խնդիրներում պատահու պես խանդրու էր ու բռնկուն:*
Թեև Շիրվանզադեն արդեն ալեզարդ ծերունի էր, արվեստի խնդիրներում նա պատահու պես խանդրու էր ու բռնկուն:
 4. *Նա համաձայն չէր թատերագրի՝ իբրև ստեղծագործողի, թատրոնում երկրորդական լինելու գաղափարին:*
Նա համաձայն չէր այն գաղափարին, որ թատերագիրը՝ իբրև ստեղծագործող, երկրորդական է թատրոնում:
- 1) մեկը
 - 2) երկուսը
 - 3) երեքը
 - 4) չորսը

57. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

Տեսնելով ներս մտնողին՝ աղջիկն ասում է ծառաներին.

- Այ՞թե չեք ճանաչում նրան, որ ներս եք բողել. նա մի անգամ իրեն խարեց և ահա նորից ուզում է իհն խաղը խաղալ:

- 1) Տեսնելով ներս մտնողին՝ աղջիկն ասում է ծառաներին, թե մի՞թե չեն ճանաչում նրան, որ ներս են բողել. նա մի անգամ իրեն խարեց և ահա նորից ուզում է իհն խաղը խաղալ:
- 2) Տեսնելով ներս մտնողին՝ աղջիկն ասում է ծառաներին, թե մի՞թե չեն ճանաչում նրան, որ ներս են բողել. նա մի անգամ իրեն խարեց և ահա նորից ուզում է իհն խաղը խաղալ:
- 3) Տեսնելով ներս մտնողին՝ աղջիկն ասում է ծառաներին, թե մի՞թե իրենք չեն ճանաչում նրան, որ ներս են բողել. նա մի անգամ իրեն խարեց և ահա նորից ուզում է իհն խաղը խաղալ:
- 4) Տեսնելով ներս մտնողին՝ աղջիկն ասում է ծառաներին, թե մի՞թե չեն ճանաչում իրեն, որ ներս են բողել. նա մի անգամ իրեն խարեց և ահա նորից ուզում է իհն խաղը խաղալ:

58. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

Բժիշկն ասում է բազավորին.

- Թագավորին ապրած կենա, ես ուզում եմ, որ դուք պալատում մի սենյակ տաս ինձ, որ ապրեմ, և ոչ ոք էլ ինձ մոտ չմտնի, նույնիսկ նրանք՝ պալատականներդ:

- 1) Բժիշկն ասում է բազավորին, որ ինքն ուզում է, որ նա իր պալատում մի սենյակ տա իրեն, որ ապրի, և ոչ ոք էլ իր մոտ չմտնի, նույնիսկ նրանք՝ պալատականները:
- 2) Բժիշկն ասում է բազավորին, որ նա ուզում է, որ իր պալատում մի սենյակ տա իրեն, որ ապրի, և ոչ ոք էլ իր մոտ չմտնի, նույնիսկ նրանք՝ պալատականները:
- 3) Բժիշկն ասում է բազավորին, որ ինքն ուզում է, որ նա իր պալատում մի սենյակ տա նրան, որ ապրի, և ոչ ոք էլ իր մոտ չմտնի, նույնիսկ նրանք՝ պալատականները:
- 4) Բժիշկն ասում է բազավորին, որ ինքն ուզում է, որ ինքն իր պալատում մի սենյակ տա նրան, որ ապրի, և ոչ ոք էլ իր մոտ չմտնի, նույնիսկ նրանք՝ պալատականները:

59. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

- Ոչ, անկարելի է, - պատասխանեց ծերունին տղային. - Եթե բողնեմ, էլ երբեք չեմ տեսնի աղջկաս, դու էլ մնա՝ մեզ մոտ և շուտով կմոռանա քո տխուր երկիրը:

- 1) Ծերունին տղային պատասխանեց, որ անկարելի է. եթե բողնի, էլ երբեք չի տեսնի իր աղջկան, ինքն էլ քոյ մնա իրենց մոտ և շուտով կմոռանա նրա տխուր երկիրը:
- 2) Ծերունին պատասխանեց տղային, որ անկարելի է. եթե բողնի, էլ երբեք չի տեսնի նրա աղջկան, նա էլ քոյ մնա իրենց մոտ և շուտով կմոռանա իր տխուր երկիրը:
- 3) Ծերունին պատասխանեց տղային, որ անկարելի է. եթե ինքը բողնի, էլ երբեք չի տեսնի իր աղջկան, նա էլ քոյ մնա իրենց մոտ և շուտով կմոռանա իր տխուր երկիրը:
- 4) Ծերունին պատասխանեց տղային, որ անկարելի է, եթե նա բողնի, էլ երբեք չի տեսնի իր աղջկան, նա էլ մնա իրենց մոտ և շուտով կմոռանա իր տխուր երկիրը:

60. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

- Զավակներս, - ասաց հայրը, - ես չգիտեմ, թե երբ կհասնի իմ վերջին օրը, դրա համար էլ ուզում եմ որոշել, թե ինչ բաժին է ստանալու ամեն մեկդ իմ մահից հետո:

- 1) Հայրն ասաց իր զավակներին, որ ինքը չգիտի, թե երբ կհասնի իր վերջին օրը, դրա համար էլ ուզում է որոշել, թե ինչ բաժին է ստանալու նրանցից ամեն մեկը իր մահից հետո:
- 2) Հայրն ասաց իր զավակներին, որ նա չգիտի, թե երբ կհասնի իր վերջին օրը, դրա համար էլ ուզում է որոշել, թե ինչ բաժին է ստանալու նրանցից ամեն մեկը իր մահից հետո:
- 2) Հայրն ասաց իր զավակներին, որ ինքը չգիտի, թե երբ կհասնի նրա վերջին օրը, դրա համար էլ ուզում է որոշել, թե ինչ բաժին է ստանալու նրանցից ամեն մեկը իր մահից հետո:
- 3) Հայրն ասաց իր զավակներին, որ ինքը չգիտի, թե երբ կհասնի իր վերջին օրը, դրա համար էլ նա ուզում է որոշել, թե ինչ բաժին է ստանալու ձեզնից ամեն մեկը իր մահից հետո:

61. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

Դիմելով մեզ՝ կինն ասաց.

- Երեխաններ, դուք հանգիստ նստեք, ու եթե քուններդ տանի, քնեք, իսկ մենք մի քիչ փայտ հավաքնեն և երբ գործներս ավարտենք, կզանք, ձեզ կտանենք սուս:

- 1) Դիմելով մեզ՝ կինն ասաց, որ մենք հանգիստ նստենք, ու եթե քուններս տանի, քնենք, իսկ նրանք մի քիչ փայտ հավաքնեն և երբ գործներն ավարտեն, կզանք, մեզ կտանեն սուս:
- 2) Դիմելով մեզ՝ կինն ասաց, որ մենք հանգիստ նստենք, ու եթե քուններս տանի, քնենք, իսկ իրենք մի քիչ փայտ հավաքնեն և երբ իրենց գործները ավարտեն, կզանք, մեզ կտանեն սուս:
- 3) Դիմելով մեզ՝ կինն ասաց, որ դուք հանգիստ նստեք, ու եթե քուններդ տանի, քնեք, իսկ իրենք մի քիչ փայտ հավաքնեն և երբ գործներն ավարտեն, կզանք, մեզ կտանեն սուս:
- 4) Դիմելով մեզ՝ կինն ասաց, որ նրանք հանգիստ նստեն, ու եթե քունները տանի, քնենք, իսկ իրենք մի քիչ փայտ հավաքնեն և երբ գործներն ավարտեն, կզանք, նրանց կտանեն սուս:

62. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

- Ես առողջությունս չեմ կորցրել, ոչ ել կարողությունս, - պատասխանում է ձեզ վաճառականը և ավելացնում է, - այսօր համբերեք, վաղը կպատմեմ, և ամեն ինչ կիմանաք:

- 1) Վաճառականը պատասխանում է ձեզ, որ ինքը իր առողջությունը չի կորցրել, ոչ ել իր կարողությունը, և ավելացնում է, որ այսօր համբերեք, վաղը կպատմի, և ամեն ինչ կիմանաք:
- 2) Վաճառականը պատասխանում է ձեզ, որ նա իր առողջությունը չի կորցրել, ոչ ել իր կարողությունը, և ավելացնում է, որ այսօր համբերեք, վաղը կպատմի, և ամեն ինչ կիմանաք:
- 3) Վաճառականը պատասխանում է ձեզ, որ ինքն իր առողջությունը չի կորցրել, ոչ ել իր կարողությունը, և ավելացնում է, որ այսօր համբերենք, վաղը կպատմի, և ամեն ինչ կիմանաք:
- 4) Վաճառականը պատասխանում է ձեզ ու ավելացնում, որ ինքը իր առողջությունը չի կորցրել, ոչ ել իր կարողությունը, որ այսօր համբերեք, վաղը կպատմի, և ամեն ինչ կիմանաք:

63. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

Արծիվն ասում է Դիմանային.

- Ով՛ քարի մարդ, ես խոսք տվի, թե քեզ այս լավությունը կամեմ, ինչ որ միայն արծիվը կարող է անել. ինչ ել սիրտդ ուզի, ես կկատարեմ:

- 1) Արծիվն ասում է Դիմանային, որ նա խոսք տվեց, թե նրան այն լավությունը կամի, ինչ որ միայն արծիվը կարող է անել. ինչ ել սիրտդ ուզի, ինքը կկատարի:
- 2) Արծիվն ասում է Դիմանային, որ ինքը խոսք տվեց, թե նրան այն լավությունը կամի, ինչ որ միայն արծիվը կարող է անել. ինչ ել սիրտդ ուզի, ինքը կկատարի:
- 3) Արծիվն ասում է Դիմանային, որ ինքը խոսք տվեց իրեն, թե այն լավությունը կամի, ինչ որ միայն արծիվը կարող է անել. ինչ ել սիրտդ ուզի, ինքը կկատարի:
- 4) Արծիվն ասում է Դիմանային, որ ինքը թեզ խոսք տվեց, թե կամի այն լավությունը, ինչ որ միայն արծիվը կարող է անել. ինչ ել սիրտդ ուզի, նա կկատարի:

64. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

Լուիզամ, նայելով հյուրին, ասաց.

- Պարո՞ն, կզարմանաք, եթե ես ասեմ, որ այժմ ընկերս ստեղծում է անձանոր դերասանի համար փառք մեր քաղաքում:

- 1) Լուիզան, նայելով հյուրին, ասաց, որ նա կզարմանա, եթե ինքն ասի, որ այժմ իր ընկերը ստեղծում է անձանոր դերասանի համար փառք իրենց քաղաքում:
- 2) Լուիզան, նայելով հյուրին, ասաց, որ պարոնը կզարմանա, եթե նա ասի, որ այժմ իր ընկերը ստեղծում է անձանոր դերասանի համար փառք իրենց քաղաքում:
- 3) Լուիզան, նայելով հյուրին, ասաց, որ ինքը կզարմանա, եթե ինքն ասի, որ այժմ իր ընկերը ստեղծում է անձանոր դերասանի համար փառք իրենց քաղաքում:
- 4) Լուիզան, նայելով հյուրին, ասաց, որ նա կզարմանա, եթե ինքն ասի, որ այժմ նրա ընկերը ստեղծում է անձանոր դերասանի համար փառք իրենց քաղաքում:

65. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

- Սանտյագո, - ասաց տղամ, Երբ երկուսով վեր էին բարձրանում ծովափից, - հիմա ես նորից կարող եմ քեզ հետ ծով դուրս գալ. նրանք մեզ օգնեցին, որ մի քիչ փող վաստակենք:

- 1) Երբ երկուսով վեր էին բարձրանում ծովափից, տղամ ասաց Սանտյագոյին, որ հիմա ինքը նորից կարող է նրա հետ ծով դուրս գալ. նրանք իրենց օգնեցին, որ մի քիչ փող վաստակեն:
- 2) Երբ երկուսով վեր էին բարձրանում ծովափից, տղամ ասաց Սանտյագոյին, որ հիմա ինքը նորից կարող է նրա հետ ծով դուրս գալ. նրանք իրենց օգնեցին, որ մի քիչ փող վաստակեն:
- 3) Երբ երկուսով վեր էին բարձրանում ծովափից, տղամ ասաց Սանտյագոյին, որ հիմա ինքը նորից կարող է նրա հետ ծով դուրս գալ, նրանք մեզ օգնեցին, որ մի քիչ փող վաստակենք:
- 4) Երբ երկուսով վեր էին բարձրանում ծովափից, տղամ ասաց Սանտյագոյին, որ հիմա նա նորից կարող է իր հետ ծով դուրս գալ. նրանք իրենց օգնեցին, որ մի քիչ փող վաստակեն:

66. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

-Ես քեզ չեմ կանչել հանդիմանելու համար,- ասաց պրոֆեսորը Գոհարին և ժպտալով ավելացրեց.- Ես ուզում եմ քեզ հայտնել մի բամ, որին դու տեղյակ չեմ:

- 1) Պրոֆեսորը Գոհարին ասաց, որ ինքը նրան չի կանչել հանդիմանելու համար, և ժպտալով ավելացրեց, որ նա ուզում է նրան հայտնել մի բամ, որին նա տեղյակ չէ:
- 2) Պրոֆեսորը Գոհարին ասաց և ժպտալով ավելացրեց, որ ինքը նրան չի կանչել հանդիմանելու համար, ինքն ուզում է նրան հայտնել մի բամ, որին ինքը տեղյակ չէ:
- 3) Պրոֆեսորը Գոհարին ասաց, որ ինքը նրան չի կանչել հանդիմանելու համար, և ժպտալով ավելացրեց, որ ինքն ուզում է նրան հայտնել մի բամ, որին նա տեղյակ չէ:
- 4) Պրոֆեսորը Գոհարին ասաց, որ նա իրեն չի կանչել հանդիմանելու համար, և ժպտալով ավելացրեց, որ նա ուզում է իրեն հայտնել մի բամ, որին ինքը տեղյակ չէ:

67. Ուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ.

-Արմեն ջամ, սիրելին, - ասաց մայրը, - Ես ոչինչ չեմ խնայել քո ուսման համար,- և ապա, փոքր-ինչ հուզված, ավելացրեց,- միանգամայն վստահ եմ՝ դու հայտնի իրավաբան ես դառնալու:

- 1) Մայրն ասաց սիրելի Արմենին, որ ինքը ոչինչ չի խնայել նրա ուսման համար, և ապա, փոքր-ինչ հուզված, ավելացրեց, որ ինքը միանգամայն վստահ է՝ նա հայտնի իրավաբան է դառնալու:
- 2) Մայրն ասաց Արմենին և ապա, փոքր-ինչ հուզված, ավելացրեց, որ ինքը ոչինչ չի խնայել նրա ուսման համար և միանգամայն վստահ է՝ նա հայտնի իրավաբան է դառնալու:
- 3) Մայրն ասաց Արմենին, որ ինքը ոչինչ չի խնայել նրա ուսման համար, և ապա, փոքր ինչ հուզված, ավելացրեց, որ ինքը միանգամայն վստահ է՝ նա հայտնի իրավաբան է դառնալու:
- 4) Մայրն ասաց Արմենին, որ ինքը ոչինչ չի խնայել նրա ուսման համար, և ապա, փոքր-ինչ հուզված, ավելացրեց, որ միանգամայն վստահ է, որ ինքը հայտնի իրավաբան է դառնալու:

68. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ.

Դիմելով Լիլիթին՝ Արմենը հարցրեց, թե ինչու է մորա գեղեցիկ դեմքը տխուր, ապա ավելացրեց, որ զնալով հզորանում է իմ սերը քո նկատմամբ:

- 1) - Ինչո՞ւ է քո գեղեցիկ դեմքը տխուր, - դիմելով Լիլիթին՝ Արմենը հարցրեց, ապա ավելացրեց, - զնալով հզորանում է իմ սերը քո նկատմամբ:
- 2) Դիմելով Լիլիթին՝ Արմենը հարցրեց, ապա ավելացրեց.
-Ինչո՞ւ է քո գեղեցիկ դեմքը տխուր. զնալով հզորանում է իմ սերը քո նկատմամբ:
- 3) - Ինչո՞ւ է քո գեղեցիկ դեմքը տխուր, - դիմելով Լիլիթին՝ հարցրեց Արմենը, ապա ավելացրեց,- զնալով հզորանում է իմ սերը քո նկատմամբ:
- 4) - Ինչո՞ւ է քո գեղեցիկ դեմքը տխուր, - Լիլիթին դիմելով՝ հարցրեց Արմենը, ապա ավելացրեց, - զնալով հզորանալու է իմ սերը քո նկատմամբ:

69. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

Պառավն ասաց ճամփորդին, որ վերցնի որբերին ու տանի իր հեռու երկիրը, բայց եթե նրանք ճանապարհին մեռնեն, ինքը պատասխանատու չէ:

- 1) Պառավն ասաց ճամփորդին.
-Վերցրո՞ւ որբերին ու տա՞ր քո հեռու երկիրը, բայց եթե նրանք ճանապարհին մեռնեն, դու պատասխանատու չես:
- 2) Պառավն ասաց ճամփորդին.
-Վերցրո՞ւ որբերին և տա՞ր նրա հեռու երկիրը, բայց եթե նրանք ճանապարհին մեռնեն, ես պատասխանատու չեմ:
- 3) Պառավն ասաց ճամփորդին.
-Վերցրո՞ւ որբերին և տա՞ր քո հեռու երկիրը, բայց եթե նրանք ճանապարհին մեռնեն, ես պատասխանատու չեմ:
- 4) - Վերցրո՞ւ որբերին և տա՞ր հեռու երկիր, բայց եթե որբերը ճանապարհին մեռնեք, ես պատասխանատու չեմ, - ասաց պառավը ճամփորդին:

70. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

Հարուստի ժառանգները մեզ պատասխանեցին, որ իրենք բոլորը գիտեն, թե ինչպես վարվեն իրենց ունեցածի հետ. զնանք, իրենց հանգիստ բողնենք և նրանց ոչինչ չպատմեք:

- 1) Հարուստի ժառանգները մեզ պատասխանեցին.
-Մենք բոլորս գիտենք, թե ինչպես վարվենք ձեր ունեցածի հետ. զնացե՛ք, մեզ հանգիստ բողնեք և նրանց ոչինչ չպատմեք:
- 2) Հարուստի ժառանգները մեզ պատասխանեցին.
-Դուք բոլորդ գիտեք, թե ինչպես վարվեք ձեր ունեցածի հետ. զնացե՛ք, մեզ հանգիստ բողնեք և նրանց ոչինչ չպատմեք:
- 3) - Մենք բոլորս գիտենք, թե ինչպես վարվենք մեր ունեցածի հետ. զնացե՛ք, մեզ հանգիստ բողնեք և նրանց ոչինչ չպատմեք, - պատասխանեցին մեզ հարուստի ժառանգները:
- 4) Հարուստի ժառանգները մեզ պատասխանեցին.
-Մենք բոլորս գիտենք, թե ինչպես վարվենք մեր ունեցածի հետ. զնացե՛ք, իրենց հանգիստ բողնեք և նրանց ոչինչ չպատմեք:

71. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

Տանտերն ինձ պատասխանեց, որ ես ինք եմ կատակասերը. ինքը երեկ հավատաց իմ փուչ ծառայի խոսքերին, իսկ դու այսօր չես ուզում հավատալ իր խոսքերին, և բոլորդ ինձ ծաղրում եք:

- 1) Տանտերն ինձ պատասխանեց.
-Դու ինքդ ես կատակասերը. ինքը երեկ հավատաց քո փուչ ծառայի խոսքերին, իսկ դու այսօր չես ուզում հավատալ իմ խոսքերին, և բոլորդ ինձ ծաղրում եք:
- 2) Տանտերն ինձ պատասխանեց.
-Դու ինքդ ես կատակասերը. ես երեկ հավատացի քո փուչ ծառայի խոսքերին, իսկ դու այսօր չես ուզում հավատալ իմ խոսքերին, և բոլորդ ինձ ծաղրում եք:
- 3) Տանտերն ինձ պատասխանեց.
-Ես ինքս եմ կատակասերը. ես երեկ հավատացի քո փուչ ծառայի խոսքերին, իսկ դու այսօր չես ուզում հավատալ իմ խոսքերին, և բոլորդ ինձ ծաղրում եք:
- 4) - Դու ինքդ ես կատակասերը. ես երեկ հավատաց իր փուչ ծառայի խոսքերին, իսկ դու այսօր չես ուզում հավատալ իմ խոսքերին, և բոլորդ ինձ ծաղրում եք, - պատասխանեց ինձ տանտերը:

72. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

Մտածելով տիրակալի անսովոր բարեսրտության մասին՝ պալատականն ասաց նրան, որ քանի որ նա իրեն նվեր է ուզում տալ, քող նվիրի մի պարկ ուսկի, որ իր կյանքի մնացած մասը իր կնոջ ու երեխաներին հետ ապրեմ առանց կարիքի և քեզնից ոչինչ չխնդրեմ:

- 1) Մտածելով տիրակալի անսովոր բարեսրտության մասին՝ պալատականն ասաց նրան.
- Քանի որ դու ինձ նվեր ես ուզում տալ, նվիրի մի պարկ ուսկի, որ կյանքի մնացած մասը կնոջ ու երեխաներին հետ ապրեմ առանց կարիքի և նրանից ոչինչ չխնդրեմ:
- 2) Մտածելով տիրակալի անսովոր բարեսրտության մասին՝ պալատականն ասաց նրան.
- Քանի որ նա ինձ նվեր է ուզում տալ, քող նվիրի մի պարկ ուսկի, որ իմ կյանքի մնացած մասը կնոջ ու երեխաներին հետ ապրեմ առանց կարիքի և նրանից ոչինչ չխնդրեմ:
- 3) - Քանի որ դու իրեն նվեր ես ուզում տալ, նվիրի մի պարկ ուսկի, որ իր կյանքի մնացած մասը իր կնոջ ու երեխաներին հետ ապրի առանց կարիքի ու քեզանից ոչինչ չխնդրի, - մտածելով տիրակալի անսովոր բարեսրտության մասին՝ ասաց պալատականը նրան:
4) Մտածելով տիրակալի անսովոր բարեսրտության մասին՝ պալատականն ասաց նրան.
- Քանի որ նա ուզում է իրեն նվեր տալ, քող նվիրի մի պարկ ուսկի, որ իր կնոջ և երեխաների հետ ապրի առանց կարիքի ու նրանից ոչինչ չխնդրի:

73. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

Կինն ասաց բժշկին, որ իր ամուսինը ծանր հիվանդ է, քող գա և նայի. իրենք աղքատ մարդիկ են, բոլորը մերժել են իրենց:

- 1) - Բժիշկ, նրա ամուսինը ծանր հիվանդ է, եկ և նայիր. նրանք աղքատ մարդիկ են, բոլորը մերժել են նրանց, - ասաց կինը:
- 2) Կինն ասաց բժշկին.
- Նրա ամուսինը ծանր հիվանդ է, եկ և նայիր. իրենք աղքատ մարդիկ են, բոլորը մերժել են իրենց:
- 3) Կինն ասաց.
- Բժիշկ, ամուսինս ծանր հիվանդ է, եկ և նայիր, մենք աղքատ մարդիկ ենք, դուք բոլորդ մերժել եք մեզ:
- 4) Կինն ասաց.
- Բժիշկ, ամուսինս ծանր հիվանդ է, եկ և նայիր. մենք աղքատ մարդիկ ենք, բոլորը մերժել են մեզ:

74. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

Դուք պատասխանեցիք նավապետին, որ սպասել չեք կարող, և ավելացրիք, որ նա քողնի դասալիքին իր տեղում ու զրադի ծեր մեկնումով, որովհետև մենք պետք է դիմավորենք ծեզ:

- 1) Դուք պատասխանեցիք նավապետին և ավելացրիք.
- Սպասել չենք կարող, Դուք քողեք դասալիքին իր տեղում ու զրադի ծեր մեր մեկնումով, որովհետև մենք պետք է դիմավորենք ծեզ:
- 2) - Նավապետ, սպասել չենք կարող, - դուք պատասխանեցիք նավապետին և ավելացրիք, - Դուք քողեք դասալիքին իր տեղում ու զրադի ծեր մեր մեկնումով, որովհետև մենք պետք է դիմավորենք նրանց:
- 3) - Սպասել չենք կարող, - պատասխանեցիք դուք նավապետին և ավելացրիք, - Դուք քողեք դասալիքին իր տեղում ու զրադի ծեր մեր մեկնումով, որովհետև մենք պետք է դիմավորենք մեզ:
- 4) - Սպասել չենք կարող, - դուք պատասխանեցիք նավապետին և ավելացրիք, - քողեք դասալիքին իր տեղում և զրադի ծեր մեր մեկնումով, որովհետև մենք պետք է դիմավորենք նրանց:

75. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

Պատաճին ասաց Թոմին, որ իրենք պետք է աշալուրջ լինեն, քանի որ թշնամու երկրում են, և իրենց ընկերներին կասեն, որ Հարրիսը իրենց դավաճանեց, որպեսզի նրանք զգույշ լինեն:

- 1) **Պատաճին ասաց.**
-Թոմ, մենք պետք է աշալուրջ լինենք, քանի որ թշնամու երկրում ենք, և իրենց ընկերներին կասենք, որ Հարրիսը մեզ դավաճանեց, որպեսզի նրանք զգույշ լինեն:
- 2) **Պատաճին ասաց Թոմին.**
-Մենք պետք է աշալուրջ լինենք, քանի որ թշնամու երկրում ենք, և մեր ընկերներին կասենք, որ Հարրիսը մեզ դավաճանեց, որպեսզի նրանք զգույշ լինեն:
- 3) **Պատաճին ասաց Թոմին.**
-Մենք պետք է աշալուրջ լինենք, քանի որ թշնամու երկրում ենք, և իրենց ընկերներին կասենք, որ Հարրիսը մեզ դավաճանեց, որպեսզի իրենք զգույշ լինեն:
- 4) - Մենք պետք է աշալուրջ լինենք, քանի որ թշնամու երկրում ենք, և նրանց ընկերներին կասեք, որ Հարրիսը մեզ դավաճանեց, որպեսզի դուք զգույշ լինեք, - ասաց պատաճին Թոմին:

76. Անուղղակի խոսքի փոխակերպման ո՞ր տարրերակն է ճիշտ:

Թոմն ասաց պարոն՝ Դիկին, որ իրենք պետք է շարունակեն առաջ գնալ, որովհետև չեն կարող այստեղ մնալ. շուտով անձրևից ճահիճ կառաջանա, և իրենց ընկերները կկորցնեն մեր հետքը:

- 1) **Թոմն ասաց.**
-Պարոն՝ Դիկ, մենք պետք է շարունակենք առաջ գնալ, որովհետև չենք կարող այստեղ մնալ. շուտով անձրևից ճահիճ կառաջանա, և նրանց ընկերները կկորցնեն մեր հետքը:
- 2) **Թոմն ասաց պարոն՝ Դիկին.**
-Մենք պետք է շարունակենք առաջ գնալ, որովհետև չենք կարող այստեղ մնալ. շուտով անձրևից ճահիճ կառաջանա, և նրանց ընկերները կկորցնեն մեր հետքը:
- 3) - Մենք պետք է շարունակենք առաջ գնալ, որովհետև չենք կարող այստեղ մնալ. շուտով անձրևից ճահիճ կառաջանա, և իրենց ընկերները կկորցնեն իրենց հետքը,- ասաց Թոմը պարոն՝ Դիկին:
- 4) **Թոմն ասաց.**
-Պարոն՝ Դիկ, դուք պետք է շարունակեք առաջ գնալ, որովհետև չեք կարող այստեղ մնալ. շուտով անձրևից ճահիճ կառաջանա, և մեր ընկերները կկորցնեն մեր հետքը:

ԳԼՈՒԽ 5**ԿԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆ**

1. Ո՞ր նախադասության մեջ ևից առաջ ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Ուստիկանները ժամանեցին կեսօրին և ամբողջ գյուղը տակնուվրա անելոց հետո հայտնաբերեցին Մարգարին:
- 2) Երեք օր է բացակայում են տնից և մենակ են բողել երկու անշափահաս երեխաներին:
- 3) Նա զգում էր որ այլև չի տեսնելու արդեն հարազատ դարձած այդ մարդուն և սիրտը ցավում էր կորստի գիտակցությունից:
- 4) Մենք շատ բան ենք կորցրել պատմության քառուղիներում և կորցրածը գտնելու համար դեռ շատ պիտի դեգերենք:

2. Ո՞ր նախադասության մեջ ևից առաջ ստորակետ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Պարսպապատերին հապշտապ երևացին զինվորներ գենքերը պատրաստ պահած և հարձակման նշան արեցին:
- 2) Հայտնվեց կարճ ու գնդիկ մի զորական կորովի շարժումներով և գնաց եկվորներին ընդառաջ:
- 3) Բողոքը հոգնատանց էին և ամեն ինչից երևում էր արագաերթ էին կտրել երկար ու ձիգ ճանապարհը:
- 4) Հանկարծ փայլատակեց ինչ-որ լույս և շրջակայրը լուսավորեց:

3. Ո՞ր նախադասության մեջ բութ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Տասներեքերորդ դարում օրբստօրե փթթող Անի քաղաքում Անանիա անունով մի իշխան էր ապրում:
- 2) Ստեպ-ստեպ կանգ էինք առնում ու շունչ առնելով շարունակում վերելքը:
- 3) Զրերի վրա նեղ արահետներին շարագուշակ լուություն էր իշել:
- 4) Իմ սիրելի բանաստեղծներից են Տերյան Թումանյան Չարենց:

4. Ո՞ր նախադասության մեջ բութ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Հայ գիրը ի մի հավաքեց մեր ցիրուցան մասնիկները ինչպես սրինգը գառնուկներին կամ լաստը նավարեկյալներին:
- 2) Վաղուց մարել են այն ծափերը որոնք ի պատիվ Արտավազդ արքայի հեղինակած թատերախասդի դղրբում էին Արտաշատի հոյակերտ կամարների տակ:
- 3) Օվկիանոսներ և մայրցամաքներ կամքելով հայ գրերը իրար կապեցին մեր աշխարհասփյուռ հատվածները և իրար կապելով բերին հանգուցեցին մայր հայրենիքին:
- 4) Մեսրոպյան գիրն էր որ պահեց պահպանեց մեր ոգին այն ամենը ինչ բարձրացնում է մեզ բոլոր բարձրերին հավասարեցնելով:

5. Ո՞ր նախադասության մեջ միջակետ չպիտի դրվի:

- 1) Ամեն ինչ հերիաքային է զմրուխտյա ջրին բազմած այս գեղադիր քաղաքում զմբերարդ ու հոյաշեն պալատներ ծովի մակերևույթին դանդաղնաթաց սահող մակույկներ:
- 2) Պատանու աչքերը կարմրած էին ամբողջ գիշեր չեր քննել:
- 3) Դառնությամբ սրտի կսկիծով խորհում էր իր վիճակի մասին չե որ ինքը թատրոն պիտի զնար ուժասպառ այդ ծերունու հետ:
- 4) Այդ գիշեր քնել չկարողացավ նաև իշխան Կամսարականը շարունակ մտածում էր Անգեղաց իշխանիկի մասին:

6. Ո՞ր նախադասության մեջ բացահայտչից հետո ստորակետ պիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Երախտապարտ ժողովուրդը իմաստուն մի բնագդով զգաց ու ճանաչեց Սեսրոպի Հացեկաց գյուղի հողից ծնված իր օպավակի սիրանքը բարձրացրեց նրան ու սրբացրեց դարերի մեջ:
- 2) Այդ տարի սփյուռքահայության ամենաբազմարդ կենտրոններից մեկում Բեյրութում էր տեղի ունենում մշակութային փառատոնը:
- 3) Մեծ շուրջով դիմավորեցին հայրենիքից եկածներին մի խումբ գրողների ու արվեստագետների և տեղակորեցին քաղաքի բարձրակարգ հյուրանոցներից մեկում:
- 4) Ահա և Բյուրականի աստղադիտակը հսկայական մի աշք ուղղված տիեզերական անհունին:

7. Ո՞ր նախադասության մեջ բացահայտչից հետո ստորակետ չպիտի դրվի (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Ուրսունվեցի հոկտեմբերին Բուենոս Այրեսի օդանավակայանում վայրէջք կատարեցինք մենք հայաստանցիներս և հյուրընկալվեցինք տեղի հայկական համայնքի կողմից:
- 2) Ուշ գիշերով Ռուսաստանի քաղաքներից մեկում Ռուսովում մի գարեջրատան մոտով էի անցնում երբ տեսա մի հայ բանաստեղծի:
- 3) Միայն Հայր Մարդպետը պալատի և թագավորական կալվածքների կառավարիչն էր կողմնակից պարսից արքայի հրավերն ընդունելուն:
- 4) Սուշեղը բերդակալը սակայն ավելորդ համարեց կանանց գրույցներին մասնակցելը:

8. Ո՞ր նախադասության մեջ փակագծեր պիտի դրվեն (նախադասությունները կետադրված չեն):

- 1) Նրանք նահատակներ էին նրանց այրել էր կրակը խեղդել էր պղտոր Արաքսը խոցել էր բարբարոսի թուրը:
- 2) Տիկինը հրամայեց բարեվայելչորեն ընդունել հայոց մեծ հայրապետի որդուն տիկինը տանել չէր կարողանում հայրապետական տան մնացած անդամներին և հավոր պատշաճի պատվել:
- 3) Տեղ-տեղ հաղորդակցությունը կտրում էին մթին անքափանց անտառները նրանց մեջ ապրող մարդիկ իրենց աշխարհի սահմաններից դուրս մի այլ աշխարհ չէին ճանաչում:
- 4) Հայոց գետերի հինգ մեծամեծ նահատակները իրենց վրա կամուրջներ չէին հանդուրժում աղամորդու ձեռքն ու հնարամտությունը դեռ անզոր էին զսպել նրանց:

9. Նախադասություններից քանիս՝ ի շեշտը սխալ տեղում դրված:

1. Ավտորուսում չ'ծխել:
2. Պահպանել լրություն:
3. Ալր մի զցեք շքամուտքում:
4. Չքափել ջուրը:

- 1) Երկուսում
- 2) մեկում
- 3) երեքում
- 4) չորսում

10. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ կա:

- 1) Թուղթը գրված է, և ինչ որ գրված է՝ չի ջնջվի:
- 2) Մի պահ Ասոնք կարկամեց (անակնկալ էր ամեն ինչ) և անկարող եղավ միանգամից ըմբռնել՝ ինչ կատարվեց:
- 3) Երբ ձիավորն ընկավ, Արծվին նետվեց նրա վրա՝ իմանալո՛ ով էր:
- 4) Գիտեր՝ ուրիշ ճամփա չկար. միմիայն տանջանքների միջով անցնելով էր այրուածին փրկվելու:

11. Ո՞ր նախադասության մեջ կետադրական սխալ չկա:

- 1) Նա, անակնակալի գալով, գրեթե ցնծաց, երբ մի պահ հանկարծ զգաց, որ կարողանում է քորի վրա մարդկանց դիմագծեր ուրվագծել՝ անզամ աշքերը փակած:
- 2) Մենելայոսը գրկաբաց ընդունեց եկվորներին և հյուրընկալության հենց առաջին օրը նրանց պատվին մի ճնշ խնջույք կազմակերպվեց, որը ժամեր անց՝ կեսգիշերին, վերածվեց արբշիո գինարբութի:
- 3) Ինչեւ, փաստն այն էր, որ պայքարունը միայն թեթևակի ցնցել էր շենքը՝ բռնելով այն անվճառ մնա, բայց դժոխային մերենայի՝ սարսափ առաջացրած պայքարունից հրդեհ էր բռնկվել:
- 4) Երբ արդեն ներսում էր, ասաց, որ քաղցած չէ, ուզում է քննել. նա ամեն կերպ ճգնում էր կուահել՝ այդ վաս բանը կատարվե՞լ է, թե՞ ոչ:

12. Նախադասություններից քանի՞սն են ճիշտ կետադրված:

1. Զգում էր, որ շուտով կորցնելու է գիտակցությունը և ճիգ թափելով հազիվ մնում էր ոտքի վրա:
2. Որ երկրից էր ժամանել անձանոթը, ոչ ոք չգիտեր:
3. Կարմիր պառավ ձին սիրու չէր անում գնալ դեալի քուուակը. վախենում էր իր ոտնաձայնի մեջ կորցնի քշնամու քաքուն ձայները:
4. Եվ այստեղ ահա պարզվեց այն առեղծվածը, որ ոչ չէր կարողանում բացատրել՝ ոչ թագավորն ու սպարապետը, որ նայում էին, ոչ ինքը՝ իշխան Կամարականը:

 - 1) մեկը
 - 2) երկուսը
 - 3) երեքը
 - 4) ոչ մեկը

13. Նշվածներից ո՞րը չկա ստորև բերված հատվածում (նախադասությունները կետադրված չեն):

Մարդը որ ամեն անզամ հայտնվում էր բեմում ներկայացնելու արտիստի անելիքը չհայտնվեց: Ծափերը բուռն ու պահանջող չէին դադարում: Վերջապես բեմ ելավ արտիստը կանգնեց բեմի կենտրոնում ժպիտներից ամենահրապուրիչը շուրբերին: Հանդիսականների արտիստի դեմքին գամկած հայսացքներում խտացավ անհամբեր սպասումը:

Արտիստն այս անզամ ընտրել էր տերյանական գոհարներից մեկը «Անդարձություն»:

- 1) դերբայական դարձված
- 2) բացահայտիչ
- 3) սրոհված հատկացուցիչ
- 4) գեղչված ստորոգյալ

14. Նշվածներից ո՞րը չկա ստորև բերված հատվածում (նախադասությունները կետադրված չեն):

Ծանապարիի դեսպի Գանձակ տանող հատվածում նրանք տեսան հայ-քուրքական բախումների սուլայի հետևանքները ամայացած բնակավայրեր կիսավեր տներ ծխացող ավերակներ: Ուղեկցորդը վագոն մտնելով խորհուրդ տվեց տղաներին չիջնեն գնացքից:

- 1) սրոհված հատկացուցիչ
- 2) բացահայտիչ
- 3) բազմակի անդամներ
- 4) սրոհված որոշիչ

15. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:

Հովհաննիսյանը (1) ի տարրերություն մյուսների (2) նոր կարգերից չեր բողոքում (3) միայն նեղութ էր այդ տարիքում զարգական դառնալու համար: Քաղաքականությունից խոր բացվելիս (4) փորձում էր Վահանից իմանալ (5) ինչ լուծում են տալու բոլշևիկները այս կամ այն հարցին: Այդ հարցերի մեջ ամենակարևորը թե նրա (6) և թե ընկերների համար իրենց ողբացյալ հայրենիքի Հայաստանի (7) ճակատագիրն էր: Երբ Վահանը (8) ամեն ինչ հուսադրող շեշտերով ներկայացնելով (9) պարզաբնութեր էր անում Հովհաննիսյանը քթի տակ ժամանակված էր:

- 1) 1, 2, 3, 8, 9, 10
- 2) 2, 4, 5, 6, 7, 10
- 3) 1, 2, 4, 8, 9
- 4) 2, 3, 5, 7, 8, 10

16. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:

Զին սկսեց արածել իսկ ինքը սանձը բաց բողնելով (1) պառկեց խոտերին: Ամպոտ օր էր (2) և քամի չկար: Թույլ-թույլ ճողփում էին Փարվանայի ջրերը իսկ լեռնանցքի կողմից մառախուսի մի հսկա զանգված դանդաղ սահերով (3) շարժվում էր դեպի լճի (4) մեղմ զեփյուսից թերևակի կնճոտությած (5) կապտավուն մակերեսը:

Վահանը խոտերին թիկնած (6) ճայում էր լճի փայլատ ջրերին (7) զգալով որ անցնում են այն հուսահատեցնող ընկճվածությունը (8) հոգու (9) այն անդոր մեղվածությունը որ տանջում էին իրեն (10) մոր հիվանդության լուրն ստանալու օրվանից սկսած:

- 1) 2, 3, 4, 7, 9
- 2) 1, 2, 3, 6, 8
- 3) 1, 4, 5, 7, 9
- 4) 2, 4, 6, 7, 8

17. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում ստորակետ պիտի դրվի:

Իմ հարևան խուզացի արտիստները (1) հրամեշտ տալով մեզ (2) Մեծ պասի հենց առաջին օրն ուղևորվեցին իրենց հայրենիք: Այդ օրը տիսրել էինք բոլորս (3) արդեն վարժվել էինք հարևաններին:

Հենց այդ օրը Լուիզան ինձ ասաց (4) թե ինքն էլ մեկ ամսից ուղևորվելու է իր հայրենիքը Իտալիա (5) և վերադառնալու է մեկ տարուց: Հարցը վճնված էր (6) մայրը վաղուց էր հաշտվել աղջկանից բաժանվելու մտքի հետ: Երբ Լևոնին հայտնեցի Լուիզայի ուղևորության մասին (7) ինձ թվաց (8) լուրը նրա վրա մի առանձին տպավորություն չգործեց: Գուցե նրանից էր (9) որ այդ օրերին նա առհասարակ շատ տխուր էր (10) թախծուտ ու ինքնամփոփ:

- 1) 2, 3, 5, 7, 8, 10
- 2) 1, 3, 4, 6, 8, 10
- 3) 2, 3, 4, 6, 7, 9
- 4) 1, 2, 4, 5, 7, 9, 10

18. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:

Ծառ տարիներ առաջ (1) Վաճա ծովի ափին ապրում էին մարդ ու կին (2) Գնելն ու Շահանդուխտը: Այդ բարի մարդիկ անփարատելի վիշտ ունեին (3) Սստված նրանց զավակ չէր պարզեցն: Նրանք անսալով դրացիների խորհրդին (4) գնացին ամենազորավոր սրբի (5) Գրիգոր Նարեկացու շիրմին (6) այցի և հրաշք կատարվեց (7) չանցած ինն ամիս (8) արու զավակ ունեցան: Ի մեծարումն սրբի (9) տղային անվանակոչեցին Գրիգոր:

- 1) 2, 5, 8, 9
- 2) 1, 2, 4, 6, 9
- 3) 2, 3, 5, 7
- 4) 1, 4, 5, 8

19. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:

Վահանը Մուկվայից շիեռանալու պատճառ իսկապես ուներ (1) նա նամակով դիմել էր Էջմիածին (2) Գևորգյան ճեմարանի վարչությանը (3) խնդրելով (4) օգնել իրեն (5) մեկնելու արտասահման (6) մասնագիտության մեջ խորանալու: Մուտքում էր (7) կրնառաջեն ամմիջապես և իր (8) Մուկվայում մնալն անհրաժեշտ է:

Սակայն ճեմարանից եկավ մերժողական պատասխան և նա տեղի տալով Սուսաննայի խնդրանքին (9) մեկնեց Ստովոպոյ:

- 1) 2, 3, 5, 6, 7
- 2) 1, 2, 4, 6, 8
- 3) 2, 3, 4, 7, 8
- 4) 1, 2, 5, 6, 9

20. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:

Մելանագույն թերեւ թիկնոցի մեջ պարուրված (1) աստվածային կեցվածքով (2) կանգնած էր Համեստը թեմի ճախակողմյան հատվածում (3) աչքերում արցունքի երկու խոշոր կարիլ (4) որոնց դիսշելով (5) էլեկտրական լույսի շողերը թեկվում լցվում էին դահլիճ (6) ցրելով մուրը: Հետո եղբ քեմու եղած մարդիկ հեռացան (7) նա մոտենալով իր նման սևազգեստ մեկին (8) շշնչաց վերջինիս ականջն ի վար Մարդ էր Հորացիո...

- 1) 1, 2, 3, 8
- 2) 1, 3, 5, 6
- 3) 2, 3, 5, 7
- 4) 2, 4, 5, 8

21. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:

Միջագետքի ավագուտներում (1) քաղցած ու բորիկ դեպի անհայտություն էին քայլում հայերի (2) քուրքական յարաղանից հալածված (3) վերջին թեկորները: Թվում էր (4) փշրվեց այրվեց ամեն ինչ (5) հող հայրենիք հույս: Ծերունի տառցիչը (6) իր շուրջը հավաքելով ողջ մնացած հատուկնն մանուկներին (7) ձեռնափայտով օտար ավագներին գծում էր մեսրոպյան գրերը (8) ջանալով մանուկների հոգում դրշմել դրանք (9) որպես վերապրումի քալիսման :

- 1) 1, 2, 3, 5, 7
- 2) 2, 4, 5, 8, 9
- 3) 1, 2, 4, 6, 7
- 4) 2, 3, 6, 7, 8

22. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:

Լու Անջելեսի արքանյակ քաղաքում (1) Փասադենայում հայերեն նոր թերթ էր հիմնվում (2) «Մասիս» (3) հիմնադրամ պիտի ստեղծվեր հրատարակության (4) նախօրոր հաշվարկված (5) ծախսերը հոգալու համար: Դրամական միջոցների (6) հայերի շրջանում կազմակերպված հանգանակությանը մասնակցեցին շատերը (7) ի բիվս նրանց յոթ-ութ տարեկան մի տղա(8) Հարություն Գրիգորյանը: Նա թերքին նվիրեց ութ դոլար այդ գումարը գոյացած պաղպաղակի և անուշեղենի համար տատիկի տված ցենտերից (9) դարձավ հիմնադրամի(10) մանկական մարուր ձեռքերով դրված հիմնաքարը:

- 1) 1, 2, 6, 8, 10
- 2) 2, 4, 7, 8, 9
- 3) 1, 3, 4, 7, 10
- 4) 2, 3, 5, 6, 8

23. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում բութ պիտի դրվի:

Հազար ինը հարյուր մեկ թվականի հունվարի առաջին օրն էր (1) Նոր տարվա գիշերը: Մեծ-մեծ փարիներով ձյուն էր գախս (2) տիեզերական խաղաղություն սփուռով շուրջողորը: Զգիտես (3) ինչու Զոհրապն ու կինը հավատում էին (4) նոր լարը հետևում քողնելով հինը (5) բարություն և արդարություն է բերելու: Նրանք որոշեցին նոր դարը դիմավորել դրսում (6) լիովին հանձնվելով նրա բարեգործյանը: Մենակ չէին (7) հարևան տներից ևս մարդիկ կային: Թիթեռի թևերի նման օրորվելով (8) հանդարտ իջնում էին ձյան փարիները (9) գիշերային ծյունաշաղախ անդրորը բնության պարզեն էր մարդկանց (10) տրամադրելով նրանց նոր ակնկալիքների:

- 1) 2, 3, 4, 5, 7, 9
- 2) 1, 2, 4, 6, 8, 10
- 3) 1, 3, 5, 6, 7, 10
- 4) 2, 4, 6, 7, 9

24. Պատասխանների ո՞ր տարրերակում են ճիշտ նշված այն թվերը, որոնց տեղում միջակետ պիտի դրվի:

Այս նամակի հետ քեզ ուղարկում եմ դրամական մի չեկ (1) երբ ծախսեն երկու ֆրանկ (2) մի մոռացիր հիշեցնել քեզ որ երրորդը քոնք չէ (3) այն պետք է պատկանի այն անծանոթին որն ունի դրա կարիքը: Իսկ դու կգտնես այդպիսի մեկին: Դու զիտես (4) ես շատ ժամանակ եմ անցկացրել կրկեսում և միշտ երկուր եմ զզացել լարախաղացների համար: Բայց քեզ պետք է ասեմ ճշմարտությունը (5) մարդիկ գետնի վրա ավելի անհաստատ եմ (6) քան լարախաղացները երերուն լարի վրա: Գուցե այս զիշեր քեզ կուրացնի մի թանկագին աղամանդի փայլը (7) հենց դա էլ կյիմի քո անհուսալի պարանը (8) և քո անկումն անխուսափելի է: Ես կցանկանայի (9) հրաշք կատարվեր (10) դու իսկապես կհասկանայիր այն բոլորը իմ ցանկացած ասել քեզ:

- 1) 2, 5, 6, 7, 9
- 2) 1, 3, 4, 6, 8, 10
- 3) 1, 3, 5, 7, 10
- 4) 3, 5, 8, 9, 10

25. Նախադասություններից քանիսո՞ւմ բութ պետք է դրվի:

1. Խուլ աղմուկը մատնում էր պարիսպներով շրջապատված մայրաքաղաքի արևածագից սկսված եռուղեռը:
2. Սպարապետը խանդաղատանքով նայեց իր բնօրբանին զգալով որ կարոտից այրվում է:
3. Երեխանները լապտերները ձեռքներին վազվում էին վառելով ու հանգնելով:
4. Օրիորդի հետի կինը որ հասակավոր մի իշխանուիի էր նման Վարդան Մամիկոնյանին վեր կացավ տեղից:

- 1) մեկում
- 2) երկուսում
- 3) երեքում
- 4) չորսում

26. Նախադասություններից քանիսո՞ւմ միջակետ պիտի դրվի:

1. Քանաստեղծությունները խմբավորեց ըստ շարքերի «Մթնշաղի անուրջներ» «Հսկումի գիշեր» «Ուսկի հեքիաթ» և «Վերադարձ»:
 2. Երկրորդ շարքի վերնազիրը դարձյալ դուր չէր գալիս միստիկ ու չապրված ինչ-որ բան կար այդ «հսկում» բառի մեջ:
 3. Մատիտով վերևում գրեց «Գիշեր և հուշեր» ու այդպես բողեց մինչև տպագրության հանձնելը այդ ընթացքում կերևար որն է ավելի հարմար:
 4. Մի քանի գործեր արդեն տպագրված մամուլում չդրեց ժողովածուի մեջ մտածեց որ բույլ են և շեղվում են ընդհանուր տրամադրությունից:
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

27. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:

1. Տասնվեց-տասնյոթ տարեկան մի պատճի, դուրս գալով դպրոցից և ստեղ-ստեղ շոշափելով գրպանի թանկարժեք պարունակությունը՝ հասունության վկայականը՝ դեգերում է Գյումրի քաղաքի հրապարակում:
 2. Տարտամ քայլերով անցնում էր նա հյուրանոցի առջևով և հանկարծ շրջվելով՝ տեսավ շրամուտքից դուրս եկող մի մարդու՝ վիրխարի գամփոի շղթան ձեռքին:
 3. Մինչև քարզմանվեհն Վահանից առգրավված գրքերը, մինչև ծանրանային դրանց բովանդակությանը՝ ահազին ժամանակ կանցներ:
 4. - Մենք ձեզ չենք վոնդում. Եթե ցանկություն ունեք՝ կարող եք գիշերել ցախատանը,- ասել էր տանտերը՝ գիխով ցույց տալով բակի ցածրիկ շինությունը:
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) չորսում

28. Նախադասություններից քանիսո՞ւմ կետադրական սխալ կա:

1. Դժվար է ասել՝ իր օրվա ծնունդն ու գեղեցկությունն ավետելու շնորհի՞վ, թե՞ մի այլ պատճառով, քայլ քարակաքավը հնուց ի վեր սիրելի է եղել հայ ժողովրդին:
 2. Արդեն մի քանի ամիս էր, Շիրվանզարեն պատկած էր հիվանդանոցում, և ասում էին, որ վիճակը այնքան էլ լավ չէ:
 3. Այդ պահին նկարչին թվում է՝ չէր հետաքրքրում արյունոռուշտ թշնամու ոճրաբնի հրկիզումը, նույնիսկ նոտալուտ փրկության հույսը, որն իր հետ բերում էր առավոտը՝ պճնված հրակարմիր ցոլքերով:
 4. Երբ արդեն տաղտկալի նավագնացության հաջորդ շաբաթվա վերջն էր, նա հասավ Էվրոտասի գետաքերանը և ընկերոց՝ Էնեասի հետ, դուրս եկավ ափ՝ մի փոքր շրջելու:
- 1) երեքում
 - 2) չորսում
 - 3) երկուսում
 - 4) մեկում

ԳԼՈՒԽ 6 ՈճԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

1. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածված:

«...Ծառ բաներ բերեց մեր աշխարհին խարտյաշ և մազերի ծայրը գանգուր այս Երվանդյան *Sիգրանը*, որ գունեղ երեսով էր և քաղցր նայվածքով, վայելչակազմ էր և թիկնեղ... Նրա մասին մեր հները, որոնք փանդիրի նվազածությամբ երգում էին, ասում էին, թե մարմնական ցանկությունների մեջ ևս չափավոր է եղել... Ամեն բանի մեջ արդարադատ և հավասարասեր կշեռք ունենալով՝ յուրաքանչյուրի կյանքը կշռում էր իր մտքի լծակով»:

1. մակդիր
2. փոխարերություն
3. համեմատություն
4. չափազանցություն

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

2. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածված:

«Երբ պարսից պատաճիները ես էիմ դառնում, մերոնք անմիջապես հասնում էիմ նրանց հետևից և ինչպես փոքրորիկ, որ անտառը տերևաբան է անում, արագորեն նիզակներով նրանց վայր էիմ զցում ձիերից, դիակները երկրի երեսին փռում...»:

- 1) մակդիր
- 2) հակադրություն
- 3) համեմատություն
- 4) անձնավորում

3. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածված:

*Եւ շա ՝ ո ցաւեցոյց զմէջք փափուկ օրիորդին,
Արագ հասուցանելով ի բանակն իւր:*

- 1) մակդիր
- 2) համեմատություն
- 3) հանգ
- 4) չափազանցություն

4. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածված:

*Հառաջում է ողջ աշխարհը.
Կորիծները քարացած,
Երազների մեջ են ընկնում՝
Էս աշխարհից վերացած:*

- 1) համեմատություն
- 2) փոխանունություն
- 3) հակադրություն
- 4) աստիճանավորում

5. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածված:

Հայրը իմշալես մոռայլ մի ամպ,
Աղջիկն անուշ մի լուսին,
Ամպ ու լուսին իրար փարզված՝
Դուրս են գալի միասին:

1. համեմատություն
2. մակդիր
3. փոխանունություն
4. չափազանցություն

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) բոլորը

6. Տրված հատվածում ընդգծվածներից քանի՞սն են մակդիր:

Թե զինվոր տեսնեմ, մահ եմ սպասում,
Թե պատգամավոր՝ դառն խստություն...
Եթե տեսնում եմ ինձ հասնող բարիք,
Փախուստ եմ տալիս չար կասկածներով...

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) բոլորը

7. Տրված հատվածում ընդգծվածներից քանի՞սն են մակդիր:

Մեջս եմ ամփոփել երկրայինը **ողջ**,
Աղոթանվեր պատգամավորն եմ **համայնք** աշխարհի:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

8. Տրված հատվածում նշված պատկերավորման-արտահայտչական միջոցներից քանի՞սն են գործածված:

Բերանն՝ երկթերթ, վարդ էր կաթում շրբունքներից,
Երբ խոսում էր, ասես տավղի
Քաղցրանվագ ձայն էր հնչում...
Լուսափայլ էր ծոցը՝ կարմիր վարդով լցված,
Դաստակները՝ ծիրանագույն մանուշակի գեղեցիկ փունջ:

1. համեմատություն
2. մակդիր
3. աստիճանավորում
4. չափազանցություն

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) բոլորը

9. Տրված հատվածում նշված պատկերավորման-արտահայտչական միջոցներից ո՞րը գործածված է:

Հանգստի ժամին լինում է միշտ տանջահար, հոգնած,
Խրախնանքի մեջ՝ տիտուր ու տրտում,
Դեմքով միշտ ժպտուն, բայց մտքով խոցված,
Տեսքը ծիծաղկոտ, աչքը ողբի մեջ,
Արտաքուստ թեև ձևանում է հանգիստ, սփոփված,
Բայց արտասուրը լուր վկայում է կակիծը սրտի:

- 1) հակադրություն
- 2) մակդիր
- 3) փոխաբերություն
- 4) համեմատություն

10. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ի՞նչ միջոց է գործածված:

Ծուշանըն շողեր հովտին,
Ծողղողեր դէմ արեգական...
Ծուշանըն շաղով լոցեալ,
Ծող շաղով և շար մարգարտով:

- 1) բաղաձայնույթ
- 2) համեմատություն
- 3) հակադրություն
- 4) չափազանցություն

11. Տրված հատվածում համեմատության քանի՞ դեպք:

Կյանքս այս աշխարհում նման է մրրկածուի ծովի,
Ուր բազմակինակ ու ալեխոռով հորձանքների խոլ,
Անդով, անընդմեջ ընդդիմախուժմամբ
Տարուրերվում է, ցնցվում է հոգիս
Մարմնիս շինվածքում, ինչպես նավակում:

- 1) մեկ
- 2) երկու
- 3) երեք
- 4) չորս

12. Տրված հատվածում նշված պատկերավորման-արտահայտչական միջոցներից ո՞րը գործածված է:

Մանավանդ չէ՝ որ դու լույս ես ու հույս,
Իսկ ես խավար եմ ու հիմարամիտ.
Դու՝ փառաբանված բարի իսկություն,
Ես՝ ամեն ինչով չար ու ապիկար...
Դու՝ բարձրյալ, առանց հոգս ու վշտերի,
Ես՝ տագնապահար ու տաժանավոր.
Դու՝ վեր երկրային բոլոր կրքերից,
Ես անարգ կավ եմ ու գարշելի հող...

- 1) հակադրություն
- 2) փոխաբերություն
- 3) հանգ
- 4) մակդիր

13. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ի՞նչ միջոց է կիրառված:

Եւ այս էր բան քո հրամանի,
Արդար, իրաւ դատաւորի,
Որ մէկն ապրի տասըն տարի,
Սեկոն հարիւր, այլ՝ աւելի,

- 1) հակադրություն
- 2) բաղաձայնույթ
- 3) համեմատություն
- 4) աստիճանավորում

14. Տրված հատվածում գեղարվեստական պատկերավորման ի՞նչ միջոց է կիրառված:

Ինչպես մի հեղեղ վեր կենար հանկարծ,
Երկնքի մքնած անպերից իշներ,
Ինչպես փոքրիկ՝ սաստիկ սրընթաց,
Գյուղից սլացան մի խումբ կտրիճներ:

- 1) չափազանցություն
- 2) աստիճանավորում
- 3) հակադրություն
- 4) անձնավորում

15. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ի՞նչ միջոց է գործածված:

Սէկն ի պապանց՝ պարոնորդի,
Սէկն ի հարանց մուրող լինի,
Սէկին հազար ձի եւ զորի,
Սէկին ո՛չ ուլ մի, ո՛չ մաքի,

Սէկին հազար դեկան ոսկի,
Սէկին ոչ փող մի պլողնձնի,
Սէկին բեհեղ և ծիրանի,
Սէկին բըրդէ շալ մի շընկնի...

- 1) մակդիր
- 2) համեմատություն
- 3) հակադրություն
- 4) անձնավորում

16. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:

Ինչի՞ց է, որ Հայաստանում
Ջրերը չեն հանգստանում,
Այլ քարեքար ընկած այսպես
Հնուց ի վեր, գժվածի պես,
Շառաջում են կիրճերն ի վար
Եվ ճշում են տագնապահար:

- 1) փոխանունություն
- 2) հանգ
- 3) համեմատություն
- 4) անձնավորում

17. Տրված հատվածում համեմատության քանի՞ դեպք կա:

Ժամ-ժամ զիմ դարիվութիւնս ես յիշեմ և նըստիմ ու լամ,
ճապղեր եմ ջրի նման, ի օտար երկիր կու գընամ,
Ցորեկն եմ նետի նման, զով տեսնեմ ի դէմ կու զնամ,
Գիշերն եմ աղեղան նըման, ես լարքափ ի վար կու մընամ:

- 1) մեկ
- 2) երկու
- 3) երեք
- 4) չորս

18. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածված:

Սոսավում է ու սիրով սարն է ելնում իմ սոսին,
Սոսին՝ իմ սեզ հարսի պես՝
Լուսնի ոսկե կուժն ուսին...

ա. փոխաբերություն
բ. շրջադասություն
գ. համեմատություն
դ. բաղաձայնույթ

- 1) մեկը
- 2) բոլորը
- 3) երկուաը
- 4) երեքը

19. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:

Սայաբ-Նովան ասաց՝ դարձրու կանց մե ճարըն շատացիլ է.
Չունիմ վաղվան քաղցր փառքըս, հիմի դարըն շատացիլ է.
Բըլբուի պես էնդուր գու լամ՝ վարթիս խարըն շատացիլ է.
Չին բողնում վախտին բացվելու՝ քաղերումնեն բեզարիլ իմ:

- 1) համեմատություն
- 2) մակդիր
- 3) փոխաբերություն
- 4) չափազանցություն

20. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են կիրառված:

Այնպես զգվող է երեկոն անափ,
Ծաղկմերն այնպես նազով են փակվում,
-Շուրջս վառված է մի անուշ տագնապ,
Սի նոր հուզում է սիրտս մրրկում...

1. մակդիր
2. շրջադասություն
3. փոխաբերություն
4. համեմատություն

- 1) մեկը
- 2) երկուաը
- 3) երեքը
- 4) չորսը

21. Ըստգծվածներից ո՞րը մակրիր չէ:

- 1) **կարմիր** սարսուո
- 2) **որորիկ** երազներ
- 3) **արծկակեռ** քիք
- 4) **ծերմակ** գաղափար

22. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից ո՞րն է գործածված:

«Անոնք անցյալ են, մենք՝ ապանի, անոնք խավար են, մենք՝ լույս, անոնք տղիս են, մենք՝ գիտուն, անոնք սուր են, մենք՝ գրիչ, անոնք ատելություն են, մենք՝ սեր, անոնք կրակ են, մենք՝ ջուր, անոնք միս են, մենք՝ բանջարեղեն, անոնք վարունգ են, մենք՝ խնձոր, անոնք փուշ են, մենք՝ վարդ...»:

- 1) չափազանցություն
- 2) աստիճանավորում
- 3) մակդիր
- 4) հակադրություն

23. Ընդգծվածներից ո՞րը մակդիր չէ:

- 1) **սպասման** հիվանդ
- 2) **ծառակում** ձյուն
- 3) **վարսարափ** ուռի
- 4) **դժգույն** մագաղաք

24. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական նշված միջոցներից քանի՞սն են գործածված:

Պատուհանը մատնահարեց ու անցավ,
Հովն հերարձակ աշունին.
Չարաճրի ինչպես աղջիկ մը, ինչպես
Խաղընկեր մը՝ դըրան ետին մոռցըված...

- ա. անձնավորում
- բ. համեմատություն
- գ. չափազանցություն
- դ. մակդիր

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

25. Տրված բոլոր նախադասություններում պատկերավորման-արտահայտչական միևնույն ո՞ր միջոցն է գործածված:

1. «Զյունաջրի առվակների պես նորա երակներում արյունն ավելի էր եռում, և ծիծաղում էր, կոկորդային ձայներ հանում»:
2. «Երեկոյան մութի մեջ նրանք ավելի հաղթամարմին էին, ինչպես զեր եզները»:
3. «Մի հարկի տակ ուր տարի ապրել էին և այդ տարիներում վարժվել էին իրար, ինչպես ձին է վարժվում ախտոյին»:
4. Իսկ զրնգուն սուրմաները կայտառ կոհակների նման ծափ էին զարկում»:

- 1) համեմատություն
- 2) բաղաձայնույթ
- 3) փոխաբերություն
- 4) մակդիր

26. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:

Ամպերով գոռաց երկինքը զարհուր,
Ցավից անձրևը կարկուտի փոխվեց,
Անեծք կայծակեց ու լացեց անհույս,
Ու մնաց լուսինն աշքում երկնքի
Որպես մի շիքը սառած արցունքի:

- 1) փոխաբերություն
- 2) համեմատություն
- 3) անձնավորում
- 4) հակադրություն

27. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցը գործածված չէ:

ԱՇԽ, ինձ ծլել շրողին,
Էլ ուր մնաց կանաչել:
Ծանոթանալ շրողին,
Էլ ուր մնաց ճանաչել:
Ինձ հառաչել շրողեց
Էլ ուր մնաց շառաչել:

- 1) աստիճանավորում
- 2) բաղաձայնույթ
- 3) փոխաբերություն
- 4) հակադրություն

28. Ընդգծվածներից ո՞րը մակրիր չէ.

- 1) արևի **ջահել** համբույր
- 2) **անտուն** շրջմոլիկ
- 3) **բույր** ջրեր
- 4) շողը՝ **հակիմքացած խաղող**

29. Տրված հատվածում պատկերավորման-արտահայտչական ո՞ր միջոցն է գործածված:

...Եվ այդ քարեղեն երկնքի միջից
Սասրի մի բուփ է զլխիվայր բուսել,
Որ դպարել է երկնքի շնչից,
Բայց ոչ մի անգամ երկինք չի տեսել:

- 1) չափազանցություն
- 2) համեմատություն
- 3) հակադրություն
- 4) մակրիր

30. Ընդգծվածներից քանի՞սն են մակրիր.

1. **արքնացող** ամայ
2. **քարակ** մութ
3. **քարե** ամպրոպ
4. **ծծմբային** գոլորշի
5. **խոնավ** մութ
6. **կարմիր** սարսուռ

- 1) երեքը
- 2) չորսը
- 3) հինգը
- 4) երկուսը

31. Տրված բառերը գործառական ո՞ր ոճին են հատուկ:

Արձակ, դյուցազներգություն, դրամա, կերպար, կլասիցիզմ, հերոս, վիպակ, քերթված, քնարական, հայրեն, չափածո:

- 1) գեղարվեստական
- 2) գիտական
- 3) հրապարակախոսական
- 4) վարչական

32. Տրված բառերը գործառական ո՞ր ոճին են հատուկ:

Սրտառուչ, գլխիկոր, հեզասահ, դյուրիչ, անհաս, լազուր, հողեղեն, անվրդով, եղեմական, թուղիչ:

- 1) գիտական
- 2) վարչական
- 3) հրապարակախոսական
- 4) գեղարվեստական

33. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:

Հնչերանգը բանավոր խոսքի անբաժանելի տարրերից մեկն է, լեզվաբան Շարլ Բալլի արտահայտությամբ՝ խոսքի մշտական մեկնաբանը: Հնչերանգը ոմանք համարում են բառի, ոմանք էլ՝ նախադասության անբաժանելի հատկանիշ, այնինչ հնչերանգը անբաժան է ոչ միայն բառից ու նախադասությունից, այլև խոսքից:

- 1) գեղարվեստական
- 2) վարչական
- 3) հրապարակախոսական
- 4) գիտական

34. Գործառական ո՞ր ոճով է շարադրված հետևյալ հատվածը:

Վահան Թեքեյանը անցել է գրական-գեղարվեստական կյանքի կեսդարյա ճանապարհ, որի ուղիղ կեսը՝ սփյուռքահայ շրջանում: Լինելով 20-րդ դարասկզբի արևմտահայ գրականության նշանավոր դեմքերից մեկը՝ նա իր գրական գործունեությամբ ու վաստակով դարձավ հավասարապես նաև Սփյուռքի գրող:

- 1) գեղարվեստական
- 2) գիտական
- 3) հրապարակախոսական
- 4) առօրյա խոսակցական

35. Գործառական ո՞ր ոճին է պատկանում հետևյալ հատվածը.

Հարազատներ, աշխարհի չորս կողմը սփոված հայրենակարուս եղբայրներ ու քույրեր:

Հավատացեք, որ կա այն օրը, երբ համայն հայ ժողովուրդը կհավաքվի իր մայր հայրենիքում, կհավաքվի առավել թափով ու խանդավառ՝ կառուցելու և ստեղծելու ավելի խաղաղված սրտով: Հայ ժողովուրդը ապրել է, ապրում է, պիտի ապրի:

- 1) առօրյա-խոսակցական
- 2) հրապարակախոսական
- 3) գիտական
- 4) վարչական

36. Նշված հատկանիշներից ո՞րը բնորոշ չէ վարչական ոճին.

- 1) բառերի ուղղակի իմաստների օգտագործում
- 2) փոխաբերության բացառում
- 3) դերբայական դարձվածների հաճախակի գործածություն
- 4) խոսողի անձնական վերաբերմունքի արտահայտում

37. Պնդումներից քանիս՞ւմ սխալ կա:

- ա. Վարչական ոճին բնորոշ է գրաբարյան և աշխարհաբարյան նախդրավոր կապակցությունների գործածությունը:
 - բ. Գիտական ոճը առանձնանում է տրամաբանական հասկացությունների և դատողությունների օգտագործմամբ:
 - գ. Հրապարախոսական ոճի գործառության հիմնական ոլորտը հասարակական-քաղաքական հարաբերություններն են:
 - դ. Գեղարվեստական ոճի գրվածքներում կարող են լինել տարբեր ոճերի տարրեր:
- 1) մեկում
 - 2) երկուսում
 - 3) երեքում
 - 4) ոչ մեկում

ԳԼՈՒԽ 7**ԸՆԴՀԱՆՈՒՐ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՄԱՍԻՆ****1. Նշված հեղինակներից ո՞վ է միջին հայերենով ստեղծագործել:**

- 1) Սիմեոն Գոշը
- 2) Գրիգոր Նարեկացին
- 3) Խաչատուր Աբովյան
- 4) Միսաք Մեծարենցը

2. Ո՞ր հայերենով են գրված հետևյալ տողերը.

*Ափ մը մոխի՛ր աճյունիս հետ, Հայրենի տուն,
Ափ մը մոխի՛ր քո մոխիրեն ո՞վ պիտ քերե,
Ափ մը մոխի՛ր քու ցավե՞դ, քու անցյալե՞ն,
Ափ մը մոխի՛ր, իմ սրտիս վրան ցանելու:*

- 1) միջին հայերեն
- 2) արևմտահայերեն
- 3) գրաբար
- 4) արևելահայերեն

3. Ո՞ր հայերենով է տրված հատվածը:

*Էրմեկ ես անոր կու տամ, որ առեր իւր եարն է փախեր.
Ոնց որ բզկարմուցն անցեր, ջուրն ելեր, զկարմուցն է տարեր:*

- 1) արևմտահայերեն
- 2) միջին հայերեն
- 3) արևելահայերեն
- 4) գրաբար

4. Ո՞ր բարբառի հիմքի վրա է ձևավորվել գրական արևմտահայերենը:

- 1) Արարատյան
- 2) Մշո
- 3) Պոլսի
- 4) Կարնո

5. Ո՞ր պետումն է սխալ:

- 1) Գրավոր հայերենը անցել է զարգացման երեք հիմնական փուլ:
- 2) Գրական արևելահայերենը ձևավորվել է Արարատյան բարբառի հիմքի վրա:
- 3) Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի լույս տեսնելուց հետո գրաբարը վերջնականացես դադարում է գործածվելուց:
- 4) Հայերենը հնդեվրոպական լեզվաբնութանիքի լեզու է:

6. Ո՞ր հայերենով է տրված հատվածը:

*Հուր հորիզոնն մարեցավ,
Երկինքն աստղեր փրրեցամ,
Համբույր մնամի դարձյալ ես
Հանուն աստեղ ցիրեցամ:*

- 1) արևմտահայերեն
- 2) միջին հայերեն
- 3) արևելահայերեն
- 4) գրաբար

7. Ո՞ր հատվածը ո՞ր հայերենով է:

- ա. Անձինն ի շարժել մարզարտափայլ գեղով.
Ոտիցն ի գնալ շողն ի կաթել առնոյր:
- բ. ...Նարդոս, քրքում էր ինձ բերում,
Վարդ մանուչակ էր պարզեւում,
Առավոտյան ցողն էր իջնում,
Ռոկենման շողն էր փայլում...
- գ. Դուն կըրակ, հաքածող կըրակ, վո՞ւ մե կըրակին դիմանամ, Հընդու դալամքարու վըրէն ծածկիլ իս մարմաշ, նազա՞նի:
- դ. Պազըն որ դրամով լինի, չեմ իտար, թաշխարհ աւերի,
Թէ ինձ մուրատով կուզես, եկո պա՛զ, հաւասդ անցանի:
1. գրաբար
2. միջին հայերեն
3. թիֆլիսահայ բարբառ
4. արևելահայերեն
- 1) ա-1, բ-4, զ-2, դ-3
 - 2) ա-4, բ-1, զ-2, դ-3
 - 3) ա-1, բ-3, զ-2, դ-4
 - 4) ա-1, բ-4, զ-3, դ-2

8. Ո՞ր տարրերակը արևմտահայերենով չէ:

- 1) «Իր մեծ ու քայլայիշ տիսրություններեն զատ Նարեկացին ունի նաև հիվանդագին մելամաղճություններ. աղերասարկու, միջանկյալ բացասականներու թախծությունը՝ որ հոս հոն մանիշակի պես կը նշուլե...»:
- 2) «Հոս պատկերի խիստ ու նկարչական ճշգրտությունը մը կա, իր մանրամասնություններուն ու ամբողջական ներկայացումին մեջ ալ՝ այնքան հուժկու և իրավանդիր՝ որ ննանությունը իրաշափի կերպով կ'անձնացնե...»:
- 3) «Վանականին քերրվածն է աս, պարզ, և սակայն ամբողջական հոգերանությամբ մը, միստիկականության ցավագին վեպ մը, որը կտեսնենք սիրով լեցված էակ մը՝ աստուծու տարփանքովը վառված, որ անոր մեծությունը կերպե...»:
- 4) «Ինչի՞ գեղինը չիմ մտնում ես սհարիս: Ել իմ տող ախչկերանց էրեսին վո՞ւնց պիտի մտիկ անիմ. դիմունանց խոսելու պիտի դառնամ, դիմունքը մասիսարա պիտի գցին ինձ, դիմունքը պիտի վրես ծիծաղին...»:

9. Տրվածներից ո՞րն է գրաբարով:

- 1) Երբ որ հոգոց ես կու հանեմ,
գայ գուլ առնու հոգիս բերնիս:
- 2) Յամենայն ժամ աղաչանք իմ այս են՝
Ի մեղաց իմոց սուրբ արա զիս, Տեր:
- 3) Սարդ կայ, որ խօսի՝ շաքար կու ծամի,
Խելքըն՝ լայն ծով է և միտքն՝ գեամի,
Տեսնեն, որ չունի կուրտիկ դալամի,
Կասեն. «Լուռ, կացիր, գող և հարամի»:
- 4) Դովլաթն էլքիբար չունե, յիփոր կերքա իր շըքարով.
Լավ մարթն էն է՝ գլուխըն պահե աշխարումը էլքիբարով:

10. Ո՞ր հատվածը հայերենի ո՞ր տարրերակով է:

1. Մեղք իմ բազում են յոյժ,
Ծանր են, քան զաւազ ծովու.
Քանզի քեզ միայնոյ մեղայ
Ողորմեա ինձ, Աստուած:
ա. արևմտահայերեն
2. Կուզեմ որ դադրին ճայներն այս պատիր,
Ու նեկտարիդ դողն ըմպեմ ես անհազ.
Կուզեմ որ մեռնին տիվ ու ժամանակ՝
Ու դարիրներուդ իյնամ ծնրադիր:
բ. արևելահայերեն
3. Ամենայն տեղ մահը մի է,
Մարդ մի անգամ պիտ մեռնե.
Բայց երանի՝, որ յուր ազգի
Ազատության կըզոհվի:
գ. միջին հայերեն
4. Երեսդ է լուսնի նըման բոլորեալ տեսդ՝ արեգական.
Ոնց որ դու ելնես քալես, արեգակերպ կու փայլես:
դ. գրաբար

11. Ո՞ր հայերենով է տրված հատվածը:

Իրիկվան մեջ, գյուղին քով,
Կմրմնջե զուտն ուռիին տակ շրեղ:
Զայն կլեցնե աղբյուրն երգովը բյուրեղ,
Աստղը՝ բյուրեղ արցունքով:

- 1) արևելահայերեն
- 2) արևմտահայերեն
- 3) գրաբար
- 4) միջին հայերեն

ԳԼՈՒԽ 8 ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ո՞ւմ պատմությունն է ժամանակագրական առումով Ազաթանգեղոսի «Հայոց պատմություն» երկի շարունակությունը:

- 1) Սովոր Խորենացու
- 2) Ղազար Փարպեցու
- 3) Փավստոս Բուզանդի
- 4) Եղիշեի

2. Ո՞րն է Եղիշեի ասույթներից:

- 1) «Լավ է աչքով կույր լինել, քան մտքով»:
- 2) «Զկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության»:
- 3) «Քաջերի սերունդները քաջեր են»:
- 4) «Ես սիրում եմ ըստ քաջության այսպես կոչել՝ Հայկ-Արամ-Տիգրան»:

3. Քառերի և բառակապակցությունների տեղադրման ո՞ր տարրերակն է ճիշտ:

«Թէպէտ եւ եմք ածու փոքր եւ բուռվ յոյժ ընդ փոքրու եւ ընդ այլով յոլով անգամ բազաւորութեամք, սակայն բազում զործք արութեան գտանին զործեալ եւ ի մերու աշխարհիս եւ»:

(1. արժանի գրոց հիշատակի, 2. զօրութեամք տկար, 3. սահմանեալ, 4. նուածեալ)

- 1) 4, 1, 3, 2
- 2) 3, 2, 4, 1
- 3) 1, 2, 3, 4
- 4) 4, 2, 3, 1

4. Տրված հատվածներից որո՞վ է սկսվում Մովսես Խորենացու «Ողբը»:

- 1) «Ո՞ւր է այն զվարք շրթունքների ժախտը լավ աշակերտներին հանդիպելիս... Ո՞վ պետք է այսուհետև հարզի մեր ուսումը, ո՞վ պիտի ուրախանա իմ՝ իր աշակերտի առաջադիմությամբ...»:
- 2) «Ողբո՞ւմ եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբո՞ւմ եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնը»:
- 3) «Վարդապետները՝ տիմար ու ինքնահավան, իրենք իրենցից պատվի արժանացած և ոչ թե Աստծուց կոչված, արձարով ընտրված և ոչ թե Սուրբ Հոգով»:
- 4) «Սեղ տիրել են խստափրտ ու չար բազավորներ, որոնք ծանր ու դժվարակիր բեռներ են բարձում, անտանելի հրամաններ տալիս»:

5. Ո՞ւմ մահն է Մովսես Խորենացին ողբում՝ գրելով.

«Ո՞ւր է այն քաղցր աչքերի հանդարտությունը ուղիղների համար և ահավորությունը շեղվածների համար. ո՞ւր է այն զվարք շրթունքների ժախտը լավ աշակերտներին հանդիպելիս, ո՞ւր է այն բարյացակամ սիրտը, որ հետևողներ էր գրավում....»:

- 1) Հովսեփ Պաղճացու և Հովհան Եկեղեցիացու
- 2) Կորյունի և Դավիթ Անհաղի
- 3) Սեսրոպ Մաշտոցի և Սահակ Պարբեկի
- 4) Վոամշապոհ բազավորի և Վարդան Մամիկոնյանի

6. Ողբալով քարեկարգությունից անշրացած հայ եկեղեցուն՝ ո՞ւմ հետ է համեմատում այն Սովուս Խորենացին իր «Ողբում».

- 1) մորը կորցրած զավակի
- 2) փեսայից զրկված հարսի
- 3) որդեկորույս մոր
- 4) որբեայրի կնոջ

7. Ի՞նչ առիթով է գրված Սովուս Խորենացու «Ողբը».

- 1) իր անհամար ու ծանր մեղքերի գիտակցման
- 2) Հայոց Արշակունի քագավորության ու կաթողիկոսության անկման
- 3) Աստծու մեծությանը ձգտելու և չհասնելու տառապանքի
- 4) Հայաստանի՝ 387 թ. Բյուզանդիայի և Պարսկաստանի միջև բաժանման

8. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

«Եվ տեսնում է ո՛չ երազ քնի մեջ, ո՛չ տեսիլք արքնության մեջ, այլ սրտի գործարանում նրա հոգու աշքերին երևում է աջ ձեռքի թար քարի վրա զրելիս, այնպես որ քարը գծերի հետքը պահում էր, ինչպես ձյունի վրա»:

- 1) «Վերք Հայաստանի», Խաչատուր Աբովյան
- 2) «Սամվել», Մաֆֆի
- 3) «Վարդաննք», Դերենիկ Դեմիրճյան
- 4) «Հայոց պատմություն», Սովուս Խորենացի

9. Ո՞ւմ մասին է.

«Նա սիրեց մենակեցության վարքը, ինչպես ասել է մեկը, թե ալեկոծված նաևն շտապում է դեպի նավահանգիստը, իսկ ժումկալող մարդը անապատ է վնատրում: ...Գնում է Գողթն զավառը և ապրում մենակյացի կյանքով»:

- 1) Ասպրամի («Գևորգ Մարգարետունի», Սուրբացան)
- 2) Սամվելի («Սամվել», Մաֆֆի)
- 3) Սեսրոպ Մաշտոցի («Հայոց պատմություն», Սովուս Խորենացի)
- 4) Վանահոր («Հին աստվածներ», Լևոն Շանթ)

10. Ո՞րը Սովուս Խորենացու ասույթներից չէ:

- 1) «Զկա ստույգ պատմություն առանց ժամանակագրության»:
- 2) «Քաջերի սերունդները քաջեր են»:
- 3) «Միաբանությունը բարի գործերի մայրն է, իսկ անմիաբանությունը՝ չար գործերի ծննդը»:
- 4) «Քաջերի սահմանը իրենց զենքն է, որքան կտրի, այնքան էլ կտիրի»:

11. Տողերի դասավորության ո՞ր տարրերակն է ճիշտ:

- ա. Զայլոց դիցազանց զարմից բառնալ զկենդանութիւն
 բ. Ի ստրկաց կարգի պահել
 գ. Կամ ծառայեցուցանելով
 դ. Եվ թշնամութիւն յավիտենական
 ե. Ի մեջ երկոցունց ազգաց քաջաց հաստատել
 զ. Զի վասն միոյ քինու ոչ է օրէն դիցազանց

- 1) ա, բ, գ, դ, ե, զ
- 2) զ, ա, գ, բ, դ, ե
- 3) ա, զ, գ, բ, ե, դ
- 4) ե, դ, զ, բ, գ, ա

12. «Սասմա ծոեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) հերոսներից ո՞ւմ խոսքն է.

Ես էստեղ նստեմ, կերուխում անեմ,
Մըսրա Սելիք Դավթին գերի^օ պահի:
Բա ամոք չէ^օ մեզի...
Հացն ու զինին, տեր կենդանին,
Չուր էդա որք հետ չը բերեմ,
Էս բաժակ իմ բերան չ'առնեմ:

- 1) Արմաղանի
- 2) Քեռի Թորոսի
- 3) Խանդութի
- 4) Վերգոյի

13. Տրված հատվածը «Սասմա ծոեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) ո՞ր հերոսին գեղեցկությունն է պատկերում:

Կիրիշկեմ՝ էնոր էղնգներ ուանդայով տաշած է.
Ա՛խ, հալա տգո՛, ուանդայով տաշած է...
Կիրիշկեմ՝ էրեսի կարմրություն նուան զինի է,
Ա՛խ, հալա տղզոն, նուան զինի է...

- 1) Ծովինարի
- 2) Խանդութի
- 3) Գոհարի
- 4) Դեղձուն-Ծամի

14. «Սասմա ծոեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) հերոսներից ո՞ւմ խոսքն է.

Օ՛, քուրե՛ր, դուք կացե՛ք բարով,
Դուք ինձի քուրություն եք արե,
Օ՛, մերեր, դուք կացե՛ք բարով,
Դուք ինձի մերություն եք արե,
Բարի՛ դրկիցներ, դուք կացե՛ք բարով,
Դուք կացե՛ք բարով մեծ ու պստիկով...

- 1) Սեծ Սհերի
- 2) Քեռի Թորոսի
- 3) Դավթի
- 4) Սամասարի

15. «Սասմա ծոեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) հերոսներից ո՞ւմ խոսքն է.

Որ աշխարհը ավերվի, մեկ էլ շինվի,
Երդը ցորեն էղավ քանց մասուր մի,
Ու զարին էղավ քանց ընկուզ մի,
Էն ժամանակ հրամանը կա, որ էլնենք էդտեղեն:

- 1) Սեծ Սհերի
- 2) Քեռի Թորոսի
- 3) Դավթի
- 4) Փոքր Սհերի

16. Ասույթներից քանի՞սն են «Սասնա ծոեր» էպոսից («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր):

- ա. «Լավ է աչքով կույր լինել, քան մտքով»:
 բ. «Աշխարհ գութնի մոտ կը լիանա»:
 զ. «Քաջերի սերունդները քաջեր են»:
 դ. «Աղյուծն աղյուծ է, եղնի էզ, թե՝ որձ»:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

17. «Սասնա ծոեր» էպոսի («Սասունցի Դավիթ» համահավաք բնագիր) հերոսներից ո՞ւմ խոսքն է.

Մըսրա օջախ կանգնեցուցես,
 Հայու օջախ փշացուցես:

- 1) Սառյեի
- 2) Իսմիլ Խաքունի
- 3) Բաղրադի Խալիֆայի
- 4) Մըսրա Մելիքի

18. Ո՞ւմ ստեղծագործությունից է տրված հատվածը:

Սի՛ գլորիր ինձ, երբ ընկած եմ ես,
 Եվ մի՛ կործանիր ամօք գայթածիս,
 Աստանդականիս մի՛ վանիր դարձյալ
 Եվ մի՛ հալածիր տարագրվածիս...

- 1) Գրիգոր Նարեկացու
- 2) Վահան Տերյանի
- 3) Եղիշե Զարենցի
- 4) Պարույր Սևակի

19. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

Անկար հիվանդիս մի՛ մահացրու,
 Սի՛ ծանրաբեռնիր թույլ ու տկարիս.
 Սի՛ ավելացրու ծանր անուրներ թիկունքիս կարկամ,
 Դառն հեծեծանքիս՝ նորանոր ողբեր:

- 1) «Հին աստվածներ», Լևոն Շանը
- 2) «Մատյան ողբերգության», Գրիգոր Նարեկացի
- 3) «Աբու-Լալա Մահարի», Ավետիք Խսահալյան
- 4) «Տաղ անձնական», Եղիշե Զարենց

20. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

Բուրում էր նա կնդրուկի պես
 Աստվածային հրով լցված մի բուրվառի.
 Զայնն էր մեղուշ, քաղցրանվագ:
 Զարդարված էր պատմուճանով գեղեցկատես,
 Որ բեհեզդի կապույտ, որդան ու ծիրանի
 Գոյներով էր ոսկեշողում...

- 1) «Ռավեննայում», Ավետիք Խսահալյան
- 2) «Մեղեղի ծննդյան», Գրիգոր Նարեկացի
- 3) «Fatum», Վահան Տերյան
- 4) «Հեռացումի խոսքեր», Եղիշե Զարենց

21. Պնդումներից քանի՞սն են ճիշտ Գրիգոր Նարեկացու «Մատյան ողբերգության» երկի վերաբերյալ:

- ա. Զղջական, ապաշխարական բովանդակություն ունեցող գործ է:
- բ. Հնչում է որպես հուզիչ ողբ:
- գ. Նրանում փառաբանված են հայ կրթական, լուսավորական գործի նվիրյալները:
- դ. Արտացոլում է մարդու մեղավորության գիտակցությունը և Աստծու ողորմությամբ մեղքերից ազատվելու բաղձանքը:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

22. Ո՞ր ստեղծագործությունից է տրված հատվածը:

Սի՛ բազմապատկիր ցավս հեծության
Եվ մի՛ խոցուտիր վիրավորվածիս,
Սի՛ դատապարտիր արդեն պատժվածիս,
Բազմաչարչարիս մի՛ տանջիր նորեն...

- 1) «Մատյան ողբերգության», Գրիգոր Նարեկացի
- 2) «Գանգատ», Ֆրիկ
- 3) «Հեռացումի խոսքեր», Եղիշե Չարենց
- 4) «Քիբլիական», Հովհաննես Շիրազ

23. Հեղինակներից քանի՞սն են ապրել ու ստեղծագործել Գրիգոր Նարեկացուց հետո:

- ա. Ֆրիկ
- բ. Ազարանգեղոս
- գ. Սայաթ-Նովա
- դ. Նահապետ Քուչակ

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) բոլորը

24. Նշվածներից ո՞վ է Վարդան Այգեկցու ընտիր առակների մի փունջ վերածել աշխարհաբարի:

- 1) Հովհաննես Շիրազը
- 2) Ավետիք Իսահակյանը
- 3) Ակսել Բակունցը
- 4) Հովհաննես Թումանյանը

25. Ո՞ւմ ստեղծագործությունից է տրված հատվածը:

Գիտեն, մարմին եմք մըսեղի,
Գեմ արձան չեմք ինչ պլորմածի,
Եղեգըն չեմք, կամ խոտ վայրի,
Որ խանձ արկեալ ես կըրակի...

- 1) Գրիգոր Նարեկացու
- 2) Ֆրիկի
- 3) Նահապետ Քուչակի
- 4) Պետրոս Դուրյանի

26. Ֆրիկը, մեղադրելով ֆալաքին (ճակատագրին)՝ մարդկանց նկատմամբ անհավասար, անարդար վճռներ կայացնելու համար, նրան ի՞նչ է կոչում.

- 1) իրաւ դատավոր
- 2) ծուռ դատավոր
- 3) անգետ հալեւոր
- 4) արդար դատաւոր

27. Նշված հեղինակներից քանի՞սն են ապրել ու ստեղծագործել Ֆրիկից հետո:

- ա. Գրիգոր Նարեկացի
բ. Նահապետ Քոչակ
գ. Սայաթ-Նովա
դ. Ղազար Փարպեցի

- 1) բոլորը
- 2) երկուսը
- 3) մեկը
- 4) երեքը

28. Ո՞ր Նահապետ Քոչակի ստեղծագործություններից չէ:

- 1) «Թամամ աշխար պլտուտ էկա»
- 2) «Եկին ու խապար քերին»
- 3) «Աղուո՞ր, քեզ բան մի կասեմ»
- 4) «Երեկ ցորեկով բարով»

29. Հայրեններից ո՞րն է կառուցված երկխոսության սկզբունքով:

- 1) «Ես աչք ու դու լոյս, հոգի՛»
- 2) «Եկին ու խապար քերին»
- 3) «Երեկ ցորեկով բարով»
- 4) «Աղուո՞ր, քեզ բան մի կասեմ»

30. Նահապետ Քոչակի «Ժամ-ժամ զիմ դարիալութիւնս» հայրենում քնարական հերոսը ինչի՞ հետ ի-բեն չի համեմատում:

- 1) ջրի
- 2) նետի
- 3) աղեղի
- 4) կռունկի

31. Սայաթ-Նովայի ո՞ր քանաստեղծությունից է տրված հատվածը:

Էրեգ լավ էր, քանց վոր էսօր, վաղերումեն բեզարիլ իմ.
Մարթ համաշա մեկ չի ըլի. խաղերումեն բեզարիլ իմ:

- 1) «Դուն է ն գրլիսեն իմաստուն իս»
- 2) «Աշխարումս ա իս չիմ քաշի»
- 3) «Թամամ աշխար պլտուտ էկա»
- 4) «Աշխարս մե փանջարա է»

32. Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:

Սայաթ-Նովեն ասաց՝ դարդըս կանց մե ճարըն շատացիլ է.
Չունիմ վաղվան քաղցըր փառքըս, իիմի դարըն շատացիլ է.
Բըլբուի պես էնդուր գու լամ՝ վարդիս խարըն շատացիլ է.
Չին թողնում վախտին քացվելու. քաղերումեն բեզարիլ իմ:

- 1) «Աշխարումս ա խ չիմ քաշի»
- 2) «Թամամ աշխար պլտուտ էկա»
- 3) «Աշխարս մե փանջարա է»
- 4) «Դուն է ն գրլիսեն իմաստուն խ»

33. Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է տրված հատվածը:

Ջրտեսայ քու դիդարի պէս՝ դուն դիփունէն քաշ, նազա՞նի,
Թէ խամ հաքնիս, թէ զար հաքնիս, կու շինիս դումաշ, նազա՞նի,
Էնդու համա քու տեսնողըն ասում է վա՛շ, վա՛շ, նազա՞նի:

- 1) «Թամամ աշխար պլտուտ էկա»
- 2) «Աշխարս մե փանջարա է»
- 3) «Դուն է ն գրլիսեն իմաստուն խ»
- 4) «Աշխարումս ա խ չիմ քաշի»

34. Տրված հատվածը Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է:

Անմահական ջըրով լիքըն օսկե փընջան իս ինձ ամա.
Նըստիմ, վրբս շըվաք անիս՝ զարբաք վըրան իս ինձ ամա.
Սուչս իմացի՛, է նենց սպանե՝ սուլթան ու խան իս ինձ ամա:

- 1) «Աշխարս մե փանջարա է»
- 2) «Թամամ աշխար պլտուտ էկա»
- 3) «Աշխարումս ա խ չիմ քաշի»
- 4) «Դուն է ն գրլիսեն իմաստուն խ»

35. Տրված հատվածը Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է:

Չըկա քիզ պես հուքմի-հեքիմ, դուն Ծոստոմի Զալ՝ թաքա՛վուր.
Ասկըր ասկերումըն գոված՝ հա՛նդ ունիս, գոզալ թաքա՛վուր,
Թէ էսանց էլ սուչ ունենամ՝ գլուխըս արա տալ, թաքա՛վուր,
Մըտիկ արա քու Մտեղծողին՝ նըհախս տիղ դազաք մի՛ անի:

- 1) «Թամամ աշխար պլտուտ էկա»
- 2) «Աշխարումս ա խ չիմ քաշի»
- 3) «Դուն է ն գրլիսեն իմաստուն խ»
- 4) «Աշխարս մե փանջարա է»

36. Հատվածներից որը Սայաթ-Նովայի ո՞ր բանաստեղծությունից է:

- ա. Քանի գուցե քամին տանե՝ ծովեմեն ավազ չի պակսի,
Թեզուզ ըլիմ, թեզուզ չըլիմ՝ մեջլիսներուն սազ չի պակսի...
- բ. Նուր բաղ իս, նուր բաղչի մեշըն, բոլորքը վարքով չափարած.
Վըրեղ շուր գամ բըլբուլի պես՝ սիրով սեյրան իս ինձ ամա:
- գ. Դուն պատվական ջափահիր իս, է թնեկ քու առնողին ըլի.
Ով կու գըրնե, ախ չի քաշի, վա՛յ քու կորցընողին ըլի...
- դ. Համփիրութինըս հասիլ է, չիմ դիմանում խալիս գափին.
Դոստիրըս դուշման ին դառի. յաղերումեն թեզարիլ իմ:

1. «Աշխարս մե փանջարա է»
2. «Թամամ աշխար պըսուտ էկա»
3. «Աշխարումս ա խ չիմ քաշի»
4. «Իուն է ն զըլիսնեն իմաստուն իս»

- 1) ա-4, թ-3, զ-2, դ-1
- 2) ա-4, թ-2, զ-3, դ-1
- 3) ա-3, թ-4, զ-2, դ-1
- 4) ա-1, թ-3, զ-2, դ-4

37. Մտքերից որը նշված գրողներից ո՞ւմ է վերաբերում:

- | | |
|---|---------------|
| ա. Սիջնադարյան հայ սոցիալական քնարերգության սկզբնավորողն ու խոշոր ներկայացուցիչն է: | 1. Խ. Աբովյան |
| բ. Սիջնադարյան հայ տաղերգության վերջին խոշոր ներկայացուցիչն է: | 2. Վ. Այգեկցի |
| գ. Սկիգր է դրել առակավոր ճառի տեսակին: | 3. Սայաթ-Նովա |
| դ. Հայ նոր գրականության հիմնադիրն է: | 4. Ֆրիկ |

- 1) ա-1, թ-3, զ-2, դ-4
- 2) ա-4, թ-3, զ-1, դ-2
- 3) ա-4, թ-3, զ-2, դ-1
- 4) ա-2, թ-3, զ-4, դ-1

38. Խաչատուր Աբովյանի կենդանության օրոք նրա ո՞ր երկն է միայն հրատարակվել:

- 1) «Նախաշավիլ կլրության»
- 2) «Աղասու խաղը»
- 3) «Վերք Հայաստանի»
- 4) «Հազարիկեղեն»

39. Նշվածներից ո՞րը Խաչատուր Աբովյանի ստեղծագործություններից չէ:

- 1) «Պարապ վախտի խաղալիք»
- 2) «Առաջին սերը»
- 3) «Գանգատ»
- 4) «Թուրքի աղջիկը»

40. Նշված գրողները հայերենի ո՞ր տարրերակով են ստեղծագործել:

- | | |
|--------------------|-------------------|
| ա. Ֆրիկ | 1. Թիֆլիսի բարբառ |
| բ. Սայաթ-Նովա | 2. գրաբար |
| գ. Ազարանգեղոս | 3. միջին հայերեն |
| դ. Խաչատոր Աբովյան | 4. արևելահայերեն |

- 1) ա-4, բ-1, գ-2, դ-3
- 2) ա-3, բ-1, գ-2, դ-4
- 3) ա-2, բ-4, գ-1, դ-3
- 4) ա-3, բ-1, գ-4, դ-2

41. Ո՞ւմ խոսքն է Խաչատոր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպից:

«Եղ ո՞ւմ վրա եք թուր հանել, հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»:

- 1) տանուտեր Օհաննեսի
- 2) Կրեսոսի մունից որդու
- 3) Արասու
- 4) Խաչատոր Աբովյանի

42. Ո՞րն է Խաչատոր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ենթավերնագիրը:

- 1) «Ողբ ազնվատոհմ գրապետի»
- 2) «Ողբ հայրենասիրի»
- 3) «Ողբ քաջազարմ հայրենասիրի»
- 4) «Ողբ Հայաստանի»

43. Նշվածներից ո՞ր հարցը չի առնչվում Խաչատոր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի առաջարանում առաջադրած գեղագիտական սկզբունքներին:

- 1) աշխարհաբար լեզվի
- 2) գրականության բովանդակության
- 3) հասարակական լյանքի բացասական երևույթները ծաղրով ներկայացնելու
- 4) գրականության հերոսի ընտրության

44. Ո՞ր իրադարձություններն են կազմում Խաչատոր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի պատմական ատաղձը:

- 1) հայ ժողովրդի պայքարը արարական լծի դեմ 7-9-րդ դդ.
- 2) 1826-1828 թթ. ոռու-պարսկական պատերազմը
- 3) 1877-1878 թթ. ոռու-թուրքական պատերազմը
- 4) հայ ժողովրդի հերոսական պայքարը պարսկական բռնաճնշումների դեմ 5-րդ դարում

45. Խոսքներից ո՞րը Խաչատոր Աբովյանինը չէ:

- 1) «Ողբում եմ քեզ, Հայոց աշխարհ, ողբում եմ քեզ, բոլոր հյուսիսային ազգերի մեջ վեհագույնը»:
- 2) «Երեխներ, ձեր ջանին մեռնիմ, ձեզ եմ ասում իմ դարդը, ձեզ համար եմ գրում, ձեր երեսին դուրբան»:
- 3) «Զե՞զ եմ ասում, ձե՞զ, հայոց նորահաս երիտասարդը, ձեր անումին մեռնիմ, ձեր արևին դուրբան՝ տասը լեզու սովորեցե՛ք, ձեր լեզուն, ձեր հավատը դայիմ բռնեցե՛ք»:
- 4) «Հայոց ազգ, Հայոց ազգ, ձեր ջանին մեռնիմ, Հայոց ազգ, քո հողին մատադ, Հայոց աշխարհ...»:

46. Նշվածներից քանի՞սը վեա չէ:

1. «Քառս», Ալեքսանդր Շիրվանզադե
2. «Հարեմ», Րաֆֆի
3. «Հազարիկեցն», Խաչատոր Աբովյան
4. «Պաղտասար աղբար», Հակոբ Պարոնյան
5. «Հարճը», Դանիել Վարուժան

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

47. Ո՞րը Սիրայել Նալբանդյանի ստեղծագործություններից չէ:

- 1) «Երկու տող»
- 2) «Առաջին սերը»
- 3) «Երկրագործությունը որպես ուղիղ ճանապարհ»
- 4) «Ապոլլոնին»

48. Ո՞րն է Սիրայել Նալբանդյանի բանաստեղծություններից:

- 1) «Վազող ջրին»
- 2) «Աղասու խաղը»
- 3) «Գանգատ»
- 4) «Փողոցովի ի վար կուգի»

49. Սիրայել Նալբանդյանի ո՞ր բանաստեղծության մի հատվածն է մասնակի փոփոխություններով դարձել Հայաստանի Հանրապետության պետական օրիներգը:

- 1) «Ազատություն»
- 2) «Ապոլլոնին»
- 3) «Իտալացի աղջկա երգը»
- 4) «Մանկության օրեր»

50. Տրված հատվածը Սիրայել Նալբանդյանի ո՞ր բանաստեղծությունից է:

Ես այսի դրւու գամ դեա իրապարակ
Առանց քնարի, անզարդ խոսքերով,
Ես պիտի գոչեմ, պիտի բողոքեմ,
Խավարի ընդդեմ պատերազմելով:

- 1) «Ազատություն»
- 2) «Ապոլլոնին»
- 3) «Իտալացի աղջկա երգը»
- 4) «Մանկության օրեր»

51. Հատվածներից որը Միքայել Նալբանդյանի ո՞ր բանաստեղծությունից է:

- ա. Մեր հայրենիք, քշվառ, անտեր,
Մեր թշնամուց ոտնակոխ,
Յուր որդիքը արդ կանչում են
Հանել յուր վրեժ, քեն ու ոխ:
- բ. Գերության շղթան ինձ զգալի չէր,
Եվ ոչ բռնության անգութ ճանկերը.
Զեզանից հետո ծանրացան նորա,
Ո՞հ, անիծում եմ ես այն օրերը:
- գ. Սինչ զիշերը անհանգիստ,
Օրորոցում կապկապած՝
Լալիս էի անդադար՝
Մորս քունը խանգարած...
- դ. Լո՛ոն կաց դու, քնա՛ր, այլ մի՛ հնչեր ինձ,
Ապոլո՛ն, հե՛տ առ դարձյալ դու նորան,
Տո՛ր մի այլ մարդու, որ ընդունակ է
Զոհ բերել կյանքը սիրած աղջկան:

- 1) ա-2, բ-1, զ-3, դ-1
- 2) ա-1, բ-3, զ-3, դ-2
- 3) ա-3, բ-1, զ-3, դ-2
- 4) ա-3, բ-2, զ-1, դ-2

52. Տողերի ո՞ր դասավորությունն է ճիշտ:

- ա. Օրորոցում կապկապած
- բ. Սինչ զիշերը անհանգիստ
- գ. Մորս քունը խանգարած
- դ. Լալիս էի անդադար
- ե. Խնդրում էի նորանից
- զ. Բազուկներս արձակել
- է. Ազատությունը սիրել
- ը. Ես այն օրից ուխտեցի

- 1) ա, բ, զ, դ, ե, գ, ը, է
- 2) բ, ա, դ, զ, ե, գ, ը, է
- 3) զ, դ, ա, բ, ե, գ, ը, է
- 4) դ, զ, ա, ը, է, բ, ե, գ

53. Ո՞ր բառը կամ բառակապակցությունն է բաց քողած:

Նայիր նորան՝ երեք գույնով,
Նվիրական մեր նշան,
Թո՞ղ վողվողի թշնամու դեմ,
Թո՞ղ կործանվի:

- 1) Գերմանիան
- 2) Թուրքիան
- 3) Ավստրիան
- 4) մեր ախոյան

54. Պնդումներից ո՞րն է սխալ Սիքայել Նալբանդյանի «Մանկության օրեր» բանաստեղծությանը քնարական հերոսի վերաբերյալ:

- 1) Ափսոսանքով է հիշում անդարձ մանգած մանկության երջանիկ, անհոգ օրերը:
- 2) Տարիների հետ գիտությունը, մտածությունը, հասունացած բանականությունը ծանր խոհերով են պատում հերոսի ողին:
- 3) Աշխարհի անարդար դրվածքի, ազգի ստրկական կացության շուրջ մռայլ մտորումները հերոսը փորձում է փարատել քնարի սփոփիչ մնելողիներով:
- 4) Կյանքի դառնություններ տեսած հերոսը ազգի փրկության հույսը կապում է Աստծու ողորմածության հետ:

55. Տրված հատվածը ո՞ր բանաստեղծությունից է:

Սորա կեսը, կեսի կեսը,
Գեթ երևեր մեր ազգում.
Բայց մեր կանայք... ո՞ւր Եղիշե,
Ո՞ւր մեր տիկնայք փափկասուն:

- 1) «Խտալացի աղջկա երգը», Սիքայել Նալբանդյան
- 2) «Խմ ցավը», Պետրոս Դուրյան
- 3) «Հայրենիքիս», Ավետիք Իսահակյան
- 4) «Որպես Լաերտի որդին», Վահան Տերյան

56. Ո՞ւմ խոսքն է.

«Եթե հույս ունինք ապագայի վերա, նորա երևեցուցիչը դուք եք, ձեզանից է կախվում ազգի ապագան և ձեր վերա է միակ հույսը: Ի՞նչ չափով պիտի արդարացնեք այդ հույսը, դորա վկան և չափողը պիտի լինի ձեր գործը»:

- 1) Խաչատուր Աբովյանի
- 2) Սիքայել Նալբանդյանի
- 3) Հովհաննես Թումանյանի
- 4) Սովոր Խորենացու

57. Տողերի ո՞ր դասավորությունն է ճիշտ:

ա. Գնա՛, թեև չեմ կարող գալ,
բ. Բայց իմ հոգին՝ քեզ ընկեր
գ. Ազգի սերը՝ քաջալեր
դ. Գնա՛, եղբայր, աստված քեզ հույս

- 1) ա, բ, գ, դ
- 2) ա, բ, դ, գ
- 3) գ, դ, ա, բ
- 4) դ, գ, ա, բ

58. Ո՞ր բառը կամ բառակապակցությունն է բաց բողած:

Ինչքան՝ մի բույլ էակ,
Պատերազմի գործերում
Կարե օգնել յուր եղբորը,
Զանց չարեցի քո սիրուն:

- 1) աղջիկ
- 2) կին մարդ
- 3) օրիորդ
- 4) մանուկ

59. Տողերի դասավորության ո՞ր տարրերակն է ճիշտ:

- ա. Հոգվույս՝ որ է բոց անհուն
- բ. Այլ երես զոգու ալ քափին
- գ. Բույլըն աստեղաց երկնքին
- դ. Նմանիլ չեն կրնար դուն

- 1) ա, բ, գ, դ
- 2) բ, գ, դ, ա
- 3) գ, բ, դ, ա
- 4) գ, դ, ա, բ

60. Հատվածներից որը Պետրոս Դուրյանի ո՞ր բանաստեղծությունից է:

- | | |
|---|---------------|
| ա. Բույլ մը նայվածք, փունջ մը ժայխ, | 1. «Իմ ցավը» |
| Քուրա մը խոսք դյուրեց իմ սիրտ: | 2. «Տրտունջը» |
| բ. Ո՞հ, կայծ տրվեք ինձ, կայծ տրվեք՝ ապրի՞մ... | 3. «Լճակ» |
| ի՞նչ, երազն վերջ գրկել ցուրտ շիրի՞մ... | 4. «Սիրել» |
| գ. Հոդ աստղերը չեն մեռնիր, | |
| Ծաղիկները հոդ չեն բռովիր... | |
| դ. Սուրբ տեսչերով լոկ ծարաված՝ | |
| Յամաք գտնել աղբերքն համայր... | |

- 1) ա-4, բ-2, գ-3, դ-1
- 2) ա-1, բ-2, գ-3, դ-4
- 3) ա-4, բ-1, գ-3, դ-2
- 4) ա-2, բ-3, գ-4, դ-1

61. Ո՞րը Պետրոս Դուրյանի ստեղծագործություններից չէ:

- 1) «Գանգատ»
- 2) «Տրտունջը»
- 3) «Իմ ցավը»
- 4) «Սիրել»

62. Հատվածներից որը Պետրոս Դուրյանի ո՞ր բանաստեղծությունից է:

- | | |
|--|---------------|
| ա. Ո՞հ, խուրձ մը վարս, եղեմ մը շունչ, | 1. «Տրտունջը» |
| Շրջազգեստ մը շրջեց իմ շուրջ: | 2. «Իմ ցավը» |
| բ. Այլ, ո՞հ, ի՞նչ կըսեմ... շանքահարե՛ զիս, | 3. «Սիրել» |
| Աստվա՛ծ, խոկն հըսկա փշրե՛ հյուլեիս... | 4. «Լճակ» |
| գ. Շատերը զիս մերժեցին. | |
| «Քընար մ՛ունի սոսկ», - ըսին: | |
| դ. Հեք մարդկության մեկ ոստը զոս | |
| Հայրենիք մը ունիմ թըշվառ... | |

- 1) ա-4, բ-2, գ-1, դ-3
- 2) ա-3, բ-2, գ-4, դ-1
- 3) ա-3, բ-1, գ-4, դ-2
- 4) ա-2, բ-3, գ-4, դ-1

63. Տողերի դասավորության ո՞ր տարրերակն է ճիշտ:

- ա. Զիս կը պահես դողդողալով
- բ. Դարձյալ խորքիդ մեջ խրոռով
- գ. Զի թհովե մ'ալ խորշոմիս
- դ. Լըճա՛կ, դու ես թագուհիս

- 1) դ, զ, բ, ա
- 2) ա, բ, զ, դ
- 3) ա, բ, դ, զ
- 4) զ, դ, բ, ա

64. Տրված հատվածը Պետրոս Դուրյանի ո՞ր բանաստեղծությունից է:

Ո՞հ, նոքա ամենքը զիս ծաղրեր են...
Աստուծոն ծաղրն է Աշխարհ ալ արդեն ...

- 1) «Լճակ»
- 2) «Տրտունջը»
- 3) «Իմ ցավը»
- 4) «Սիրել»

65. Ինչպե՞ս է սկսվում Պետրոս Դուրյանի «Տրտունջը» բանաստեղծությունը.

- 1) բանաստեղծի՝ Աստծու հետ հանդուգն վեճով
- 2) քնարական հերոսի՝ ապրելու համար Աստծուն ուղղված բախսանձագին աղերսանքով
- 3) քնարական հերոսի՝ Աստծուն ու Արևին ուղղված հրաժեշտի խոսքով
- 4) քրիստոնեական աղոքքով

66. Տրված հատվածը Պետրոս Դուրյանի ո՞ր բանաստեղծությունից է:

Ես ուզեցի քընարով մի
Լոկ սիրել հոս, հոս դալկահար,
Պաշտել, գրկել միայն քընար,
Սիրող էակ ճանչել զանի,
Ըստ իմ քըմաց լարել աղի
Եվ սրտակցիլ սիրողաբար:

- 1) «Լճակ»
- 2) «Սիրել»
- 3) «Տրտունջը»
- 4) «Իմ ցավը»

67. Պնդումներից ո՞րն է ճիշտ Պետրոս Դուրյանի «Լճակ» բանաստեղծության վերաբերյալ:

- 1) Բանաստեղծի վեճն է Աստծու հետ:
- 2) Բանաստեղծի հավատարմության երդումն է հայրենիքին:
- 3) Նրանում զարգանում է փիլիսոփայական այն խոհը, թե կյանքի ու մահվան սահմանագծից է սկիզբ առնում անմահության զաղունիքը:
- 4) Հասարակությունից օտարված անհատի դրաման է, որտեղ բնության չքնաղ մի բեկորը հանդես է գալիս որպես բանաստեղծի խոռվահույզ սրտի հանգրվան:

68. Պնդումներից ո՞րն է սխալ Պետրոս Դուրյանի «Լճակ» բանաստեղծության վերաբերյալ:

- 1) Նրանում լսվում են շրջապատի մարդկանց դառը խոսքերը բանաստեղծի խեղճ արտաքինի ու սրտի ցավի մասին:
- 2) Սիրած աղջկա զգեստի շրջյունն անգամ հասնում է պատանուն, մաշում նրա սիրտը:
- 3) Բանաստեղծության տողերում երևում է հիվանդությունից ընկճված հուսահատ պատանին:
- 4) Մարդկային տառապանքին զուգորդվող լճակը ներկայացված է բնական մանրամասներով:

69. Ո՞ր շարքում Պետրոս Դուրյանի բանաստեղծություններից չկա:

- 1) «Սիրել», «Արևին», «Առաջին ծիլեր»
- 2) «Հյուղը», «Իմ ցավը», «Ջրտուք»
- 3) «Սիրերգ», «Չոն», «Վայրկյան»
- 4) «Տիրություն», «Զմրան պարզ գիշեր», «Տրտունջը»

70. Տրված հատվածը ո՞ր ստեղծագործությունից է:

Եվ մահամերձն ալ կ'ուզե երկու բան,
Նախ՝ կյանքը, վերջը՝ լացող մ'իր վրան:

- 1) «Արևին», Միսար Մեծարենց
- 2) «Տրտունջը», Պետրոս Դուրյան
- 3) «Մատյան ողբերգության», Գրիգոր Նարեկացի
- 4) «Գանգատ», Ֆրիկ

71. Ո՞ր հատվածով է ավարտվում Պետրոս Դուրյանի «Տրտունջը» բանաստեղծությունը:

- 1) Ողջո՞ւն քեզ, Աստված, դողրոջ էակին,
Շողին, փրթիքին, ալվոյն ու վանկին...
- 2) Ո՞հ, նոքա ամենքը զիս ծաղրեր են...
Աստուծոն ծաղրն է Աշխարհ ալ արդեն ...
- 3) Թող անեծք մ'ըլլամ քու կողը խըրիմ,
Թող հորջորջեմ քեզ «Աստված ոխերիմ»:
- 4) Ո՞հ, կայծ տրվեք ինձ, կայծ տրվեք՝ ապրի՞մ...
Ի՞նչ, երազե վերջ գրկել ցուրտ շիրի՞մ...

72. Ո՞ր պարբերականին է աշխատակցել Բաֆֆին:

- 1) «Նոր-Դար»
- 3) «Ազդարար»
- 2) «Մշակ»
- 4) «Բազմավեպ»

73. Պնդումներից ո՞րն է սխալ Բաֆֆու վերաբերյալ:

- 1) Բաֆֆին գրել է նաև բանաստեղծություններ:
- 2) Բաֆֆին հայկական ոռմանտիզմի խոշորագույն դեմքն է:
- 3) Հայ նոր գրականության հիմնադիրն է:
- 4) Իր «Սալբի» վեպը սկզբում Բաֆֆին գրել է գրաբար, իսկ հետո փոխադրել աշխարհաբարի:

74. Ո՞ւմ խոսքն է.

«Մեր անիրավ պահանջատերերը ինձ միջոց չեն տալիս, որ ես մի տեղ դադար առնեմ... Նրանք ինձ պարտքերի մեջ խեղդել են, իմ բոլոր ապրուստի միջոցները փակել են: Աշխարհս կատարյալ դժոխք է, դժոխք»:

- 1) Ալեքսանդր Շիրվանզադեի
- 2) Բաֆֆու
- 3) Մուրացանի
- 4) Հովհաննես Թումանյանի

75. Ո՞ւմ խոսքն է.

«Մեզանից առաջ դեռ ոչ մի վիպասան ուշադրություն չէր դարձրել մի մոսյլ դասակարգի վրա, որ խավարի մեջ կեղեքում էր յուր զոհերին և անհազ վամպիրի նման ծծում էր նրանց արյունը»:

- 1) Միքայել Նալբանդյանի
- 2) Բաֆֆու
- 3) Ալեքսանդր Շիրվանզադեի
- 4) Ավետիք Իսահակյանի

76. Պատմական ո՞ր ժամանակաշրջանի դեպքերն են պատկերված Բաֆֆու «Սամվել» պատմավեպում:

- 1) IV դարի երկրորդ կես
- 2) V դարի վերջ
- 3) IX դար
- 4) X դար

77. Պատմմներից ո՞րն է սխալ Բաֆֆու «Սամվել» պատմավեպի վերաբերյալ:

- 1) Վեպը ունի առաջաբան, որտեղ հեղինակը շարադրում է պատմավեպ գրելու իր սկզբունքները:
- 2) Վեպի «Փակագծերի մեջ» հատվածը թեև անմիջաբար չի առնչվում վիպական գործողություններին, սակայն դարաշրջանի խոր վերլուծությամբ կարևոր դեր է կատարում վեպի բովանդակությունը հասկանալու համար:
- 3) Վեպը սկզբում Բաֆֆին գրել է գրաբար, իսկ հետո դարձրել աշխարհաբար:
- 4) Վեպի կենտրոնական գաղափարը հայրենասիրությունն է:

78. Ո՞ր պնդումն է սխալ Բաֆֆու «Սամվել» պատմավեպի հերոս Սերուժան Արծրունու վերաբերյալ:

- 1) Սերուժան Արծրունին թագավորական գահին է ձգտում նաև պարսից արքայադուստր Որմիզդուխտի սիրում արժանանալու համար:
- 2) Հարազատ ընտանիքը երես է թեքում Սերուժան Արծրունուց՝ ապարանքի մուտքի դրները փակելով նրա առաջ:
- 3) Սերուժանը մերժվում է Որմիզդուխտից՝ արժանանալով նրա արհամարհանքին:
- 4) Դավաճան Սերուժանին ներում է միայն մայրը, երբ որդուն դարձի թերելու անհաջող պատգամախոսությունից վերադարձածները հայտնում են, որ նա հիվանդ է:

79. Բաֆֆու «Սամվել» պատմավեպի ո՞ր հերոսին է վերաբերում տրված հատվածը.

«Եվ որպես Շապուհի կանանց հագուստն ու զարդերը նրան դուր էին գալիս, նույնպես դուր էր զալիս Շապուհի պաշտած կրոնը: Աշխատում էր նմանվել»:

- 1) Վասպուրականի տիկնոջը
- 2) Փառանձեմ քազուհուն
- 3) Սաքենիկին
- 4) Տաճատուհուն

80. Բաֆֆու «Սամվել» պատմավեպի ո՞ր հերոսի խոսքն է.

«Նա մեռած է ինձ համար, ես կցավեմ նրա վրա, բայց երբեք չեմ ափսոսա: Նա այլևս իմ որդին չէ: Իմ որդիները, իմ սիրելի զավակներն են այն բազմաթիվ գերիները, որ այժմ շղթայակապ դրած են մեր առջև՝ պարսից բանակում»:

- 1) Վասպուրականի տիկնոց
- 2) Վահանդրիստի
- 3) Տաճատուիու
- 4) Համազապուիու

81. Բաֆֆու «Սամվել» պատմավեպի ո՞ր հերոսին է վերաբերում տրված հատվածը.

«Նա նայում էր որդու վրա ոչ թե իբրև ազատ, ինքնակամ անհատի վրա, այլ որպես մի հաջողակ միջոցի վրա, որով միայն ինքը պետք է փառավորվեր: Երբ որդին բարձր պաշտոնների կիասներ, երբ նա կփայլեր բարձր շրջաններում, այդ փայլը իրեն էր պատկանում, որովհետև որդին նույնպես իրեն էր պատկանում»:

- 1) Վասպուրականի տիկնոջը
- 2) Վահան Մամիկոնյանին
- 3) Փառանձեմ թագուիուն
- 4) Զարմանդուխտին

82. Ո՞ր դրվագով է սկսվում Բաֆֆու «Սամվել» պատմավեպը:

- 1) Երկու սուրհանդակ, որոնցից մեկի ձին սևաբույր էր, մյուսինը՝ կապուտակ, իրարից ծածուկ շտապում էին դեպի Ողական ամրոցը:
- 2) Սամվելը Արտասուրի աղբյուրի մոտ հանդիպում է Աշխենի հետ, նրան հավատարմության երդում տալիս:
- 3) Սերուժան Արծրունին հյուրընկալվում է իր հովիվներից մեկին:
- 4) Սամվելը այցելում է Սերուժանի բանակատեղին՝ հորը տեսակցելու:

83. Բաֆֆու «Սամվել» պատմավեպի ո՞ր հերոսին է վերաբերում տրված հատվածը.

«Խելագարի նման սիրում է թե՛ յուր թագավորին և թե՛ հայրենիքը: Այդ սերը լրացնում է նրա մեջ փորձի և հմտության պակասությունը: Քաջ է և համարձակ: Սիրված է յուր հասարակությունից, և նրա ձայնին շատերը կհետևեն: Անկաշառելի է»:

- 1) Վասակ Մամիկոնյանին
- 2) Արշակ թագավորին
- 3) Սամվելին
- 4) Սերուժան Արծրունուն

84. Բաֆֆու «Սամվել» պատմավեպի ո՞ր հերոսին է վերաբերում տրված հատվածը.

«...Ծատ սիրված էր ժողովրդից: Նրա քաղցր ու մեղմ բնավորությունը, նրա անսահման գութն ու բարությունը թե՛ դեպի շինականը, թե՛ դեպի քաղաքացին նրա անձը պաշտելի էին կացուցանել: Նա չուներ ուրիշ նախարարական տների մեծամիտ երիտասարդների ոչ անգրությունը, ոչ էլ արհանարիանը, որոնց աչքում իրենց ազնվարյուն նժույգը, շունը, բազեն ավելի արժանավորություն ունեին, քան թե ուամիկը»:

- 1) Սուշեղ Մամիկոնյանին
- 2) Սամվելին
- 3) Սահակ Պարթևին
- 4) Պապին

85. Բաֆֆու «Սամվել» պատմավեպի ո՞ր հերոսին է վերաբերում տրված հատվածը.

«Նրան՝ որպես աճառակ որդու, քողնում էին դրսում. դա մի ծանր ապտակ էր նրա երեսին, դա մի դառն պատիծ էր նրա երեսին»:

- 1) Վահան Մամիկոնյանին
- 2) Հայր Մարդաբետին
- 3) Սերուժան Արծրունուն
- 4) Սամվելին

86. Բաֆֆու «Սամվել» պատմավեպի ո՞ր հերոսին է վերաբերում տրված հատվածը.

«Հայրենասիրության հետ ունի փորձ և ընդարձակ հմտություններ պատերազմի գործերում: Դա մի սոսկալի մարդ է: Պարսկաստանը շատ կշահեր, եթե մի ամբողջ զավար անգամ նշանակվելու լինի նրա կյանքի վճարման համար որպես գլխազին: Լավ գորապետ և քաջ պատերազմող է և ոխերին թշնամի արիներին»:

- 1) Սուշեղ Մամիկոնյանին
- 2) Սամվելին
- 3) Սերուժան Արծրունուն
- 4) Վասակ Մամիկոնյանին

87. Բաֆֆու «Սամվել» պատմավեպում ո՞ւմ մասին է Սերուժան Արծրունին ասում.

«Նա եկավ մեզ մոտ որպես նպատակի զոհ, և ես չեմ կարող շնախանձվիլ նրա անձնագործության եռանդին, որ հասուն է բարձր, քաջազնական ոգիներին»:

- 1) Փառանձեմ քագուին
- 2) Սուշեղ Մամիկոնյանի
- 3) Սամվելի
- 4) Համազասպուին

88. Խոսքերից որը ո՞ւմն է Բաֆֆու «Սամվել» պատմավեպում:

- | | |
|--|----------------------|
| ա. «...Ի՞նչը ձգեց ինձ այս թշվառ դրության մեջ, ի՞նչը հարկադրեց ինձ ուրանալ ամեն ինչ, ինչ որ նվիրական էր ինձ համար, և երկրպագություն տալ պարսից աստվածներին: Միայն որի, քո սերը միայն, ո՞վ Որմիզրուստ»: | 1. Արշակ թագավոր |
| բ. «-Ծաղր, խիստ կծու կատակ...- քացականչեց քանտարկյալը խորին վրդովունքով և վեր կացավ նստած տեղից: -Իմ աչքի առջև դրել են Հայաստանի զորությունը... նրա զինվորական և պատերազմական ներկայացուցչին... իմ աչքերի առջև դրել են այն հերոսին, որ մշտական սարսափի մեջ էր պահում ամբողջ Պարսկաստանը...»: | 2. Սամվել |
| շ. «Երկու սիրելիներ դրած են իմ առջև. մեկը՝ վտանգի մեջ գտնվող հայրենիքը, մյուսը՝ վտանգի մեջ գտնվող կինը՝ դու: Երկուսն էլ ինձ համար հավասար չափով անգնահատելի են...»: | 3. Սերուժան Արծրունի |
| դ. «Իմ քաղաքացիները երես են դարձրել ինձանից. նրանք ինձ մեռած են համարում»: | 4. Վահան Մամիկոնյան |

- 1) ա-3, բ-1, զ-2, դ-3
- 2) ա-3, բ-2, զ-1, դ-4
- 3) ա-4, բ-2, զ-3, դ-4
- 4) ա-4, բ-1, զ-3, դ-2

89. Բաֆֆու «Սամվել» պատմավեպի ո՞ր հերոսի խոսքերն են.

«Ես ավելի համոզված եմ, որ այդ երկու դավաճաններին փայփայող պարսից Շապուհ արքան կրոնասեր մարդ չէ, նա քո հորը և քո քեռուն ուղարկում է ոչնչացնելու Հայաստանում քրիստոնեությունը և պարսից մոգերի ձեռքը տալու թե՛ մեր եկեղեցիները և թե՛ մեր դպրոցները»:

- 1) Աշխենի
- 2) Մեսրոպ Մաշտոցի
- 3) Տաճատուիու
- 4) Փառանձեմ բագուիու

90. Գրական ո՞ր հերոսի միտքն է.

«Մոգերով ու մոգպետներով է զալիս իմ հայրը... զալիս է ոչնչացնելու մեր եկեղեցիները, մեր դպրոցները, մեր դպրությունը, զալիս է պարսկացնելու մեզ... Թագավորությունը սպանեցին, այժմ պետք է սպանեն ազգությունը, կրոնը...Եվ իմ հայրը մի այդպիսի եղեռնագործության պիտի մասնակից լինի...»:

- 1) Զոհրակի («Վարդանանք», Դերենիկ Դեմիրճյան)
- 2) Սամվելի («Սամվել», Բաֆֆի)
- 3) Բարիկի («Վարդանանք», Դերենիկ Դեմիրճյան)
- 4) Աշոտ-Դերենիկի («Գևորգ Մարգարետունի», Մուրացան)

91. Պնդումներից քանի՞սն են ճիշտ Բաֆֆու «Սամվել» պատմավեպի համանուն հերոսի վերաբերյալ:

- ա. Իմանալով հոր դավաճանության մասին՝ նա որոշում է առաջին իսկ հանդիպման ժամանակ առանց երկնտելու անմիջապես սպանել նրան:
- բ. Նա որոշում է անպայման հանդիպել հորը՝ լիապես հասկանալու կատարվածի էությունը, և եթե հնարավոր է, հանողել մոլորվածին հետ կանգնելու ուրացության ճանապարհից:
- գ. Հոր դավաճանությունից հետո նա չի կարողանում այլևս հանդիպել սիրած աղջկան՝ Աշխենին, քանի որ վերջինս երես էր թերել իրենից:
- դ. Ուրիշ նախարարական տների երիտասարդների պես մեծամիտ էր, ուսմիկների նկատմամբ անգույք ու դաժան:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) չորսը

92. Բաֆֆու «Սամվել» պատմավեպի վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ կա:

- 1) Երբ Մուշեղ Մամիկոնյանը մեկնում է Բյուզանդիա, նրա բացակայության շրջանում Սամվելն է գլխավորում հայրենասիրական շարժումը:
- 2) Վեպի գործողություններում էական դեր է խաղում Ներսես Սեծը:
- 3) Տաճատուիուն ուրացության էին մղել կույր օտարասիրությունն ու փառասիրությունը:
- 4) Քուշանների արշավանքը Պարսկաստան Շապուհ արքային հարկադրում է հեռանալ Հայաստանից՝ աճապարելով Տիգրոն:

93. Բաֆֆու «Սամվել» պատմավեպում Մերուժան Արծրունու վերաբերյալ տրված պնդումներից որո՞ւմ սխալ կա:

- 1) Իսկական ուազմիկ է, առնական տեսքով, գեղեցիկ:
- 2) Երկար տարիներ ապրել է պարսից արքունիքի բարձր շրջաններում՝ յուրացնելով այդ ազգի կենցաղավարության ամենանորը ձևերը:
- 3) Նախճավանի կովում նրա բանակը գլխովին ջախջախվում է, իսկ ինքը վիրավոր գերվում է Սամվելի և նրա կողմնակիցների կողմից:
- 4) Սամվելը Արաքսի շամբուտներում սպանում է վիրավոր Մերուժան Արծրունուն:

94. Բաֆֆու «Սամվել» պատմավեպում ո՞վ է ասում Վահան Մամիկոնյանին.

«Ամո՞ք քեզ, որ ամորալի գործերով արատավորում ես Մամիկոնյանների պայծառ հիշատակը: Թող այն օրը սև լիներ, երբ դու աշխարհ եկար... Թող քո մայրը քո փոխարեն մի կտոր քար ծնած լիներ և ոչ քեզ նման մի պատիժ ու պատուհաս հայոց երկրի համար»:

- 1) Վասպուրականի տիկինը
- 2) Համազասպուիին
- 3) Սամվելը
- 4) Փառանձեմ քագուիին

95. Բաֆֆու «Սամվել» պատմավեպի ո՞ր գլխում է Սամվելն իր հորն սպանում:

- 1) «Ուրացողը յուր տան շեմքի վրա»
- 2) «Երկու սուրհանդակ»
- 3) «Արաքսի որոգայթները»
- 4) «Մեկը-արևմուտքում, մյուսը-արևելքում»

96. Ո՞ր շարքում են Բաֆֆու «Սամվել» պատմավեպի միայն հայրենասեր հերոսները:

- 1) Գարեգին իշխան, Համազասպուիի, Տաճատուիի
- 2) Արտավազդ, Համազասպ, Դրաստամատ
- 3) Հայր Մարդպետ, Ներսեն իշխան, Վահանդուխս
- 4) Հոսիկ, Մալխաս, Վահան Մամիկոնյան

97. Ո՞ր շարքի բոլոր հերոսներն են ժողովրդի մարդիկ Բաֆֆու «Սամվել» պատմավեպում:

- 1) Արտավազդ, Հոսիկ, Դրաստամատ
- 2) Նվարդ, Արտավազդ, Համազասպ
- 3) Զավեն, Վահանդուխս, Մանվել
- 4) Մալխաս, Արքակ, Մանի (Մանեճ)

98. Ո՞ր շարքի բոլոր հերոսուիհներն են միայն Բաֆֆու «Սամվել» պատմավեպից:

- 1) Համազասպուիի, Գոհար իշխանուիի, Շուշանիկ
- 2) Սարենիկ, Վահանդուխս, Տաճատուիի
- 3) Փառանձեմ քագուիի, Շահանդուխս, Զվիկ
- 4) Զարմանդուխս, Որմիգրուխս, Սահականույշ քագուիի

99. Ովերջ են այն «երկու նշանավոր տաղանդները» Բաֆֆու «Սամվել» պատմավեպում, որոնց մասին հեղինակը գրում է.

«Ո՞վ կարող էր մտածել, որ այդ գիշերվա ջերմ վիճաբանություններից քսաներեք տարի հետո այդ երկու նշանավոր տաղանդները կկատարեին իրենց ուխտը և սկիզբ կդնեին հայոց մեծ լուսավորության ուլյա դարին»:

- 1) Արշակ թագավոր և Ներսես Մեծ
- 2) Սամվել և Աշխեն
- 3) Մեսրոպ Մաշտոց և Սահակ Պարքե
- 4) Սուշեն Մամիկոնյան և Խաղ Եպիսկոպոս

100. Բաֆֆու «Սամվել» պատմավեպի ո՞ր գլխում է պատկերվում Սամվելի և նրա սիրած աղջկա՝ Աշխենի հանդիպումը:

- 1) «Տարոնի առավոտը»
- 2) «Կնոջ խորհուրդը»
- 3) «Արաքսի որոգայթները»
- 4) «Արտասուրի աղբյուրը»

101. Արտագերս ամրոցում ապաստանած Որմիզդուխտը ինչպե՞ս է վարվում Մերուժան Արձունու հետ Բաֆֆու «Սամվել» պատմավեպում:

- 1) Խոստովանում է իր փոխադարձ սերը Մերուժանին:
- 2) Դրվատում է Մերուժանի դավաճանությունը:
- 3) Արհամարհանքով մերժում է Մերուժանի սերն ու քախանձանքները:
- 4) Ուրախանում է Մերուժանի փառասիրական պատրանքներից ու ոգևորում նրան:

102. Բաֆֆու «Սամվել» պատմավեպում ո՞վ է Շապուհի կանանցը անվնաս վերադարձնում Տիգրոն:

- 1) Ոշտունյաց գարեգին իշխանը
- 2) Սամվելը
- 3) Մուշեղը
- 4) Դրաստամատը

103. Ո՞րն է Բաֆֆու «Սամվել» պատմավեպի առաջին գլուխը:

- 1) «Երեք երիտասարդ ուժեր»
- 2) «Երկու սուրհանդակներ»
- 3) «Գումկան»
- 4) «Անուշ բերդը»

104. Ո՞րն է Բաֆֆու «Սամվել» պատմավեպի վերջին գլուխը:

- 1) «Պատմոս»
- 2) «Արտագերս»
- 3) «Մայրը»
- 4) «Ողական ամրոցը»

105. Բաֆֆու «Սամվել» պատմավեպի ո՞ր հերոսին է վերաբերում տրված հատվածը:

«Այդ գեղեցիկ կինը գերեց Սամվելի հոր սիրտը, այդ գեղեցիկը կապեց Սամվելի հորը թե՛ պարսից և թե՛ պարսից կրոնի հետ, և վերջապես, այդ գեղեցիկ կնոջ միջոցով Շապուհը որսաց Մամիկոնյան նախարարներից մի հավատարիմ զինակից»:

- 1) Տաճատուիուն
- 2) Որմիզդուխտին
- 3) Համազասպուիուն
- 4) Վահանդուխտին

106. Ո՞ւմ մասին է Մուշեղ Մամիկոնյանի խոսքը Բաֆֆու «Սամվել» պատմավեպում:

«...Քեզ համար խոսքի և խոստունքի սրբություն չկա... Վարազագիր մատանիով աղ կնքեցիր դու, որ քո կրոնի մեջ ամենամեծ երդումն է, և ուղարկեցիր՝ կոչելով իմ հորը և նրա բագավորին քո մոտ՝ իբր հաշտության ուստ դնելու, բայց տարար և վասությամբ արսորեցիր: Անամ՞թ...»:

- 1) Վահան Մամիկոնյանի
- 2) Մերուժան Արձունու
- 3) Շապուհի
- 4) Հայր Մարդաբետի

107. Ո՞ր պարբերականը չի խմբագրել Հակոբ Պարոնյանը:

- 1) «Մշակ»
- 2) «Մեղու»
- 3) «Եփրատ»
- 4) «Թատրոն»

108. Տրված հատվածը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեաի ո՞ր հերոսի արտաքինի նկարագիրն է.

«Երիտասարդ մը, որ վաճառականի չէր նմաներ, սեղանավորի ալ չէր նմաներ, զործավորի ալ չէր նմաներ և վերջապես անանկ բանի մը կնմաներ, որուն նմանը չկա: Հազիվ երեսուներկու տարեկան կը թվեր: ...Ուներ նաև երկու մատ մորուք, որ մայրաքաղաքիս մեջ կամ նշան է և կամ չքավորության: Հազուստներն այնքան հին էին, որ հնախույզները զանոնք գնելու համար մեծաքանակ գումար մը կուտային»:

- 1) խմբագրի
- 2) բժշկի
- 3) բանաստեղծի
- 4) դերասանի

109. Ի՞նչ նպատակով էր Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեաի գլխավոր հերոս Արիստորմ աղան Տրապիզոնից եկել Պոլիս.

- 1) Ազգային ժողովում երեսփոխան ընտրվելու
- 2) ամուսնանալու համար հարուստ աղջիկ ընտրելու
- 3) հարազատներին տեսակցելու
- 4) իր ունեցածը մայրաքաղաքի մուրացկաններին բաժանելու

110. Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեպում Արիստորմ աղան ևս երկու ոսկի ինչո՞ւ է շնորհում բանաստեղծին.

- 1) մուսայի գալը արագացնելու
- 2) բանաստեղծին արագ հեռացնելու
- 3) բանաստեղծի գիրքը հրատարակելու
- 4) խղճալով բանաստեղծին

111. Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեպում ի՞նչն է Արիստորմ աղային սոհայում չորս ոսկի շնորհելու բանաստեղծին.

- 1) խղճահարությունը բանաստեղծի նկատմամբ
- 2) իրեն նվիրված ձոներգ գրել տալու ցանկությունը
- 3) մեկենաս լինելու փառասիրությունը
- 4) բանաստեղծի ներկայությունից արագ ազատվելու ձգտումը

112. Պոլիս մտնելուն պես նշվածներից առաջինը ո՞ւմ է հանդիպում Արիստորմ աղան Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեպում:

- 1) Մանուկ աղային
- 2) խմբագրին
- 3) լուսանկարչին
- 4) քահանային

113. Ով ո՞ր պարբերականին է աշխատակցել կամ ո՞ր հանդեսը խմբագրել:

- | | |
|-----------------------|-------------------|
| ա. Ռաֆֆի | 1. «Հյուսիսափայլ» |
| բ. Միքայել Նալբանդյան | 2. «Նոր-Դար» |
| գ. Հակոբ Պարոնյան | 3. «Սեղու» |
| դ. Նար-Դոս | 4. «Մշակ» |

- 1) ա-1, բ-2, գ-3, դ-4
- 2) ա-2, բ-4, գ-3, դ-1
- 3) ա-4, բ-1, գ-3, դ-2
- 4) ա-3, բ-4, գ-1, դ-2

114. Պնդումներից ո՞րն է սխալ Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեպի վերաբերյալ:

- 1) Արիստոլոն աղան ուշադրությամբ և կլանված լսում է թաղականի ընտրության մասին Մանուկ աղայի պատմությունները:
- 2) Արիստոլոն աղան իր «պատվավոր ազգային» լինելը հիմնավորելու համար խմբագրին թվարկում է իր ունեցածները:
- 3) Արիստոլոն աղան առաջին անգամ էր եկել Պոլիս:
- 4) Արիստոլոն աղան ուզում էր, որ իր կինը չպատականի ոչ «շատ աժան» դասին, լինի ճերմակ, երկար հասակով, մեջքը բարակ, բայց ոչ տկար:

115. Ո՞ւմ մասին է Արիստոլոն աղայի խոսքը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեպում.

«Ո՞վ է այս մարդը, հիմարանցեն փախած խե՞նք է, քե հիմարանց երթալու հիմար»:

- 1) Մանուկ աղայի
- 2) բանաստեղծի
- 3) բժշկի
- 4) դերասանի

116. Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեպում Արիստոլոն աղան ե՞րբ է առաջարկում բժշկին իրեն քննել:

- 1) Երբ իմանում է, որ իր անունը լրագրերի մեջ պիտի հրատարակվի:
- 2) Երբ համոզվում է, որ բժիշկը միայն հարուստներին է բուժում:
- 3) Երբ հասկանում է, որ ինքը ծանր հիվանդ է:
- 4) Երբ իմանում է, որ բժիշկը Եվրոպայում է կրթություն ստացել:

117. Տրված հատվածը Հակոբ Պարոնյանի «Մեծապատիվ մուրացկաններ» վեպի ո՞ր հերոսին է վերաբերում:

«Ուներ այնպիսի նայվածք մը, որուն երե աւ. Հ. Վարդովյան հանդիպեր յուր աշերով, կը հարցուներ այդ մարդուն. «Ի՞նչ ամսական կուզես՝ բատրոնիս մեջ ապուշի դեր կատարելու համար»:

- 1) բժիշկ
- 2) Մանուկ աղա
- 3) Արիստոլոն աղա
- 4) բանաստեղծ

118. Խոսքերից ո՞րը Հակոբ Պարոնյանի «Սեծապատիվ մուրացկաններ» վեպի ո՞ր հերոսին է:

- ա. «Ամեն մարդ պիտի իմանա վաղը, որ մեծ մարդ մը եկած է Կ. Պոլիս. ազնվախոհ, ազնվասիրտ, լեզվագետ, ուսումնական, դաստիարակյալ, կրթյալ և այլն մեկը, և յուրաքանչյուր կնիկ պիտի ըստ իր էրկանը. «Մեր աղջիկը սա Արխողոմ աղային տանք»»:
- բ. «Թուղարկանին գործն ալ այսօր լմնցուցինք. կիրակի օրը քվեարկությունը պիտի կատարվի, և բոլոր անդամները պատվավոր մարդիկ պիտի ըլլան»:
- գ. «Իմ ձեռքիս տակ ամեն դասե աղջիկ կա. բարձր դասեն, միջին դասեն և ստորին դասեն. այս երեք դասեն ալ ծախու ապրանք ունիմ. հրամանքնիդ ձեր քսակին հետ խորհրդակցեք և ինձի ըսեք՝ սա դասեն կուզեմ»:
- դ. «Զեզիպեսներն կարգվելու են, որ ազգերնուս մեջ հարուստ տողայք շատնան: Աղվոր աղջիկ կը փնտռեք կոր եղեր... և ինչո՞ւ չփնտռեք. ես ալ ձեր տեղն ըլլայի նե ես ալ կը փնտռեի: ...Արդ, ես իմ ձեռքիս տակն ունիմ անանկ աղջիկներ, որ թե՛ աղվոր են և թե՛ հարուստ»:

- 1) ա-1, բ-2, գ-3, դ-4
- 2) ա-3, բ-1, գ-4, դ-2
- 3) ա-4, բ-2, գ-3, դ-3
- 4) ա-3, բ-4, գ-1, դ-2

119. Պնդումներից քանի՞սն են սխալ:

- ա. Հակոբ Պարոնյանը հայ ամենամեծ երգիծաբանն է:
- բ. Հակոբ Պարոնյանի «Քաղաքավարության վնասները» կենցաղային սյուժեների երգիծական նովելաշարը է:
- գ. Հակոբ Պարոնյանի «Ծիծաղ»-ը ունի այլաբանական բնույթ:
- դ. Հակոբ Պարոնյանը գրել է կատակերգություններ:

- 1) մեկը
- 2) երկուսը
- 3) երեքը
- 4) ոչ մեկը

120. Հակոբ Պարոնյանի «Սեծապատիվ մուրացկաններ» վեպում ո՞ւմ մասին է ասվում.

«...Յուր արհեստն ալ սիրո միջնորդություն էր. այրերուն կիս կը գտներ, կիներուն այր կը մատակարարեք և զանոնք իրարու հետ ամուսնացնելով յուր աշխատության վարձքը կընդուներ: Երբեմն ալ այրը կինեն կը զատեր և դարձյալ յուր աշխատության փոխարենը կառներ»:

- 1) խմբագրի
- 2) Մանուկ աղայի
- 3) տիկին Շուշանի
- 4) սափրիչի

121. Ո՞ր գրողի խոսքն է.

«...Իսկ եթե ես նյութական մի փոքրիկ ապահովություն ունեցած լինեի և այդ մեքենական աշխատության փոխարեն գրական աշխատությամբ պարապեի, քանի՝ հատորներ կունենայի այժմ: Գիտե՞ք ինչ մեծ վիշտ է այս ինձ համար»:

- 1) Բաֆֆու
- 2) Ալեքսանդր Շիրվանզադեի
- 3) Մուրացանի
- 4) Վահան Տերյանի

122. Պնդումներից ո՞րն է սխալ Մուրացանի նշված ստեղծագործությունների վերաբերյալ:

- 1) «Խորհրդավոր միանձնուիին» արձակ ստեղծագործություն է:
- 2) «Առաջյալի» գլխավոր հերոսը Պետրոս Կամսարյանն է:
- 3) «Ռուզանը» դրամա է:
- 4) «Նոյի ագոռավը» պատմվածքի նյութն առնված է միայն Աստվածաշնչից:

123. Ստեղծագործություններից քանիսի՝ հեղինակն է Մուրացանը:

«Խորհրդավոր միանձնուիի», «Հարեմ», «Նոյի ագոռավը», «Ռուզի աքաղաղ», «Առաջյալը», «Նամուս», «Երկու տող», «Առաջին սերը»:

- 1) Երկուսի
- 2) Երեքի
- 3) չորսի
- 4) հինգի

124. Պառակտված երկիրը միավորելու առաքելությամբ Գևորգ Մարզպետունին ո՞ւմ է առաջինը այցելում Մուրացանի համանուն վեպում:

- 1) Սահակ Սևադային
- 2) Աշոտ Երկարին
- 3) Սահականույշ թագուհուն
- 4) Ցիկ Ամրամին

125. Ո՞ր գրողի խոսքն է.

«Ամեն մի գործ ստեղծելու ժամանակ իմ աչքի առաջ ունեցել եմ հայ ժողովուրդը, նրա անցյալը, նրա պատմությունը, նրա տիսուր ներկան, լավ եմ գրել, թե վատ, նրա համար եմ գրել, նրան եմ կամեցել իմ մտքերն ու զգացումները հաղորդել»:

- 1) Բաֆֆու
- 2) Մուրացանի
- 3) Դերենիկ Դեմիրճյանի
- 4) Եղիշե Չարենցի

126. Նշվածներից ո՞ր վեպը առաջարան ունի:

- 1) «Սամվել» (Բաֆֆի)
- 2) «Մեծապատիվ մուրացկաններ» (Հակոբ Պարոնյան)
- 3) «Գևորգ Մարզպետունի» (Մուրացան)
- 4) «Քառս» (Ալեքսանդր Շիրվանզադե)

127. Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի ո՞ր մասում է Ասպրամը ներկայացված իրադարձությունների կենտրոնում:

- 1) առաջին
- 2) երկրորդ
- 3) երրորդ
- 4) ոչ մեկի

128. Ո՞ր Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի գլուխներից չէ:

- 1) «Կույր վրիժառուն»
- 2) «Ջրից փախողը կրակի մեջ»
- 3) «Բյուրականի առումը»
- 4) «Ուրացողը յուր տան շեմքի վրա»

129. Ո՞ր շարքի բոլոր գլուխներում են պատկերվում ռազմի տեսարաններ Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպում:

- 1) «Հերոսի վախճանը», «Կույր աչքը կներե, կույր սիրտը չի ներիլ», «Այրիվանքում»
- 2) «Ծովամարտ», «Դվն առումը», «Սի ծաղկով զարուն»
- 3) «Հին Վշտերի վախճանը», «Վերջին թշնամու վախճանը», «Անակնկալ վախճան»
- 4) «Անհավատարմության հայտնությունը», «Երեք կետի վրա», «Անհանգիստ մարդը»

130. Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի ո՞ր հերոսի խոսքն է.

«Ես չեմ ցանկանալ շարագործի անուն վաստակել, բայց հանգամանքները շարագործ շինեցին ինձ: Այսուհետև ես չպիտի մտածեմ, թե ինչ է ասում աշխարհն ինձ համար. ես միայն մի մարդու պիտի հաշիվ տամ, դա իմ ներքին մարդը, իմ խիղճն է...»:

- 1) Աշոտ Երկարի
- 2) Սահակ Սևադայի
- 3) Ցիկ Ամրամի
- 4) Բերի

131. Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» վեպի վերաբերյալ պնդումներից որո՞ւմ սխալ կա:

- 1) Թագուհուն թագավորի հետ հաշտեցնելու, ապստամք բոլոր իշխաններին դարձի բերելու Գևորգ Մարզպետունու բոլոր ջանքերը պասկվում են հաջողորդական:
- 2) Ասպրամի ինքնասպանությունից հետո Ամրամը հեռանում է հայրենիքից:
- 3) Վեպը պատկերում է Բագրատունիների թագավորության շրջանի դրամատիկ իրադարձությունները 10-րդ դարում:
- 4) Բնության օրենքով Աշոտ Երկարը սիրել էր Ասպրամին, բայց պետական շահի թելադրանքով անունացել Սահականուշի հետ:

132. Խոսքերից ո՞րը Գևորգ Մարզպետունուն չէ Մուրացանի համանուն պատմավեպում:

- 1) «...Ես չեմ վերադառնալ այլևս իմ ընտանյաց գիրկը, չեմ մտնիլ իմ հարկի տակ, մինչև վերջին հագարացին չհալածեմ հայրենի սահմաններից»:
- 2) «Այն գեղջուկ խրճիթները, այն աննշան տնակները, որոնց մեջ ապրում են ցնցոտիններով ծածկված մանկտիք և որոնց շատ անգամ արհամարհում են մեծամեծ իշխանները, նույնիսկ դրանք են, որ ամփոփում են իրենց մեջ հայրենիքի ուժը»:
- 3) «Անհանգիստ մարդ, որ ստեղծվել է հավիտյան թափառելու համար»:
- 4) «Ազգերի զորությունն ընտանիքի մեջ է, զորավոր է այն ազգը, որն ունի զորավոր ընտանիքներ, սիրով, միությամբ, առաքինի և հավատարիմ կենակցությամբ ընտանիքներ»:

133. Ստեղծագործություններից քանիսի՝ հեղինակն է Ալեքսանդր Շիրվանզադեն:

«Նամուս», «Խորհրդավոր միանձնուիի», «Հարեմ», «Ուկի աքաղաղ», «Չար ոգի» («Յավագարը»), «Թուրքի աղջկը»:

- 1) մեկի
- 2) երկուսի
- 3) երեքի
- 4) չորսի

134. Իր պատմվող փրկելու համար ի՞նչ քայլի է դիմում Մարզարիտը Ալեքսանդր Շիրվանզադեի «Պատվի համար» դրամայում:

- 1) Հեռանում է հայրական տնից:
- 2) Ինքնասպանություն է գործում:
- 3) Փախչում է Արտաշեսի հետ:
- 4) Եղբայրների օգնությամբ հորից վերցնում է փաստաթղթերը և տալիս Օթարյանին:

135. Ալեքսանդր Շիրվանզադեի «Զառու» վեպում ո՞ւմ մասին է ասվում՝ «ամայի դաշտում քուսած մի մանուշակ»:

- 1) Անտոնինա Իվանովնայի
- 2) Անուշի
- 3) Շուշանիկի
- 4) Մարթայի

136. Ո՞ր տարբերակում նշված հատկանիշներն են ընդհանուր Ալեքսանդր Շիրվանզադեի գրական հերոսներից Իսահակ Մարտրիչանյանի և Բագրատ Էլիզբարյանի համար:

- 1) Երիտասարդ տարիներին տարվել են ազատամիտ հովերով:
- 2) «Ուկի երիտասարդներ» են, որ վազում են էժան հաճույքների հետևից:
- 3) Օժոված են հերոսական զծերով և ունեն բարոյական վիրխարի ուժ:
- 4) Երազում են դառնալ ֆինանսական հսկա, փողի ուժով իշխել հազարավոր մարդկանց:

137. Համաձայն հոր կտակի՝ Սմբատը ե՞րբ կարող էր իր բաժին ժառանգությանը տեր դառնալ Ալեքսանդր Շիրվանզադեի «Զառու» վեպում:

- 1) Երբ ամուսնանար Շուշանիկի հետ:
- 2) Երբ բաժանվեր կնոջից ու երեխաներից և հայկական եկեղեցու օրենքներով ամուսնանար հայլուսավորչականի հետ:
- 3) Երբ լրանար նրա 36-ամյակը:
- 4) Հոր մահվան տարելիցից հետո:

138. Ալեքսանդր Շիրվանզադեի «Զառու» վեպում, ըստ այրի Ուկեհատի, ո՞րն էր Ալիմյանների զերդաստանի վրա ընկած ամենամեծ արատը, որի պատճառով ոչ ոք այդ զերդաստանից իրավունք չուներ «հայ քրիստոնյա» համարվելու:

- 1) Սիրայելի անբարոյական վարքը:
- 2) Սմբատի ամուսնությունը օտարազգի կնոջ հետ:
- 3) Արշակի հիվանդությունը:
- 4) Մարկոս Ալիմյանի՝ շատերի համոզմամբ խարելով, կողոպուտով ձեռք բերած հարստությունը:

139. Ալեքսանդր Շիրվանզաղեի «Զառո» վեպում, համաձայն հոր կտակի, Միքայելը ե՞րբ կարող էր ստանալ իր բաժին ժառանգությունը:

- 1) հայրական գործերին տեր կանգնելուց հետո
- 2) միայն օրինավոր մարդ դառնալուց և հայ քրիստոնյա մի աղջկա հետ ամուսնալուց հետո
- 3) Ծուշանիկի հետ ամուսնանալուց հետո
- 4) Արշակին անբարոյական, շոայլ կյանքից դուրս բերելուց հետո

140. Պնդումներից քանի՞սն են սխալ Ալեքսանդր Շիրվանզաղեի «Զառո» վեպի վերաբերյալ:

- ա. Բովանդակում է բազմաբնույթ հարցադրումներ՝ ընտանեկան, տնտեսական, բարոյական:
- բ. Ապտակված Միքայելը Սմբատի խորհրդով փորձում է դատարանի միջոցով վերականգնել իր սասանված պատիվը:
